

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԹԵՔՆԻԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՏԵՓՈՑԵԱՆ

ՆԻԻԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ

Խմբագրեց եւ ծանօթագրեց

ԴՈԿՏ. ՎԱՋԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ՊԵՂՐԱՒԹ

1 9 8 8

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ԹԷՔԷՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՏԵՓՈՅԵԱՆ

ՆԻԻԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ

Խմբագրեց ԷՍ Ծանօթագրեց

ԴՈԿՏ. ՎԱԶԷՂ ՂԱԶԱՐԵԱՆ

ՊԵՏՐՈՍ

1988

Այս գիրքը կը ձօնեմ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի զաղափարակիցներու և որոնք կը շարունակեն հետեւիլ ամերիկեան արիւնքը վրայ գործած ու իրենց աչքերը փակուիլ եւ պատիւով փակած ուսման վար ազատական գործիչներու ասանդին՝ անխարդախ հայրենասիրութեամբ եւ մեր ժողովուրդի գերագոյն շահերուն ծառայելու առաքինութեամբ :



Պետրոս Տեփոյեան



Figure 1. (a) Schematic diagram of the experimental setup.

ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ԻՐ ԳՈՐԾԸ

Այս խիստ հետաքրքրական ու շահեկան յուշագրութիւնը, որ կը պատկանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան երախտաշատ գործիչներէն Պետրոս Տեփոյեանին գրչին եւ կը գտնուի Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւին մէջ, կարեւոր աղբիւր մըն է թէ՛ Համաշխարհային Ա. Պատերազմի շրջանին կովկասահայ իրականութեան մասին եւ թէ՛ Ռ. Ա. Կուսակցութեան 1921-45 տարիներու գործունէութեան շուրջ:

Մենք գայն կը դիտենք իբրեւ լրացուցիչը ռամկավար ազատական գործիչներէն Արմենակ Եկաբեանին, Մանուկ Ճիգմեհեանին, Արտակ Դարբինեանին, Էօծէն Բաբազեանին, Լեւոն Թիւրքիւնեանին, Արսէն Կէօրկիզեանին եւ Յովհաննէս Պօղոսեանին հրատարակեալ յուշերուն:

Ներկայ յուշագրութիւնը ենթարկած ենք խմբագրումի, տալով անհրաժեշտ նկատուած ծանօթութիւններ ու հատորին աւարտին, իբրեւ յաւելում, անդրադառնալով Ռ.Ա.Կ.-Հ.Յ.Դ. յարաբերութեանց, 1922-1940 շրջանին:

Հեղինակին յիշատակած տուեալները մեզ կը մղեն ենթադրելու թէ յուշագրութիւնը իրագործուած է 1955-56 թուականներուն:

Յարմար կը գտնենք, այս առթիւ, անդրադառնալ նաեւ Պետրոս Տեփոյեանին կենսագրութեան, մեր տեղեկութիւնները քաղելով ու համադրելով զանազան աղբիւրներէ եւ հեղինակին որդիէն՝ Գաիիլէի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան նախագահ Վահագն Տեփոյեանէն:

1884 - Խարբերդի Խոյուն Գիւղին մէջ, վեր. Յակոբ Տեփոյեանին յարկին տակ, աչքերը լոյսին կը բանայ Պետրոս Տեփոյեանը:

1905(*) - Յետ ուսումնառութեան՝ շրջանաւարտ կը դառնայ ան Եփրատ քոլէճէն եւ նոյն տարին իսկ, - մինչեւ 1908, - կը ստանձնէ Մալաթիոյ Ագգային վարժարանին տեսչութիւնը:

1908 - Պոլսոյ վրայով մեկնում դէպի Մ. Նահանգներ, Պոսքոնի մէջ հետեւելու բժշկական համալսարանի դասընթացին: Նիւրական դժուարութիւններ, սակայն, արգելք կը դառնան անոր ծրագրին իրագործման:

Հոն կ'անդամակցի վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան այն թեւին, որ պիտի մանչցուէր իբրեւ Ազատական Կուսակցութիւն:

1909 - Կը դառնայ կօշիկի գործարանատէր:

1915 - Իբրեւ Կովկասեան Ռազմականատի կամաւոր, կը մեկնի Թիֆլիս, ուր կ'ամուսնանայ նկարչուի վալա Սարգիսին մօրաքրոջ՝ Սաքենիկ Մուրատեանին հետ (ծնեալ՝ 1886-ին, Տրապիզոն): 1916-ին կ'ունենայ դուստր մը՝ Անահիտ (մահացած՝ 1942-ին): Հակատումներու ժամանակ ծանրօրէն կը վիրաւորուի եւ քիչ կը մնայ որ վրայ տայ իր կեանքը:

Հոն կը դառնայ խորհրդատու Զօր. Անդրանիկին: 1917-18 կը խմբագրէ վերակազմեալ հնչակեաններու «Հայկաշէն» պաշտօնաթերթը: Սերտ գործակցութիւն կ'ունենայ «Մշակ» ականներու կամ Հայ Ժողովրդական Կուսակցութեան երեսփի դէմքերուն հետ:

1919 - Կ'անցնի Պոլիս եւ իբրեւ Ագգային Խնամատարութեան ընդհանուր տնօրէն մեծ ծառայութիւններ կը մատուցանէ հայ որբերուն ու գաղթականներուն, մինչեւ հոնկէ իր մեկնումը 1922-ին, Քեմալական շարժման նախօրեակին:

1920 - Կը ծնի վահագն որդին:

(*) Վ. Տեփոյեանը իր հօրը շրջանաւարտութեան իբրեւ տարեթիւ կը նշէ 1903-ը:

1921 - Իբրեւ մասնակիցներէն մին Հայ Սահմանադրական Ռամկավար եւ Ազատական կուսակցութիւններու միութեան բանակցութիւններուն, կը դառնայ հիմնադիր անդամ Հոկտ. 1-ին կեանքի կոչուած Ռամկավար Ազատական կուսակցութեան:

1923-38 - Պաշտօնեայ՝ Գահիրէի Մաքսեան Ծխախոտի Ընկերութեան մէջ:

1938-39 - Պր. Փոյ Բիլինեանին գործընկերն է Նէոն ելեկտրական լոյսերու ընկերութեան մէջ:

1939-47 եւ 48-56 իր որդւոյն՝ Վահագնին հետ, սեփականատէր ելեկտրական արտադրողական գործարանի մը:

1947-48 - Պատասխանատու խմբագիր՝ «Արեւ» օրաթերթին:

1956 - Մահ՝ Դեկտեմբեր 5-ին:

Պետրոս Տեփոյեանը եղած է նաեւ անդամ Ռամկավար Ազատական կուսակցութեան եգիպտոսի Շրջանային վարչութեան (1926-40), ինչպէս նաեւ կեդրոնական վարչութեան (1937-47). ատենապետ՝ Գալուստեան ազգային վարժարանի հոգաբարձութեան (1928-32). հիմնադիր՝ Հայ Ազգային Հիմնադրամի (1942). անդամ՝ Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերութեան եւն.:

Գրել սկսած է 1901-ին. «Արեւիկեան մամուլ»ին մէջ, նախ քարգմանութիւններ կատարելով Մաքս Նորտաունին «Վատասերում» երկէն: Իր բուն անունով քէ վ. Արեւակ, Վահրամ Նորիս, Հրազդան Արաքսեան(*), Կարմիր Հողերցի եւ այլ ծածկանուններով աշխատակցած է «Պահակ», «Հովիտ», «Արագած», «Առաւօտ», «Ժողովուրդի ձայնը», «Արեւ», «Զարթօնք» քերթերուն եւ «Պայքար» ու «Կեանք ու գիր» տարեգիրքերուն:

Յիշեալներուն մէջ է որ լոյս տեսած են «Զահակիւններ» շարքը (ուսումնասիրութիւններ Վահան Տէրեանին.՝ որուն մտերմութիւնը վայելած է շրջան մը,՝ Դանիէլ վարուժանին, Միսաք Մեծարեցին, Թլկատինցիին, Յովհաննէս Թումանեանին եւ այլոց մասին), ինչպէս նաեւ Թուրքիեիէվին «Հայրերը եւ զաւակները» եւ Պուշկինին «Հարիւրապետին աղջիկը» գործերուն քարգմանութիւնները:

(*) Յիշուած է նաեւ Ազատեան ձեռով...:

Իրմէ կ'ըսուի թէ անտիպ կը մնան «Ուխտուածները» շար-
քէն Գարեգին Զիքնեանին, Ճիւմ Զանգալեանին, Վահան Թէֆե-
եանին ու Միքայէլ Նաթանեանին նուիրուած մենագրութիւններ
եւ «Թիկատինցիս եւ իր գործը» աշխատութիւնը:

Տեփոյեանին արխիւը 1970-ին յանձնուած է Երեւանի Զա-
րեցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին:

Իրմէ շուտով լոյսին կու տանք նաեւ «Ատում Ասլանեան»
անտիպ երկը:

Դոկտ. Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՆՈՒՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին կը թուէր թէ Հայկական Դատը երկար ողիսականներէ յետոյ վերջապէս իր լուծումին ձեւը գտած էր, զոնէ նախնական չափով: Մեծ պետութիւններու եւ թուրքիոյ միջեւ կատարուած երկար ու զժուար բանակցութիւններու իրրեւ արդիւնք՝ թրքապական Հայաստանը բաժնուած էր երկու վարչական շրջաններու եւ նշանակուած էին մարզպաններ՝ հոլանտացի վեսթենեկն ու նոր-վեկիացի Հոֆը: Այսոնց տրուած էին որոշ իրաւասութիւններ՝ համաձայն մշակուած եւ բանակցող կողմերէն բնութենուած բարենորոգումներու ծրագրին: Թուրքիոյ կողմէ Սայիա Հալիմ փաշան եւ վեց պետութիւններու գեապաններուն կողմէ ռուս գեապանի փոխանորդ Քուլիկեւիչը 1914 Յունուար 26-ին (հ. տ.) ստորագրած էին Հայկական Նահանգներու բարենորոգման այդ ծրագիրը: Բայց օրուան միջազգային քաղաքական մթնոլորտը լեցուած էր արդէն ամպրոպային սպառնալիքով: Պայթումի ազդանշանը տրուեցաւ Սարայէվոյի մէջ սերպ հայրենասէրի մը՝ Կապրիլօ Փրինսիփի, արձակած գնդակով(1): Համաշխարհային պատերազմի հրաբխային ժայթքումները հետեւեցան անոր: Եւ զիտենք թէ կարճ ատենէ մը Եւրոպան եւ յետոյ աշխարհը վերածուեցան ռազմական խառնարանի մը:

Պատերազմի յայտարարութենէն (28 Յունիս 1914)(2) երեք ամիսներ ետք, նոյն տարուան Նոյեմբեր 3-ին Թուրքիան ալ նետուեցաւ բոցավառ խառնակին մէջ՝ միանալու Եռեակ Զինակցութեան դատին, որուն յաղթանակին մէջ տեսաւ իր քաղաքական ծրագիրներուն յաջողութիւնը(3): Հոգեբանական եւ շահերու դասաւորումի նախատուեալ պայմաններէն թեյադրուած՝ հայ ազգն ալ իր համակրանքով ու քաղաքական կողմնորոշումով ինքզինք կապրում կը զգար Համաձայնական Պետութիւններու հետ: Այսոնց յաղթանակը միայն կարող էր երաշխաւորել հայ ազգին ազատագրութիւնն ու քաղաքական տենչանքներուն ամբողջական իրազօրծումը: Շիտակ կամ սխալ՝ այս էր համահայկական արամազրութիւնը ամէնուրեք:

Այս սպասողական համակրութիւնը զործակցութեան վերածուեցաւ՝ երբ մէկ կողմէ Թուրքիա ո՛չ միայն հրաժարեցաւ

Հայկական Նահանգներու բարենորոգումներու լանձնառութեանէն, այլ նաեւ սկսաւ իր վաղուց ծրագրած հայաջինջ մտադրութիւնը արմատական չափով իրադրեւել*, և երբ միւս կողմէ Համաձայնական Պետութիւնները յայտարարեցին պատերազմի մուտքի իրենց նպատակը հետեւեալ նշանաբանով. «Սրբագրութիւնն հիմնուեցաւ նոր անարդարութիւններու»: Ինչպէս ծանօթ է, այս և նման յայտարարութիւններու խառնուած տարազուժը յետոյ պիտի բանաձևուէր առաքելաբար Ուիլսոնին 14 կէտերուն մէջ(4) և աւելի ուշ մեր պաշտնայնորտն առնչութեամբ պիտի գծուէին ազատապրումը Հայաստանի սահմանները:

Կամայ ակամայ ալիւս գիրքերը վերջնականապէս ճշգրտած էին, հայ և թուրք գէմ գէմի ճակատած: Խուսափում չկար: Պատմական շարժումներու և անցքերու արամարանական զարգացման եզրակացութիւնը կարելի էր սրբագրել: Թէ Հայկական Դատին համար նախորդ [Ա.] Համաշխարհային Պատերազմը վերջացաւ եզրական եզրակացութեամբ և հայ ազգը փոխադրուեցաւ պատմական զարգացման նոր հունի մէջ, թէ անոր մէջ հաստատւած էր թարկուեցաւ ալլապէս նոր և պատմական գոյապայքարի մը՝ ցրտած ալլապան երկրամասերու վրայ և միւսն ալ իր բնաշխարհին մէջ յծուած նոր ազգակերտումի ճիւղերուն, այդ ուրիշ հարց: Մենք աշտակ պաշտպան եմք հետեւել Առաջին Համաշխարհային Պատերազմի զարգացման փութերուն, որոնք աղերս ունին մեր պատմութեան ճշմարտութիւն և անոր ծնուցած շարժումներուն հետ: Մեր նիւթը կը պարտադրէ մեզի ամփոփուիլ 1914-21-ի հայկական հրաշքին մէջ, որ համայնական տարրութեամբ վարեց մեր յարապիտիւնը կեանքը բոլոր ալլապանութիւններով:

Համաշխարհային Պատերազմի մանաւանդ սկզբնական շրջանին էր որ «Ալլապ կամ երեք»-ը պարձաւ օրտան կարգախօսը բոլոր հայրենասէր հայերուն համար: Իրապէս այդ էր մեր հայրենասէր երիտասարդութեան հոգեկան պաշտնաճիւղ: Այդ վրէժխնդրութեան ու բարձրաթուիշ արամապրութեան ճախրը կու գար նախ հրէշային թուրքիոյ ներքնամասէն, ուր ազգ մը

* Ծրագրուած, եթէ չիմ սխալիր, Սկանիկի մէջ գումարուած երիտասարդ Թուրքերու Բ. պատգամաւորական ժողովին մէջ [1911-ին]:

կը ընաշնջուէր բարբարոսական ահաւոր միջոցներով, իսկ երկրորդը՝ Թիֆլիսի մէջ կազմուած Ազգային Բիւրոյի(*) ջոջերէն ու անոր ընկերացոյց Հայաստանի խոտաւորուած ազատագրութեան (իմա՝ անկախութեան) հաւաստումներէն...

Այդուհանդերձ մտածումները հայ ժողովրդական խաւերուն մէջ այլեւս պարտուած էին եւ առաւելապէս զգացումն էր որ կը վարէր ազատասենյ հողիններուն մէջ կոտակուած վրէժխնդրական ալիքները: Օրուան մարտահրաւէրով կ'ոգեկոչուէր «Խաղաղ զաշտի որդիք, լեւները ելլենք»ը, «Այսքան զար լացինք, ո՞վ էր լսողը» կամ այլ ռազմաշունչ երգեր ու տրամադրութիւններ: Շրկացած հրայրքի վերածուած էին սիրտերը: Եւ եթէ ամերիկահայութիւնը կարող չեղաւ տալ իր ոգեւորութեան առաւելագոյն խոյանքը, այդ կը պարտինք մտածող տարրին հեռատեսութեան եւ արհեստով ազմկարարներու ծընցուցած կասկածանքին: Եթէ այդպէս էր արտայայտութիւնը կամաւորական շարժման հանդէպ, այդպէս չեղաւ, սակայն, նիւթական անվերապահ տուչութիւնը, եւ այս՝ թէ՛ ազատագրական ձեռնարկներու, թէ՛ թրքական դէհենէն վերապրող հայորդիներու կարիքին համար: Այդ մէկի քանի տարիներու ընթացքին ամերիկահայութիւնը, մասնաւորապէս իր ժողովրդական խաւերուն զոհարելութեամբ, անմրցելի մնաց հայ սփիւռքի մէջ: Այս չըջանալին նիւթական զոհողութիւնը միլիոնաւոր տուարներու կը հասնի:

Հեռաւոր Ամերիկայի մէջ ոչ մէկ կարելիութիւն կար ստուգելու Ազգային Բիւրոյի կազմին, անոր մէջ բազկացուցիչ

(*) Ազգային Բիւրօն վերջնականապէս կազմուած էր 1921 Նոյեմ. 25-ին Թիֆլիսի մէջ: Բոլոր հոսանքներն ալ կը մասնակցէին անոր գործադիր կազմին: Ան գլխաւորապէս պիտի զբաղէր դիւանագիտական աշխատանքներ կատարելով եւ այդ աշխատանքը պիտի տանէր մասնաւորապէս ոռւս կառավարութեան բարձր շրջանակներուն մօտ՝ օժանդակելու պաշտօնի կոչուած Պօղոս Նուպար փաշային Ազգային Պատուիրակութեան: Ան պիտի գործէր Ամենայն Հայոց Կաթողիկոսին անունով՝ իբր օժանդակ գործավարու Ազգ. Բիւրօն ժամանակի ընթացքին աւելցուց իր յանձնառութիւնները, մինչեւ հասաւ կամաւորական շարժումը ստեղծող ու վարող մարմնոյ հանգամանքին: Ան իր կազմէն կորսնցուց դաշնակցականապէս շտաժող տարրերը եւ վերջապէս վերածուեցաւ Դաշնակցութեան ամենազօր գործիքին, որ մենատիրական շարժումներով վարեց ամենակենսական գործերը, մինչեւ որ փլուզումը արդէն իսկ ազգային աղէտի համեմատութիւնը ստացաւ:

հոսանքներու հաւասարակշռութեան, զեկաւարոյ ազդեցութեան ու կամաւորական շարժումի ծնունդին պարագաները եւ անոնց տակ թաղեալ քաղաքական անթափանցելի դադանիքները: Չափոյ մը միայն Ամերիկայի դաշնակցական վարիչ շրջանակները յարաբերութեան մէջ էին Կովկասի իրենց զեկաւար ընկերներուն հետ ու թերեւս մասամբ միայն տեղեակ՝ Կովկասի ու Կովկասահայ ներքին իրադարձութիւններուն եւ հոսանքներուն զիրքորոշման: Միւս կուսակցութիւններն ու հատուածները մեծ անծանօթի մասին միայն թաղուն կասկածանքով կարող էին մտածել, եւ այս՝ ժամանակի րնթացքին աւելի հիմնական զիծ մը դարձաւ, երբ կասկած անուշանոց մթնոլորտը աւելի շատուցաւ դաշնակցականներու կողմէ: Թէեւ բոլոր կուսակցութիւնները հայրենասիրական ամենարարձը տրամադրութեամբ աշխուժացած էին, բայց կամաւորական շարժման ժմբկահարութիւնը մեծ տատիճանով կը ներշնչուէր զրեթէ միայն դաշնակցական շրջանակին կողմէ: Մինչ միւս կուսակցութիւններու վարիչ շրջանակները չէին կարող իրենց երիտասարդ տարրերուն հայրենասիրական եռանդին ուժղնութեան թափը ջլատել՝ առանց փճացնելու չորջ երեք տասնեակ տարիներու քարոզչութիւններով ձեռք բերուած հայրենասիրական արդիւնքը:

Աղքանական զգացումներու հոգեբանական տաղնապին յաջորդող դատողութեան շրջանին մէջ ալ կարելի չէր խանդավառութեան ալիքին հակադդել: Ուստի Դաշնակցութենէն դատ միւս կուսակցութիւններուն կը մնար նախ փոքր ճիւղերով մասնակցիլ համատարած շարժումին - կամաւորական դործին - եւ յետոյ տեղւոյն վրայ լըջօրէն ուսումնասիրելէ ետք միայն իրենց առաւելագոյն զոհարերութիւնը տրամադրել: Այսպէս տրամադրուած էին վերակազմեալ Հնչակեան (Ազատական Աղգայնական) Կուսակցութեան վարիչ շրջանակին միտքերը եւ սխալած չեմ ըլլար եթէ նոյն հաւատաւոր տամ Հայ Սահմանադրական Կուսակցութեան ղեկավարներուն համար ալ: Այս շրջահայեցութիւնը թեկադրուած էր դաշնակցական մեկուսացման շարժումներէն եւ իւրայատուկ դործունէութենէն, ինչպէս նաեւ ցարական կառավարութեան վերադրուած ազատագրական յայտարարութեան մասին հաւատաւորներու փաստականօրէն տարտամ ու խուսափողական տուեալներէն:

Այսուհանդերձ, ժամը հնչած էր եւ վերակազմեալ Հընչակեան Կուսակցութիւնն ալ պատրաստեց կամաւորներու առա-

ջին ստուար խումբը եւ անոր ղեկավարութիւնը յանձնեց ընկեր քեփթըն Ճիմ (Պետրոս) Չանգալեանին:

Ընկեր Չանգալեանը, ախարպէքերցի ծնողքի մը գաւակ, իր մանկութեան օրերուն բերուած էր Ամերիկա: Ծիմը մարդուած էր ամերիկեան բանակին մէջ եւ մասնակցած [1898-ի] Սպանո-ամերիկեան Գուպայի ճակատամարտերուն: Ան օտուուած էր անսպառ ուժականութեամբ, յանկուցիչ բնաւորութեամբ, եւ այլ բարեմասնութիւններով: Եթէ յաջորդ խումբերը անհրաժեշտ դառնար կազմել ու ճակատ դրկել, անոնց ղեկավարութիւնը պիտի յանձնուէր Կուսակցութեան միւս զինուորականներուն:

Այստեղ անհրաժեշտ է տալ կմախքային պատկերը այն անցքերուն, որոնք տեղի ունեցան ամերիկահայութեան ղեկավար չըջանակներուն մէջ: Նախ, 1914 Նոյեմբեր 12-ին կազմուեցաւ չորս Կուսակցութիւններէն(5) բաղկացած միջ-Կուսակցական մարմին մը, որուն նպատակն էր ուժերու համագործութեամբ պաշտպանել հայկական շահերը գիւտնադիտական ու զինուորական ճանապարհներով: Այդ շարժումը խոստմնալից էր եւ անկեղծ: Այս կազմը բնդարձակուեցաւ նոյն տարուոյ Դեկտ. 16-ին, ամերիկահայ Երեսփոխանական Ժողովին մասնակցութեամբ: Ակտու համագլխային շարժում մը եւ ունեցաւ զործող մարմին մը «Ազգային Պաշտպանութեան Ամերիկայի Յանձնախումբ» անունով: Այս կազմակերպութեան շարժումները կը տարուէին երկու գծով՝ դրամական հայթայթման (հանդանակութիւն) եւ ազգային գերագոյն շահերու պաշտպանութեան առաջադրութիւններով: Կուսակցական գործիչները իրենց հրավառ գրութիւններով եւ տտեհախօսութիւններով մեծ խանդավառութիւն ստեղծեցին ամերիկահայ զանգուածներուն մէջ: Հանդանակութիւնը մեծ յաջողութեամբ յառաջ կը տարուէր:

Ամերիկահայոց նիւթական զոհարերութեան արդիւնք եղող դումարներու մասին բնդհանուր հաւանութեամբ որոշ հասկացողութիւն գոյացած էր: Հանդանակուած գումարին 25 առ հարիւրը պիտի դրկուէր Ազգային Բիւրոյին. բայց զաշնակցականները, քիչ մը ատեն զործակցելէ յետոյ, պահանջեցին որ այդ համեմատութիւնը փոխուի 50 առ հարիւրի եւ զրկուի «ընկեր» Կարճիկեանի հասցէով՝ Բիւրոյին: Ժողովականները դաշնակցական նոր առաջարկը չէին կարող ընդունիլ, այլ կը պընդէին Ամենայն Հայոց Կաթողիկոսին հեղինակութեան տակ զործող մարմնոյն դրկել, ուղղակի՝ համաձայն կանխապէս որոշուած 25 առ հարիւրի համեմատութեան, եւ այս՝ յատկաց-

ւելու միայն ամերիկահայ կամաւորներու պէտքերուն, դրամի փոխանցումը կատարելով ռուսական զեւապանատան միջոցով: Դաշնակցականները կը հաւատային թէ Ազգային Ռիւօն համադրային հանգամանք ունի եւ կը պնդէին 50 տո հարիւրի պահանջին վրայ: Ժողովի մերժումէն յետոյ, դաշնակցականները անմիջապէս հեռացան եւ սկսան անջատ հանդանուութեան եւ կամաւորական շարժումի:

Դաշնակցութեան բաժանումէն յետոյ, մնացեալ բոլոր հատուածները, որ կը կողմէին ամերիկահայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, սկսան դործել «Ազգային Պաշտպանութեան Միութիւն Ամերիկայի» անունով: Յաջորդական ամիսներուն հնչակեաններն ալ սկսան խօսիլ իրենց Վեցերորդ Տրուժինային մասին եւ կամաւորներ արձանագրել: Այս վերջինը տեղի ունեցած էր առաւելապէս երբ մենք արդէն բաժնուած էինք Ամերիկայէն:

**

Այս նախադժոմը ուրուագծային բացայայտումն է ամերիկահայութեան շարժումներուն ու խմորումներուն: Այս պայմաններուն տակ էր որ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան կամաւորական առաջին խումբը պատրաստուեցաւ ու ճամբայ ելաւ. կատարելու իր նախնական պարտականութիւնը ազգին ու հայրենիքին համար: Պէտք է հոս յիշել թէ հայ սահմանադրական ռամկավարներու փոքր խումբ մը (քսան հոգի) արդէն մեղմէ առաջ ճամբայ ելած էր Անուշաւան Տէր Մկրտիչեանին առաջնորդութեամբ: Կային ուրիշներ ալ՝ իրենց կարգին:

Վերակազմեալ հնչակեան առաջին խումբին հաւաքման կեդրոնավայր որոշուած էր Նիւ Եորքը: Հոն էր որ պիտի կատարուէր խումբին անհրաժեշտ սարքաւորումը, ուրկէ պիտի մեկնէր զէպի Կովկաս, Արխանգելսքի գծով, քանի որ Պալթիկի եւ Աւե ծովի ճամբաները խռնուած էին թշնամի ուժերով:

Օգտուելով խումբին սարքաւորման համար պահանջուած ժամանակէն, մտածուեցաւ կանխապէս մէկ-երկու հոգի զրկել՝ ուսումնասիրելու Կովկասի կացութիւնը եւ կանխաւ կատարելու խումբին համար անհրաժեշտ եղած աշխատանքը:

Յայտնի է թէ այս կուսակցութիւնը Կովկասի մէջ չունէր այլ անհրաժեշտ լանճնառութիւնը ստանձնող կեդրոն մը:

Յարմար դատուեցաւ որ ես անմիջապէս ճամբայ ելլեմ եւ այդ պարտականութիւնը կատարեմ նախքան խումբին Կովկաս հասնիլը: Ինծի ընկերացան ընկերներ Ն. Դչխոյեանը եւ Գ.

Գրաթխանը: Շնորհիւ այս կանխամտածուած կարգադրութեան, խումբին խնայուեցաւ. ենթարկուելի այն լքուածութեան, որ վիճակուած էր նախապէս մեկնած ընկեր Անուշաւան Տէր Մկրտիչեանին առաջնորդութեամբ Թիֆլիս հասած հայ սահմանադրական ռամկավար ընկերներուն:

ՆԱԽՈՒՆ ՎՐԱՅ

Եթէ չեմ սխալիր, 1915 Օգոստոս 18-ին էր որ «Յարիցա» նաւը ճամբայ ելաւ: Նաւը ռազմամթերք կը փոխադրէր: Անոր վրայ կային 60-70 լեհ եւ չորս հնչակեան կամաւորներ: Նաւը ճամբու. ընթացքին ունեցաւ մէկ քանի պատահարներ, որոնցմէ մէկն էր Իսլանսայի շրջանին մէջ նաւուն բախումը վիթխարի սառցալեւան մը: Յնցումը եղաւ շատ ուժեղ եւ կրեցինք այն տպաւորութիւնը՝ թէ գերման ընդժովեայի մը յարձակման ենթարկուած էինք: Գիշեր էր, երբ նաւուն վրայ բարձրացանք, տեսանք թէ սառցալեւան մը ճամբուն վրայ ենք: Անոր ապառաժային ցցուածքը, որ բաւական ընդարձակ տարածութիւն մը բռնած էր, գոյնով քիչ կը դանազանուէր հիւսիսայգի լոյսով տեսնուած իր գորշ շրջապատէն, ծովուն ու երկիրքին գոյներէն: Դանդաղօղ նաւը ետ-ետ քաշուեցաւ եւ իր ճամբայէն չեղեցաւ՝ մինչեւ որ վտանդը անցուց: Այս աշխատանքը տեւեց մօտաւորապէս կէս ժամ: Այդ վտանդէն ազատելէ յետոյ, նաւուն տախտակամածին վրայ հիւսիսայգի լոյսով, լեհ կամաւորներն ու իրենց ընկերացոյց սակաւաթիւ աղջիկները՝ խնդխանդավառութեան մղումէ մը բռնուած՝ մինչեւ առաւօտ պարեցին ազգային պարեր: Միայն հայերն էին որ իրենց թախծոտ հանդիսատեսութեամբը գոհացան՝ հետեւելով պարոյներու մերթ նայանքով ու յաճախ փութկոտ չարժումներուն: Այդ պարերը Արջային ուկրաինոսի մեյամաղձոտ սառնութեան մէջ աշխոյժ հակադրութիւններ էին, որ երիտասարդութեան մշտանորոգ ոգևորութեամբ յաճախ կը կրկնուէին մեր տասնչորսօրեայ նաւարկութեան ընթացքին:

Մեր նաւը ընդհանրապէս դանդաղ զգուշաւորութեամբ մը կը սահէր հանդարտ ջուրին վրայէն եւ յիշուած պատահարի ընթացքին, համաձայն նաւապետի հաւաստումին, ամբողջ գիշերուան ընթացքին միայն երեսունհեւէինգ մղոն ճամբայ կտրած էր: Եւ այդ դանդաղ ընթացքին կը պարտէինք մեր կեանքերուն փրկութիւնը:

Երբ նաևուն վրայ լեհ երիտասարդութիւնը խնդութեան համող գուարթ խանդավառութեան մէջ կը գլխէր գէպի իր աղատագրունելիք հայրենիքը, ես յաճախ կը թաղուէի թախծոտ խոհերու մէջ, մտածելով իմ ժողովուրդիս ենթարկուած ահաւոր անցքերուն եւ անդրադառնալով իմ պարտականութիւններուն դժոյթ ընելիքիս:

Գիրքերով ու թերթերով միայն ծանոթացած էի կովկասեան հարցերուն եւ ժողովուրդներուն: Իմ ծանոթութեանս պաշարը գրքունակ էր եւ թերեւս միակողմանի ու պակասաւոր, քաղուած գլխաւորաբար հայկական աղբիւրներէ: Մեծ չափով անծանօթ էին պատերազմի հետեւանքով ստեղծուած ընկերային, քաղաքական եւ միջազգային միջավայրն ու մեր ներքին տրամադրութիւնները: Այսպէս՝ բազկացուցիչ ժողովուրդներու եւ ցարական կառավարութեան թաղնուած վերաբերումները հանդէպ մեր ժողովուրդին ու մեր արխիւոտ եւ վտանգուած դատին՝ ինծի կը մնային մեծ չափով անծանօթ: Այս պարագան ու մեր ներքին իրականութեան ճշգրիտ պակասը կ'արդիւլէին ինծի անմիջապէս գծել աշխատանքի ուղղութիւնը եւ ալիքակալել արդիւնաւոր յաջողութիւն: Այս եւ նման ուրիշ մտածումներ կը գրադէյնէին միաքա ճամբորդութեանս ամբողջ տեւողութեան ընթացքին, մանաւանդ նաևուն վրայ մտքիս համար մեծ պատեհութիւն ստեղծուեցաւ՝ կեդրոնացնելու զայն գործելակերպիս վրայ:

Նկատելով որ Կովկասի մէջ կուսակցական շրջանակ չունէինք եւ Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ կուսակցական նկատումներով բաժնուած էր բնդհանուր գործակցութենէն ու անջատ գործունէութեան սկսած, նաև նկատելով որ կովկասահայ իրականութիւնը ամբողջական ըմբռնումով մեծ համեմատութեամբ անծանօթ կը մնար ինծի, ուստի պէտք էր զործածել արտակարգ զգուշացումներ մը:

Արդ, չափազանց պատասխանատու աշխատանքը ինծի կը պարտադէր նախ ուսումնասիրել, կացութիւնը իր ամբողջական տարողութեամբ, անշուշտ որքան հնարաւոր էր այդ իմ պայմաններուն մէջ գտնուողի մը համար: Պէտք էր, սակայն, շարժիլ արագ եւ վերջնական կարգադրութիւն մը ձեռք բերել նորից խումբին կովկաս հասնիլը:

Երբ Մարմանաքի քուրերը հասաւ նաւը, արդէն օդը տանիլի ասորիճան մեղմացաւ եւ ծովային թռչունները մեր նաւուն հետեւիլ սկսան: Եւ երբ Սպիտակ ծովը մտանք ու գէպի հարաւ՝ Արխանգելսքի կը մօտենայինք, սառած ծովուն մէջ նստարկու-

թեան համար ճամբար մը բացուած էր: Այդ նեղ անցքէն կը յառաջանայինք դէպի նաւահանգիստ:

ԱՐԽԱՆԿԵԼԱՔԵՆ՝ ԹԻՖԼԻՍ

Արխանկելսք Սպիտակ ծովու հարաւային եղերքին վրայ հաստատուած աննշան քաղաք մըն էր, որ իր նշանակութիւնը կը ստանար միայն նաւահանգիստ մը ըլլալու իր հանդամանքէն: Չափազանց տխուր տպաւորութիւն մը թողուց մեր Ամերիկայի սովոր աչքերուն վրայ: Մեզի վիճակուեցաւ երեք օրեր անցընել Արխանկելսքի մէջ: Երկրին ներսը ճամբորդելու համար պէտք էր սպասէինք արտօնութեան: Պէտք էր ստանայինք մեր անձնական զէնքերը, որոնք պայուսակի մը մէջ կնքուած ու Նիւ-Եորքի ռուսական հիւպատոսին կողմէ յանձնուած էին «Յարկ-ցառ»ի նաւապետին: Նաւահանգիստի հրամանատարէն վերջապէս ստացանք անհրաժեշտ արտօնութիւնը, որ մեր զէնքերը թիֆլիսի մէջ մեզի յանձնուին: Բայց մեզի թուեցաւ թէ թուղթը ստանալը այլ բան էր, իսկ զէնքերը՝ այլ բան: Մեր կասկածը մղեց մեր աղոյցմէ մէկը, որ անուղիղ միջոցով ստանայինք զանոնք: Հնչակեան Յովհաննէս (չմշկածաղցի) անունով երկուսսարդ մը մաքսէն գողցաւ այդ զէնքերն ու փամփուլաները: Համաձայն տշխատանքի ծրագրիս, Վոլոկտայի մէջ յայտնեցի Դչխոյեանին թէ ինք պէտք է զատուի ինձմէ՝ երթալու Մոսկուա ու փեթերսպուրի, մեզի պէտք եղած ուսումնասիրութիւնը կատարելու համար: Ծրագիրս պարզեցի իրեն՝ այդ խօսակցութեանն առեւ: Ընկերներս բաժնուեցան ինձմէ՝ փեթերսպուրի ու Մոսկուայի հայկական շրջանակներուն մէջ կատարելու իրենց թելադրուած ուսումնասիրութիւնը: Թիֆլիս հասնելէս կարճ միջոց մը ետք եկան ընկերներս՝ կատարած տրուած առաքելութիւնը:

ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Անձայրածիր ապիստամներ կտրելէ յետոյ, Սեպտեմբերի սկիզբները հասաւ թիֆլիս, որ Կովկասեան ճակատին ռազմական ու քաղաքական գործունէութեան կեդրոնավայրն էր: Ինծի վիճակուած էր առաւելապէս թիֆլիսի մէջ գործել:

Նիւ-Եորքէն մեկնելէս առաջ, երկու յանձնարարականներ

տրուած էին ինծի: Առաջինին մէջ, որ անդլերէն էր, կը ճըշ-
դուէր առաքելութեանս բնոյթը եւ կը խնդրուէր որ դիւրու-
թիւններ ընծայուին անարգել կատարելու համար իմ յանձնա-
ռութիւնս: Այդ բաց յանձնարարականին մէջ բացայայտօրէն կը
յիշուէր որ ես պիտի զբաղէի մեր կամաւորներու գալիք խում-
բերուն գործերով: Այդ իմ աշխատանքին պաշտօնական տարա-
գումն էր միայն, որ թոյլ պիտի տար նաեւ խոսնելու ճիգերս
ազգային բոլոր շարժումներուն, որոնք կենսական նշանակու-
թիւն ունէին մեր ժողովուրդի շահերուն համար: Բնականաբար
իմ ճիգերս պիտի տարածուէին հոն, ուր գործելու պատեհու-
թիւն ունէի եւ անհրաժեշտ կը նկատէի:

Երկրորդ յանձնարարականը գրուած էր Տիրայր Վրդ.
Տէր Մարգարեանէն եւ ուղղուած՝ Բենիկ վարդապետին, ապու
աշխատանքին համար անհրաժեշտ ծանօթութիւնները կովկասի
եւ մասնաւորաբար հայկական շրջանակներու մասին: Եթէ ա-
ռաջին յանձնարարականը մեծ նպաստ կարող չեղաւ բերել օ-
տար շրջանակներու մօտ, երկրորդը, սակայն, ծառայեց ինծի
իրր թնձուկի ներքին ծալքերուն թափանցելու առաջին րոնա-
լին: Բենիկ վարդապետը եւ յետոյ ուրիշներ, իրենց կարգին,
տեսակցութիւններու ընթացքին ծանօթացուցին կովկասեան
իրադարձութիւններն ու անոնց պատճառական տուեալները:
Անշուշտ անոնք, որոնց հետ իմ հետապնդումներուս աւրնչու-
թեամբ տեսակցութիւններս շարունակեցի, տուին ինծի ցու-
ցումներ, յուսարանութիւններ եւ մտածման նիւթեր: Այդ տե-
սակցութիւններս ու այլապէս ալ իմ անձնական գիտարկու-
թիւններս իմ մէջ գոյացուցին վերջնական եզրակացութիւններ
աւելի բնդարձակ ծաւալով ու խորքով՝ քան նախապէս ունէի:

Թիֆլիս հասնելուս երկրորդ օրն իսկ ուսումնասիրական
տեսակցութիւններուս սկսայ: Իրր աշխատանքի մեթոտ ծրա-
դրեցի կացութեան մասին հայկական ներքին հոսանքներու տե-
սակէտները հաւաքել եւ ինծի համար գործելու որոշ ուղի մը
ընտրել: Մասնաւոր տեսակցութիւններս սկսան «Հովիտ»ական
շրջանակէն ու տարածուեցան («Վշակ»ականներու, սոցիալ գե-
մոկրատ հնչակեաններու, հայ սահմանադրական դեմոկրատնե-
րու, բիւրոյականներու եւ միացած անկախ մտածողներու շր-
ջանակները: Այդ արեւելահայերու շրջանակներուն մէջ կատա-
րած աշխատանքիս ընթացքին հետեւեցայ նաեւ արեւմտահայ
գաղթականներու տեսակէտներուն՝ մասնաւորաբար անոնց յի-
ճակուած դժբախտ կացութեան տարնչութեամբ: Ամէնէն վերջը
էջմիածին մեկնեցայ ինծի յանձնարարուած մասնաւոր գործով

մը, որուն նպատակն էր գործուած անտրդարութեան մը դարմանումը ինդրել Ն. Ս. Օ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրբնեան վեհափառէն: Ոգտուեցայ այդ պատեհութենէն եւ մի քանի հանդիպումներու ընթացքին վերջապէս կարող եղայ ստուգել Թիֆլիսի մէջ գոյացուցած կարգ մը ապստրութիւններու ու համոզումներու ճշգրտութիւնը: Ատոնցմէ կարեւորագոյնը ինծի համար եղաւ ճշդեյ Ազգային Բիւրոյի իսկական հանգամանքը եւ կամաւորական շարժումին հետ կապուած ինչպէս նաեւ Հայաստանի ազատագրութիւն խոստացող ցարական յայտարարութեան իրականութիւնը(6):

«Հովիտ»ական հոսանքին վերաբերող երեք յայտնի դէմքերու հետ տեսուեցայ: Բնականաբար անոնցմէ առաջինը եղաւ Բենիկ վարդապետը, որուն յանձնարարուած էի: Երկրորդ անձն էր Սամսոն Չերքեզեանը, իսկ երրորդը՝ «Հովիտ»ի խրմբագիր Եղնիկ քէն: Երզնկեանը: Առաջինը խօսեցաւ հոսանքներու ղեկավարներուն շուրջ, մասնաւորաբար իր խօսակցութեան առանցքը փոխադրեց էջմիածնական գործերու վրայ, որոնց մասին տուաւ ընդարձակ տեղեկութիւններ, անշուշտ համաձայն իր դատումներուն: Իր դատումները, սակայն, յայտնապէս ազդուած էին անձնական նկատումներէ, որոնց խառնած էր կիրքը: Բենիկ վարդապետը յետոյ ալ պահեց այդ հակակրական գիծը եւ երկրորդ Հանրապետութեան օրերուն դարձաւ Ազատ Եկեղեցին հաստատողներէն մէկն ու բաւական առեն ալ իր վրայ խօսեցուց: Իր ներկայացուցած էջմիածինը այնքան ալ մխիթարական համայնադատներ մը չէր ներկայացներ՝ իբր հոգեւոր կեդրոն եւ մտաւորական առաջնորդող հեղինակութիւն: Եկեղեցին պարպուած էր իր էութենէն եւ կը ներկայացնէր միայն արտաքին կեդեր՝ վերկելու համար երեւոյթները: Այսպէս կը ներկայացնէր ան կացութիւնը կրօնական գծով:

Երկրորդը՝ Սամսոն Չերքեզեանը, կը ծանրանար մասնաւորաբար ռուսահայ քաղաքական յարաբերութիւններուն վրայ, ի միջի այլոց յաճախ անդրադառնալով Հ. Յ. Դանակցութեան կատարած շարժումներուն ներքին ծայքերուն:

Իսկ «Հովիտ»ի քահանայ խմբագիրը ընդարձակ ծանօթութիւններ տուաւ հրապարակին վրայ գործող հեղինակաւոր դէմքերու մասին: Այս վերջին գծով երեքն ալ իմ ծանօթութեան չըջանալի ջանացին ընդլայնել: Թէ՛ս ընդ խմբապէս նոյն ուղղութեամբ կ'արտայայտուէին «Մշակ»ականներն ալ:

Միջանկեւզ գիտեյ տամ թէ իմ բոլոր տեսակցութիւններու մէջ ալ նպատակս էր ո՛չ միայն ստուգել օրուան կացու-

Թեան մասին անհրաժեշտը, այլեւ մօտէն ծանօթանայ բոլոր պատմական շարժումներուն, որոնք Հայկական Հարցին առընդոթեամբ տեղի ունեցած էին վերջին մի քանի տասնեակ տարիներու ընթացքին: Ուղեցի նաեւ իմ խօսակիցներուն տեսակէտները լսել զիս հետաքրքրող զանազան հարցերու նկատմամբ. իսկ հետաքրքրող դէմքերու հետ մշտապէս չփոխ պահեցի Կովկասի մէջ բնակութեանն երկք տարիներու ընթացքին, եւ այս՝ թէ՛ խորհրդապահական տեսակցութիւններով եւ թէ՛ զանազան կազմերու մէջ իրր ժողովական դորձելով:

«Մշակ»ական հոտանքէն տեսնուեցայ, ի միջի այլոց, Ստեփաննոս Մալխասեանցին, բժշկապետ Բաղարատ Նաւասարդեանին, Աւետիք Եղեկեանին եւ «Մշակ»ի խմբադրասպետ Համբարձում Առաքելեանին հետ: Տեսակցութիւններն շարունակեցի Ս. Դ. Հնչակեաններու առաջնորդաց ղեմքերուն հետ նաեւ: Նոյն ուղղութեամբ հետապնդումներ կատարեցի Սամսոն Յարութիւնեանին, Յ. Սփեղիարեանին, Լէոյին, Արամայիս Երզնկեանին, Մեսրոպ Մաղիսարոսին եւ ուրիշ յայտնի անձնաւորութիւններու հետ ու չօչափեցի անոնց տեսակէտները իմ յանձնառութիւններուն հետ կապ ունեցող բոլոր հարցերուն մասին:

«Հովիտ»ի հոտանքին պատկանող մարդիկ՝ մասնաւորաբար Չերքեզեանը, հայկական շահերու տեսակէտով բացարձակապէս դատապարտեցին հայ կամաւորական շարժումը, զիտել տալով Ռուսիոյ յաւիտենական խաղր, որ պատմական անցեալ ունի եւ կը զայլադնէ մեզ յըջապատող վրացի ու թաթար տորպէյճանցի ժողովուրդները, ինչպէս նաեւ շովէն ուսուրը: Անոնք կը հաւատային թէ ուսուրն թունաւոր հայտանցութիւնը, միացած՝ դաւող վրացիին ու քինախնդիր թաթարին թշնամական տրամադրութիւններուն, ստեղծած է հայ ժողովուրդին համար վտանգաւոր առանձնացում: Հայերու հանդէպ այդպիսի դիրքաւորման մէջ կամաւորական շարժումն ու մեր ազգային բազաքական տենչանքներուն յախուռն տրտալատութիւնները արդէն պատճառ դարձած էին որ յորդին թագնուած ատելութիւնները: Անոնք կը պնդէին թէ թաթար ազգները Պարսկաստանի վրայով մշտական յարարերութեան մէջ էին օսմանեան թուրքերու հետ եւ անոնց թեյադրութեամբ միայն կը շարժին՝ իրադործելու իրենց ազգային բազանքները համալրամութեան ու համաթուրանական յըջողիծին մէջ: Այս համոզումը յետոյ իրերայաջորդ ղէպերու ընթացքին բացայայտ իրականութիւն դարձաւ: Անոնք յստակօրէն կը յայտարարէին

Թէ հայերու կողմէ կամաւորական շարժումով քաղաքական հետապնդումը, մանաւանդ իր «լուսիւսագ» - զէվզէկ (պոռոտախօս) - ձեւին տակ պարզապէս արուած, պայմաններուն մէջ ինքնասպանութիւն է եւ այս կործանարար շարժման ստեղծողներն ու ղեկավարները դաշնակցականներն էին, որոնք պիտի մնան պատմութեան դատաստանին առջև. խորանուած: Յարական Ռուսիոյ եւ Դաշնակցութեան փոխադարձ յարաբերութիւնը հիմնուած է փոխհացի մատուցման ու ստացման փոխանակութեան վրայ, կը պնդէր Չերքեզեանը: Ան կ'ըսէր թէ Պատերազմէն առաջ ռուս կառավարութեան թշնամութիւնն ու հալածանքները իր վրայ հրաւիրող Դաշնակցութիւնը*, որ սմբած վիճակի մը ենթարկուած էր, այժմ հայկական իրականութեան մէջ կայտութեան տէր դարձած էր՝ պարզապէս խաղալիկ դառնալով ռուս կառավարութեան ձեռքը: Եւ Չերքեզեանը կը կարծէր թէ կամաւորական շարժումը ինքնին իր վախճանին կը մօտենար, քանի որ մարքը - պատկերը «Օթելլօ»էն առնուած - իր դործը կատարած էր այլևս. սահմանին միւս կողմը հայ չէր մնացած: Ան դառնութեամբ կը չեչուէր թէ այժմ բնաջնջման հերթին ենթարկուած է արեւելահայութիւնն ալ: Ասան մը ետք իր նախատեսութիւնը իրականանալու ճամբուն մէջ մտած էր եւ ռուսերու վերադարձը միայն դաշն կոտեցուց:

«Հովիտ»ական հոսանքը պահպանողական էր եւ Սամսոն Չերքեզեանը՝ անոր կեդրոնական գէմքը՝ թունդ պահպանողական մը: Իր գաղափարներուն ու տեսակէտներուն չափով մը ծանօթ էի նախապէս, իր «Ռոմանեանը գրողարուութեան ցանցերում» գործին ընթերցումովս: Հարուստ էր Չերքեզեանը լայն ծանօթութիւններու պաշարով, եւ արտաքին բազմազան տարրերու՝ հայոց հանդէպ ունեցած բացասական վերաբերումին տեսակէտով ունէր փաստական ապացոյցներ: Իր գիրքով ան ունեցած էր եւ ունէր պատահութիւնը, ուսումնասիրելու ռուս ղեկավար յրջանակներուն քաղաքական աշխարհահայեացքն ու միտումները: Ան հետեւած էր Հայկական Հարցին բոլոր յրջանփոխութիւններուն, որոնք տեղի ունեցած էին վերջին տարիներու ընթացքին: Ան կ'ըսէր թէ հայերը պէտք էր ուստական քաղաքական բարդ հաշիւներուն մէջ նետուէին: Անոնցմէ բարիք սպասել, ունայնամտութիւն է եւ հայկական շահերու հակառակ

* Դաշնակցութիւնը առաւելապէս ինքն էր ստեղծողը այդ թշնամութիւնը: Ի միջի այլոց յիշենք Երիտասարդ Թուրքերու մեղրալուսնային տարիներուն անոր հակառուս ելույթները Պոլսոյ մէջ:

ճիշդ: Եւ Դաշնակցութիւնը կուսակցական իւրայատուկ շահերու թելադրութեամբ արջի ծառայութիւն մատուց հայ ժողովուրդին: Երբ ան այս նիւթերու մասին կը խօսէր, յաճախ կը հասնէր կրքոտութեան եւ խիստ ու սուր որակումներով կը հարուածէր զդաշնակցականապէս մտածող դործիչներու ճակատները: Յայտնապէս ծայրայեղութիւններու մէջ կ'իյնար ան իր գաւառումներով, թէեւ իր մտածման ընդհանուր դժով սուր դիտող, ճիշդ դատող մըն էր՝ եթէ կիրքի միջամտութեան չենթարկուէր:

Մեր երկուքին տեսակցութիւնները յաճախողէպ էին եւ ես կարեւոր չափով կը հետեւէի օրուան իրադարձութիւններուն, երբ մանաւանդ անոնք լրագրութեան նիւթ դարձած չէին դեռ: Ես որ նախապէս կարեւոր չափով ուսումնասիրած էի հայեւուն պատմական յարաբերութիւններու անցքերը, Չեքոսլովանիան ու Սամսոն Յարութիւնեանին տուած առաքելական ծանօթութիւններով աւելի կը լուսարանուէի՝ թափանցելու կողմերու ներկայ դիրքաւորման խորքին ու պատճառական տուեալներուն, եւ այս՝ մասնաւորաբար վերջին տարիներու պատմութեան առնչութեամբ:

«Մշակ»ական հոսանքին ներկայացուցչական դէմքերն ալ թէեւ աւելի չափաւոր եւ սակայն գրեթէ նոյն եղբայրացութեան կը հասնէին ցարական ռուս կառավարութեան քաղաքական նպատակներուն եւ միտումներուն, ինչպէս նաեւ Դաշնակցութեան վտանգաւոր խաղաղութեան հետեւանքներուն առնչութեամբ: Այս հոսանքին գլխաւոր արտայայտիչն էր Թունդ հակադաշնակցական «Մշակ»ի խմբագրապետ Համբարձում Առաքելեանը: Ան կը տեսնէր մի միայն չարիք հայ ժողովուրդին համար Դաշնակցութեան դործունէութեան մէջ: Անոնց գործելակերպը կ'որակէր պատեհապաշտ, անուղղամիտ, խօլական ու շահագիտական, եւ կ'ափսոսար անմեղ հետեւորդներու սպառումին համար: Ան կը մեղադրէր Էջմիածինը, որ երկար տունն Ազգային Բիւրօյին ետեւը թաղնուած Դաշնակցութեան ձեռքը խաղալիկ դարձաւ հայեւուն յարաբերութիւններու դործերուն մէջ: Առաքելեանին հետ ծանօթութեան ու գործակցութեան մասին առանձին կ'անդրադառնամ:

Կամաւորական շարժումը, իր խմբումի շրջանին, խոր տարակարծութիւններ ստեղծեց ոչ միայն Դաշնակցութեան գուրս եղող շրջանակներու կողմէ, այլեւ բուն իսկ դաշնակցական կեդրոններէն ներս: Ընդհանրապէս դաշնակցական արեւմրտահայ հաստեամբ եւ կարեւոր մաս մըն ալ արեւելահայեր

կը մտածէին թէ վտանգաւոր խաղարկութիւն մը պիտի ըլլար կամաւորական շարժումը հայկական շահերու տեսակէտով, եւ ան մանաւանդ պիտի նշանակէր արեւմտահայերու ստոյգ կորուստը: Բայց խելադար հատուածը, որ խանդավառուած էր զգացական հայրենասիրութենէ ու մասամբ ալ վրէժխնդրական զգացումէ, տարուած էր նաեւ կուսակցական նկատումներէ, թերեւս անոնցմէ ոմանք այ՝ անձնական հաշիւներէ, յեցած ռուս կառավարութեան ոճրային խաղարկութեան, յաջողեցաւ գործի անցնիլ եւ վարել հայ ժողովուրդը դէպի անհակալէռելին եւ դէպի գալոց արհաւիրքը: Եւ հայ ժողովուրդը նետուեցաւ մեծ խաղին մէջ, որ իրեն պիտի տար պատմութեան մեծագոյն աղէտը: Ազգային Բիւրօն արտաքին պահպանակի զերը ստանձնեց՝ թոյլ տալու համար որ գործող զաշակցական տարրը իր շարժումի յաւիտենական մենաժողովիւնը կիրարկէ առանց չըջահայեցութեան եւ առանց հաշուական ըմբռնութի: Մատոնցուեցաւ արջի ծնողայութիւն մը աւելի զարհուրելի ողջակիզման: Կատարուեցաւ անորակելի թուրքին ծրագրած համաթուրանականութեան առաջին արարը, բայց կարելի չեղաւ իրադրօժել Կեղընական Ասիայէն մինչեւ Պալքանները տարածուելիք մեծ կայսրութեան մը երազը, որովհետեւ ուսար հոն կեցած էր:

Իմ հանդիպումներս Ս. Դ. հնչակեաններու հետ սկզբնական շրջանին սիրալիր էին, սակայն փոխադարձ հետազօտումի բնոյթով կ'ընթանային: Անոնց մէջ կազօն կուսակցական հին ազուէս մըն էր, որուն հետ յաճախ կը տեսնուէի անպաշտօն հանգամանքով եւ կ'ուսումնասիրէի իրենց մտածման ուղեգիծն ու ցուցադրած դատարկ մեծամտութիւնը: Դժբախտաբար Ս. Դ. հնչակեան շրջանակի առաջնորդող գէմքերու լրջութեան ու շիտակութեան մասին կարող չեղայ նպաստաւոր կարծիք մը դրոյացնել: Անոնք, հակառակ իրենց մտածութեան սահմանափակ հորիզոնին եւ յոխորտ արտայայտութեան հինցած բանաձեւերուն, կ'արտայայտուէին բոյորին հանդէպ աննպաստ դատումներով: Մինչեւ իսկ զօրամասի (6-րդ Տրուժինա) կազմութեան աշխատանքին մէջ մեծագոյն երախտաւորը եղող Համբարձում Առաքիւնանին հանդէպ: Անոնց համոզումին ու արտայայտութիւններուն մէջ յայտնապէս կը նշմարուէր այլեւս ջուրէն անցածի հոգերանութիւնը, որ ոչ մէկ կողմի հետ գործակցութեան պահանջը կը զգային: Այլ ապաւորութիւնը յետոյ գործնականապէս հաստատուեցաւ մեր, - վերակազմեալ-հնչակ-

եան, սահմանադիր-աամկալար եւ Ս. Դ. Հնչակեան, - բանակցութիւններու ընթացքին:

Ժամադրուեցայ տեսակցութեան մը համար նաեւ Յովհաննէս Սփեւզիարեանին հետ, որ Ազգային Բիւրոյին մէջ կարեւոր դերք մը ունէր եւ կարող էր լուսարանել զիս շատ մը հարցերու մասին: Մեր խօսակցութիւնը դարձաւ, բնականաբար, զիս հետաքրքրող երկու նիւթերու շուրջ: Եւ ուղեցի լսել իրմէ ալ իր համոզումը թէ կամաւորական շարժումը իրապէ՞ս Յարէն քաղաքական խոստումի մը վրայ սկսուած զորք մըն էր, ինչպէս եղած էր լեհ ժողովուրդին, եւ թէ իսկապէ՞ս Ազգային Բիւրոյի կազմն ու նկարագիրը համազգային բնոյթով օժտուած էին: Եթէ այս էր սկզբնաւորութեան շրջանին մէջ, յետոյ պահած էր իր այդ հանդամանքը, թէ յայտարարուածը արտաքին ցուցանակն էր, մինչ էութիւնը՝ կուսակցական մեհառարութիւն մը, որուն հետեւանքով քաջուած էին անոր սկզբնական կազմէն կարեւոր թուով ասորերը հոսանքներու եւ անկախ մտածողներու ներկայացուցչական ղեմքեր: Մեր տեսակցութիւնը երեւութապէս սրբաբայ էր, եւ թէեւ խօսակէցս ջանաց երկու հարցերու մասին ալ անդորրացնող արտայայտութիւններ ունենայ ու փորձեց համոզել զիս որ զալիք Չանդաբեանին խումբը եւ յաջորդաբար սպասուածներն ալ միանան կամաւորական շարժումի բնոյթն ուր ճիշդն եւ ես ալ մտնեմ Ազգային Բիւրոյի կազմին մէջ: Սակայն ան կարող չեղաւ տարահամեղել զիս այն բարբի մասին, որոնց համար հարց տուած էի իրեն: Ո՛չ քաղաքական զծով թմրկահարուած ցարական խոստումին ստուգութեան եւ ո՛չ ալ կամաւորական հայ գործառնար՝ ապապայ հայ պետութեան կորիզային բանակը պատնալու կարելիութեան մասին կարող եղաւ իր հաւաստումներով տարահամեղել զիս:

Այս հարցերուն մասին նախապէս խօսակցութիւններ ունեցած էի սոցիալ գեմսկրատ (վրացական բաժնին մէջ հայ մենչեւիկ) Արամայիս Երզնկեանին, Սամսոն Յարութիւնեանին եւ Մեսրոպ Մագիսարոս Տէր Մոյսէսեան սրբազանին հետ: Առաջին երկուքը թէեւ քաղաքական մտածումներով տարբեր լո՛ւրճումի մարդիկ, յատկապէս խոստումներով լուսարանած էին արեւած հարցերու հսկիւնը՝ թէ Ազգային Բիւրոն արտաքին զիմաղծով համազգային [մարմին] կը ներկայացուէր, բայց խորքին մէջ կուսակցութեան մը ճեւածին տակ կը գործէր: Անոր զինուորական մարմինը կուսակցական էր: Վերջինը զեւ իր կապերը կը պահէր Ազգային Բիւրոյին հետ, թէեւ իրական ժէջ անուանական էր այդ կապը եւ միայն անցեալէն մնացած ժա-

ռանդութիւն: Երկուքն ալ թէեւ տարրեր մերձեցումով՝ սակայն տուած էին իրենց համոզումներուն պատճառական փաստականութիւնը: Երկուքն ալ տպաւորեցին զիս իբր պետական գործերու հասկացողութեան [տէր] մարդիկ: Անոնք իրենց տեսակէտները հիմնած էին փաստական տուեալներու վրայ եւ ուսումնասիրած էին հարցը: Մերոյ եպիսկոպոսը, սակայն, իր բիւրոյական հակումներով թէեւ կարող չեղաւ ժխտական վերաբերումով մօտենայ հարցերուն, բայց տաքստօրէն ալ չպաշտպանեց կատարուածը, որուն մէջ նախկին փոխարքայ Վորոնցով Տաշկովին օրերէն յետոյ շատ մը պաղ ջուրեր խառնուած էին ուս եւ հայ յարաբերութիւններուն մէջ: Պէտք է յիշեցնել թէ իմ Թիֆլիս հասնելու օրերուն մեր Երրորդութեան (Մերոյ Մագիստրոս, Ալեքսանար Խախուսան ու Սամսոն Յարութիւնեան) եւ Փոխարքային պալատին նախկին ջերմ յարաբերութիւններուն վրայ պաղ հովեր փչած էին, որովհետեւ զիւանադէտին յաջորդած էր զինուորական իր տրակտանական բըրտութեամբ ու պակաս զիւանադիտութեամբ:

Ափեղխարեանին սիրալիք տեսակցութիւնը, ինչպէս շատ մը ուրիշներ, իմ մէջն զոյացուցին որոշ համոզում մը՝ թէ տրուած հարցերու մասին բոլոր հաւաստումի համազօր տարածայնութիւններն ու զրոյցները ոչ մէկ խոստումի ու երաշխաւորութեան վրայ հիմնուած էին: Եղածն ու կատարուածը սոսկ Վորոնցով Տաշկով փոխարքային խորամանկ եւ սակայն ժպտերեւ գիւանադիտութեան, ինչպէս նաեւ ոմանց մտանաւոր չահերու հետապնդումներուն վրայ հիմնուած էին, եւ հրապարակային ազմուկին տակ թաղնուած կար ու կր մնար կուսակցութեան մը չահերու արկածախնդրութեան թնճուկը, որուն միացած էր հայ ժողովուրդին խարսելի սիրելի տրամադրութիւնը: Պրւան քաղաքական միջնորդար տարրեր հայեացքներու միախառնումով յառաջացած քառան էր, որուն մէջ բախումի կու զային ազդերու բաղկացութեան, ինչպէս նաեւ կուսակցական ու անհատական չահերու հետապնդումները: Այդմիտար կամաւորական շարժումը յայտնապէս ժամանակի սղիւն, զիւանադիտական խաղարկութենէն անո՞՞ծ երկուցին էր, որուն մէջ կարելի էր տեսնել միայն ազգային հիասթափութիւն, ինչպէս պատմական անցեալին մէջ (սըղնախնդրութեւ, Ներսէս Աշտարակեցիներու եւ այլ նման շարժումներ) նման ճիւղերու վիճակուած էր: Այդ դժբախտ եզրակացութեան հասաւ իմ բոլոր փնտռութիւններուն մէջ: Աւելի ուշ պիտի տպացուցուէր թէ ազգային յաւիտենական մանկամտութեան զոհերն էինք:

Այդ օրերուն կարելի չէր յստակ տեսակէտ ստանալ Թուրքիայէն հեւասպառ Կովկաս ապաստանած գաղթականներու մտածելի գիտցող եւ կամ իրերու խորը թափանցելու կարող անձերէն: Անոնք դեռ Յուլիսեան բռնադաղթէն(7) չչմած ահաբեկումին մէջ դառնացած հոգեկանութեամբ եւ սպրեկու անմիջական սուր կարիքէն ընկճուած՝ չէին կարող հանդարտ արամադրութեամբ զբաղիլ նման լուրջ հարցերով: Շատ թարմ էր դեռ Յուլիսեան դահանդական նահանջի հարուածը եւ Փիզիքական գոյութեան աղէտը տակաւին ահաւոր չափով կը սպառնար բնաջնջել թրքական դժոխքէն խուճապային վախուստով ուսական սահմանները ապաստանող գաղթականութիւնը: Համայնակույ արհաւիրքը այդ օրերու համաճարակներու, անսուղութեան, անապաստան կեանքի եւ այլ պատուհասող չարիքի ձեւերուն տակ կը հնձէր հիւթասպառ արեւմտահայութիւնը Կովկասի մէջ: Այդ մասին՝ յետոյ:

Արեւմտահայ գաղթականութեան առաջաւոր գէմքերը անսահման դառնութեամբ լեցուած էին այն բոլորին հանդէպ, որոնք իրենց դժբախտութեան մէջ պատասխանատուութեան բաժին մը ունէին: Եւ այդ բաժինն առաւելապէս կ'երթար Դաշնակցութեան ղեկավար տարրերուն: Յետոյ, սակայն, երբ քիչ մը շունչ առած էին, սկսան մտածել ու գործել ազգային շրջանակին մէջ: Այս մասին պիտի խօսինք իր տեղին:

Թիֆլիսի մէջ առաջին օրերուն ունեցած 25-30 տեսակցութիւնները զիս համոզեցին թէ Ամերիկայի մէջ մեր հայրենասիրական բոցավառումը ընթացքին մեզի պակսած էին միջոցները՝ ճշգրտելու մեր խարկանքին ցուրտ իրականութիւնը, որուն պիտի ենթարկուէինք յետոյ: Գործը, որուն լծուած էինք ազգովին, մեր տարողութենէն վեր էր եւ անոր պատրաստուած չէինք: Իմ համոզումս եղաւ թէ կեղծէք էր Յարին վերադրուած եւ շատ թմրկահարուած՝ Հայաստանի աւրնչութեամբ քաղաքական բաղձանքներուն իրագործումը: Եւ այդ բոլորին մէջ եթէ կար հաւանական աղբիւր մը այդ տարածայնութեան, այն ալ վերադրելի էր Վորոնցով Տաշկովին քաղաքագիտութեան անորոշ արտայայտութիւններուն, որոնց խողովակը կը դառնային Ազգային Բիւրոյի բանադնացիները՝ Մեսրոպ Եպիսկոպոս, Աղեքսանդր Խատիսեան եւ Սամսոն Յարութիւնեան, եւ որոնք կ'օգտագործուէին գրասենեկային գաշակցականներու կողմէ: Որոշապէս տեսանելի էր թէ համազգային շարժումով մէջտեղ եկած Ազգային Բիւրօն, որ առաջին ոգեւորութենէն յետոյ էութեան մէջ իրապէս կորսնցուցած էր իր սկզբնական ազգային

հանդամանքը, հզանակաւորում կրած էր նաեւ անոր դոյութեան հիմնական բմբռնումը: Բիւրօն վերածուած էր Դաշնակցութեան գործիքին՝ իր եւ իրմէ ըզլած գինուորական գործերու կազմերով: Թէ՛ Ազգային Բիւրօն գնրձած էր խողովակը հայ ժողովուրդին նկիւթական ու ֆիզիքական զոհարերութիւնը դաշնակցական պետերու, արկածախնդրական եւ նոյնքան ապերախտ ձեռնարկին անյատակ դուրը լեցնելու եւ յետոյ ալ կարգը պիտի դար լքելու ազգին ազատագրական խոյանքին իրենց անվերապահ մասնակցութիւնը բերող բիւրեղ երիտասարդութիւնը. թէ՛ կամաւորական գործը արդէն իսկ իր առաջին խանգաւարութեան թափը կորսնցուցած էր եւ շնորհադրութեան ենթարկուած ռուս քաղաքական ու գինուորական իշխանութիւններու կողմէ՝ թէ՛ կամաւորական գործին կապուած, պոռոտ ու վնասակար թմբկահարութիւնները մի միայն ծառայած էին հակահայ տարրերու թշնամութիւնը հրահրելու, թէ՛ օգտուողը կուսակցապէս եղած էր առաւելարար միայն Դաշնակցութիւնը՝ իր ջրամոյն վիճակին հասած նաւը փրկելու:

Եւ արդարեւ, յետոյ պիտի տեսնենք թէ այդ շարժումը դատապարտուած էր անխառնակ վախճանի մը՝ առանց դրական մեծ օգուտ մը բերելու մեր ազգային կենսական շահերուն* եւ ընդհակառակը, կազմաէնթացած էր օտար շարաննդ տարրերու յայտնի թշնամանքը:

Այս չափազանց ջլատիչ եզրակացութիւնը ինքնին ծանրօրէն մտահոգիչ էր չուտով սպասուած խումբին առաքելութեան համար, ինչ որ զիս կ'ենթարկէր հոյեկան տապնապի: Պէտք էր արագ շարժիլ: Խումբը վերադարձնել անկարելի էր եւ անգործնական: Ուստի անոր ներկայութիւնը պէտք էր օգտագործել որեւէ կերպով ի նպաստ հայ ժողովուրդի շահերուն: Այս եզրակացութիւնը մղեց զիս որ գործեմ մշտականօրէն այդ բմբռնումին հունով: Եւ այդ աեղի ունեցաւ Համարածում Առաքելանին հետ ունեցած երրորդ տեսակցութեանս ընթացքին՝ զոնէ թեւադրական ձեւով:

* Թերեւս ամենամեծ օգուտը հղաւ հայ երիտասարդութեան ռազմունակութիւնը պատրաստել, ինչ որ պիտի օգտագործուէր հետագայ ռազմական գործողութիւններու ընթացքին:

ՀԱԿԱՀԱՅ ԱՆՆՊԱՍՏ ԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յուլիսեան նահանջոյ պարպուած արեւմտահայկական հողերու վասպուրականի շրջանի վերադրուման շարժումները սկսած էին: Մասնաւորաբար վանեցիներուն մէջ վերադարձի դօրաւոր հոսանք մը սկսած էր անհանգստութիւն մը ստեղծել: Հայրենարազմութիւն եւ ապրիլ կարենալու ստիպողութիւն իրարու միացած՝ կը մղէին վանեցիին «Դէպի երկիր»ի անձկալից հոգեբանութիւնը ապրելու: Թէեւ զինուորական իշխանութիւնը շատ ալ համամիտ չէր զիւրութիւն ընծայելու այդ րադձանքին իրադրութեան համար: Այդ բացատրական վերաբերումին առկ թաքնուած կը տեսնէինք պատերազմական նկատումէն աւելի քաղաքական գիտաւորութիւն: Յարական կառավարութեան համար այժմ պէտք էր կերարկել «Հայաստանը ասանց հայու» տեսակէտը, եւ հասած էր ասոր ժամանակը:

«Մշակ»ի խմբագրապետ Համբարձում Առաքելեանին հետ տեղի ունեցած առաջին տեսակցութիւնն եղաւ զրեթէ միայն ծանօթացման հանդիպում մը, որու առեւ Առաքելեանին մօտ գտայ նշմարելի վերադահութիւն մը հանդէպ անձիս ու կուսակցութեան՝ յայտնապէս ժառանգութիւն անցեալ զմեռաւ անցքերու թիւրիմաց տպաւորութիւններուն:

Այդ օր «Մշակ»ի խմբագրութեան մէջ ծանօթացայ նաեւ ընկեր Շաւարշ Հովիւեանին: Չեմ գիտեր թէ ինչպէս՝ սակայն ունեցանք բացսիրտ խօսակցութիւն մը Հովիւեանին հետ: Ան ծանօթ Յուլիսեան զաղթին վասպուրականցիներու հետ հասած էր Թիֆլիս: Մեր երկար տեսակցութեան ընթացքին Հովիւեանը ողջամիտ հայու մը տպաւորութիւնը ձգեց վրաս, ան յուրջ էր եւ հաճելի էին իր արտայայտութիւնները: Առաջին տպաւորութիւններս միշտ ալ մնացին իրենց ուժի թաքմութեան մէջ եւ մենք մեր յաճախապէս տեսակցութիւններու ընթացքին ո՛չ միայն ընկեր կը կոչէինք զիրար, այլ մնացինք նաեւ անձնապէս բարեկամներ: Մեր առաջին տեսակցութեան ընթացքին խօսեցանք հինէն ու նորէն բազմաթիւ նիւթերու շուրջ: Անկէ քաղեցի բաւական յայն ծանօթութիւններ ընդհանրապէս վասպուրականի շրջանակի եւ մասնաւորապէս Ալլիքեան կոխներու մասին(8): Խօսեցանք ամերիկահայերու ազգային հասարակական հարցերու եւ կուսակցութիւններու շերտաւորման շուրջ: Խօսեցայ մասնաւորապէս մեր երկու կուսակցութիւններու(9) սերտ յարաբերութեան ու տեսակէտներու ներդաշնակութեան վրայ

եւ անոր տրամադրութիւնը չօչափեցի միաձուլման կարելիութեան մասին: Ինք ալ բազմալի գտաւ: Ասոր վրայ ես աւելցուցի թէ Ամերիկայի մէջ կողմերու միջեւ որոշ խմորումներ կան արդէն այդ հեռանկարին ուղղութեամբ:

Հովիւեանը հին ծանօթ մըն էր Առաքելեանին եւ այդ ծանօթութիւնը սկսած էր Վաստուրականի կուսակցական շրջանակին զէնք հայթայթելու աշխատանքին տակ: Այդ զէնքերը պիտի յատկացուէին մի՛ միայն ինքնապաշտպանութեան նպատակին: Առաքելեանը իր բոլոր կարելի միջոցներով օժանդակած էր Հովիւեանին առաքելութեան: Անցեալի այդ գործակցութիւնը փոխադարձ մատահոթիւն մը մշակած էր անոնց միջեւ: Անդրադառնալով իմ առաքելութեան, Հովիւեանը ինքնաբերաբար ստանձնեց անդորրացնող ծանօթացումով խօսիլ Առաքելեանին հետ:

Հովիւեանին միջոցով էր որ ծանօթութիւններ հաստատեցի նաեւ Վանի շրջանի տամկավար առաջնորդներու հետ, որոնք զեռ պիտիւմ չէին իրենց ստացած ցնցումներէն եւ հետեւաբար չունէին կազմակերպուած վիճակ: Յետոյ Առաքելեանին օժանդակութեամբ էր որ ձեռնարկեցին «Վան-Տոսպ»ին հրատարակութեան, չնորհիւ Տիգրան Նազարեանին - Առաքելեանին միջնորդութեամբ - ձեռնառութեան: Տիգրան Նազարեանը իր զբաղան-գեղարուեստական սալոնի յարկարամին մէջ ձրի տրամադրեց զբաղնակ «Վան-Տոսպ»ին խմբագրութեան համար, միեւնոյն տակն թերթին արօժատէրը դարձաւ իրբեւ ուսասնական(10):

Երբ իմ բազմալիսի տեսակցութիւններովս ծանօթացայ կարելի չափով բոլոր իրադարձութիւններուն եւ կազմեցի վերջնական համոզումներս, Առաքելեանին հետ երկրորդ տեսակցութեան մը պահանջը զգացի: Այդ երկրորդ տեսակցութեանս տակն նշմարեցի թէ փոխուած էր Առաքելեանին տրամադրութիւնը եւ նախկին վերադասութիւնը այլեւս գոյութիւն չունէր ու աւելի հետաքրքրութիւն ցոյց տուաւ ինծի վիճակուած առաքելութեան նկատմամբ: Մեր խօսակցութիւնը դարձաւ եթէ ոչ մտերմական՝ գոնէ մտածման նոյնութեամբ ներդաշնակ, եւ այս՝ ազգային շատ մը հարցերու մասին, որոնց մօտեցանք զրեթէ անվերապահ արտայայտութեամբ: Տեսայ թէ իմ եւ իմ կուսակցութեան հանդէպ նպաստաւոր փոփոխութիւն մը տեղի ունեցած էր: Մեր փոխադարձ ծանօթացումը արդէն իսկ ճամբայ ըացած էր գործակցութեան:

Մեր երրորդ տեսակցութիւնը տակի գործնական բնոյթ

ստացաւ: Առաքելեանին յայտնեցի իմ ուսումնասիրութեանս եզրակացութիւնը եւ բացատրեցի աշխատանքի ծրարէրս: Զիս լսելէ ետք, Առաքելեանը իր կարգին տուաւ յաւելեալ ծանօթութիւններ ու լուսարանութիւններ զիս հետաքրքրող հարցերուն շուրջ: Ի միջի այլոց խօսեցանք Ազգային Բիւրոյի սկզբնական կազմութեան ու նպատակին եւ ժամանակի ընթացքին կրած շրջափոխութեան կամ ձեւաւորումին, էջմիածնի ու Բիւրոյի յարաբերութեան եւ վերջին ցրտացումներու, կամաւորական շարժումին խանդավառ սկզբնաւորութեան ու յաջորդական տեղատուութեան եւ վերջինին պատճառներուն մասին: Տեսալ թէ Առաքելեանին եւ իմ տեսակէտներս մեծ համեմատութեամբ կրնորդաշնակէին իրարու:

Տեսակէտներու պրեթէ նոյնութիւնը պատեհութիւն կուտար ինծի զործնական առաջարկով մը շօշափելու գործակցելու իր տրամադրութիւնը: Առաքելեանը որոշ խաւերու մէջ ունէր զօրաւոր ազդեցութիւն: Ինծի համար այդ իրողութիւնը ունէր կենսական նշանակութիւն: Ուսումնասիրութեանս ընթացքին Առաքելեանին մասին ստացած էի բազմաթիւ ծանօթութիւններ: Անոնք կը տարածուէին իր անցեալ ու ներկայ գործունէութիւններուն, իր նկարագրի գլխաւոր գիծերուն եւ իր մասին կազմուած հասարակական կարծիքին ու պրակտիկայի կամ բացասական տպաւորութիւններուն վրայ: Այդ ծանօթութիւններու թեւադրանքով կ'ենթադրէի թէ ինք ալ, իր կարգին, պէտք ունէր յենակէտի մը՝ երբ հնչական զօրամասը այս տեսակէտով հեռացած էր իր ազդեցութենէն: Բայց որովհետեւ երկուքս ալ կ'ընդունէինք թէ կամաւորական շարժումը վայրէջքի ենթարկուած էր այլեւս արուած պայմաններուն մէջ, ուստի պէտք էր փնտռել շարժումի նոր պաշտ մը, որ աւելի գործնական մտքով օգտագործելի ըլլար՝ առանց ազմկարարութեան: Ինք իր հասարակական ու բարոյական հաշիւներով, եւ ալ իմ անխուսափելի պարտադրանքովս գործակցութեան մը պահանջը կը զգայինք: Կար նաեւ հեռաւոր նպատակ իմ մտածումներուս մէջ. գործակցութիւն մը պէտք էր ստեղծուէր երկու կուսակցութիւններու միջեւ միացման հոգը պատրաստելու համար:

Եւ էի որ իրեն առաջարկեցի այդ գործակցութեան պայտփարը իրը մտածման նիւթ: Այդ գործակցութիւնը պիտի սկսուէր Վանի մէջ: Վերադարձուած Վանի շրջանակին մէջ վերադարձող զաղթականները անհրաժեշտարար պէտք պիտի ունենային վերակառուցման աշխատանքը սկսելու համար նիւթական լուրջ օժանդակութեան եւ յարձակող քիւրտերու դէմ

սլաշադանութիւնը համար ալ օրինական միջոցներով զինուած մարդոց, եւ ասիկա թերեւս հաւանելի դառնար ռուս կառավարութեան: Ինք ալ մտածեց մէկ քանի վայրկեան եւ յետոյ ըսաւ թէ վերաշինութիւնը օրուան հրամայական սլահանջ է եւ լաւ ղեկավարուած վերաշինական աշխատանքը անհրաժեշտ է որ ունենայ իր ապահովութիւնը: Իրեն յիշեցուցի թէ ռուսական բանակը յաճախ զրազած կ'ըլլայ ճակատի գործողութիւններով եւ թիկունքը պէտք ունի անդորրութեան եւ թէ պատրաստ է բուն իսկ այդ գործին յատկացուելիք ուժը, որ չուսով կը հասնի: Իր ուշադրութեան յանձնեցի այս հարցն ալ իրը մտածման նիւթ:

Առաքելեանը հարուստներու որոշ չըջանակ մը ունէր եւ առաջնորդող ու մաքառող զէմք մը կը ճանչցուէր եւ գործ չինելու մէջ ալ յայտնի էր իր ճկուն ու փորձառու մաքով: Մեծ հաւանականութեամբ ան կարող պիտի ըլլար այս թելադրութիւնը գործի վերածնել: Իսկ իմ կուսակցութիւնս կը տրամադրէր սլաշադանութիւնը՝ կազմակերպելով ուժը, որուն վրայ անշուշտ պիտի աւելնային տեղական վստահելի տարրերը, ինչպէս Վանի չըջանակի սահմանադրական ռամկավար ուժերը: Իբր համոզիչ թելադրութիւն կը յիշեցնէի անոր թէ արեւմտահայութեան մէջ գործող երկու ազգայնական կուսակցութիւնները, որոնք բաժնուած էին իրարմէ թիւրիմացութիւններու, կամ՝ աւելի ճիշդ քնորոշումով՝ ղեկավարներուն զիրար չհասկընալու հեռեանքով, այժմ սերտօրէն կը գործակցին իրարու հետ Ամերիկայի մէջ: Եւ փորձը ցոյց տուած է թէ անոնք մեր ազգային իրականութեան մէջ տիրականօրէն բարերար առաջնորդութիւն մը կատարելու համար անջատարար սլահանջուած ուժը չէին ներկայացներ, մինչ այս կուսակցութիւններու միացումով այդ բաղձալի դերը կարող պիտի ըլլան կատարել եւ հետեւարար ծանօթ կուսակցութիւնը իր մենատիրական յաւակնութեան եւ անչըջահայեաց շարժումներուն մէջ ինքզինքը պիտի չափաւորէ նոր ուժին ներկայութեան: Ի նպաստ միացման ցարդ երկուստեք կատարուած խմորումները այս եւ նման գործակցութիւններով պիտի վերածուին օր մը դրական միաձուլումի: Գործակցութիւնը լաւագոյն ճամբան է կողմերու փոխադարձ ծանօթացման եւ այդ ծանօթացումը ապահովարար պիտի ծառայէ միացման: Առաքելեանը յայտնի էր թէ կը խանդավառէր այս միաքերով:

Բացի այս ներքին բմբռումէն, կար եւ աւելի կենսական գործ մը կատարելու հեռապատկերը: Ռուս կառավարութեան

Թոյլտուութեամբ զինուած դործը կատարելու յանձնառութեամբ պատեհութիւնը պիտի ունենայինք ներքին կերպով առանց աղմուկի գինել նաեւ հայ երիտասարդութիւնը ինքնապաշտպանութեան նպատակով, ինչպէս նաեւ ապագայ կարելիութիւններէն օգտուելով հայկական բանակի գոնէ կորկըր պատրաստել: Մեր այս տեսակցութեան ընթացքին, որ տեւեց աւելի քան երկու ժամ, մենք քննութեան ենթարկեցինք բազմաթիւ ուրիշ հարցեր ալ, որոնք ազերա ունէին մեր դատին ու մեր ժողովուրդին բարօրութեան հետ: Մենք հասանք այն եզրակացութեան, թէ քանի որ նոր կամաւորական զօրամասեր կազմելու դիւրութիւններ չկային եւ իմաստ ալ չունէին, պէտք էր աշխատիլ ապահովելու ոռոս կառավարութեան արածութիւնը՝ քաղաքապահ զինուորութեան անունով զոյացնելու զինական ուժ մը, որուն անմիջական կարիքն ալ կար: Այս մեր հանդիպումն էր որ իրապէս արդիւնաւորեց Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովին գործը: Առաքելեանը խոստացաւ ինծի այդ օրն իսկ աշխատանքի սկսիլ: Մենք ժամադրուեցանք վաղայաջորդ օրը նոր տեսակցութեան մը համար:

Առաքելեանէն բաժնուելէս յետոյ խմբադրստան մուտքին նորէն հանդիպեցայ Հովիւեանին եւ շնորհակալութիւն յայտնեցի իրեն իր կատարած բարերար գերին համար, ու յայտնեցի թէ մեր խօսակցութիւնը իրապէս եղաւ դրական աշխատանք մը, որուն արդիւնքին կը սպասեմ: Ան պատասխանեց թէ ինք կատարած է միայն իրեն ինկած բաժինը, տալով իմ ու իմ կուսակցութեանս մասին ուղղամիտ վկայութիւնը: Ստուգապէս առաջին առթիւ ինծի հանդէպ ցոյց տրուած կասկածոտ վերաբերումը եւ, հետեւաբար, վերապահութիւնը այլեւս չկրկնուեցան Առաքելեանէն, մինչեւ մեր վերջին բաժանումը:

Վաղայաջորդ օրը Առաքելեանը հաղորդեց ինծի թէ իր ձեռնարկները իր շրջանակին մէջ գրեթէ յաջողած են եւ հրաւիրեց զիս ժողովին, որ տեղի պիտի ունենար «Մշակ»ին խմբադրատան մէջ, յաջորդ օրը կէսօրէ ետք ժամը վեցին: Ինծի յայտնեց թէ այդ ժողովին մէջն էր որ պիտի ճշդուէր մեր դործին բնոյթը եւ աշխատանքին շրջանակը: Ինձմէ խնդրեց խօսիլ հակիրճ կերպով, ներկաներուն ծանօթացնելու ամերիկահայերէն հանրային տրամադրութիւնը, չարժումները, մեր երկու կուսակցութիւններուն գործակցութեան ու նպատակներուն կաբեւոր գիծերը:

Յաջորդ օր տեղի ունեցաւ որոշուած ժողովը: Ներկայ

էին Դաւիթ Խոն Բ. Աւան Իւզպաշեանը*, Միքայէլ Արամեանը, Ալեք. Մելիք Ազարեանը, բժշկապետ Բազարաւ Նաւասարդեանը (Ռաֆֆիի «Խենթ»ին մէջ Վաղարշապատի բժիշկին նախափորձը), Ստեփաննոս Մալխասեանցը, Աւետիք Շղիկեանը եւ Համբ. Առաքելեանը: Առաքելեանը ներկայացուց զիս ժողովին եւ խօսեցաւ առաքելութեան մասին: Ներկաներէն վերջին երեքին հետ արդէն ծանօթացած էի իմ առանձին տեսակցութիւններու աստեղ:

Ստեղծուած կացութեան մասին յորերու եւ կարծիքներու փոխանակութենէն յետոյ, Առաքելեանը հրաւիրեց զիս խօսելու նախապէս իր ինծի թելադրած նիւթերու մասին: Խօսեցայ չուրջ քսան վայրկեան եւ վերջացուցի իմ խօսքերը յայտնելով կոմկասեան նիւթերու չուրջ իմ ուսումնասիրութիւններու եզրակացութիւնը եւ աւելցուցի թէ մեզի կը մնար այժմ հայապահպանման հրամայական ցործը այս ընդ որ սպառումներէն ետք: Այդ եւ հետագայ ժողովներուն մէջ նշմարեցի թէ հակադաշնակցական արամադրութիւնը չափազանց խոր արմատներ ձգած էր ներկաներուն մէջ: Բաղայայտ կերպով մեր աղէտներուն մէջ պատասխանատուութեան կարեւոր տոկոս մը կը վերադրուէր Հ. Յ. Դաշնակցութեան անշրջահայեաց ու յախուռն դործունէութեան, որուն մէջ, իրենց տեսակէտով, տեսանելի էր նաեւ կուսակցական ու անհատական չահարկութիւնն ալ: Որոշապէս կը յիշեմ թէ յաջորդ ժողովներէն մէկուն մէջ հակադաշնակցական արտայայտութիւնները չափազանց խիստ եղան, ի միջի տալոց, բժշկապետ Նաւասարդեանը իր ծայրայեղ դատումներուն մէջ հետեւեալ արտայայտութիւնն ունեցաւ. «Եթէ դահիճներ պէտք լինեն, դահճապետը եւ կը լինեմ վերացնելու համար այս չարաղէտ պատուհաններին»: Ներսուսեալ թաւրիներ յետոյ անշուշտ չեմ կարող տալ իր բառական արտայայտութիւնը, բայց իմաստը այս էր: Պէտք է յիշեմ այստեղ թէ այդ ժողովին հետ առած էի ընկերներէս Խաչիկ Պօյաճեանը: Վերջինս բժշկապետին այս արտայայտութեան վրայ ձայն առաւ եւ ըսաւ. «Եթէ այդքան ահարկեալ էք, թոյլ տուէք որ ռումբեր զետեղենք Ազգ. Բիւրոյի շէնքին տակ եւ օդը հանենք շէնքը»: Այս արդէն ծանր միջոցառում մը ստեղծեց եւ ժողովականները լռեցին ու ժողովը շուտ վերջացաւ: Ժողովէն երբ դուրս եկանք ու կը քալէինք, Համբ. Առաքելեանն ու Ստեփան-

* Դաւիթ Խոնը սերած էր սղնախներու դինուորութեան պետերէն Աւան Իւզպաշիէն եւ իր խանութեան տիտղոսն էր Խան Սըղնախսկի:

նոս Մալխասեանցը իմ մօտ եկան եւ խնդրեցին որ ասանկ խակ երխտասարդներ ժողովի չրերեմ՝ եթէ չեմ ուզեր գործը փճացրնել:

Մեր երկրորդ ժողովին մէջն էր որ Դաւիթ Խան Բ.ը պատմեց Վանի նահանգապետ որոշուած զնդապետ Տերմէնին հետ իր ունեցած տեսակցութեան մասին: Տերմէնը պարզած էր իր աշխատանքին ծրագիրը եւ այդ շինարարական գործին համար հայերու կազմակերպուած գործակցութեան պէտքը չէտած էր: Ան բացատրած էր իր միտքը թէ գործակցութիւնը պէտք էր հասկնալ վերադարձող ժողովուրդին աշխատանքի հնարաւորութիւն տալու եւ զանոնք քրտական ու թրքական աւազակութիւններու դէմ պաշտպանելու մէջ՝ առանց բանակը զբաղեցնելու թիկունքային գործերով: Դաւիթ Խանը պատասխանած էր Տերմէնին թէ հայերու որոշ չըջնակ մը ճիշդ այդ ուղղութեամբ կը մտածէր. անոնք կը մտածէին իրենց կարելի օժանդակութիւնը արամազերէլ ոսոս բանակին գործը զիւրացրնելու համար: Տերմէնին խոստացած էր հապորդել յուսով այդ օժանդակութեան ընդթիւ:

Դէպքերը, տեսակցութիւնները եւ օրուան պահանջն ու ընդհանուր արամադրութիւնները զիրար ամբողջացնելու յաջող գործակցութեամբ հիմք կը դնէին մեծ գործի մը ծրագրին եւ սկզբնական չարժուածին:

Այդ ժողովին մէջն էր որ հիմնուեցաւ Հայաստանի վերաշինութեան Յանձնաժողովը իր կազմով, որ հետագայ յաւելումներով պիտի բաղկանար տասնեւչորս ժողովականներէ (11):

Ժողովին մէջ բոլորն ալ համաձայն պահուեցան որ սկսուելիք աշխատանքը պիտի կատարուէր հայապահպանման գծով. տեսակ մը հաստատումը իմ այն արտայայտութեան, թէ մէկ հայ ապրեցնել հաւասար է երկու թուրք սպաննելու: Եւ որ վաղուան ազատագրուած Հայաստանի հողամասին վրայ վերապրած հայերու եւ միւս ազգերու թուական համեմատութիւնը խորքին մէջ պիտի գունդաւորէ քարտէսը եւ որքան հայեր չառապրին՝ նոյնքան պիտի զիւրանայ մեր ազգային բաղձանքներու իրագործումը: Այս միտքը արտայայտեցին Առաքելեանին մեր երրորդ տեսակցութեան ընթացքին: Ժողովը որոշեց կարելի աշխատանքը կատարել վերահաստատելու համար ժողովուրդը իր աւերակուած հայրենիքին մէջ՝ բնակութեան ու ապրելի կարենալու զիւրութիւններ ընծայելով անոր: Գիտնալով որ չըջապատի աւազակարարոյ տարրերը, մասնաւորաբար քիւրաերը զսպելու անհրաժեշտութիւնը նկատի առնելիք առաջին հարցը:

րէն մէկն է, որոշուեցաւ հաղորդել Տերմէնին թէ ժողովուրդը ապրեցնելու եւ պաշտպանելու գործը կը ստանձնէ նորակազմ հայաստանի վերաշինութեան Զանձնաժողովը, որ կազմուած է յատկապէս այդ նպատակով:

Այս ժողովին մէջ որոշուեցաւ վերջնականապէս Հայաստանի վերաշինութեան Զանձնաժողով անունը կրել եւ այդ անունով գործել, որուն գրառական մուտքի աղբիւրները պիտի կազմէին Զանձնաժողովին մասնակցողներն ու իրենց շրջապատի հարուստ տարրերը, ինչպէս նաեւ այլ օրինական միջոցներ, զորս ժամանակի ընթացքին կարելի պիտի ըլլար ապահովել:

Նոյնպէս որոշուեցաւ անհրաժեշտ գործակցութիւնը ապահովել վանի շրջանի հայ սահմանադրական ուսմկաւարներուն, որոնք ուժ մը կարող էին գոյացնել՝ երբ անոնց միջոցներ արուէին: Առաքելեանը ստանձնեց այս հարցը կարգադրել յայանուած բաղձաւորին համաձայն:

Յաջորդ ժողովը դարձեալ տեղի ունեցաւ «Մշակ»ին խմբագրատան մէջ, եւ անոր կը մասնակցէին նաեւ Ա. Մխիթարեանը եւ սահմանադրական ուսմկաւարներու ներկայացուցիչ փոքի. Միք. Մինասեանը: Այդ ժողովին մէջ կազմուեցաւ զիւանք հետեւեալ կերպով՝ Դաւիթ Խան Բ. Աւան Իւզպաշեանը Ա. առեւնապետ, Ալեք. Մելիք Ագարեանը Բ. առեւնապետ, Համբ. Առաքելեանը առեւնադպիր ու Միք. Արամեանը պանձապետ:

Իւզպաշեանը տեսնուած ըլլալով Տերմէնին հետ, տուաւ իր գեկոյցը: Համաձայն այդ տեսակցութեան, վերաշինական բոլոր ձեռնարկներու նիւթական միջոցները պիտի հալթայթուէին Հայաստանի վերաշինութեան Զանձնաժողովին կողմէ ու անոր գեկաւարութեամբ, իսկ քաղաքապահ զինուորութիւնը Զանձնաժողովին ճիւղերով պիտի գոյանար, բայց պիտի գործէր քաղաքապետին, Տերմէնին, վերին հսկողութեան տակ: Ռուս զինուորական իշխանութիւնը պիտի տար քաղաքապահ զօրամասին անհրաժեշտ զէնքերը եւ որոշ պումար մասական ծախսերուն համար: Զօրամասը պիտի բաղկանար սկզբնական շրջանին միայն երկու հարիւր զինուորներէ: Ժողովը ընդունեց արուած պայմաններուն տակ գործի սկսիլ անմիջապէս:

Որոշուեցաւ քաղաքապահ զօրամասին գեկաւարութեան զլիաւոր անձնակազմը: Այդ յանձնառութեան համար որոշուեցաւ նշանակել երկու անձեր իրր գործակիցներ: Արմենակ Եկարեանը իրր փորձուած ուսմիկ, որ ծանօթ էր Երկրին եւ զե-

կալարի հեղինակութիւն ունէր, ինչպէս նաեւ վարած էր Վանի Ապրիլեան հերոսամարտը, նշանակուեցաւ պետ քաղաքապահ զօրքին, իսկ քեփթըն Ճիմ Չանդալեանը՝ անոր անմիջական գործակից: Ինչպէս յիշեցինք, այս քաղաքապահ զինուորութիւնը պիտի գործէր գնդապետ Տերմէնին հրամանին տակ՝ առանց որ ան խառնուէր պահակազօրքին ներքին դասաւորումներուն: Փրոֆ. Մինասեանը ստանձնեց այս որոշումը հաղորդել Եկարեանին եւ հրաւիրել զայն Թիֆլիս՝ կարգադրելու Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովին հետ իր պաշտօնին վերաբերած հարցերը:

Նահանգապետ Տերմէնը պիտի մեկնէր իւր պաշտօնատեղին: Յանձնաժողովը յարմար դատեց ի պատիւ Նահանգապետին սեղան մը տալ եւ սմբողջական կազմով փոխադարձ ծանօթութիւն հաստատել: Իւզպաշեանին տանը մէջ սարքուեցաւ այդ պատուոյ սեղանը: Այդ առիթ մը եղաւ որ Յանձնաժողովը պարզէ իր վերաշինական նպատակներն ու ծրագիրները Տերմէնին եւ խնդրէ անկէ որ իր բարեացակամ կարեկցութիւնը տրամադրէ իրենց բնաւեր տուները վերադարձող զժրախտացած Հայ Ժողովուրդին: Այդ հանդիպումին մէջ խօսեցանք նաեւ մեր ցաւերէն ու մեր մտահոգութիւններէն, եւ այս՝ մասնաւորաբար իր իրաւասութեան ենթարկուող շրջանակի հայերուն համար:

Տերմէնը տաքստօրէն խոստացաւ իր իրաւասութեան սահմաններուն մէջ տարածել իր կարեկցութիւնն ու պաշտպանութիւնը հայրենիք վերադարձող Հայ Ժողովուրդին:

Չորս ամիսներ յետոյ նոյն տանը մէջ հիւրասիրուեցաւ գնդապետ Տերմէնին զօրավար եղբայրը:

(Գնդապետ եւ զօրավար Տերմէնները սերած էին Նափուլէտեան Նահանջի տանն Ռուսիա մնացած Փրանսացի զինուորականէ մը: Անոնք ժառանգած էին Փրանսացիի մը ազատ մտածելու բնդունակութիւնը, հակառակ որ Ռուսիա ծնած ու մեծցած եւ ուստական բանակի մէջ ծառայած էին: Իրենց վրայ նշմարելի էր բան մը, որ կը գոնողանէր զիրենք ուսւ զինուորականի տիպարէն: Երկու եղբայրներն ալ միշտ զգալու մարդկայնական տարր մը ունէին իրենց արտայայտութիւններուն մէջ, որ կարեկցական էր հանդէպ անոնց, որոնք թրքական զարհուրանքէն անցած էին: Անոնք իրական հայաստները գուրս եկան իրենց Հայաստան գտնուած օրերուն:)

Մեր խօսակցութիւնը առաւելապէս կեդրոնացաւ տուն վերադարձող գաղթականներուն վիճակին եւ ռուս զինուորականութեան մէկ մասին հակահայ արամադրութեան վրայ:

Զօրավարը ցաւով հաստատեց թէ, արդարեւ, կար զին-
ւորականութեան մէկ մասին մէջ հակահայ տրամադրութիւն
մը՝ անշուշտ արտաքին որոշ տարրերու ներշնչումով ու քաջա-
լերութեամբ: Բայց խօսքը ամբողջացնելով ըսաւ թէ դժբախ-
տաբար հայ ժողովուրդին մէկ մասին, թէեւ մասնակի արտա-
յայտութեամբ, անսիրաշատ դէպքերումնքը կ'աւելցնէր այդ
հակահայ տրամադրութիւնը: Եւ տուաւ օրինակ մըն ալ: Ան
սկսեց թէ ռուս ջոկատ մը մտած էր գիւղ մը անօթի եւ ծա-
րաւ: Եւ հայ գիւղացիներէն ուզած էր մածուն: Հայ գիւղացի-
ները դժբախտաբար մերժած էին «չունինք» ըսելով: Զինուոր-
ները մտած էին տունները ու դտած իրենց ուզածը: Նոյն գիւղի
թուրքերը ինքնաբերաբար մոլրած էին ոչխարներ ռուս գին-
ւորներու համար: Եւ գիտե՞ս, տուաւ թէ ամէն բան կորսնցնող
գաղթականին հոգերանութիւնը մասամբ հասկնալի է եւ կա-
րելի չէ թշնամական արարք մը նկատել: Կարող էին թուրքերուն
մոլրած ոչխարները հայերէ յափշտակուած ըլլալ: Բայց տեղի
ունեցածը՝ հասարակ գիտութիւնը զգացումները վերաւորելու
բնոյթ ունի: Խնդրեց մեզմէ որ հայերու չահին համար իսկ ան-
հրաժեշտօրէն ուշադիր ըլլանք եւ թելադրեց որ հայ ղեկավար
չըջանակները յորդորեն հայ ժողովուրդը՝ ըլլալու աւելի սիրա-
շատ: Ան կ'աւելցնէր թէ այսպիսի աննշան դէպքերն իսկ կ'օգ-
տագործուին ոմանց կողմէ հակահայ տրամադրութիւններ
հրահրելու:

Անշուշտ Յանձնաժողովին անդամները բազմաթիւ դէպ-
քերով ապացուցին թէ այդ հակահայ երեւոյթը, որ վերջերս
միայն նշմարելի դարձած է, յառաջ եկած է բանակային սակա-
ւաթիւ առաջնորդներու թիւրիմացութիւններէն: Եւ ցաւ յայտ-
նելով եղածին ու շնորհակալութիւն՝ իր թելադրանքին, խոս-
տացան կարելի ազդեցութիւնը տարածել ժողովուրդին վրայ՝
հրահրելով զայն զգուշանալու:

Յանձնաժողովը ամէն առիթ կ'օգտաւորէր օտար տար-
րերու մէջ համակրական տրամադրութիւն յառաջացնելու՝ ի
նպաստ հայ ժողովուրդի չահերուն: Այդ օտար տարրերէն եղան
ռուսեր, անգլիացիներ եւ ուրիշներ: Անգլիացիներէն կը յիշեմ
Պրքսթըն եղբայրներէն մէկը, որուն տրուեցաւ մեծ բնդունե-
լութիւն Արթիստականի մէջ: Օրուան հիւրը ծանօթացաւ մեր
աշխատանքին եւ խոստացաւ իր հնարաւոր օժանդակութիւնը:

Այս ժողովէն յետոյ եւ ունեցայ խորհրդակցութիւններ
Յովսէփ Գուլումճեանին, Շաւարշ Հովիւեանին եւ ուրիշ ուս-
կավար առաջնորդող անձերու հետ: Ապա տեսնուեցայ նաեւ ըն-

կերներ Արտակ Դարբինեանին եւ Վարդան Պապիկեանին հետ
ներքին կուսակցական յարաբերութեան յատուկ հարցերու մա-
սին: Վերջին երկուքը Վանի մէջ հրատարակուած «Վան Տոս-
պ»-ին խմբագիրները (դեռ նոյն թերթը Թիֆլիսի մէջ վերա-
հրատարակուելի չէր սկսած) եղած էին եւ իրենց ամբողջական
ուշքը կեդրոնացուցած էին զայն Թիֆլիսի մէջ վերահրատա-
րակելու ճիգին: Այս տեսակցութիւններու ընթացքին որոշուե-
ցաւ անմիջապէս յարմար տուն մը վարձել իբր կեդրոնականի:
Վարձեցինք Այվազեան անունով մէկուն ընդարձակ տունը Կա-
լավինսկի փողոցին վրայ բացուող փողոցներէն մէկուն մէջ:
Փողոցին անունը չեմ յիշեր:

Մինչեւ այդ հասած էր արդէն Չանդալեանին ստուար
խումբը եւ ես ալ ծանօթացած՝ Անուշաւան Տէր Մկրտիչեանին
եւ իրեն ընկերացած երկու տասնեակ ռամկավար կամաւորներու
հետ: Որոշեցինք որ Չանդալեանին խումբը մեկնի Սանահին՝
սպասելու անմիջական կարգադրութիւններու: Չանդալեանին
խումբը հոն մնաց կարճ ատեն մը, մինչեւ աւարտեցան իշխա-
նութեանց հետ պաշտօնական բանակցութիւններն ու պարենա-
ւորման կարգադրութիւնները:

Հայաստանի վերաշինութեան Յանձնաժողովին եւ քա-
ղաքապահ զօրամասին կազմութիւնները արդէն ստրաճայ-
նուած էին մասնաւորապէս զաղթականներու շրջանակներուն
մէջ եւ բազմաթիւ վանեցի ընկերներ պատրաստուեցան Երեւա-
նէն միանալու զօրամասին: Եկարեանը եկաւ եւ ստանձնեց իր
պաշտօնը ու շուտով վերադարձաւ Երեւան, այնտեղ իրեն սպա-
սող խումբին համար անհրաժեշտ կարգադրութիւնները ընելու:

Փութով ամէն բան կարգադրուեցաւ եւ Չանդալեանին
ու Անուշաւանին խումբերը մեկնեցան միանալու Եկարեանին
խումբին: Միացեալ զօրամասը մեկնեցաւ Վան ստիպողական
պայմաններու տակ, որովհետեւ անոնց ներկայութիւնը անհրա-
ժեշտ դարձած էր Վանի մէջ հայրենիք վերադարձած ու ճամ-
բայ ելլող ժողովուրդի պաշտպանութեան համար: Այդ գաղ-
թականութիւնը կը տեղաւորուէր Վան քաղաքին ու շրջակայ
գիւղերուն մէջ: Վերջիները մասնաւոր անմիջական պէտքը
ունէին գիրենք պաշտպանող զինուորներու ներկայութեան:

Պահակազօրքը անմիջապէս անցաւ իր պարտականու-
թեան աշխատանքին: Պահակազօրքի պարենաւորումը, սա-
կայն, կապուած էր չափազանց ծանր պայմաններու հետ: Կով-
կասէն մէկ երկու առաքումները կատարուեցան մեծ զժուարու-
թիւններով: Սակայն յետոյ զործնական նկատուեցաւ պարենա-

ւորումի հայթայթումը ապահովել տեղւոյն մերձակայ վայրերէն եւ մասնաւորաբար Պարսկաստանէն: Բայց պէտք է խոստովանիլ թէ այս տեսակէտով զօրամասը գրեթէ միշտ այ մեծ դժուարութիւններով կը հայթայթէր՝ իրեն համար անհրաժեշտը:

Վանի շրջանակը ենթարկուած էր թուրք բարբարոսութեան աւերիչ հարուածներուն, քիւրտ վայրագութեան քանդողական արարքներուն եւ իրր պատերազմի թաւերաբեմ ծանրօրէն արորուած էր բանակներու կրունկներուն տակ: Մէկ խօսքով, այնտեղէն արհաւիրքը անցած էր: Եւ այս տեսակէտով զօրամասը շատ աւելի ծանր պարտականութիւններ ունէր կատարելիք՝ քան ճակատի բանակները:

Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի կազմութեան սկզբնական օրերուն, երբ արդէն Վերակազմեալ Հնչակեան եւ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւնները ճշդած էին իրենց զործակցութեան պայմանները, աշխատանքին բնոյթն ու զործունէութեան դաշտը, երկու կուսակցութիւններու ներկայացուցչական մէկ ժողովին մէջ խօսելով Սմերիկայի մէջ երեք կուսակցութիւններու միացեալ զործունէութեան մասին, թելադրեցի չօչափել Ս. Դ. հնչակեաններու տրամադրութիւնները ի մասին հաւանական զործակցութեան մը կարելիութեան: Ժողովականներէն ոմանք թէեւ կասկածանքով մօտեցան առաջարկի դրական արդիւնքին, բայց հետեւանք տալու համար իր տրամաբանական առաջարկին եւ մերժումի աքլոր իրենց կողմէ տալու փաստին՝ իրենց համաձայնութիւնը յայտնեցին:

Նախապէս առնուած ժամադրութեան մը վրայ տեղի ունեցաւ մեր բանակցութեան առաջին հանդիպումը, որուն մէջ գլխաւորաբար անդրադարձումներ կատարուեցան ընդհանուր իրադարձութիւններու եւ յսուեցան կողմերու տեսակէտները փնտրանուած նիւթերու առնչութեամբ:

Այդ ժողովին մէջ որոշուեցաւ յաջորդ նիստի բնթացքին խօսիլ բուն զործակցութեան պայմաններուն եւ զործի կուսեան մասին:

Յաջորդ ժողովը տեղի ունեցաւ դարձեալ Ս. Դ. հնչակեաններու գրասենեակին մէջ, ուր ներկայ էին Ս. Դ. հնչակեան Կուսակցութեան Լազօն, տօրթ. Ս. Տաշիրը, Յ. Մնացականեանը: Մ. Զիլմէճեանին «Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց» զործին մէջ (ԿՅ 211) յիշուած է իր-

րեւ ժողովի մասնակից Արմենակ Եկարեանն ալ, որուն ներկայութիւնը չեմ յիշեր:

Նախորդ ժողովին մէջ արդէն խօսած էինք կամաւորական շարժումին վերաբերած հարցերուն, ինչպէս նաեւ անոր ստացած վերջին աննպաստ իրադարձութիւններուն մասին: Այս անգամ մեր սկսած դործին (Հայաստանի վերաշինութեան եւ քաղաքապահ զօրամասին) առնչութեամբ տուինք մեր կողմէ բացատրութիւններ: Առաջարկեցինք տւելի ընդլայնուած դործակցութեան մը սկսիլ: Ս. Դ. հնչականները սկզբունքով ընդունեցին դործակցութեան առաջարկը: Մեր առաջարկը պարմանաւորուած էր կողմերու հաւասարութեան հիմնական սկզբունքին վրայ: Մեզի պատասխանուեցաւ թէ մեր առաջարկը անընդունելի էր իրենց կողմէ: Անոնք ըսին. «Ս. Դ. Հնչական կուսակցութիւնը ունի զօրաւոր մասսա մը կողմասի մէջ եւ զօրամաս մը պատերազմի ճակատին վրայ»: Մենք յիշեցուցինք իրենց թէ գործակցութեան համար դանազան չըջնակներու կուսակցութիւններուն համեմատական ուժը նկատի չէր առնուած Ամերիկայի մէջ եւ այլուր: Ամերիկայի Ազգային Միութեան մէջ կողմերը հաւասար նկատուած են եւ կուսակցութիւններու մասնակցութիւնը այդ միութեան մէջ հաւասարութեան ըմբռնումով եղած է: Ս. Դ. հնչական ներկայացուցիչները ըսին. «Նախ կը մերժենք Ս. Ռամկ, կուսակցութեան Վանի Շըրջանակին մասնակցութիւնը տրուած լայն դործերուն մէջ, երկրորդ՝ կ'ընդունինք մէկական ներկայացուցիչ միայն Ամերիկայի Շըջանակի Վերակազմեալ Հնչական եւ Սահմ. Ռամկավար կուսակցութիւններէն»: Անոնք անդրդուելի մնացին իրենց տեսակէտին մէջ: Մենք դանազան նկատումներով մերժեցինք իրենց առաջարկը եւ հետեւեալ ձեւով խտացուցինք մեր հակառակարկը դրաւոր. եւ այս՝ դրաւոր փաստ մը ունենալու մասնաւոր դիտումով: «Մենք, իրեւ Ամերիկայի մեր կուսակցութիւններու ներկայացուցիչները, կ'ուզենք համահաւասար թիւով մասնակցի կեդրոնական կոմիտէիդ, դայն զօրացնելու նպատակով. համաձայն էք թէ ոչ»: Մեզի պատասխանուեցաւ - ոչ:

Այս դրաւոր փաստաթուղթը երեք օրինակներով ստորագրեցինք եւ բաժնուեցանք իրարմէ:

Այդ բաժանումը, սակայն, արդելք չեղաւ որ հետագային համազգային բնոյթ ունեցող բոլոր ժողովներուն մէջ, որոնք տեղի կ'ունենային պարթականական դործերով կամ ազգային քաղաքական նիւթերով պարգելու համար, նոյն տեսա-

կէտը ունենանք ու գործակցարար աշխատինք Ս. Դ. Հնչակեաններու հետ:

Կարծեմ այդ բաժանումը տեղի ունեցաւ առանց փոխադարձ դառնութեան, աւելի ճիշդ ընտրուելով՝ տեսակ մը գոհունակութիւն պատճառեց կողմերուն:

Այդ գրաւոր փաստաթուղթը ստորագրեցին Հնչակեաններէն տոքթ. Ս. Տաշիրը, Շահումեանը, Մնացականեանն ու Լազօն, վերակազմեալ Հնչակեաններէն՝ Պ. Տեփոյեանը եւ Դշխոյեանը, իսկ Հ. Ս. ռամկավարներէն՝ Անուշաւան Տէր Մկրտիչեանը: Յիշեմ նաեւ թէ մեր երկու հանդիպումներուն ժողովի ատենապետ ու ատենադպիր ընտրուած էին Լազօն եւ Տեփոյեանը:

Նախքան այդ նիւթին մէջ խորանալը, պարտք կը զգամ միջանկեալ յայտարարելու թէ Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի կազմութեան եւ առհասարակ անոր գործունէութեան մասին ցարդ հրատարակուած տեղեկութիւններն ու հաւաստումները մեծ չափով չեն համապատասխաներ իրականութեան: Անոնցմէ ոմանք յեցած են բացարձակապէս իրենց երեւակայութեան եւ բացայայտօրէն կը մեղանչեն իրականութեան փաստին դէմ: Անոնցմէ ոմանք ալ իրենց յածր միայն գրի առած են եւ այս կամ այն առիթն շուրջ թմրկահարութիւն միայն կատարած: Անոնք յաճախ իրարու ալ կը հակասեն: Ոմանք գործին մասին խօսած են թերատ կերպով եւ գործը վերագրած անգոյ կազմի մը, օրինակ՝ «Կովկասահայ բնկերութիւն» մը*, առանց անուն տալու, եւ բուն իսկ տեղւոյն վրայ գործողներուն անուններն ալ մոռցած, եւ այս՝ որովհետեւ այդ աշխատանքը կատարւած է ընդդիմադիր կուսակցութիւններու կամ հոսանքներու կողմէ:

Այս մասին կարդացած եմ յուշագիրքեր ու յօդուածներ, որոնց հեղինակները ոչ մէկ գործ կամ շփում ունեցած են դադափարի յղացման ու յանձնաժողովի կազմութեան, ինչպէս նաեւ Հայաստանի վերաշինութեան գործին ղեկավարութեան հետ եւ սակայն անպատասխանատու հաւաստումներով ապաւորած են իրենց ընթերցող հասարակութիւնը մէկուն կատարած գործը ուրիշներուն վերագրելով եւ կամ աշխատանք մը ուրիշին հետ չփոթելով, ուրացումներով կամ անհիմ հաստատումներով:

Կը բաւականանամ այստեղ խօսիլ երկու օրինակներու մասին, միւսները սրբագրելու գործը կը թողում իր տեղին ի-

* Տես՝ Յարութիւն քհն. Տէր Մեսրոպեան, «Կեանքի յուշեր», էջ 87:

բական անցքերու նկարագրութեան փաստականութեան: Նախ սխալ է այն հաւաստումը թէ զիմումի մը վրայ անցի ունեցած է հաւաքոյթը Ալեք. Մելիք Աղապարտանին ընտկարանին մէջ եւ այդ ժողովին մէջ ծնունդ արուած է Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի կազմութեան եւ անոր գործին: Արդէն վերը արուեցաւ թէ ի՛նչպէս, ի՛նչ պայմաններու տակ եւ ո՛ր առիւտեցաւ այդ որոշումը: Ո՛չ ալ բանակցութիւն կատարուած է Աղապարտան Բիւրոյին հետ՝ Չանդալեանին զեկամարութեամբ գալիք կամաւորներու մասին: Այդ հարցին մէջ ինձմէ զատ ոչ մէկը իրաւասու էր բանակցութիւն կատարելու որեւէ մէկ կողմի հետ, մանաւանդ Չանդալեանին բացակայութեան: Անոնք որ արձանագրած են թէ Նպաստամատուցը էր որ վերածուեցաւ Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովին, անոնք առնուազն մեծ չիթութեան մէջ են՝ խառնելով երկու գործերը իրարու: Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի կազմութենէն յետոյ ալ Նպաստամատուցը կը գործէր Հ. Առաքելեանին վերին պատասխանատուութեան տակ եւ գործավարն ալ էր Յ. Տէր Մարկոսեանը: Նպաստամատուցի աշխատանքին նուիրուած էին կարգ մը ունեւոր տիկիները: Այլապէս խօսելով երկու գործերուն ընդթիւն ու տարոգութիւնը ամբողջովին տարբեր բաներ էին: Նպաստամատուցը կը գրադէր Թիֆլիսի մէջ կարօտ անհատ զաղթականներու նպաստաբաշխութեամբ, որ չափազանց սահմանափակ էր իր տարողութեամբ, իսկ Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողով անուր ինքնին կը յատկանշէ ընդարձակ ու մեծ աստիճանի գործունէութիւն մը: Եւ ա՛յս էր իսկապէս անոր կազմութեան նպատակն ու առաջադրած աշխատանքը, որուն պիտի անդրադառնամ յետոյ:

Չեմ գիտեր ի՛նչ պիտում վերադրել ըստ անոնց, որոնք թո՛րիչը տուին իրենց դրիչին՝ արձանագրելու անճիշդը, անկատարը, եւ արձանագրեցին իրենց ընկերներու խնդրանքին անստիճիւն եւ անհաճոյ մթնոլորտ մը չստեղծելու փափկանկատութեամբ: Նորէն կը խնայեմ ու չեմ արձանագրեր հոս անոնց առնունքը եւ չեմ գիտեր փաստական մերկացումներու՝ չհարւածելու համար անոնք, որոնց հետ գործած եմ ժամանակին: Բայց չեմ կարող թոյլ տալ որ պատմական անցքերն ու անձերը անիրաւութիւն: Միայն հոգանցիկ սխառոտութիւններով կը բաւականանամ ու կ'անցնիմ լուսերէս արձանագրութեան պնդքին:

Երբ Թիֆլիսի մէջ խօսք ու ձեւ ստացան գործերը, ինծի կը մնար կարճ ժամանակի մը համար ալցելիլ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրենեան վեհափառին: Այդ ալցելու-

թիւնը ունէր որոշ նպատակներ: Անոնցմէ առաջինը ամերիկահայոց փոթորկում մէկ շրջանի կիրքերէն թելադրուած եւ ժամանակին հապճեպով կատարուած անարդարութիւն մը դարձանել տալու պարտականութիւնն էր: Առանց դէպքին տուն տուող պատճառներուն անդրադառնալու եւ վերլուծող ակնարկ մը նետելու կատարուած ցաւալի տնցքերու մասին, պէտք է յիշել թէ այն տաւն Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ծանօթ գէմքերէն Ղեւոնդ վրդ. Մարդուկէսեանը Սարաճեան եպսկփին մէկ հետադրին վրայ կարգաւոյժ եղած էր եւ տարիներով այդ պատիժը կրած: Պէտք էր որ ենթական վերստանար իր եկեղեցական աստիճանը: Այդ աշխատանքին մասին խօսուած էր ինծի, երբ Ամերիկայէն բաժնուած չէի դեռ: Ժամանակը եղած էր կառարելու այդ պարտականութիւնը եւ օգտուեցայ պատահութեանէն:

Թիֆլիսի մէջ կատարած ուսումնասիրութիւններուս ընթացքին եւ մտադրած էի շարունակել իմ պրպտումները նաեւ էջմիածնի մէջ, մասնաւորաբար Գէորգ Ե. կաթողիկոսին մօտ, ինչպէս նաեւ զինք չըջապատող եւ մեր գործին ուղղութեան համակիր եպիսկոպոսներու շրջանակին մէջ: Անոնց տուած հաւաստումները իմ շարժումներուս համար անհրաժեշտ կը նկատէի եւ այդ մասին խօսած էի րժշկապետ Բազարտա Նաւասարդեանին, Համբ. Առաքելեանին, Սահմ. Մալխասեանցին եւ Սամսոն Յարութիւնեանին: Այս անձնատարութիւնները ծանօթ էին էջմիածնի մտածողութեան եւ ինծի խոստացան նախօրօք զրել իմ մասին կաթողիկոսին ու անմիջական չըջապատին:

Եւ արդարեւ, երբ առաջին անգամ ներկայացայ Կաթողիկոսին, ան արդէն ծանօթ էր իմ ալցիկութեան նպատակին եւ ինքն իսկ մեր խօսակցութեան հունը փոխադրեց Ազգ. Բիւրոյի կազմութեան սկզբնական նպատակներուն, յաջորդաբար կրած փոփոխութիւններուն եւ հուսկ յետոյ ստացած վիճակին ու դորժուած չափադանցութիւններուն: Շեշտեց անոր անշրջահայեաց գործունէութեան պարագան, որ ծնուցած էր անբարեացակամ տարրերու մէջ թուեաւոր տակութիւն հայերու հանդէպ: Պէտք է այստեղ միջանկեալ բռնմ թէ ժամանակի ընթացքին այդ արամադրութիւնները վերածուեցան բացայայտ թշնամութեան եւ մինչեւ իսկ զինական բախումներու՝ ազիր-թաթաբներու եւ վրացիներու հետ: Նոյն աստիճան տակութեան արամադրութիւններ յառաջացան նաեւ կառավարական ու բանակային շրջանակներու մէջ: Այդ վերջին պարագան էր որ պարագաւորեց հայերուն Կաթողիկոսը հրաւիրել Թիֆլիս՝ ստեղծուած ծխո-

լորտը պարզելու: Բայց այս մասին յետոյ:

Մեր խօսակցութիւններու ընթացքին նշմարելի էր թէ կաթողիկոսը չափազանց ընկճուած էր արեւմտահայերու վիճակուած ահաւոր վախճանէն, կովկասի մէջ խմորուած հակահայ տրամադրութիւններէն եւ ցարական կառավարութեան՝ պատերազմի սկզբնաւորութեան ցուցուցած հայասիրական դունաթափ եւ մինչեւ իսկ ընկճող իրականութեան ծնցուցած մտատանջութենէն: Կաթողիկոսին յոյսը յայտնապէս կապուած էր արեւմտեան պետութիւններու ուստական քաղաքական տենչանքներու դէմ կատարուելիք հակազդեցութիւններու հետ*:

Անշուշտ այս բոլոր չարիքները պէտք չէ վերադրել Ազգային Բիւրոյի կամաւորական շարժումներու անպատակաւարմար ու գրգռիչ ընթացքին: Որովհետեւ էականին մէջ կողմերու կենսական շահերու բախումէն կը յառաջանային մշտատեւ հակակրօթիւնները եւ կը վերածէին կովկասի իրերատեայ խառնարանի: Իբր ակար կողմ՝ միւսներուն աննկախնակ շահեր հետապնդող հայերու կը վիճակուէր կրել հարուածներուն ուժեղ ցնցումները. եւ այս՝ մինչեւ ուսերուն վերադարձը կովկաս:

Երկու օրուան ընթացքին ունեցած երկու տեսակցութիւններու մէջ չեղաուեցան աւելի զօրաւոր չափերով՝ նախապէս Թիֆլիսի մէջ կազմած զաղափարներս Ազգային Բիւրոյի ու կամաւորական շարժումի նկատմամբ: Ազգային Բիւրոյի ստեղծած կամաւորական շարժումը, սահմանին երկու կողմնալ, ապիտաւոր հետեւանքներ յառաջացուց. այս պարագան անվիճելի կը մնայ: Անշուշտ պէտք չէ զգացումով մօտենալ՝ դնահատելու տրուած շարժումները, այլ անողոք տրամաբանութեամբ պէտք է կատարել պատճառի եւ արդիւնքի հետազօտութիւնը, տեսնել անկաշառ աչքերով եւ յետոյ հասնիլ անխուսափելի եզրակացութեան: Կամաւորական շարժումը հոգեբանական էր, այո՛: Իսկ հայկական շահերու տեսակէտով նպատաւոր էր, առաւելապէս ո՛չ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը այլեւս նախկին կապերը չունէր Ազգային Բիւրոյին հետ, որովհետեւ փոխուած էր անոր ներքին կազմախօսական դիմադիւծը եւ անցած էր Վորոնցով Տաշկովի օրերու ցարական կառավարութեան նպաստաւոր, դոնէ արտաքինապէս փաղաքելի, վերաբերումը հայկական ազ-

* Այդ օրերէն ետք, 1916-ի գարնան, Փեթերսպուրկի եւ Լոնտոնի մէջ վճռուած էր Արեւմտահայաստանի բաժանումը Դաշնակիցներու զաղտնի հասկացողութեամբ:

դային բաղձանքներու հանդէպ: Դիւանագէտ ազուէս Վորոնցով Տաշկովին յաջորդած էր, ինչպէս յիշեցինք նախապէս, զինուորական Նիկոլայ Նիկոլայեւիչը՝ իրր խորհրդանիշ քաղաքական բիրտ վերաբերումի փոփոխութեան: Յառաջացած էր սրուչափով ցրտութիւն: Հայերու եւ Հայկական Դատին առնչութեամբ արտաքնապէս այս ուսու կառավարութեան բեկումը կատարուած էր արդէն ու Նիկոլայ Նիկոլայեւիչը իր Եռատէնիչներու եւ Ապացիւներու համահարգով պատերազմի ճակատին վրայ ցոյց տուած էր ռուսական հեռակայ նպատակները: Այսպէս, քաղաքական միջնորդար հայերու համար աստիճանաբար կը դառնար հեղձուցիչ եւ հայերը՝ սկսած իրենց կաթողիկոսէն մինչեւ Ժողովուրդին ամենախոնարհ անհատը՝ կը վկայէին թէ ենթարկուած էին չափազանց անողոք պայմաններու, թէեւ կառավարութիւնը կ'ուզէր երևոյթները փրկելու համար արտաքին շղար դործածել իր վերաբերումին մէջ: Թշնամի էին օսմանցի թուրքը՝ եւ Կովկասի իսլամ տարրը, առնուազն անբարեացակամ՝ վրացիները եւ ցարական կառավարութեան վերին շրջանակները՝ Սաքանով, Փեչկով եւլին, ինչպէս նաեւ Թրքական Ճակատներուն վրայ գործող բանակին բարձրագոյն հեղինակութիւնները՝ Ապացիւ եւն.*: Այս բոլոր թշնամական կեցուածքներուն փաստական իրականութիւնները շօշափելի դարձած էին եւ ճակատին վրայ եւ թիկունքին մէջ: Հայր դըրտած էր միջցեղային ու քաղաքական անբնական պայմաններու մէջ: Եւ այս՝ շեշտուած չափերով, տուն վերադարձող գաղթականներու հանդէպ:

Երբ արտաքին ճակատին վրայ ընդհանուր ձախողանքն էր որ կ'արձանագրուէր, ներքին ճակատը իր բազմաթիւ փեռեկտումներով կը ճարճատէր: Այդ ճարճատիւնը՝ խառնուած հասնող Ժողովուրդի նուազկստ հոնդիւններուն ու ոգորումի ազմուկին՝ կը հասնէր գործնականին մէջ մեկուսացած Վեհափառին տկանջին: Ահա թէ ինչո՞ւ Վեհափառը ընկճուած էր եւ հակառակ իր թաքցնելու ճիպին՝ բացայայտօրէն նշմարելի էր իր խորտակումը հոգեկանութիւնը:

Բուն իսկ էջմիածնի պարիսպներուն եւ անմիջական չորջապատին մէջ մահը կը տիրապետէր: Համահայկական յոյսի կեդրոնը այլեւս անգոր էր գիմադրելու յաղթական մահուան

* Այդ ատեն արդէն Թուրքիոյ հայկական հողերը երեք պետութիւններու լոնտոնի գաղտնի համաձայնութեամբ բաժնուած էին Ռուսիոյ եւ Ֆրանսայի միջեւ: Այդ պարագան յետոյ պիտի լսէինք:

մանգաղին, որ կր հնձէր Փիղիքապէս ու հոգեպէս սպառած զանդուածները: Ամենայն Հայոց Հայրապետը մեռնող ցեղին կարկամած հանդիսատեսն ու յուզարկւաւորն էր՝ առանց կարենալու դերադոյն մաքառումին մէջ իր կոսեցնող ճիգը խառնել: Էջմիածնի պարիսպներէն ներս ու դուրսը երկու երեք ամիսներու ընթացքին շուրջ յիսուն հազար հայորդիներ ամփոփուած էին խրամային «Եղորայրական գերեզմանադաշտ»ին մէջ:

Հոս պէտք է արձանագրեմ թէ մինչ հայ պալթականները կողկասի մէջ կր սպառէին համաճարակներէ, անսուպութենէ եւ պահանջուած խնամքի պակասէ, մինչ Էջմիածին եւ իր շրջակայքը կը վերածուէին համայնական գերեզմանոցներու, եւ մինչ զանդուածային համեմատութեամբ հատնումի դատապարտուած կը թուէր կոյկաս սպաստանած արեւմտահայ պալթականութիւնը, օր մըն ալ այդ արհաւիրքին կեդրոնը կր հասնէր ամերիկահայ բժշկական առաքելութիւնը: Այդ առաքելութիւնը կր բաղկանար բժիշկներէ ու հիւանդապահուհիներէ: Բժշկապետ [Մովսէս] Յովսէփեանը իրեն հետ կր բերէր կարեւոր քանակութեամբ գեղորայք եւ այլ բժշկական պիտոյքներ կամ նիւթեղէններ՝ իր նուիրուած վեր. Հնչակ. Կուսակցութեան շրջանակին կողմէ:

Այդ խումբին մէկ մասը գծրախտաբար դրամի կամ ալ խաջներէ բոնուած՝ յբեց խումբին վստահուած առաքելութեան նպատակը եւ միացաւ Պարսկաստան գտնուած ռուս բանակի բժշկական կազմին: Կը յիշեմ թէ այս գէպը արեւմտահայ որոշ շրջանակի մէջ խոր ահաճութիւն պատճառեց: Այս մասին ժողովրդական երգ մըն ալ բերնէ բերան անցաւ: Այդ երգը կը սկսէր բաժնուող հասուածին առաջնորդող գէմբին յիշեցումով: Այսպէս՝

ռուսական փողերը, փողերը
առին տարին Նիւքսենին (?) խելքը...

Տոքթ. Յովսէփեանը իր փրկարար առաքելութեան կեդրոնը բնականաբար պիտի հաստատէր հոն ուր համաճարակի արհաւիրքը կ'իշխէր ու մահը կր տիրապետէր: Էջմիածնի շրջանակն էր այդ կեդրոնը:

Վաղարշապատէն սկսաւ ան տարածել իր փրկարար պայքարը: Եռանդուն էր այդ գիտական պայքարը եւ յաղթանակը նախատեսուած: Այդ պայքարը ամենատուեղ արտայայտութեամբ լարուած էր առաւելապէս ժանտախտի (թիֆուս) գէմ:

Միջոցառումները հիմնական էին: Այդ կանխարգիլումի պայ-
քարին միացուցած էր ան վարակուածներու. բժշկական դար-
մանումի պրկուած աշխատանքը: Տոքթ. Յովսէփեանը չարժ-
ման դրաւ իր գիտական հմտութիւնը եւ բազմամեայ փորձա-
ռութեան պաշարը:

Տգէա ժողովուրդը սկզբնական շրջանին զայն անուանեց
«Ոջիլի բժիշկ», որովհետեւ տոքթ. Յովսէփեանը իր դարմա-
նումներուն աւրնթեր անողոք պայքար մը բացած էր ոջիլին
դէմ: Եւ իր կեանքը վտանգելու գնով կը մտնէր նաեւ դաղթա-
կանութեան մէջ, ըլլա՛ր այդ կեդրոն թէ շրջակայքը մակաղած,
պայքարելու համաճարակը փոխանցող զաղիր միջատներուն
դէմ: Եւ այդ աշխատանքին արդիւնաբերութեամբ՝ համաճա-
րակը կորսնցուց իր ուժգնութիւնը եւ վերջապէս մահը պար-
տուեցաւ, մինչեւ որ յետոյ՝ հայ թրքական կռիւի օրերուն, իր
յաղթական արշաւը վերսկսէր:

Եւ երբ տոքթ. Յովսէփեանը կը երկարատեւ առաքելու-
թիւնը յաջողութեամբ կատարած կը մեկնէր, «Ոջիլի բժիշկը»
փոխուած էր «Ահա՛ ճշմարիտ առաքեալը» որակումին:

Անվիճելիօրէն կարելի է հաւատալ թէ տոքթ. Յովսէփ-
եանը իր նուիրումով, անխոնջ աշխատանքով ու գիտական մե-
թոտիկ հետապնդումով մահուան ճանկերէն իսկ մէկ քանի
տասնեակ հազար հայօրդիներ եւ կեանքին վերադարձուց զա-
նոնք: Հայ ժողովուրդին երախտաւորն էր ան, որ արժանաւո-
րապէս պիտի կոչուէր. «Ահա ճշմարիտ առաքեալը» (12):

Ամերիկահայ բժշկական առաքելութենէն առաջ անշուշտ
կը գործէին մահուան տիրապետութեան տակ մէկ երկու բժիշկ-
ներ, հոլանտայի մը եւ Դրաստամատ Տէր Մկրտիչեանը, ապա
նաեւ՝ գերի բռնուած արեւմտահայ բժիշկներ: Բայց անոնց կա-
տարածը՝ արմատական միջոցներով աշխատանք չէր եւ հետե-
ւարար պահանջուած հիմնական դարմանը չէր կրնար տալ ա-
ղէտը անհետացնելու համար:

Տոքթ. Յովսէփեանը կը վերաբերէր կուսակցական այն
դպրոցին, որ ստեղծուած հայկական արհաւիրքին մէջ հայ ժո-
ղովուրդին քանակին պահպանումը իր նուիրական յանձնառու-
թեան մաս կը նկատէր: Այդպէս գործեցին իր րնկերներէն ու-
րիշներ իրմէ առաջ ու իրմէ ետք՝ նոյն ու տարբեր հորիզոննե-
րու տակ. եւ այս՝ առանց տարփողումի ու անհատական եւ
հատուածական թմրկահարութեան:

Հարիւր հազարներով հաշուելով մեր զաղթականութեան
օգնութեան հասնելու համար թէեւ զանազան անուններու տակ

հայ եւ օտար մարմիններ կազմուած էին ու աշխատանքի լըծ-
ւած՝ թեթեւցնելու տառապահիւծ ժողովուրդին կարիքը եւ
պայքարելու համատարած սպառնալից դէմ. բայց արհաւիրքը
մեծ էր եւ թերի կազմակերպութեան հետեւանքով ձեռք բեր-
ւած արդիւնքը անբաւարար: Գաղթականութեան օգտին եղած
զոհողութիւններու ամենամեծը պէտք է հաշուել արեւելահայ
գիւղացիներու կատարածը: Անոնք ընդունեցին իրենց գիւղե-
րուն, մինչեւ իսկ ընտանիքներուն մէջ համաճարակներու մոլո-
քին կլորփէն լռնուած գաղթականութիւնը եւ իրենք ալ բնակա-
նարար ենթակուեցան մարդկային ծանր զոհարերութիւննե-
րու: Այդ եղաւ իրենց եղբայրական զուրգութան քննարկը
հանդէպ հասնող արեւմտահայութեան:

Այս անսակեալով ալ տոքթ. Յովսէփեանին կատարած
փրկութեան գործը անդհաճատելի է:

Միջանկեալ գէպք մը, որ պատահեցաւ Վեհափառին երկ-
րորդ այցելութեանս առնի, ծնունդ առաւ մեռելատան խօսակ-
ցութեան մը իմ եւ իր միջեւ: Դէպքը հետեւեալն էր: Վեհափառնի
ճամբուն վրայ, ուր մեռելահաւաքները իրենց մեռելահաւաքու-
թեան սոօրեայ պարտականութիւնը կը կատարէին, տեսայ թէ
դեռ հռնդացող կ'իւն մը բռնեցին սալլապանները եւ նետեցին
սալլին վրայ դրուած գիւղիներուն կողքին. եւ այս՝ այնքան
բրտօրէն, իբր թէ առարկան փայտի կոճղ մը եղած բլլար: Մօ-
տեցայ վայրայ դերակատարներուն եւ զայրոյթս յայտնեցի ի-
րենց արարքին համար: Սալլորդներէն մին պատասխանեց.
«Բոլոր մը առաջ կ'ամ ետք, պէտք է կատարենք մեր գործը»:
Խռոված հոգիս ըմբոստացաւ այդ անմարդկային անտարբերու-
թեան համար եւ խիստ յանդիմանութեամբ փոխադարձեցի մե-
ռելահաւաքին պատասխանին: Մարդը՝ բարկաճայթ՝ վրաս
յարձակեցաւ հայհոյանքի տարափով մը: Կարող չեղայ զսպել
զայրոյթս եւ չառաչուն աղաակ մը զրի իր երեսին: Երկու սալ-
լորդներն ու իրենց միւս բնակերակիցները՝ թողած իրենց սալ-
լերը՝ յարձակեցան վրաս: Ինծի ընկերացող երկու կամաւոր
զինուորներ ձեռքերը իրենց ատրճանակներուն տանելով ազդա-
րարեցին եւ քաշուիլ՝ եթէ չեն ուզեր շանտառակ բլլալ: Բիրտ
ուժի սպառնալիքը տուած էր իր արդիւնքը եւ սալլորդները հե-
ռացան:

Ձգայնոտած կը քալեմ գէպի վեհափառն, տաճարի դրան
ձախ կողմը՝ Խրիմեանին չիմաքարին վրայ կը տեսնեմ որ չուրջ
տասներկու տարեկան աղջիկ մը կ'ոնակին վրայ պառկած է եւ
ճանճերը ծածկած են անոր գէմքը: Կանց կ'առնեմ անոր քով եւ

կ'ուզեմ արթնցնել զայն: Աղջնակը մեռած է: Մինչև հիմա կը լսեմ ձայնս. «Հայրիկ, ե՛լ, ճուարիկներդ իրենց մահուան մէջ իսկ քեզի կ'ապաւինին»: Համայնական մեռելատունէն անցած՝ կը դիմեմ վեհարանի դրան: Վեր կ'ելլեմ վեհարան եւ ներս կը հրամցուիմ: Վեհափառին աջը առնելէ յետոյ, խռոված հոգե-վիճակով կը դիմեմ իրեն եւ կ'ըսեմ. «Վեհափառ տէր, Ձեր դա-ւակները կը հատնին, իջէք ու կեանք ներշնչեցէք Ձեր մեռնող ժողովուրդին»: Վեհափառը թախծոտ կը պատասխանէ. «Ձա-ւակս, հայոց հայրապետը մէկ է եւ մահէն չի վախնար, բայց պէտք է ասլըի դռնէ այս արհաւիրքի օրերուն, երբ նոր մը ընա-րել կարելի չէ, մինչ հայ ազգը հայրապետի մը պէտք ունի ներ-կայ ապոնապին մէջ»: Կը հարցնէ մեռելահաւաք սայլորդներու հետ տեղի ունեցած միջադէպին մասին, կը պատմեմ անցքը: Ինքնիրեն կը խօսի. «Վայրենիները, աշխարհը բրտացել է եւ նրանք էյ՝ վայրենացել»:

Այս երկրորդ տեսակցութեան տուն կ'անդրադառնանք դադթականութեան վերաբերող հարցերու: Վեհափառը կու տայ ծանօթութիւններ այն մարմիններու եւ կազմակերպու-թիւններու նկատմամբ, օտար կամ հայ, որոնք իրենց մարդա-սիրական ու ազգասիրական գործը կը կատարեն ի նպաստ գե-հեհական դժոխքէն վերապրած եւ սակայն սպառումի ենթա-կուած դադթական ժողովուրդին:

Ճնշիչ էր մեր խօսակցութիւնը իր տառապեցուցիչ նիւթե-րով: Պէտք էր փոխել հունը: Կ'օգտուիմ իր բարեացակամ տրա-մադրութենէն եւ կ'անդրադառնամ Ղեւոնդ վարդապետ Մար-դուկէսեանին պատիժին ու կը խնդրեմ իրմէ որ բաւ համարէ տարիներու պատիժը եւ ներէ՝ արտօնելով որ ան վերադառնայ իր եկեղեցական կարգին: Վեհափառը թղթած բարները բերել կու տայ, աչք մը կը նետէ անոնց վրայ եւ ինծի կ'ըսէ թէ Մարդու-կէսեանին կը ներէ եւ մէկ պայմանով ան կարող է եկեղեցական կարգը վերստանալ՝ եթէ ներում խնդրէ եւ վեց ամիս էջմիածնի մէջ ապրի: Այդ վեց ամիսներու ընթացքին պէտք է մօտէն հե-տևիլ անոր եւ պէտք եղած համոզումը զոյացնելէ յետոյ շնոր-հել անոր եկեղեցական սքեմը: Շնորհակալութիւնս կը յայտնեմ Վեհափառին եւ իր օրհնութիւնը առնելէ ետք կը մեկնիմ վեհա-րանէն: Համաձայն Վեհափառին տնօրինութեան, Մարդուկէսե-անը եկաւ էջմիածին եւ որոշ տուն մը հոն մնայէ յետոյ կար-գը վերստացաւ ու մեկնեցաւ Ամբրիկա. եւ սակայն իր հին մեղ-քերու ճանապարհով բաժնուեցաւ. այս աշխարհէն:

Էջմիածնի մէջ, ուր Վեհափառին այցելուողներու մասին

բերնէ բերան կը փոխանցուէին տեղեկութիւններ ելեկարակա-
նութեան արագութեամբ, զարմանքով լսեցի երկրորդ օրն իսկ
իմ այցելութեան մասին բաւական ճշգրիտ ծանօթութիւններ:
Անոնց հետ որ տեսակցութիւններ ունեցայ այդ երկու օրուան
ընթացքին, անոնք ինծի խօսեցան բաներ՝ որոնք համոզեցին զիս
թէ արտակարգ զգուշաւորութեամբ պէտք էր արտայայտուիլ
մինչեւ իսկ բարեկամ տարբերութեան մէջ: Ծանօթացայ, ի միջի այ-
լոց, նաեւ Բազարատ սրբազանին հետ եւ խնդրեցի իրմէ անհրա-
ժեշտ նիւթերու մասին գրել ինծի: Ան խոստացաւ կատարել այդ
խնդրանքս: Էջմիածինը զիս հետաքրքրող դժով երկու զլխաւոր
հոսանքներու կը բաժնուէր՝ հակադաշնակցական եւ զաշնակ-
ցականներու: Համալիր: Վերջիններս անհշտ փոքրամասնու-
թիւն մը կը կազմէին. անոնց մէջ յայտնի էր Դանիէլ վրդ. ք:
Գործով էջմիածին այցելողները կը զիմէին մէկ կամ միւս կող-
մի հոսանքին նպաստաւոր չըջանակին՝ անոնց կողմնակի օժան-
դակութիւնը ստանալու համար: Բնականաբար ես չէի կարող
արհամարհել այդ միջոցը: Առաւելապէս անոնք կու տային ան-
հրաժեշտ ծանօթութիւնը էջմիածնի ներքին կացութեան եւ կա-
թողիկոսին տրամադրութեան մասին: Եւ ամէն անգամ որ էջ-
միածնի հետ գործ կ'ունենայի հետագայ շրջաններուն՝ այդ
գործելակերպը կ'որդեգրէի:

Վերադարձայ Թիֆլիս՝ ծանօթութեան տակի ստուար-
ցած պաշարով: Այդ օրէն կովկասեան եւ մասնատրապէս ազ-
գային ներքին հարցերու մասին համոզումներս այլեւս ստացած
էին իրենց ընդհանուր ու վերջնական կազապարք: Յաջորդա-
կան ժամանակներու մէջ տղային կեանքի անշուղարձութիւն
մօտէն գործակցելով կամ հեռեւեւով, այդ համոզումները այ-
լեւս իմ շարժումներուս ղեկավարող տարրը կազմեցին: Թիֆլիս
վերադարձիս գրեցի «Պահակ»ին ընդարձակ թղթակցութիւն մը
«Կովկասեան տպաւորութիւններ» խորագրին տակ: Այդ գրու-
թեան ցոլարանին մէջ աշխատեցայ ամփոփ կերպով հալեցնել
ընդհանուր կացութիւնը, տուի մասնակի նշմարներ գործող
մարդերէ ոմանց մասին, որոնք մեր ազգային շրջանակին մէջ
ստանձնած էին որոշ դերեր՝ բովանդակութիւն եւ ուղղութիւն
տալու կարեւոր շարժումներու: Այդ թղթակցութեան մէջ, ան-
շուշտ, չառ բան ստիպումս էի զեղծել՝ սրբապապէս օրուան կա-
ռավարութեան գրաքննութեանն խոստովելու համար, թէ եւ այդ
թղթակցութիւնը մասնաւոր միջոցով ղրկեցի:

Կողմնակի հետազոտումներով ճշգրեցի նաեւ թէ կամաւո-
րական շարժումը իր խմբումի շրջանին խոր տարակարծու-

թիւններ ստեղծած էր ո՛չ միայն Դաշնակցութենէն դուրս գըտնուող շրջանակներու մէջ, այլ նաեւ բուն իսկ դաշնակցական շրջանակներէ ներս: Ընդհանրապէս դաշնակցական արեւմտահայ հատուածը, եւ կարեւոր մաս մըն ալ արեւելահայ հատուածէն, մտածած էր թէ վտանգաւոր շարժում մը պիտի ըլլար այդ՝ հայկական կենսական շահերու տեսակէտով, մանաւանդ արեւմտահայերու արագ կորուստը պիտի նշանակէր: Բայց թէեւ համեմատարար փոքրաթիւ հատուածը, որ բոցավառուած էր զգայական հայրենասիրութենէ՝ տարուած կուսակցական նկատումներէ եւ թերեւս մասամբ ալ անձնական հաշիւներէ, յաղթանակած էր ի նպաստ կամաւորական շարժումին: Այս վերջինները, յեցած ունեւ կառավարութեան ոճրային խաղաղութեան, յաջողեցան զործի անցնել ու վարել հայ ժողովուրդի դիւրախար զգայականութիւնը, օգտուելով նաեւ անոր հայրենասիրական աննկող արամադրութենէն: Այդ հոսանքն էր որ ճամբան բացաւ զէպի ահաւորը, զէպի անհակալէռելին ու զէպի գալոց արհաւիրքը՝ սահմանի երկու կողմի հայութեան համար: Եւ հայ ժողովուրդը նետուած էր այդ մեծ խաղին մէջ՝ շահելու համար իր պատմութեան ամենամեծ աղէտը:

Ազգային իւրօն արտաքին պաշտպանակն էր գործող դաշնակցական այն տարրին, որուն համար ռազմախաղը առաւելապէս նպատակ էր եւ ոչ թէ միջոց հայ ժողովուրդի բարձրագոյն շահերը ապահովելու:

Շատ ուշ, արեւելահայ համադրման մը մէջ, որ տեղի ունեցաւ Արթիտական թաւրոնի սրահը, եւ որուն հրաւիրուած էինք մօտաւորապէս տասնեակ մը արեւմտահայեր իրրեւ ունկնդիր միայն, Նիկոյ Աղբալեանն իր մէկ ուղերձին մէջ կը բացայայտէր. «Թէկուզ հարիւր հազար էլ զոհ տանք, մենք պէտք է շարժուենք»: Անշուշտ այդ արտայայտութիւնը ստացաւ իր պատասխանը ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչներէն Հ. Առաքելեանին հետեւեալ արտայայտութեան մէջ. «Ո՞ր քսակից էր տալիս, մենք յաւելեալ արիւն չունենք այլեւս անշրջահայեաց եւ անհաշիւ շարժումի տրամադրելու»:

Եւ սակայն առաջ եւ յետոյ ալ մատուցուեցաւ արջի ծառայութիւնն ու հայ ժողովուրդը ենթարկուեցաւ զարհուրելի ողջակիզման: Կատարուեցաւ անորակելի թուրքին ծրագրած համաթուրանական առաջին արարը՝ հայ ժողովուրդի կիսով չափ անճիւղման. բայց ռազմական աննպաստ պատահումներով ապառիկ մնացած իրադրութեամբ Կեղերոնական Ասիայէն մինչեւ Պոլսոյնները տարածուելիք մեծ կայսրութեան երազին:

Մեր այս տաժանելի փորձառութեան տպաւորութիւնը չի տարածուիր, անշուշտ, կամաւորական գունդերու խոյանքին վրայ: Անոնց վրէժխնդրութիւնը՝ միացած իրենց կռուելու խրոխտ ընդունակութեան եւ զինուորական տաժանքներու մէջ ցուցադրած տոկունութեան՝ անմոռանալի էջեր տրձանադրեց մեր ցեղային ռազմունակութեան ի նպաստ:

Երբ կարելի ըլլոր փառաբերով համոզուեցայ թէ այլեւս կամաւորական չարժումը դատապարտուած էր հաշուեյարդարի, գրեցի Ամերիկայի մեր Շրջանային Վարչութեան՝ պաղ-րեցնել նոր խումբերու առաքումը: Եւ այդպէս ալ եղաւ:

Ինչպէս ակնարկեցի նախապէս, այդ թղթակցութեան մէջ խօսած եմ, ի միջի այլոց, նաեւ փոխարքայի պալատական շրջանակին մէջ սրոյ ազդեցութիւն ձեռք բերած անձնաւորութիւններու մասին, որոնք նոյն պաշտօնաստան հետ ազգային գործերու առնչութեամբ մշակուած յարաբերութեան մէջ մեծագոյն դերը ստանձնած էին Վորոնցով Տաշկովին խորամանկ շնորհաբաշխութեամբ: Այդ անձնաւորութիւններն էին Մեսրոպ Կալիսիպոսը, Ալեք. Խատիսեանը եւ Սամսոն Յարութիւնեանը: Այս երեք անձերը այլապէս ալ ունէին կարեւոր պաշտօններ ու գիրքեր: Այդ օրերուն հայկական տաղը Թիֆլիսի մէջ քաղաքական հորիզոնէն վեր կը բարձրանար եւ այս եռապետութիւնը ժպտաչաւրթն ընդունելութեան կ'արժանանար հին զիւանաղխութեան ծեր ազուէսին՝ Վորոնցով Տաշկովին կողմէ: Այս երեքները ունէին իրենց սեփական հետապնդումները. այդ մասնակի նշանակութիւն միայն ունի: Մեզ հետաքրքրողը առաւելապէս հայկական ազդեցութեան ժամանակաւոր ներկայութիւնն է՝ բաղդատելով վրացական ու իսլամական տարրերու ունեցածներուն հետ:

Այդ յուսադրող օրերը անցած էին: Հիւանդ Տաշկովը մեկնած էր եւ իր քաղաքական խաղերուն յաջորդած էր զինուորական բերտ, սակայն աւելի յստակ քաղաքական ամբողջատիրութեան վարչակարգ մը: Այդ վարչակարգը պէտք չունէր գործածել յուսադրող պատրանքներու շողմարարութիւնը: Կարելի է բայել, որոշ աստիճանով Կալիցինին օրերը կը կրկնուէին: Յարական ազգայնամոլ մոդորը կ'ազդարարէր զանազան առիթներով եւ զանազան կերպերով տիրապետող ազդերուն ուժին իրաւունքը: Կարինի գրաւման առթիւ Մեսրոպ Կալիսիպոսը կը շնորհաւորէ փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը՝ հեռագրով, ուր կը հասկցնէ հայերու ազգային բաղձանքներու մասին: Նիկոլայ Նիկոլայեւիչը իր շնորհակալութեան հեռագրին մէջ պաղ ջուր կը

Թափէ Մեսրոպ Մաղխարոսին բոլոր յուսադրումներուն վրայ: Առաջին պաղ ջրի սրսիւմին էր որ կ'ենթարկուէր հայերու հայրենասիրութիւնը: Ասկէ առաջ մեր բանագնաց երրորդութիւնը Վորոնցով Տաշկովին ներկայացուցած իր գանդառ զեկոյցին ասէն անկէ կ'ըստանար անդորրացուցիչ խոստումներ. գոնէ խոստումներ ու կեղծ համակրութիւն հայերու տառապանքին հանդէպ:

Հիւսիսի խոստչունէ քամին սկսած էր փչել, հայկական հայրենասիրական բնականոն բաղձանքներուն վրայ: Ան իր թաքուն մեքենայութիւններով ջանաց փչրել զանոնք եւ ինք փչրուեցաւ՝ առանց կարենալ փչրելու:

Դառնանք Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի գործունէութեան: Մեր չորրորդ ժողովի անդի ունեցաւ Ալեք. Մելիք Ազարեանին բնակարանին մէջ, իսկ յաջորդ բոլոր ժողովները շարաթիւ մէկ անգամ անդի կ'ունենային Իզգապաշեանին տունը: Հինգերորդ՝ անկի՝ ստուարացած ժողովին մէջ, հարուստ ժողովականները ցուցադրեցին նաեւ իրենց հարուստ սիրար: Եթէ չեմ սխալիր իմ յիշողութեանս մէջ, այդ օրուան արձանագրութիւնը անցաւ երկու հարիւր հազար ռուպլին: Յաջորդ ժողովին զեկուցուեցաւ թէ Կուրսի նուիրումատուութիւններով այդ գումարը հասած էր յառորդ միլիոնի: Դուրսի նուիրատուութիւնները գոյացած էին մասնաւորաբար Իզգապաշեանին, Մելիք Ազարեանին, Արամեանին, Առաքելեանին եւ բժշկապետ Նաւասարդեանին անմեծական բարեկամներու շրջանակներէն:

Մեր վեցերորդ ժողովին մէջ անհրաժեշտ նկատուեցաւ պարենաւորումի հայթայթումը անգլոյն վրայ կամ Պարսկաստանէն կատարելու համար պաշտօնեայ գործաւար մը դրկել: Պաշտօնեան գնումներ պիտի կատարէր թէ՛ յաղաքապահ գործասին եւ թէ՛ երկրաշինական ձեռնարկներուն համար: Այդ պաշտօնին համար յարմար նկատուեցաւ Գրիգոր Վարդանեանը*: Վարդանեանը մեկնեաւ Պարսկաստան եւ վաճ: Հայաստանի վերաշինութեան մարդին մէջ կ'իյնար օժանդակել զիզացիներուն՝ հայթայթելով անոնց երկրագործական գործիքներ, կոշիկ, սեւմեցու եւ այլ անհրաժեշտ միջոցներ, իսկ արհեստաւորներու համար՝ նախնական գրամագլուխ, գործիք-

* Հայաստանի Երկրորդ Հանրապետութեան օրերուն Վարդանեանը բնաւորեցաւ Հայրենիքի Օդնութեան Կոմիտէին նախագահ եւ այդ պաշտօնով ալ այցելեց Ֆրանսա:

ներ եւայլն: Գիւղերու մէջ նաեւ պէտք էր օգնել Հասարակաց պահանջներու: ինչպէս՝ առուներ բանալ եւայլն:

Յանձնաժողովը իր այս առաջադրութիւնները դործադրելու համար ի մօտ ունէր նախ սահմանափակ սկզբնաւորութեամբ սկսիլ ծրագիրը՝ յաջորդաբար ընդլայնելու իր դործունէութեան դաշտը: Առաջին փորձը քաջալերական արդիւնք տուաւ եւ մտածուեցաւ աւելի ընդարձակել իր յանձնառութիւնը: Լորտ Մէյքըս Փընտէն, եթէ չեմ սխալիր, կամ այլ աղբիւրէ կարեւոր գումար մը ստացուեցաւ: Յանձնաժողովը նոր ճիգ մը ըրաւ եւ այդ գումարը կրկնապատկեց իր եւ իր բարեկամներու շրջանակներուն զոհարեցութեամբ ու անմիջապէս յատկացուց նպատակին:

Որպէսզի Յանձնաժողովին հակակշիռը տարածուի գնումներուն եւ բաշխումներուն վրայ, նաեւ մօտէն ուսումնասիրուի երկրապահ զինուորութեան աշխատանքը, որոշուեցաւ Ստեփաննոս Մալխասեանցի պրկել Պարսկաստան եւ Վան: Մալխասեանցի իր առաքելութենէն վերադարձաւ եւ իր զեկոյցը ըրաւ Յանձնաժողովին: Այդ զեկոյցը քաջալերական էր թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական տեսակէտով: Յանձնաժողովը իր իսկ աչքերովը տեսաւ թէ՛ Վանի ու անմիջական շրջանակներու մէջ լուրջ գնահատանքի արժանի գործ մը կը կատարուէր՝ պարենաւորման տեսակէտով խիստ յաճախ աննպաստ պայմաններու տակ:

Կեցրոնք տեղեակ պահելու համար պարբերաբար եկարեանը կամ Չանդալեանը կ'այցելէին Թիֆլիս: Կը յիշեմ թէ՛ անգամ մը որոշ հարցի մը կարգադրութեան առիթով երկուքն ալ միասին եկան Յանձնաժողովին հետ խորհրդակցելու:

Յանձնաժողովը յաճախ թղթակցութեան մէջ կ'ըլլար նահանգապետ Տերմէնին հետ եւ կը ստանար յրաջուցիչ տեղեկութիւններ:

Մեր գործի սկզբնական շրջանին ժողովուրդի բարօրութեան եւ աւերակներու վերականգնման, ինչպէս նաեւ ընդհանուր կանոնաւորութեան համար պէտքը զոչացուեցաւ նահանգապետ Տերմէնին կողմէ՝ որ քաղաքապետութեան գործերը վարելու համար մէկը զրկուի մեր ընտրութեամբ: Ա. ուսմկաւարներու կողմէ՝ այդ պաշտօնին համար յարմարագոյն անձը նկատուեցաւ Աւետիս Թերզիպաշեանը: Հրաւիրեցինք զինք Յանձնաժողովի մէկ նիստին: Թերզիպաշեանը ընդունեց մեր առաջարկը եւ կարճատեւէն մեկնեցաւ իր պաշտօնին:

Եկարեանը, Չանդալեանն ու Թերզիպաշեանը Տերմէնին

ամբողջական վստահութեան արժանացած էին իրենց շրջահայ-
եաց ու շիտակ գործունէութեամբ, որով շրջանին մէջ հեղինա-
կութիւն դարձան: Հաւատարիմ իրենց պաշտօնին, անոնք կը
գործէին ժողովուրդին ապահովութեան ու բարգաւաճման հա-
մար միայն եւ չէին խառնէր իրենց վստահութեամբ գործին մէջ
կուսակցական փոքրագի հաշիւներ կամ կողմնակցութիւն: Այս
տեսակէտով լաւ դաս մը տուած եղան տեղւոյն դաշնակիներուն.
բայց դժբախտաբար անոնք այդ շնորհէն զրկուած էին ընդ-
հանրապէս եւ անոնցմէ ոմանք աշխատանք տարին միշտ բար-
դութիւններ ստեղծելու:

Հայաստանի վերաշինութեան ձեռնարկը գոնէ որոշ չա-
փով հասաւ իր նպատակին՝ տալով վերադարձող հայերուն աշ-
խատութեան միջոց եւ պաշտպանութիւն: Եթէ արուեստական
երկրորդ նահանջը (13) խնայուած ըլլար տառապահիւժ ժողո-
վուրդին, վստահաբար մեր բոլոր առաջադրութիւնները պիտի
տարածուէին Արեւմտահայաստանի գրաւուած բոլոր հողամա-
սերուն վրայ, ուր իր հայրենի օճախը վերադարձած հայ մը
կար: Բայց Իւտինիչներ եւ Չերնապուսովներ անհանգստու-
թեամբ կը դիտէին ո՛չ միայն Հայաստանի [վերաշինութեան]
Յանձնաժողովին հայրենաշէն գործունէութիւնը, այլեւ ուրիշ
նման ձեռնարկներ, որոնք ենթարկուեցան անոնց հակահայ
ծրագիրներուն, ինչպէս օր մըն ալ մտաբերեցին ստեղծել հա-
յաւաններու փլատակներուն վրայ Բագրեւանդեան եւ ուրիշ
շրջաններու խաղախ դադութիւնը:

Եկարեանն ու Չանգալեանը մեծ նուիրումով գործեցին
եւ իրենց հեղինակութեան ենթարկուած զինուորութիւնը համ-
բերատարութեամբ ու խանդավառութեամբ կատարեց իր պար-
տականութիւնները:

Մինչեւ Վանի երկրորդ դաւադրական նահանջը, զօրա-
մասը կատարեց մէկ երկու պատժողական արշաւանքներ յիւու-
զակ քիւրտերուն դէմ, որոնք պարբերական յարձակումներով
կը պատուհասէին իրենց փլատակ օճախներուն վրայ վերահաս-
տատուած գիւղացիները: Երկրորդ նահանջի առեւն ան ընկերա-
ցու գաղթող ժողովուրդին եւ պաշտպանեց՝ զայն բոլոր յար-
ձակումներուն դէմ ու կարելի հանդստաւէտութեամբ հասցուց
ռուսական սահմանը: Գաղթականներու՝ Վանի շրջանը վերա-
դառնալէն մինչեւ երկրորդ նահանջը, շրջանը ենթարկուած էր
երկու գործակցող կուսակցութիւններու տիրապետող ազդեցու-
թեան: Բաղաքապահ երկու հարիւր զինուորներ, մօտաւորապէս
նոյնքան մըն ալ զինուած անպաշտօն մարտիկներ եւ քաղաքա-

պետութիւնը իր բոլոր մասերով կը ներկայացնէին Հաշուի առ-
նուելիք ուժ մը:

Հայրենիք վերադարձող կամ մասնաւորապէս հոն զըր-
կուած գաշնակցական երկրորդական գործիչներ ու կուսակցներ
իրենց ազատ շարժումներուն տէրն էին օրէնքի սահմաններուն
մէջ՝ առանց որեւէ կաշկանդումի կամ խտրութեան: Այդպէս
չեղաւ, սակայն, անոնց դիրքաւորումը հանդէպ կացութեան
տէր երկու գործակցող կուսակցութիւններուն: Գանուեցան
պարկեշտ գաշնակցականներուն քով կուսակցադար խելառու-
թեամբ բռնուած մոլեռանդներ, որոնք օձի նենդութեամբ ուղե-
ցին երկու գործակցող կուսակցութիւններու համերաշխ գոր-
ծակցութիւնը քայքայել՝ եղբայր եղբոր գէժ հանելով: Խոր ցա-
ւով կը յիշեմ այդ դէպքերէն մէկը, որուն երկու զոհերը թաղ-
ւեցան հայրենի հողին մէջ, իսկ միւս երկուքը խոյս տուին ու
հասան Թիֆլիս:

Մեր մէջ ալ գանուեցան կարճամիտներ, որ ուղեցին գե-
ղեցիկ գործը քանդել, այդ զըուելի դէպքին պատճառով: Բայց
երկու կողմի գեկալաւները, խորապէս խոցուելով հանդերձ,
հարցին չափին աղիտաւոր համեմատութիւն: Այս հարցին մէջ
իրենց բարերար աղբեցութիւնը բերին սղորացեալ բնկերներ
Վահրամ Գրիգորեանը, Յովսէփ Գույումճեանը եւ Արմենակ Ե-
կարեանը, հանդարտեցնելով իրենց չըջանալի: Եւ ալ, իմ կար-
գիս, լքեցի Թիֆլիս ապաստանողները: Երկու կողմերն ալ հա-
մաձայն գանուեցան իշխանութեան չյանձնել զո՞ գործած զիւ-
րահաւան յանցապարտները: Անոնց անունները անհրաժեշտ չէ
յիշել այստեղ: Անոնք գրկուեցան Ամերիկա վերադառնալու
տրուելիք դիւրութենէն: Այս ախար դէպքը կողմերու հեռասե-
սութեան եւ պաղարխնութեան շնորհիւ բնոյժիւս գոցուեցաւ:
Սրտի դառնութեամբ կ'անցնիմ՝ գոցելով այս ախար էջը, որ
միակ սեւ բիծը կը կազմէ մեր ամբողջ գործունէութեան մէջ:
Այս յուշագրական հաշուառութեան մէջ չէի կարող մոռացու-
թեան տալ այս սուգ արարքը: Իմ կարծիքով, յուշագրողը ան-
կաշառ պէտք է բլլայ եւ արձանագրէ գեղեցիկ գործին հետ
նաեւ աղեղը:

Վանի երկրորդ նահանջը մերջ կը դնէր Հայաստանի Վե-
րաշինութեան Յանձնաժողովի գործունէութեան: Մեր բոլոր
Փիղիքական, նիւթական ու բարոտական ճիգերը տեսանք թէ
վատնուած էին բնդունալն, որովհետեւ այդպէս կը կամենար
ամենաողորմած Յարին ու չըջապատին ախտածէս բնշարադ-
ցութիւնը: Յետոյ պիտի հասկնայինք թէ ուսու կառավարու-

Թիւնը այդ օրերուն արդէն իսկ Դաշնակից կառավարութիւններու իւրացումի սակարկութեան մասած ու ապահոված էր հայկական հողերու մէկ շատ կարեւոր մասին կցումը Ռուսական կայսրութեան, եւ հայերու վիճակուած էր թոյլատուութիւն մը միայն, որ կարենան ապրիլ իրենց հայրենի հողամասին վրայ իր կրօնական համայնք: Կանխելու համար այդ կարելիութիւնն ալ, արդէն իսկ մտադրած էր ան Լիբրտեան եւ այլ շրջաններու խաղախ խանութիւնները հաստատել լուսադոյն հողերու անոնց յատկացումներով:

Ո՛հ միայն հայկական զոհողութիւնները անտեսուած էին, ո՛չ միայն հայերու պատմական իրաւատիրութիւնը մոռցուած էր ու հայ ժողովուրդը լքուած ալլելու, այլ կար նաեւ թաքնուած հալածանք մը մեր մարդկային իրաւունքներուն դէմ: Եւ մեր իրաւատիրական բոլոր ճիգերը, բոլոր պահանջները կը բխէին փոխարքայութեան եւ այլ պաշտօնական մարմիններու չկամութեան ու դաւադրող թշնամութեան. մինչեւ իսկ սոսկ մարդկային տարրական իրաւունքներու խնդրանքները յանցապարտութեան աթոռին կը փոխադրուէին: Վերադարձող ժողովուրդը շատ տեղեր մասնաւոր գիւղատնակներու կ'ենթարկուէր ռուս բանակամասերէն: Եկաւ տառն մը, որ հայն էր յանցաւորը՝ երբ մինչեւ իսկ քաղաքացիական իրաւունքներու պաշտպանութիւն կը խնդրէր: Գիշատիչ տարրերը, ռուս կամ ալլապեղ, հրապարակ կ'աղմկէին դանադան զրպարաութիւններով եւ պաշտօնական հետապնդումի նիւթ կը գարձնէին անհատներ կամ կաղմեր:

Չարակամութեան ստորերկրեայ մեքենան ամէն ցեղէ հակահայ տարրերու գործակցութեամբ չնշահեղձ ճնշումի տակ առած էր հայկական գրեթէ բոլոր շարժումները, եւ այս՝ մասնաւորաբար գրաւուած հողամասերուն վրայ, եւ այս՝ թէ՛ վերադարձող գաղթականներու եւ թէ՛ մինչեւ իսկ կամաւորական զօրամասերու դէմ: Ստորեւ կու տամ օրինակ մը, որ ամենաթուղ պոստակը հայն իսկ ինքնապաշտպանութեան շարժումի մղեց:

Օրին մէկը հայ առաջնորդ շրջանակներու մէջ փախուքով իրարու ականջին կը յիշեցուէր թէ Անդրանիկ իր կամաւորական զօրամասով ծանրօրէն ամբաստանուած էր ջարդարարութեամբ Պիթիփի գրաւումին տառն, եւ թէ ռուս զինուորական իշխանութիւնը կը պատրաստուէր յանցապարտները գինւորական առեանի յանձնել ու պատժել՝ բանակի կարգապահութեան դէմ գործած քրէական յանցապարտութեան պատժին:

րով: Հայկական չրջանակներու մէջ մեծ յուզումներու տեղի տուաւ այդ ամբաստանութիւնը:

Անշուշտ այս եւ այլ հակահաշտ արամադրութիւններ թունաւորած էին մթնոլորտը: Ուրիշ չկամութիւններ, հակահայ խափանարարութիւններ եւ թշնամանք մէկտեղուելով համաժողովրդական բուռն բողոքի արամադրութիւն խմբեցին: Մտածուեցաւ յուռ աշխատանքով հակադէյ եւ առաջըր առնել ծանր բարդութիւններու: Ռուս շինովնիկներու մոլթ խաւերուն, վրացի ու տարալէճանցի աղաւթնամոյ ու հայաստաց տարբերուն աղբեցութիւնը տեղի կը հիմնաւորուէր իշխանութեան չրջանակներէն ներս: Հասարակաց ասեցողութեան եւթարկուած հայերը աւելի հարուածելու գիտումով այդ չարամիտ տարբեր աշխատանքի թուած էին հասարակաց հակացողութեամբ: Փոխարքային պալատի չրջանակին մէջ մեզի ծանօթ հայ երրորդութիւնը այլեւս շնորհագրկուած էր եւ անոր տեղ նուաճումներ կ'արձանագրէին վրացի աւատապետներ ու թաթար աղալարներ: Եւ մինչեւ իսկ Արարատի փէշերուն վրայ յիւղգակային նախճիրներով նշանաւոր գարձած չարագործ Սմիլօն ի պատուի կը դառնար, պատուանշաններ կը ստանար փոխարքայ Նիկողայ Նիկողայիւիչէն: Այն Սմիլօն՝ որ իր տապաւակային չարժումներով քար ու քանդ կ'ընէր խաղաղ գիւղերը եւ մինչեւ իսկ ռուս բանակին ու առ հասարակ ռուսական շահերուն դէմ կը գործէր: Մէկ քանի՜ անգամ անյաջող արշաւանքներ գործած էր ռուսական երկրորդանի արմիր:

Հայերու մէջ ինքնապաշտպանութեան խմբումները հասան մինչեւ հոն, որ անհրաժեշտ նկատուեցաւ մարմին մը բնութել՝ պայքարելու համար, օրէնքի սահմաններուն մէջ, բոլոր թշնամական չարժումներուն դէմ: Կազմուեցաւ այդ մարմինը, որուն մասնակցեցան բնորովի ուստահայ յայտնի գործիչներ ո'չ միայն Թիֆլիսէն, այլ նաեւ ֆեթերապուրէկէն, Մոսկուայէն, Նոր Նախիջևանէն ու Պարսկէն: Արեւմտահայերէն բնորուեցան Արշակ Սաֆարեանն ու այս ասպիւր գրողը: Ընարուածներէն մէկ մասը կարող չեղաւ մասնակցիլ աշխատանքին, որովհետեւ ժամանակին կարող չեղաւ հասնիլ Թիֆլիս:

Ժողովը պէտք է գրադէր ո'չ միայն սուօրեայ հակահայ անցքերով, այլ նաեւ Հայկական Դատի պէս հիմնական նիւթերու պիտի անդրադառնար քաղաքական իրադարձութիւններու նոր յոյսով: Որոշուեցաւ այդ ժողովին ապ խորհրդապահական բնոյթ եւ գաղթականական պիտակ: Եւ որպէսզի այդ ժողովին հեղինակութիւն արուէր, որոշուեցաւ խնդրել Ա-

մենայն Հայոց Կաթողիկոսէն որ Թիֆլիս գալ եւ ժողովր իր մտադրած աշխատանքները կատարէ իր բարձրագոյն հովանաւորութեամբ ու գործակցող հեղինակութեամբը:

Վեհափառ Կաթողիկոսը տուաւ իր հաճութիւնը: Մինչեւ Վեհափառին գալը կազմուեցաւ փառահեղ ընդունելութիւն մը: Այդ ընդունելութեան եւ յարակից գործերու համար ընտրուեցաւ յանձնախումբ մը եօթ անձերէն բաղկացած: Անոնցմէ կը յիշեմ Սամսոն Յարութիւնեանը, Տիգրան Նազարեանը, Տիգրան Յովհաննէսեանը, Արամայիս Երզնկեանը եւ Պետրոս Տեփոյեանը:

Այդ փառաշուք ընդունելութեան նպատակներէն մէկն ալ կարելի էր հաշուել Հայոց ուժի եւ վարկի ցուցադրութիւնը:

Եկաւ Վեհափառը (14): Արտակարգ շքեղութեամբ կատարուեցաւ ընդունելութիւնը, որուն մասնակցեցան ո՛չ միայն ժողովրդական բոլոր խաւերը, ազգութիւններու, այլ նաեւ պաշտօնապէս Փոխարքային պալատին պաշտօնական ներկայացուցիչներն ու բանակը՝ իր պատուոյ զօրամասով: Տօնական օր մը դարձաւ պաշտօնական բոլոր հաստատութիւններու համար: Բնակչութիւնը ոտքի ելած էր: Շքերթի մասնակցողները մէկ քանի տասնեակ հազարներու կը հասնէին. իսկ զիտողներու բազմութիւնը՝ աւելի քան հարիւր հազարի: Կայարանի արքայական դահլիճին մէջ կատարուեցաւ արքայական ընդունելութիւն: Թիֆլիսի մայր եկեղեցին մօտենալու տառն Վեհափառը իջաւ իր կառքէն, պատուոյ պահակներէ եւ ընդունելութեան յանձնախումբէն շրջապատուած քաւեց եկեղեցի: Ամպօւլանին կողմ չորս տարեց հայ զօրավարներ գանդաղ կը յառաջանային գորգերու վրայէն ու քաղաքի գանազան արհեստակցական միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ կը հետեւէին պաշտօնական մարմիններու: Իսկ մէկ քանի տասնեակ հազարներ ալ, իրենց կարգին, կը կազմէին անվերջմանալի շքերթը, որուն ճամբու վրայի տուններուն պատուհանները զարդարւած էին եւ խոնուած՝ զիտողներով: Վեհափառը առաջնորդուեցաւ եկեղեցի եւ իր ազօթքը կատարելէ յետոյ բարձրացաւ դահլիճ: Սկիզբի մէկ երկու օրերը յատկացուեցան պաշտօնական այցելութիւններու ընդունելութեան եւ փոխադարձ այցելութիւններու:

Առաջնորդարանին մէջ տեղի ունեցած ժողովին կը մասնակցէին տասներկու անձեր՝ Վրաստանի թեմի առաջնորդ Մեսրոպ Էպիսկոպոս Տէր Մովսէսեանին նախագահութեամբ: Ժողովը կը վայելէր Վեհափառին հովանաւորութիւնը: Վեհափառը

ընդհանրապէս կը բացակայէր ժողովներէն եւ չառ թիշ անդամ կը մասնակցէր աշխատանքներուն:

Ժողովը, ի միջի այլոց, խորհրդակցեցաւ. Փոխարքային մատուցուելիք յուշագրին բովանդակութեան մասին: Յետոյ միայն յուշագիրը պատրաստուեցաւ ժողովին մաս կազմող փաստարաններէ: Երբ յուշագիրը վերջնական ձեւը ստացաւ, Վեհափառը այցելեց Փոխարքային՝ անձամբ մատուցանելու զայն:

Հետագային մեզի հաւատաւորեցաւ թէ երբ Վեհափառը կ'այցելէ փոխարքայ Նիկողայ Նիկողայեւիչին, կենցաղագիտական խօսակցութենէ ետք յուշագրին մէջ արձանագրուած գաղթականներու կարիքներուն եւ առհասարակ զբաւուած չըջաններու մէջ ուսական բանակի վերնախաւերուն վերաբերող անհատներէն ոմանց հայ գաղթականներու հանդէպ ցոյց տուած անբարեացակամութեան զէպքերուն մասին կը կատարեն մատնաւոր խորհրդակցութիւն: Փոխարքան կը խոստանայ Վեհափառին թէ յաջողած հարցերուն առընչութեամբ իշխանութիւնները կ'արեւելցութեամբ ու բարեացակամութեամբ պիտի վերաբերին: Այդ հարցերուն մասին արտայայտուելէ յետոյ, Նիկողայ Նիկողայեւիչը խօսք կը բանայ կամաւորներու կողմէ Բաղէշի մէջ թուրք բնակչութեան վրայ գործադրուած ջարդերու մասին եւ զիտակ կու տայ թէ այդ արարքով քաղաքակրթուած ազգի մը դրօշակը անպատուած են Անդրանիկին գունդին կամաւորները եւ իր զայրոյթը կը յայտնէ: Կաթողիկոսը կը պատասխանէ թէ այդ մասին ոչ մէկ խօսք լսած է. իսկ եթէ այդպիսի անգուլթ արարք մը գործուած է, անչափ ունեցած բլլալու է շատ զօրաւոր պատճառ: Եւ ենթադրաբար երեսակայելի է այդ պատճառը՝ թէ կամաւորական գունդը Բաղէշ մտնելէ առաջ ու Բաղէշի մէջ տեսած է հայկական ջարդերու ահաւոր համայնապատկերներ՝ կատարուած թուրքերու կողմէ: Մեկնաբանելի է, ուրեմն, թէ կամաւորները իրենց կրած ցնցումի ինչպէս զարթութեան մէջ գործած բլլան այդ արարքը: Այսուհանդերձ, Կաթողիկոսը կ'աւելցնէ թէ ինք կը հաստատայ թէ նորին փոխարքայութեան ականջին հասած կամ տեղեկագրուած լուրին մէջ կայ թերեւս թիւրիմացութիւն կամ չափազանցութիւն, եւ կը խնդրէ հարցին վրայ նայիլ այս եւ նման տեսանկիւններէ ու ներդաժանութեամբ վերաբերելով փակել զայն: Եթէ այդպիսի արարք մը գործուած է՝ ատոր համար Կաթողիկոսն իր խորունկ ցաւը կը յայտնէ եւ կը խոստանայ զգուշանորութեան հրաւիրել հայ զինուորութիւնը. Փոխարքան կը պատասխանէ

թէ մէկ քանի զօրավորներ թէւս վրդոված են այս արարքէն, բայց քանի որ նորին Ս. օծութիւնը՝ առանց դիւանագիտական զիկզակումներու՝ հարցին կը մօտենայ հոգեբանական տեսանկիւնէ, արարքը վերադրելով զայն գործողներու անպատասխանատու մտավիճակին, ինք պիտի տեղեկագրէ կեդրոնական կառավարութեան նպատաւոր կերպով՝ փակելու համար այս հարցը ընդմիջաւ:

Թէ որքա՞ն ճիշդ էր եւ հաստատրիմ կատարուած զեկոյցը Փոխարքային եւ Կաթողիկոսին տեսակցութեան մասին, թէ մշակուած յուշագիրին ընթերցումէ՞ն աղջուած էր, կամ թէ Փոխարքան իրապէս համոզում՞ծ էր Կաթողիկոսին բացատրութիւններէն թէ այլապէս պատճառներ ունէր յարուցուած հարցը փակուած նկատելու, այս եւ նման հարցեր մնացին չճշդուած: Այսուհանդերձ, հարցը այլեւս նոր բարդութիւններու տեղի չտուաւ ու մոռցուեցաւ: Մոռցուեցաւ՝ թերեւս անոր համար որ հեղինակները այլ թնճուկներ մէջտեղ բերելու գաւազնական մասժումներով զբաղեցան:

Շատ հաւանարար այլապէս քաղաքական նկատումներ աղդեցին այս խնդրին կարգադրութեան վրայ, որովհետեւ Դանիակից Պետութիւններու Թիֆլիսի ներկայացուցիչներէն ծածկուած չմոտցին հակահայ այս եւ այլ տարածայնութիւններն ալ: Թերեւս Փոխարքային նպատաւոր վերաբերումը թեւադրուած էր նաեւ կեդրոնէն: Այս զբաղարարութիւնը ունեցաւ յետոյ այ իր նմանները, որոնք պարբերաբար հրապարակ կը նկատուէին չարամտութեամբ: Յիշենք այստեղ թէ Մուշի գաւառի հայերուն բնաջնջումն ալ այս հակահայ արամագրութեան արդիւնքը պէտք է նկատել, քանի որ ուրիշ ստիժով մը արգելուեցաւ Անդրանիկին զօրամասին յառաջխաղացքը յիշուած չրջանի սահմաններէն ներս: Յառաջխաղացք մը՝ որ կարող էր փրկել այդ չրջանի գեռ չջարդուած հայութիւնը:

Այդ հակահայ արամագրութիւններն էին որ պատմական զէպքերու դարգացման բնթացքին վերածուեցան թշնամութեան բարդացած խմորումներուն, պատրաստելու համար հետագայ տարիներու արեւելահայ արհաւիրքը: Դիմաւորելու համար այդ արհաւիրքը, հայ ժողովուրդը պարտաւորուած եղաւ մէկ քանի ճակատներու վրայ կռիւներ եւ պատերազմներ տանիլ, ո՛չ միայն իր իրական շահերը պաշտպանելու, այլեւ բուն իսկ իր ֆիզիկական գոյութիւնը փրկելու:

Կաթողիկոսին Թիֆլիս գտնուած միջոցին մեր ժողովները շարունակուեցան ասեն մը: Եւ երբ հետացած էր Կաթո-

ղիկոսը առաջնորդարանէն ու կր հանդստանար քաղաքէն դուրս, Ալեք. Մանթաշէֆին Վիլլալին մէջ, մենք մեր կենսական հարցերով կը զբաղէինք: Այդ հարցերէն մէկն էր Հայկական Դատին նոր երեւոյթը՝ ռուսական ու արաւսահամեման իրադարձութիւններու լոյսին տակ դիտուած: Զրադեցանք, բայց մեր պայմաններուն տակ ոչ մէկ յստակ եղբակացութեան կարող եղանք հասնիլ: Այդ ժողովներէն մէկուն մէջ զաշնակցական մասնակցողները ռուսական կողմնորոշուած կ'առաջարկէին: Մինչեւ իսկ Հայկական Դատը Ռուսիոյ պաշտպանութեան յանձնելու առաջարկ եղաւ: Բայց ժողովականներու մեծագոյն մասը անխորհմութիւն նկատեց փոխի մեր դատին հետասնդման ընթացքը, մանաւանդ առանց խորհրդակցած ըլլալու արաւսահամեման յատուկ մարմիններու հետ: Ինչ որ անհասկնալի մ'նայ ժողովականներուն, այդ ալ զաշնակցականներու պահանջին տուն տուող իսկական պատճառն էր: Թէեւ ընդհանուր ապաւորութիւնն այն եղաւ թէ զաշնակցականներու միտք բանին Պօղոս Նուպարին պատգամաւորութեան դէմ էր՝ անոր արուած իրաւասութեան տիրանալու, եւ բնականաբար այդպէս ալ պիտի ըլլար՝ եթէ ժողովը հաւանութիւն տար եղած առաջարկին ու այդ տեսակէտը դառնար համահայկական:

Այդ խորհրդածութեան ատեն կր յիշեմ թէ բաւական զօրաւոր բախում մըն ալ տեղի ունեցաւ իմ մէկ սուր արտայայտութեանս վրայ: Այդ քննադատող արտայայտութիւնն այն էր՝ թէ Դաշնակցութիւնը պէտք էր որ իր առաջնորդող յատկանութիւններէն հրաժարէր, քանի որ մեր ահաւոր փորձառութեամբ տեսնուեցաւ թէ ան զարհուրելի ձախողութեամբ մ'արձանագրած էր վերջին համազգային տարողութիւն ունեցող շարժումներուն մէջ: Մասնաւորապէս Հ. Առաքելեանն ու Արամայիս երզնկեանը ջերմապէս պաշտպանեցին արտայայտուած այս տեսակէտը: Ուրիշներ՝ թէեւ համամիտ այդ եղբակացութեան՝ ջանացին մեղմացնել հարուածին ուժգնութիւնը եւ անդորրացուցիչ միջամտութիւններով փակուեցաւ հարցը: Եւ ժողովը չընդունեց, սակայն, եղած առաջարկը:

Յետոյ ուրիշ առիթով մը, ռուս յեղափոխութեան չըջանին երբ Կովկասի ճակատը կը պարպուէր ռուս զինուորներէ, դարձեալ նոյն տեղին մէջ ունեցած խորհրդաժողովի մը ընթացքին կազմուելիք արեւմտահայ զօրարաժնին հրամանատարութեան յարմարագոյն թեկնածուն նկատուեցաւ Անդրանիկը, ո'չ միայն իր ռազմապիտակոն արժանիքին համար, ալ նաեւ

իրը ֆեթիշ թշնամիին՝ բարեկամ օտարներու եւ իր ազգակիցներուն համարումով:

Այստեղ, ի միջի ալոյց, յիշեմ թէ երբ ամէն բան դրեթէ տանուլ տունիս եւ թրքական բանակը կը յառաջանար Թիֆլիսի վրայ, Թիֆլիսի հայերէն մաս մը, մասնաւորաբար արեւմտահայեր, անցաւ հիւսիսային Կովկաս: Այս շարժումը մեծ համեմատութեան հասաւ եւ դադրեցաւ ճամբաներու գոցուելով: Օրին մէկը, երբ դադրեցներու մեծ զանգուած մը մակադած էր կալարանի մը շուրջը եւ կառաչարին կը սպասէր մեկնելու համար Արմաւիր, յանկարծ պաշարուեցաւ զինուած մեծաթիւ կողաք հեծեալներէ: Շուտով հասկցուեցաւ թէ թշնամական արարքի մը համար էր այդ պաշարումը: Ալաշկերտցի երիտասարդ մը, որ կանոխէն գաղթած էր եւ իր ուսումը ստացած Թիֆլիսի մէջ, գիտէր լաւ ռուսերէն, անմիջապէս ցատկեց զիւրեւոր զոյգերուն վրայ եւ խօսեցաւ. կողաքներուն ուղղուած ճառ մը՝ ի նպաստ զաղթական զանգուածին: Իր պաշապանողականին ամէնէն ուժեղ յենակէտը եղաւ այն՝ թէ անոնց պաշտպանութեան ենթարկուած գաղթականները անոնց եւ Անդրօնիկին* ազատած հայերն են. այն Անդրօնիկին, որ իր զինուորներով կռուեցաւ անոնց հետ թուրքերու դէմ: Եւ երբ Անդրանիկին անունը լսեցին, դադար մը առին ու խորհրդակցեցան իրարու հետ: Այդ խորհրդակցութեան արդիւնքը եղան բարեկամական ցոյցեր: Յետոյ հասկցուեցաւ թէ Կովկաս մնացած թուրք գերի սպաներու կողմէ հակահայ պրոպականտի մը արդիւնքն էր այդ գրգռումը, որ տեղացի միւսլիման առաջնորդներու միջոցով կատարուած էր:

Ժողովը, հակառակ դաշնակցական ներկայացուցիչներու ընդդիմութեան, ընտրեց Անդրանիկը: Անդրանիկը անցաւ գործին գլուխը, բայց դաշնակցական խօսքի բնոյթիմութիւնը վերածուեցաւ գործի եւ ատեմեց ռազմարեմին վրայ մեր դիմադրութիւնը, որովհետեւ խափանարարութիւնները մեծապէս նըսպասուցին ռազմաճակատի կազմալուծման: Հետագային շատ յամառօրէն խօսուեցաւ թէ դաշնակցականներու թեկնածուն էր խմբապետ Սեպուհը: Այդ հաւատալիքները ունէին նաեւ հոգեբանական տեսակէտ: Անդրանիկին գոյնդին մէջ գործող վաշտապետ Սեպուհը ունեցած էր ծանր բախումներ Անդրանիկին հետ, երբ միասին կը գտնուէին Տիւրմանի ճակատին վրայ: Այդ ատեն սկսած էին հակաանդրանիկեան խմբորումները եւ Սե-

* Կաղաքները Անդրօնիկ կը հնչէին:

սուհը ձգած հեռացած էր. իրեն հետևած էին մէկ երկու ուրիշ առաջնորդող դէմքեր: Այս հարցը փոխադրուած էր Թիֆլիս եւ ներքին մտահոգութիւն ստեղծած թէ՛ կուսակցական եւ թէ՛ Ազգ. Բիւրոյի ղեկավար շրջանակներուն մէջ: Պէտք է ըսեյ թէ ուր Դաշնակցութիւնը իր կամքը կարող չէր պարտադրել, հոն կը սկսէր աւերիչ պայքարը: Այդպէս էր խորհրդաժողովներու մէջ, այդպէս էր նաեւ այլուր: Այս մեծամոլութիւնը յատկապէս ղեկներէն մէկն էր զաշնակցական սակաւապետութեան:

Այդ ատեն Անդրանիկը, Սմբատը եւ ուրիշներ արդէն հեռացած էին [Դաշնակցական] կուսակցութենէն եւ Անդրանիկը շատ զօրաւոր հակակրօնութեամբ մը լեցուած էր գրասենեկային դաշնակցականներու դէմ: Ո՛չ միայն Անդրանիկը այդպէս արամադրուած էր, այլ նաեւ արեւմտահայ կոստող ուժերու. «Բիրտ ուժ» որակուած. գրեթէ ամբողջութիւնը: Այդ օրերուն սկսած էր սաղմոնաւորուել հետապալին կազմուած Անդրանիկին զինւորութիւնը: Արեւմտահայերէն՝ Սեպուհը, մասամբ այ Մուրադը, ինչպէս նաեւ ատանեակ մը երկրորդ ատախճանի զաշնակցական մտաւորականներ, որոնց մէջ ազգասիրութենէն աւելի շեշտուած էր կուսակցականութիւնը, յարեցան գրասենեկային Դաշնակցութեան: Եւ օրին մէկը վերջինները վարձատրուեցան խորհրդարանի անդամակցութեամբ՝ իբրեւ Արեւմտահայաստանի ներկայացուցիչներ:

Այդ օրերուն եւ յետոյ ստեղծուեցաւ Անդրանիկին դէմ մոլուցքոտ գրականութիւն մը մաքրակրօն զաշնակցական մամուլին ու այլ հրատարակութիւններու մէջ: Մինչեւ իսկ Սեպուհին «էջեր իմ յուշերէն»ին (որ զուրս եկած է Պոսթոնի «Հայրենիք» տպարանէն 1925-ին) մոյկզնոտ քննախնդրութեամբ յուշագրողը կը սեւցնէ ամբողջական Անդրանիկը: Այդ գիրքին մէջ (Ա. հատոր) յուշագրութիւնը ծառայեցուած է թունաւոր յորդութեան: Այդ գիրքին բնթերցումը միայն ա՛յս տպուորութեան կ'առաջնորդէ ուղղամիտ բնթերցողը:

Ռուսահայ-թրքահայ բախումները չարունակուեցան բաւական երկար ատեն: Բնականաբար զաշնակցական մամուլը թաքնուած միտք բանիով իր բուն գերին մէջ էր: Իսկ արեւմտահայ ցաւերը, բողոքներն ու մինչեւ իսկ ամբաստանութիւնները կը հրապարակուէին «Վան-Տոսպ»ին, «Հայաստան»ին եւ մասամբ ալ «Մշակ»ին ու «Հովիտ»ին մէջ: Իսկ վերակազմեալնե-

բու օրկանը՝ «Հայկաշէն»*, տարրեր գիտարկութեամբ կը մօտենար յուզուած հարցին: Վերջինը կ'ընդունէր թէ գործուած էին ըմբոստացնող շարաշահութիւններ՝ դադլթականական հարցերու մէջ եւ ընդունելով որ ազիտաւոր հետեւանքներ ունեցած են բիւրոյական մարդոց անշրջահայեաց շարժումները, կ'առաջարկէր փրկել ինչ որ գեւ կարելի էր: Այդ բախտորոշ օրերուն կ'առաջարկէր հայ հոսանքներու ընդհանուր ուժաշուաքը կատարել՝ օգտուելու ստեղծուած անկրկնելի պատահութիւններէն: Յեղափոխութեան բերած քառասային կայսութեան մէջ ան կը պաշտպանէր ազգային գերազոյն շահերը՝ հետապնդել միայն՝ կազմակերպելով ճակատի գիմարութիւնը, զինադադար ստեղծելով ներքին ճակատին վրայ: Անոր խմբադիրը նման միաբեր կը պաշտպանէր նաեւ «Մշակ»ին ու «Հովիտ»ին մէջ: Մէկ կողմէն կը յորդորէր շտաբուիլ յեղափոխութեան բերած ընկերային ու անտեսական գինովութիւնով եւ միւս կողմէն ալ՝ այդ օրերուն լուսավորան անտուգութիւնը նկատելու ունենալով աշխատիլ վերակազմելու մեր ներքին գործերը եւ կողմերու մէկեանցումը ուժերով հետապնդել մեր զուտ ազգային շահերը:

Այդ թո՛ւ ու բո՛ւն մէջ իրապէս գոյացա՞ւ փոխադարձ հասկացողութիւն, հայկական գործերը մտա՞ն իրենց բնականոն ուղիղ ընթացքին մէջ: Դժբախտաբար ո՛չ: Ո՛ր՝ որովհետեւ գրասենեկայինները չէին հրաժարել իրենց տիրապետելու մենամոլութենէն, եւ միւս կողմը իր ցաւին կոտորանքը աւելի չետուած չափերով կը պար ժամանակի բնթացքին: Դէպքերը կը զահավիժէին միշտ ալ նոր բարգոլութիւններ ստեղծելով: Առընթեր այս բոլորին, պէտք է խոստովանիլ թէ ազգովին պատրաստուած ալ չէինք եւ չէինք կարող յայտնարել մեծ գործեր կատարելու ընդունակութիւն, երբ, միւս կողմէ, ռուս բանակին հայ զինուորութիւնը յեղափոխութենէն յետոյ կարող չեղաւ համիլ կովկաս: Մեզ չըջապատող ցեղային տարրերը՝ մասամբ իրենց շահերու պաշտպանութեան մտահոգութեամբ եւ, հետեւաբար, հակահայ շարժումներով ու զաւերով, մասամբ ալ թշնամական գիրքաւորման հին ժառանգութիւններով՝ յաճախ խափանարարութեամբ ու յայտնի թշնամութեամբ կը ջլատէին մեր հաւաքական արդէն իսկ թոյլ աշխատանքը եւ ուժաքամ հայ ժողովուրդը: Այդպէս էին պատահում ալ օրերուն հայ կեանքն ու գործերը կովկասի սահմաններուն մէջ:

* «Հայկաշէն»ը հրատարակուեցաւ 1917 Նոյեմբերէն մինչեւ 1918 Մայիս, երբ թրքական բանակը կը մտնէր Թիֆլիս:

Այդ չըջանին արեւելաճաչի ու արեւմտաճաչի չափազանց լարուած յարարերու թիւնները կազմալուծող ազդեցութիւն բերին մեր ընդհանուր գործերուն վրայ: Թէեւ այս բացատրութիւնը լրիւ չ'արտայայտեր առումը իրականութեան գաղափարը: Արեւելահայ բացատրութիւնը այստեղ պէտք է բմբռնէ իրբեւ այդ նոյն գրասենեկային ու անոնց ազդեցութեան տակ գործող դաշնակցական եւ ոչ-դաշնակցական տարրերը, որոնց մէջ բազմաթիւ էին անոնք որ շահարկեցին իրենց փտաճառած պաշտօններն եւ գիրքերը կամատրական կամ գաղթականական գործերու մէջ: Հոս պէտք է փնտռել սակզծուած ներքին անհասկացողութեան խորքը: Մէկ կողմին համար գրկուած ու չարաշահուած բողոքի արտայայտութիւնն էր. իսկ միւս կողմին համար՝ տիրապետող ազդեցութեան պահպանումի ճիգը: Այս երկու տեսակէաներուն բախումն էր արեւելաճաչ-արեւմտաճաչ հարցը, որ կը տարածուէր թէ՛ քաղաքական եւ թէ՛ գաղթականական գործերու վրայ: Խորհրդածողութիւնը իրենց բովանդակութիւնը առաւելապէս կը ստանային այս երկու տեսակէաներու բախումէն: Այս էր ընդհանուր բնոյթը գծարտատարար: Դաշնակցականի եւ ոչ-դաշնակցականի յախտնական փոխադարձ յարարերութիւնը իր սուր տապնապին մէջ մտած էր:

«Հայաստան» օրաթերթը ծնաւ այդ գծարտաւ անհասկացողութենէն եւ իր գլխաւոր առաջադրութիւններէն մէկն ալ եղաւ պայքարի ներքին բոլոր տեսակ շարաշահութիւններու, տիրապետական ձգտումներու դէմ եւ պաշտպանել արեւմտաճաչերու տեսակէաներն ու հաւաքելահ: շահերը՝ առանց մխրճուելու ռուս յեղափոխութեան բերած ընկերային, անտեսական եւ այլ վարդապետական քառսին մէջ:

Թերթը կը հրատարակուէր Անդրանիկին հովանաւորութեամբ: Անոր շուրջ հաւաքուած էին մօտ երկու տասնեակ արեւմտաճաչ երիտասարդ մտաւորականներ: Այդ ուժերը մէկ տեղուած էին առաջնորդելու արեւմտաճաչ մտածողութիւնը Կովկասի մէջ, պաշտպանելու գաղթականութեան իրաւունքները մենաաւիրողներու դէմ եւ նպաստելու Արեւմտաճաչ Ազգային Խորհուրդի շարժումներուն, մասնաւորաբար արեւմտաճաչ գորարածնի կազմակերպութեան ու ռազմական արամադրութիւնը հրահրելու: «Հայաստան»ին խմբադիրներ բնորոշեցան լեւոն Թիւթիւնճեանը եւ Վահան Թովթիւնցը: Անոնց կողքին գործելու համար բնորոշեցան խմբադրական մարմնոյ անդամները, կազմուած գաշնակցական, փեր. հնչակ. եւ ոչ-կուսակ-

ցական անհատներէ։ Աշխատակիցներու առաջնորդող գէմքերն ալ կը բաղկանալին նոյն շրջանակներէն, որոնք թերթին կու տալին լուրջ բովանդակութիւն։ Թերթին խմբադիրները, խմբադրական մարմինն ու աշխատակիցները յաճախ կ'ունենային խորհրդակցական հանդիպումներ, ուր նկատի կ'առնուէին թերթին ուղղութեան ու բովանդակութեան վերաբերող հարցեր։ Թերթը իր լուրջ ու կուռ բովանդակութեամբ եւ վստահելի լուրերու թարմութեամբ շուտով ժողովուրդին ուշադրութիւնը իր վրայ դարձուց։ Ան դարձաւ նաեւ բնական դաշնակիցը մամուլի այն մասին («Վան-Տոսպ», «Մշակ», «Հովիտ», «Հայկազն»), որ ունէր մտածման նոյնատեսակ ուղղութիւն օրուան լուրջ հարցերուն շուրջ։

Այս հինգ թերթերուն գէմ անշուշտ դաշնակցական մամուլը «Հորիզոն»ին գլխաւորութեամբ ճակատ յարդարեց։ Մինչեւ իսկ «Հայաստան»ը դադրեցնելու համար գաղտնի աշխատանքով ամէն ճիգ թափեցին գրասենեկային դաշնակցականները։ Այդ աշխատանքներէն մէկուն մասին քինախնդրութեամբ կը վկայէ Սեպուհր իր «էջեր իմ յուրերէն»ին մէջ (էջ 303-310)։

«Վան-Տոսպ»ն ալ ունէր մէկ քանի լուրջ աշխատակիցներ եւ բռնուած էր «Հորիզոն»ին հետ յաճախ ծայրայեղ յարուածութեամբ։ «Վան-Տոսպ»ը յոռաշաղպան էր մզում պայքարին մէջ։

Երբ մամուլը բռնուած էր ներքին սուր պայքարներէ, մեր խորհրդաժողովներն ու համադումարները կարող չէին ազատ մնալ համատարած այդ շարիքէն։ Յիշեմ այդ խորհրդաժողովներէն մէկը։ Երեւան տեղի ունեցած Առաջին Արեւմտահայ Համագումարին մէջ հոգերանական վիճակը ողբերգական ըլլալու աստիճան սփորմնիկ դարձաւ։ Պայքարող կողմերն էին դաշնակցական բիւրոյականներու թէզին յարողներ եւ անոնց ընդդիմադիր հոսանքները։

Այդ խորհրդաժողովին մէջ պէտք էր լուծում տալ շատ լուրջ հարցերու։ Հոն պիտի բնորոշէին Արեւմտահայ Աղգային Խորհուրդը եւ իր գործադիր մարմինը (16)։ Ան պիտի ստանձնէր պատասխանատուութիւնը բոլոր այն հարցերուն, որոնք արեւմտահայերու դոյալվիճակէն կը ծնէին – գաղթականական հարցերու կարգադրութիւն, Արեւմտահայաստանի գրաւում մտաւոր մէջ անոնց տեղաւորումն ու պաշտպանութիւնը, արեւմտահայ գորարածի կազմակերպութիւնը եւ ասոնց նման ուրիշ ծանր մտահոգութիւններ։

Այդ համազումարին մէջ գծրախտաբար ցուցահանուեցան կիրք, քինախնդրութիւն եւ ջիղերու անպատասխանատու շարժումներ:

Չեմ մոռնար այն ծանր միջոցէպը, որ տեղի ունեցաւ մեղի բարեկամ ամերիկացի միախոնարներու ներկայութեան: Այդ ժողովի օրերուն Վանի ամերիկեան միախոնարներու անձնակազմը ուղած էր իր խնդակցութիւնը յայտնել Առաջին Արեւմտահայ Համազումարին՝ դայն նկատելով Հայաստանի նոր պետութեան սկզբնաւորութեան կանխապատրաստական խորհրդաժողովը: Իրենց խնդակցութեան ատեն այդպէս ալ արտայայտուեցան, այդ ժողովը նմանցնելով Ամերիկայի ազատութեան նախօրեակին դումարուած առաջին համաժողովին:

Այդ ընդունելութեան ընթացքին եղան նաեւ ուրիշ բազմաթիւ ուղերձներ եւ արտայայտութիւններ: Խօսք առնողներէն մէկն էր Արամ Մանուկեանը - Արամ վաչա - որ գծրախտաբար հեռացաւ ընդունելութեան պառչածութենէն եւ սուր քննադատութեան ենթարկեց Անդրանիկը: Անդրանիկը լռեց եւ սակայն մթնոլորտը երեքտրականացաւ: Կողմերը չափազանց լարուեցան իրարու դէմ: Կայծ մը պէտք էր որ պայթէր եւ քանդէր իրաւասիւնութեան ամէն կամուրջ: Այդ կայծը հանեց ալաշկերտցի Դերենիկ անունով երիտասարդ մը: Դերենիկը իր տեղէն ցատքեց, յառաջացաւ դէպի Արամը եւ ազդարարեց. «Մենք չենք թողուր որ դուք գոռալով յարձակիր մեր ազգային հերոսին վրայ»: Արամը գունաթափուեցաւ ու ձեռքը տարաւ ատրճանակին: Անդրանիկը ստանց ոտքի ելլելու իրակահապէս մռնչեց. «Արա՛մ»: Արամը կիրքի մոլուցքէն սփռի գոյն ստացաւ ու լռեց:

Ընդունելութիւնը վերապէս իր նպատակէն: Ստեղծուեցաւ արտակարգ տագնապի հոգեմիճակ: Փանոս Թերլեմեզեանը եւ ուրիշ հեղինակաւոր դէմքեր իրենց ճկուն միջամրտութիւններով եւ ազդեցիկ յորդորներով յաջողեցան տանելի մթնոլորտ մը ստեղծել, դռնէ արտաքնապէս պինդկան բախումի մատախտութիւնները չիրականացան եւ սակայն ընդունելութիւնը վերջացաւ վրդոված արամադրութիւններով: Փողոցին մէջ սպասուած պինդկան բախումներ ալ տեղի չունեցան: Այստեղ միջանկեալ պէտք է յիշել՝ թէ՛ համազումարի աշխատանքներուն եւ թէ՛ այս ընդունելութեան ատեն զուարթ պինդանքը պակաս չէին մէկ կամ միւս կողմէն:

Արեւմտահայ Առաջին Համազումարը, հակառակ իր

ճնշող մթնոլորտին, յաջողեցաւ ընտրել իր Ազգային Խորհուրդը:

Ազգային Խորհուրդը սկսաւ իրեն վստահուած աշխատանքին, եւ ամէն անգամ որ ծանր շարքութիւններու առջեւ կը դանուէր, խորհրդակցութեան կը հրաւիրէր զինք ընտրող չորս կուսակցութիւնները - Ս.Դ.Հ.Կ., Հ.Յ.Դ., Վ.Հ.Կ. եւ Հ.Ս.Ռ.Կ.:

Այս երկար միջանկեալէն յետոյ դառնանք Կաթողիկոսին Թիֆլիս այցելութեան:

Ինչպէս ըսինք վերը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը երբ իր պաշտօնական գործերը վերջացուց, հանդուստանալու համար հիւրընկալուեցաւ քաղաքէն դուրս գտնուող Ա. Մանթաշէֆին Վիլլան, Կուրի Եղեբքը:

Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի անդամները, որոնցմէ կարեւոր մաս մը Կաթողիկոսին անձնական մանրիմները եւ կամ հին օրերու բարեկամներն էին, թէյի հրաւիրուեցան:

Մեր լուրջ խօսակցութեան ընթացքին, որ ազերս ունէր գրաւուած վայրերու մէջ հայ Կաթողիկանութեան վերահաստատման եւ Հայկական Դատի լուծման հետ, անդրադարձում եղաւ նաեւ կամաւորական շարժման մասին: Այդ հաւաքոյթին մէջ գտնուողները, առանց բացառութեան, հասան այն եղբայրութեան թէ վստահուոր խոյ մը խաղցուած էր ռուս կառավարութեան կողմէ հանդէպ հայ ժողովուրդին եւ Ազգային Բիւրոյին մէջ գտնուող արկածախնդիր տարրը իր սեփական շահերու թեկադրութեամբ յարմարացոյն գործիքը դարձած ցարական կառավարութեան ձեռքին մէջ՝ ի վնաս մեր կենսական շահերուն: Իսկ խարուած Ազգային Բիւրոյի այդ մարդիկը, իրենց կարգին, ամէն ճիգ րրին խորելու հայ միամիտ, սակայն ազգասէր զանդուածները: Այդ նախկինին գունաւորուած մարմինին դոյութիւնը այլեւս չարիք մէայն կարող է արդիւնաւորել հայ ժողովուրդին համար:

Ահա այն ընդհանուր կարծիքը, որը կարելի էր ստանալ խորհրդադասօրէն կատարուած այդ խորհրդակցութեանէն: Կարծիքներու փոխանակութեան տանն րնդհանրապէս Վեհափառը կը հետեւէր յայտնուած միտքերուն եւ քիչ անգամ կարճ դիտողութիւն մը կ'ընէր, ինչպէս հետեւեալ արտայայտութիւնը, որ գեռ կ'աղբի յիշողութեանս մէջ. «Ազգային Բիւրօն դիմաւորուել է եւ չի ներկայացնում էն նկարազիրը, որի համար ստեղծուեց: Ես ոչինչ չունեմ նրա հետ, նա անկախ է

դործում ինձանից»։ Եթէ յիշողութենէս չէ վերապած, ճիշդ այս բառերով արտայայտուեցաւ, անբաշտունչ շէշտ մը զնեւով իր արտայայտութեան մէջ։

Թէ՛յի բնթացքին, այս տխուր անդրադարձումներուն յաջորդեց քիչ մըն ալ զուարթախոհ խօսակցութիւն, պարզապէս տխուր տրամադրութիւններ լիտիւնով գիտումով։ Ազգանշանը առաւ բժշկապետ նախադրեալներ, որ Գէորգ Եւրն շատ մօտ կը զգար ինքզինք եւ այդ միջամտութիւնը հին օրերէն կու գար։ Ինչպէս ըսինք, մօտայ տրամադրութիւնները չէզոքացընելու յայտնի ճիշ մըն էր լիտիւն։ Բժշկապետը իր հետ բերած էր մէկ քանի կտոր չաքար՝ թէ՛յի համար։ Եւ թաշկինակի մէջ ծրարած չաքարը անանկ ձեւով մը հանեց, որ Վեհափառին ու չաղրութիւնը գրաւեց եւ անմիջապէս անոր դիտողութեան արժանացաւ։ Բժշկապետին չաքարնքն այն եղաւ՝ թէ չաքարը անդամանիլի բլլալուն համար՝ ուզած էր նեղութիւն չպատճառել Վեհափառին։ Այս կատակը, սակայն, կը ծրարէր նաեւ դարակին մէջ պահուած լիտիւնի պատմութիւնը, որուն հեղինակը եղած էր Վեհափառ Գէորգ Եւրն ուսն նշանաւոր բանաստեղծ Վալերի Բրիւսովին այցելութեան տակ։ Վեհափառը լիտիւնը զոցուած դարակի մէջ կը պահէ եղբւ, եւ դարակին բանալին ալ՝ քովը։ Եւ բանաստեղծին ներկայութեան, բանալին կու տայ ծառայողին, որ յիմոն բերէ։ Այս է պատմութիւնը, որ որոշ չըջանակներու մէջ խօսակցութեան նիւթ դարձաւ։ Այս կատակը ստեղծեց զուարթ միջոցըրա մը, որուն յաջորդեց բազմակնութիւնը թոյլատրող ու կուսակրօնութիւնը ջնջող կաթոլիկոսական կոնդակներու պահանջին անհրաժեշտութիւնը։ Այս բոլորը՝ պարզապէս անճիւղաւոր հայ ժողովուրդը բազմացնելու համար։ Այդ կոնդակներու օգային շնորհարարութիւնը ապահովելէ ետք, անշուշտ Վեհափառը չէր կարող նախատեսել թէ յայտնուած այդ բազմանքը տարածուելով պիտի հասնէր նաեւ իրեն։ Այս երկու կատակները, որոնք մօտ կէս ժամ տեւեցին, ջանացի մէկ քանի տողերու մէջ խտացնել, զաւելտական մասը զեղչելով։

Կաթողիկոսը իր Աթոռը վերագտնալէ յետոյ, բնդութեան յանձնաժողովի անդամներուն գրեկեց իր շնորհակալութեան ու օրհնութեան կոնդակները։

Եկաւ ժամանակը (1915 Դեկտ. 16)*, երբ այլեւս արտա-

* Այդ որոշումը վերջնականապէս իրագործուեցաւ 1916-ի սկիզբները (Յունուարին)։

սահմանէն եկող կամաւորները ընելիք չունէին, քանի որ չէին ուզեր մաս կազմել ուղղակի առաստիան բանակին՝ իրը անհատ զինուորներ: Լուծուեցան հայ կամաւորական դուռները, որովհետեւ սահմանին թրքական կողմի հողամասերը ալլեւս պարպուած էին հայերէ կ. հայ կամաւոր զինուորութիւնն ալ ահաճ գոյութիւն մը դարձած էր առաւ կառավարութեան:

Այդ թուականէն սկսաւ արաստահմանէն եկող հայ կամաւորներու ողբերգութիւնը եւ այս դժբախտ կացութիւնը ծանրօրէն ճնշեց մասնաւորաբար Ամերիկայէն եկողներուն վրայ: Անոնք լքուեցան իրենց բախտին եւ ենթարկուեցան նիւթական ու բարոյական զրկումութեան: Լքուածութիւնը խաթարեց այդ սքանչելի սպանդի սմանց պնդուական հողին եւ զանոնք առաջնորդեց ոչ-յանձնարարելի արարքներու, որոնց առջեւ իրենք իսկ պիտի ահաբեկէին մէկ տարի առաջ: Չեմ ուզեր այդ առամին վարագոյրը բանալ եւ հաղխադրել այն՝ ինչ կատարուեցաւ անօթութեան եւ բնդհանուր յրուածութեան պատճառով: Յիշեմ միայն նմուշէ համար իրականութիւններ: Անոնցմէ գտնուեցան սմանք, որ իրենց բնկերը սպաննեցին մէկ քանի առաջիկի համար, ուրիշներ ալքոոլի եւ այլ արգելուած իրերու դադանի փոխադրութեան ու վաճառումի գծով իրենց օրուան հացը ճարելի փորձեցին եւ տաժանելի պատիժներու ենթարկուեցան:

Իսկապէս տանջահար սրտով մըն է որ կ'անդրադառնամ անոնց ողբերգական կացութեան եւ բնդհանուր լքուածութեան: Առ այդ Ամերիկայէն եկած պատգամաւորութիւններ ենթարկուեցան Ազգային Բիւրոյի ցուրտ արհամարհանքին: Եւ այդ արհամարհանքը՝ նկատած պայծառ ճակատին անոնց, որոնք իրենց ուժի սմբողջ կարելիութեամբ պատասխանեցին այդ նոյն Ազգային Բիւրոյի կոչերուն: Կը յիշեմ թէ այդ պատգամաւորութիւններէն մէկուն կ'անդամալցէր նաեւ պատանեկութեան շրջանի զպրոցական բնկերներէս խորրերոյցի խաչատուր Չուլճեանը: Եւ այդ պատգամաւորութիւնները Դաշնակցութեան այն շրջանակէն էին, որ հարիւր հազարներով տոյարներ լեցուցին [դաշնակցական] Բիւրոյի գրամարկոյր եւ սակայն այդ Դաշնական կարասը զլացաւ անոնց սովէն բան եւ նեղեց զանոնք փողոց՝ ենթարկուելու անմարդկային զրկանքներու: Չեմ կարող անդրադառնալ հանգամանօրէն այդ քարսիրտ վերաբերումի բոլոր ծալքերուն: Այդ էր բիւրոյական Դաշնակցութեան բարացուցական չնորձ:

Եթէ կամաւորական չարժուանքներուն մէջ կայ բան մը որ

մեր ազգային հպարտութիւնը կը կազմէ, այդ ալ մեր աննման տղոց անկաշառ հայրենասիրութիւնն է, այն գերագոյն նուիրումի ոգին, որ ի յայտ բերին իրենց զիւցազնական խոյանքին մէջ: Ընդհանրապէս բոլոր կռուողները, խմբապետներէն մինչեւ պարզ զինուորը, մեր յիշողութեան մէջ կ'ապրին իրր հաճախ ժառանգները մեր կռուելով մեռնի, գիտցող պապերուն: Եւ մենք գեռ չունեցանք մեր անծանօթ զինուորին գերեզմանը իրր ուխտաւայր: Ուխտաւայր՝ որմէ պիտի առլցուն մեր հողիները ցեղին ռազմական աւանդութիւններուն հրատակովը:

Կամաւորական գունդերու լուծարքէն յետոյ անցան մի քանի ամիսներ եւ օրին մէկին ալ մեզի՝ հայերուս, հրամցունցաւ Վանի շրջանին բռնաճիւղ երկրորդ նահանջը: Այդ արուստաւ կանօրէն կազմակերպուած երկրորդ նահանջով Վանի շրջանի քաղաքապահ զինուորութեան ստանձնած պարտականութիւնը վերջ կը գտնէր: Այդ զինուորութեան կը մնար ժողովուրդի նահանջին ապահովութիւնը կազմակերպել: Մեր զինուորութեան պաշտպանութեան շնորհիւ, նահանջող ժողովուրդը ապահով կերպով անցաւ մէկ քանի հարիւր քիլոմետր չափազանց վտանգաւոր շրջաններէ եւ հասաւ Կովկաս:

Այստեղ վրդովումով կ'արձանագրեմ այն կուսակցաւոր աշխատանքը, որ վերջին տմիսներուն դաշնակցականներէն ու մանց կողմէ կատարուեցաւ Վանի մէջ նահանգապետ Տերմէնին եւ ռուս բանակին մօտ ընդդէմ Արմենակ Եկաբեանին եւ քեփթըն Չանդալեանին: Մեր ընկերները շատ զիւրաւ կարող էին արդիւյն առնոց մուտքը Վանի շրջանակին մէջ՝ երբ իրենց հեղինակութիւնը ունէին քաղաքային վարչութեան մէջ եւ զինուորական իշխանութեան մօտ: Իրենց հանդուրժողութիւնն ու ազատականութիւնը իրենց սուղ արժեքին:

Հայ կամաւորութիւնը լուծելէ յետոյ, կարգը կու գտր իրողարար լուծուած յայտարարելու նաեւ Վանի շրջանի քաղաքապահ զինուորութիւնը: Անոնց պիտի վիճակուէր նոյն ազիտաւոր գոյալիճակը, որուն ենթարկուեցան Ազգային Բիւրոյի մասնաւորարար Ամերիկայէն եկած կամաւորները: Մեր ընկերները պէտք էր վերադարձնէյ Ամերիկա: Եւ մեր կուսակցութիւնը իր ընկերներուն հանդէպ ո՛ր միայն ստանձնած էր պատասխանատուութիւն, այլ նաեւ կը պահէր ընկերական գուրգուրանք:

Այդ հարցը խորապէս կը մտահոգէր զիս: Պէտք էր արագ

դործել, անոնց Թիֆլիս հասնելէն տուջ կարգադրելու անհրաժեշտը:

Հարցը Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի ուշադրութեան յանձնեցի: Առաջարկեցի Ժողովականներուն որ իրր բարոյական փոխադարձութիւն այս սքանչելի տղոց ճանապարհածախսը տրամադրուի՝ զանոնք Ամերիկա զրկելու: Առաջարկս բանաձեւեցի մօտաւորապէս հետեւեալ արտայայտութեամբ. «Նկատելով որ այս հայրենասէր երիտասարդները Ամերիկայի մէջ կամաւորապէս ամէն բան ձգած իրենց կեանքը տրամադրեցին հայրենիքի ազատաւորութեան գատին, եկան Կովկասեան Ճակատը կռուելու համար մեր դարաւոր թշնամիին դէմ. որ՝ իրենց ժամանման ատեն նոր իրադարձութիւններու պարտաւորութեան տակ իրենց վիճակուեցաւ ծառայել հայապահպանման ու կառուցողական գործին, փոխան ռազմաճակատներու վրայ շնորհուելիք փառքին. որ՝ կատարուած այս երկրորդ նահանջով վերջ տրուեցաւ իրենց յանձնառութեան եւ խնայելու համար անոնց՝ միշտ կամաւորներու տխուր վիճակին չենթարկուելու, Յանձնաժողովին կը մնայ արամադրել անոնց վերադարձի անհրաժեշտ դումարը»: Ժողովը արդար գտաւ այս առաջարկը եւ տրամադրեց կարեւոր դումար մը ու ստանձնեց ուշխատանքը անցադրային պաշտօնական գործողութիւններու: Կուսակցութիւնն ալ, իր կարգին, կատարեց իր պարտականութիւնը իր բնկերներուն հանդէպ՝ յատկացնելով, եթէ չեմ սխալիր, երեք հազար տոյար:

Ընդհանուր բաղձանքով կ'ըսէին միւս կամաւորները. «Այսպէս պէտք է ըլլայ կուսակցութիւն մը, ո՛չ թէ մերինին պէս, որ լիմոնը քամեցին՝ կեղեւը նետեցին փողոց»: Մեր տղոց խմբովին վերադարձը մեծ ապաւորութիւն ձգած է եղեր ամերիկահայերու վրայ: Այդպէս պատմեցին ինծի հետազային:

Յանձնաժողովի այդ նիստին մէջ փրոֆ. Մ. Մինասեանը ականջիս կ'ըսէր թէ միայն Չանդալեանին ազաքը պիտի օգտուին: Այդ չիղէցումէն թերադրուած՝ ես աւելցուցի թէ բնականաբար Անուշաւանին աղոյժէ ոմանք որ վերադառնալ կ'ուզեն՝ անոնք այ իրաւունք ունին օգտուելու:

Ամերիկա վերադարձող մեր այդ բնկերները յետոյ զիսցադնական խոյանքով պիտի կատարէին իրր ռազմիկ իրենց սրբազան առաքելութիւնը՝ միանալով յեղձնական գունդերուն եւ զրոհելով Արարայի բարձունքները: Յաւերժական յարգանք այդ անմահներ հերոսներուն, որոնք քաջութեամբ ինկան ռազմաճակատներու վրայ կամ կիլիկեան պաշարուած քաղաքներու

արհաւիրքին մէջ գիտակցօրէն մահուան զիմեցին, պաշտպանելու համար իրենց ցեղին մնացորդացր վաւրադ յորդաններու գէմ: Անոնք ըլլան եկարեաններ, Օտապաշեաններ թէ ուրիշներ, հետեւեցան իրենց հերոս նախահայրերու սրբազան հրիափին: Բոլոր անոնք որ ինկան իրենց խոյանքին մէջ կամ վերադրեցան, առին մեր պատմութեան յաւերժական փառք մը, նման այն չքեղանքներուն՝ որոնցմէ կառուցուած են ցեղին արիական բարձունքները: Բոլոր զինուորեալ հայրերէններու վսեմական ճախրք յաւերժական ներշնչման ազդիւր պիտի գտնուէր զայլիք սերունդներու, անոնց՝ որոնք զեւ չեն սնանկացած ցեղին սգեկան հարստութենէն:

Վերջին կէս դարու մեր բոլոր զինուորները փաստեցին թէ ցեղին արիական սուսքինութիւնը մեր արեան ժառանգութիւնն է, որ կ'ապրի ու պիտի ապրի յաւերժապէս, ցորչափ չէ խաթարուած անոր հարստութիւնը:

Չանգալեանին խումբին մեկնումէն յետոյ միայն յարմար նկատեցինք Թիֆլիս մնացորդներս սկսիլ կուսակցական գործունէութեան: Արդէն համակիրներու շրջանակներ կազմուած էին: Քիչ առեւնէն Թիֆլիսի եւ յետոյ Ալեքսանդրապոլի ու Լոռիի շրջանին մէջ կազմուեցան կուսակցական մասնաճիւղեր: Եւ երբ «Հայկաշէն»ը սկսաւ հրատարակուիլ, Վեր. Շնչակ. կուսակցութեան անդամներուն թիւը յիսունի հասած էր: «Հայկաշէն»ը լոյս տեսաւ կուսակցութեան անունով: Ունեցաւ ընկեր կամ համակիր աշխատակիցներ, որոնք մէջ կային ծանօթ գրողներ: Անոր երեսու մը դուր չեկաւ գաշնակցական փարիչներէն ոմանց եւ «Հորիզոն»ին մէջ հրատարակուեցան «Հայկաշէն»ին ուղղութեան գէմ մէկ քանի քննադատութիւններ: Անոնց պատասխանեցաւ «Հայկաշէն»ին եւ «Հովիտ»ին մէջ: Այդ աննպաստ յօդուածները աւելի շատ նպաստեցին թերթին տարածմանը:

Բայց, ինչպէս նախապէս յիշուեցաւ, թերթական արշաւանքը սրբեց տարաւ բոլոր արեւմտահայ թերթերը եւ կատարուած աշխատանքները. «Հայկաշէն»ը բացառութիւն մը չէր կարող գառնալ:

Հոս պէտք է յիշել թէ սահմ. սամկափարները իրենց Վանի Շրջանակին Կովկաս փոխադրուելովը ունէին ընկերներու եւ համակիրներու դանդուած մը, որ նկատելի ուժ մըն էր արեւմտահայերու հատուածին մէջ, մինչդեռ Վեր. Շնչ. (Ագատական) կուսակցութիւնը Կովկասի մէջ նոր հրապարակ եկած էր եւ դեռ կազմութեան սկզբնական շրջանին մէջ կը գտնուէր: Նորակազմ կուսակցութեան մէջ քիչ էր կովկասահայերու թիւը:

Ան գլխաւորաբար կազմուած էր արեւմտահայերէ եւ մէկ քանի հասաւ ալ պարսկահայերէ :

Կովկասի մէջ 1915-20-ի շրջանին սահմ. ռամկավար եւ վեր. հնչակեան ընկերներ հաշուի առնուելիք ուժ մը կը ներկայացնէին յանձնաժողովներու եւ Արեւմտահայ խորհուրդին մէջ : Իրենց միացեալ տեսակէտները յաճախ առաջնորդող գերեր կը կոտարէին արեւմտահայ գործերու ուղղութիւն տալու աշխատանքին ատեն : Եւ գաշնակցական ազդեցութիւնը ազդուապէս կը սանձուէր այս միացեալ ուժի ներկայութենէն : Այս երկու կուսակցութիւնները բացի իրենց սեփական շարժումներէն, «Հայաստան» օրաթերթի շրջանակին մէջ ունէին որոշ ազդեցութիւն : Մասնաւորաբար Վեր. Հնչակեան թաքնուած ազդեցութիւնը եթէ ոչ առաջնորդող՝ դոնէ ազդեցիկ էր թերթի ուղղութեան հարցերուն մէջ : Եւ գաշնակցական գրասենեկային տարրեր չէին կարող մարտկոյ ազդեցութեան այս գաղափարումը ու յաճախ կը ջլապրգոտէին : Բայց «Հայաստան»ին շարժումը յարաճուն ազդեցութեան շրջանակներ կ'ապահովէր եւ ասիկա յազմահարելու միջոցը չ'ունէին երբեմնի ամենազօր - հայ գործերու առընչութեամբ - գրասենեկայինները : Անոնց ուժի շրջանը, զոնէ ժամանակաւորապէս, անցած էր, որովհետեւ վերջին չորս տարիներու ընթացքին զիրենք ուժաւորող օտար գործօնը այլեւս երես գործուցած էր :

Այսակոյ պէտք է հաստատել թէ Գաշնակցութեան այդ գրասենեկային տարրերը միշտ ալ յեցած են արտաքին ուժաւորող ազդակներու : Եւ այս՝ իրենց գործունէութեան տարեգրութիւններուն մէջ՝ ընդհանուր վարքագիծ մը եղած է : Վաճառւելու ընդունակութիւնը իրենց աշխարհափարութեան յայտնի մէկ գիծը եղած է սկիզբէն մինչեւ ներկայ օրերը, եւ այս՝ ի վնաս հայ ժողովուրդի կենսական շահերուն : Այս նիւթը չ'առ ընդարձակ է եւ առանց խոր վրդափումի կարելի չէ մօտենայ անոնց այս խոցելի ունակութեան :

Հոս կը վերջանայ մեր կուսակցութեան գործունէութեան համառօտումը բաժինը, որ առաւելապէս կը վերաբերի վերակազմեալ հնչակեան (ազաատական) հատումին :

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ

Այստեղ անկարելի է անդրադառնալ հանդամանօրէն համադրային արժէք ներկայացնող այն գործերուն, զորս կատարեց Եգիպտոսի Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան շրջանակը թէ՛ Առաջին Աշխարհամարտէն առաջ, թէ՛ պատերազմի ընթացքին, մանաւանդ լեզէոնական շարժումի, Եգիպտոս հասնող գաղթականութեան եւ անկէ յետոյ մինչեւ 1920-ի շրջանին: Այդ գործունէութիւններուն լրիւ պատկերը տալու համար անհրաժեշտ է տարածուիլ առնուազն քառորդ դարու ժամանակաշրջանի մը ընթացքին կատարուած գործերու առանձին մարզերուն վրայ: Աշխատանք մը՝ որ կը նշանակէ պրպտել Կուսակցութեան ակումբներու եւ շրջանային վարչութիւններու գլխաւորութիւնը, առաջնորդարաններու եւ Հ. Բ. Ը. Միութեան արձանագրութիւնները: Այդ խղճամիտ աշխատանքը կատարելու համար պէտք է տրամադրել երկար ժամանակ, վերջիններէն ձեռք բերել արածնութիւն: Այդպիսի աշխատանք մը ներկայ պայմաններու տակ զրեթէ անկարելի է: Ուստի պէտք է բաւականանալ տալով նիւթեր գոնէ 1920-ի տարեշրջանի ընթացքին կատարուած գործերէն: Յետոյ առանձին գլուխի մը մէջ ընդհանուր ակնարկով մը կըր ներկայացնենք այդ թուակաշին յաջորդող տարիներու կուսակցական կեանքը եւ անոր զերը համայնքային գործերու մէջ:

1920-Ի ԵԳԻՊՏԱՀԱՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄԵՐ ԴԵՐԸ ԱՆՈՆՑ ՄԷՁ

Մեր կուսակցութեան տարեգրութիւններուն մէջ, ընդհանրապէս, ազգային կեանքի բոլոր մարզերուն յատուկ գործունէութեան համար յատկանշական տարիներէն մէկը եղաւ 1920-ը, եւ այս՝ Եգիպտոսի մէջ, Ամբրիկա, Պոլիս թէ այլուր: Ո՛չ միայն յատկանշական եղաւ արտաքինապէս, այլ նաեւ ներքինապէս. միութեան գաղափարը վերջնականապէս հասունցած երկու անջատ [Սահմանադրական Ռամկավար եւ Ազատական] կուսակցութիւններու մէջ՝ առաջնորդեց «մերկաւ բաժնուած» եղբայրները ի մի ձուլուելու եւ կազմելու ներկայ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Այդ տարուայ ընթացքին նա-

խորդ երկու կուսակցութիւնները յիշատակելի ճիգեր արամադրեցին թէ՛ Հայկական Դատի հետապնդման աշխատանքներուն զօրավիգ կանգնելու եւ թէ՛ առ հասարակ ազգային բազմաստեասկ կարեւրներու իրենց կարելին բնելու:

Այս տարին հարուստ եղաւ նաեւ եզիպտահայ գաղութին համար իբր ազգային վաստակ համազգային չարժուածներու տեսակէտով: Ծարժումներ՝ որոնց առաջնորդող տարրը եղաւ Ռամկավար Կուսակցութիւնը՝ ինքնանպատակ Դաշնակցութիւնը սակայն, չափազանց ակաբ գործս եկաւ համազգային պաշանջներ բաւարարելու ձեռնարկներուն մէջ: Անուանական եղաւ անոր մասնակցութիւնը: Յիշենք այդ չարժուածներէն կարեւորները իբր նիւթական արտադրատեղիին հանդէպ Հայկական Դատի հետապնդման հայրենիքի եւ ազգային ուրիշ կարեւորներու օգնութեան: Առ այդ՝ տարեշրջանի բնթացքին եղած են մեծ ու տեսական հանդանակութիւններ ինչպէս՝ Հայ Ազգային Հիմնադրամի, Ի Նպաստ Կիլիկիոյ, Եղբայրական Օգնութիւն Կիլիկիոյ, Անկախութեան Փոխառութիւն եւ այլն:

Հայ Ազգային Հիմնադրամի արդիւնքը կը զրկուէր Փարիզ Հայ Ազգային Պատուիրակութեան, գործածուելու համար Հայկական Դատի հետապնդման ծախսերուն, Հայաստանի օգնութեան եւ այլ վայրերու պիտեալ հայրերուն: Այս եւ յիշուած հանգանակութիւնները ընդհանրապէս զօցուեցան հարուստ արդիւնքով: Թէեւ այդ գումարները հասան կարեւոր համեմատութիւններու, սակայն պաշանջին չէին կարող բաւարարութիւն տալ: Բայց եւ այնպէս, եզիպտահայ գաղութը բրաւ իր կարելին:

Այս եւ նման չարժուածներու յծումը էին բոլոր հայ գաղութները: Այդ գաղութներուն մէջ առաջնորդող դերեր ստանձնած էին զյիսաւորարար Ամերիկա ու Եզիպտոս, որոնք արդէն հինէն կազմակերպուած ու բարգաւաճման հասած էին եւ կարող էին ազգային պէտքերուն հասնիլ: Համաձայն թերի միճակագրութեան մը՝ պատերազմին յաջորդող չորս տարիներուն բնթացքին միայն ազիտեալ ազգայիններու - որք ու գաղթական - համար արտասահմանի հայերը արամազրած են աւելի քան երկու միլիոն տոյար: Այս հաւաքական գումարին մէջ պէտք է բմբռնել թէ՛ անհատական եւ թէ՛ հասարական նպատակներու զրկուած գումարներ: Կիլիկիոյ համար ալ եղան երկարատեւ հանդանակութիւններ Եզիպտոսի մէջ բաւարար արդիւնքով: Բաւարար բաւոր գործածուած է ալստեղ գաղութի կարողութեան չափանիւշով:

Հայկական անկախութեան փոխառութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց Եգիպտոսի մէջ: Նորաստեղծ Հայաստանի կառավարութիւնը՝ ղեկավարելու համար երկրին կենսական կարիքները եւ կայունացնելու համար պետութեան գրամանիչը՝ որոշեց փոխառութեան ղեկել հայ գաղութներու մօտ: Այս առաքելութեան համար պաշտօն յանձնեց վարչապետ Ա. Խատիսեանին: Արտասահմանի հայ գաղութները մեծ խանդավառութեամբ ղեկավարեցին Խատիսեանին առաքելութիւնը: Փոխառութեան նախատեսուած գումարն էր քսան միլիոն տուրք: Թէեւ այս գումարը գաղութներու կարելի մասնակցութեան քանակէն շատ վեր էր: Այդ խանդավառութեամբ փոխառութիւնը գլեց անցաւ բոլոր նախատեսելի համեմատութիւնները: Եւ հայ ժողովուրդը տուաւ: Տուաւ ազնուական ժեսթով, տուաւ իր կարողութեան ամբողջ ուժովը. մինչեւ իսկ իդական սեռը հաճոյքով մերկացաւ իր զարդեղէնէն, իսկ Թորգոմ եպիսկոպոսն ալ՝ հնդկահայերէ իրեն նուիրուած թանկարժէք մատանիէն:

Այս հայրենանուէր ու ժողովրդանուէր շարժումներուն մղիչ ուժը, շարժման ուժղնութիւնը Հայ Սահմ. Ռամկավար Կուսակցութիւնը եղաւ: Ան էր որ Եգիպտոսի հանդանակութիւններուն մէջ տիրական տուչութեամբ եւ առաջնորդող ազդեցութեամբ յառաջադաշն եղաւ եգիպտահայութեան: Եւ այս անվերապահ նուիրումը Ռամկավար Կուսակցութեան բխրեղ հայրենասիրութեան ակունքէն կու գար՝ առանց նկատի առնելու ընդղիմաղիր կուսակցութեան Հայաստանի Հանրապետութեան մէջ ցուցարեւած մենատիրական ձգտումներն ու այլամերժ արհամարհանքը, առանց նկատի ունենալու անոր պետական գործերու մէջ յայտնաբերած բացայայտ ապիկարութիւնը եւ ազգակառուցման անընդունակութիւնը, ինչպէս նաեւ գործած հակազդային շարժումներն ու շարաշահութիւնները:

Ռամկավար Կուսակցութեան հայրենասիրական նուիրումին ու հայ կեանքին մէջ տեսակարար ուժին մասին Ա. Խատիսեանին վկայութիւնը անշուշտ արժէք մը կը ներկայացնէ՝ երբ նկատի ունենանք թէ ան կը վերաբերի Դաշնակցութեան առաջնորդող ղեմքերուն: Հոս կը պնենք իր մասին վաստական արտայայտութիւն մը, զոր ըրած է ան իր առաքելութենէն վերադարձին՝ Հայաստանի Խորհրդարանին առջեւ: «Արեւ»ը իր 24 Դեկտ. 1920 թիւին մէջ կը հրատարակէ «Ժողովուրդի ձայնը - Ժամանակ»էն արտատպուած թղթակցութիւն մը, որուն

մէջ կը տրուի Ա. Խատիսեանին չորսուկէս ժամ տեւած զրոյցին համառօտագրութիւնը: Թղթակցութիւնը անստորագրելը է, բայց «Ժողովուրդի ձայնը – Ժամանակ»-ը զայն կը ներկայացնէ իրբեւարժանահաւատ եւ մօտէն ծանօթ անոր ուղղամտութեան: Թղթակցութիւնը զրուած է Երեւանէն:

Ահա այդ Թղթակցութեան այն մասը, որ կը վերաբերի արտասահմանի Ռաժկաւար Կուսակցութեան: Հոս զանց կ'ընենք դնել իր տպաւորութիւնները Ս. Դ. Հնչակեան եւ Հ. Յ. Դ. Կուսակցութիւններու մասին: Առաջինին մասին չափազանց աննպաստ կ'արտայայտուի իրը հասարակական արժէք եւ ազդեցութիւն: Երկրորդին մասին ալ աննպաստ է իր տպաւորութիւնը իրը ուժական արտայայտութիւն ընդհանրապէս եւ իրը Անկախութեան Փոխառութեանը մասնակցութիւն:

Հոկտ. 27-ի զեկոյցին մէջ ան կ'ըսէ. «Անոչառ րլլայու համար պէտք է խոստովանել, որ արտասահմանի մէջ կայ զօրեղ կուսակցութիւն մը որ կարեւոր դադութներու, ինչպէս Պոլսոյ եւ Եգիպտոսի մէջ կը հանդիսանայ ամենագօրեղ կուսակցութիւնը: Աւելի զօրեղ եւ քաղաքական կուսակցութեան ընդթռնի Եգիպտոսի մէջ, ուր իր չուրջն է կեդրոնացուցեր Եգիպտոսի հայութեան լաւագոյն մասը: Պոլսոյ մէջ ալ այս կուսակցութեան չուրջ բոլորուած է մատուցականներու մեծամասնութիւնը:

«Այս կուսակցութիւնը Անկախութեան Փոխառութեան... ցոյց տուած իր համակրական վերաբերումով մեծ զարկ տուած փոխառութեան յաջողութեանը: Կենթադրուէր որ անոնց վերաբերումը հակառակը պիտի ըլլայ: Բայց ուրախ եմ ըսելու որ Եգիպտոսի մէջ անոնք վանելու համար այս թիւը կարծիքները որ կրնային ծնունդ առնել զանազաններու մէջ, ինծի ներկայացուցին զբաւոր ուղերձ մը զոր այժմ ձեռքս ունիմ եւ որով կը յայտնէին թէ «Հայկական պետութիւնը մերն է եւ մենք երբեք անոր հետ պայմանի չենք մտնել Անկախութեան Փոխառութեան մասնակցելու համար: Մենք մեր ամբողջ ուժով կը մասնակցինք փոխառութեան»:

«Ապագայի նկատմամբ որպէսզի մենք ունենանք ուժեղ կառավարութիւն մը, անոնք կը պահանջեն որ Երկիր մտած զբաղաւղիի համար երաշխաւորութիւն տրուի, հոգի «Առցիւղիզայի» վերնայ մէջնադէն, ուժեղ քօնթրօյ ստեղծուի ներկայ փոխառութեան ինչ կերպ ծախսուելու մասին, պաշտօնի կոչուին առանց խտրութեան բոլոր հոսանքներուն պատկանող անհատներ, որոնք հայրենիքի շինարար գործին մէջ կարող են

օգտակար գտանալ, ինծի կը թուի թէ, ըսաւ Պ. զեկուցողը, Հայ Ռամկավար Կուսակցութիւնը կարող է միանալ Հայկական կառավարութեան, եթէ իրենց պահանջներուն բաւարարութիւն տրուի: Քանի որ Միացեալ Հայաստանի գաղափարը անոնց մէջ սովորեալն աւելի ընդունելութիւն գտած է»:

Վերեւ արուած մէջբերումը տառական ընդօրինակութիւնն է թղթակցութեան այն հատուածին, որ կը վերաբերի Ռամկավար Կուսակցութեան:

Ա. Խատիսեանը իր զեկույցին մէջ արտասահմանի Հայ կուսակցութիւնները առանց բացառութեան կ'որակէ ազգայնական: Միայն Պուլկարիոյ մէջ ոմանց քով ընկերվարական թեթեւ չգար մը նշմարած է: Ս. Դ. Հնչակեան եւ Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութիւնները, հակառակ իրենց ընկերվարական ծրագրին, ունին ազգայնական մտածողութիւն միայն:

ՌԱՄԿԱՎԱՐ ԾԴԱՅԻՆ ՏՈՐՄԻՂ

Նորէն անհրաժեշտ է յիշեցնել թէ անկարելի է անգրադառնալ հանդամանօրէն համազգային արժէք ներկայացնող այն դործունէութեան, զոր Եղիպատսի ռամկավար չըջնակը կատարեց թիւ մէկ աշխարհամարտէն առաջ, պատերազմին ընթացքին, մանաւանդ լեզէոնական չարժումի օրերուն եւ անկէ յետոյ մինչեւ 1920 թուականը: Այդ դործունէութեան լրիւ պատկերը տալու համար անհրաժեշտ է տարածուիլ առնուազն քառորդ գարու ժամանակաշրջանի մը ընթացքին կատարուած դործերու առանձին մարդերուն վրայ, ինչ որ կը նշանակէ աչքէ անցընել կուսակցական դիւանաթուղթերը - ակումբային ու չըջնակային - սմբողջութեամբ եւ այդ չըջնակին արտաքին բանակցութիւններն ու ազգային տեղական դործերու գնացքը: Այդ աշխատանքը կատարելի ներկայ պայմաններուն մէջ զրեթէ անկարելի է ինծի համար: Ուստի պէտք է բաւականաչափ մասնակի հարցերու մասին խօսելով համոզուարար:



Հայ Ժողովուրդը երկար դարերու քաղաքական կեանքի զրկանքէն յետոյ իր պատմական հոգամասին մէկ շերտին վրայ տիրացած էր իր անկախութեան, եւ սակայն՝ այդ իսկ պատճառով, բռնուած էր հայրենիք կերտելու ծանր երկունքներով:

Պէտք էր պահել շահուածք եւ պատրաստուիլ իրադրութեւում ԱԶ-ԳԱՅԻՆ ՄԵԾ ԵՐԱԶԸ, հայ հայրենիքին ընդարձակ հողամասերուն վրայ: Ազգային ամբողջականութեամբ աշխատանք պէտք էր կատարել: Մեր կուսակցութիւնը իր երկու հաստուածներով, որով եւ Եգիպտոսի ռամկավար շրջանակը, չէր կարող ձեռնածալ հանդիսատեսի զերին մէջ մնալ: Ազգային այս մասահոգութիւններն ու իրաւական տենչանքները առաջնորդեցին Եգիպտոսի ռամկավար շրջանակը իր այ բաժինը բերելու ազգակառուցման գործին: Այդ աշխատանքի բաժնին յատուկ գործերէն մէկն էր օգային տորմիզի մը պաշտօններին յայտարարելու շարժումը, որ անդի ունեցաւ 1920-ի առաջին ամիսներուն: Այս մտածումը անմիջական պահանջի մը հետեւանքն էր: Ազատագրուած հողամասը ռազմականապէս պէտք էր ուժեղացնել իրր կենսական պահանջ:

Առաջին Աշխարհամարտը թէեւ վերջացած էր, բայց մեր նորաստեղծ հայրենիքին համար, դեռ արեւելի յաւելեալ տուրքը պէտք էր վճարել՝ զայն պաշտպանելու, եւ ատոր համար զինաւորուած պէտք էր: Կուսակցութեան առաջնորդող միաբերը ուղեցին օգտուիլ պատերազմի վախճանին ներկայացուցած պատեհութենէն եւ որոշեցին զնել անդլիական բանակի ռազմական օգնաւերէն որոշ քանակութիւն մը ու զայն նուիրել Հայաստանի նորակազմ բանակին: Անոնք զիմեցին անդլիական կառավարութեան: Բերջինը Կուսակցութեան մասին իւրաքանչիւր պրպտումները կատարելէ ետք երբ վստահութիւն գոյացուց արտօնեց Եգիպտոսի մէջ իր ունեցած բանակային իրաւասութիւններէն որ պահանջուած օգնաւերը վճարուէ Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան, Հայաստանի զբրկուելու համար: Յանձնաժողովը ամէն մէկ օգնաւարի հարկը Եգիպտական ռազմական տեսանկանի գին մը նշանակեց:

Գնուեցան քսան օգնաւեր իրենց ամբողջական կազմով: Անոնց ազուցումը կատարուելէ յետոյ, պիտի արտօնուէր զանոնք իրենց հակօդութեամբ փոխադրել Հայաստան: Ռամկավար Կուսակցութիւնը երկու հազար եգիպտական ռազմական գոյացնելու համար որոշեց չորմիլ ժողովրդական հանգանակութեան: Ասիկա պէտք էր գոյացնել մասնաւորներու նուիրատուութեամբ: Նախ Կուսակցութիւնը եւ կուսակցական ընկերներ պիտի տրամադրէին վճարուելիք գումարին կարեւոր մասը: Մնացածը պիտի ստացուէր Կուսակցութեան անմիջական համակիրներէ: Այդպէս ալ եղաւ: Պայման զբաւած էր որ ամէն

նուիրատու. նուիրէր մէկ կամ աւելի օղանաւ: Նուիրատուներու անուանոցանկը հասաւ. 14-ի.-

Լեւոն Մկրտիչեան	մէկ սկաւառակ	100	ոսկի
Յովհաննէս Քարրերդեան	»	»	»
Երուանդ Կաթարակեան	»	»	»
Յակոբ Փափաքեան	»	»	»
Տիգրան Հաճընլեան	»	»	»
Յարութիւն Չալլաքեան	»	»	»
Գրիգոր Պողաճեան (Սուտան) իր Հինգ զաւակներուն անունով	Հինգ	»	500 »
Եսայի Կարիկեան (Փարիզ)	մէկ	»	100 »
Տիկ. Վիքթորիա Գասպարեան	»	»	» »
Կեսարացի կարգ մը հայեր միասնաբար	»	»	» »
Նշան Գալսերլեան	»	»	» »
Վարդան Պարծանքեան	»	»	» »
Տիգրան Մխիթարեան	»	»	»
Ռամկավար կուսակցութիւն	Երեք	»	300 »

Երկու հազար ոսկին վճարուեցաւ երկու անգամէն, ստանալով համապատասխան հաշուեկրերը:

Այս գնումէն յետոյ յայտնի եղաւ թէ հայկական բանակը չունի մարդուած օղանաւորոցներ, Կուսակցութիւնը պարտաւորուեցաւ դիմել Ամերիկայի եւ Չմիւսիոյ իր Շրջանակներուն, խնդրելով անոնցմէ որ նուազագոյն յիսուն երիտասարդներ մարդիկ տան ամերիկեան ու յունական բանակներու օղանաւորին դպրոցներուն մէջ: Անոնք պիտի ընկերանային առաքուելիք օղանաւերուն:

Բայց այս պատրաստութեան ընթացքին Հայաստանի մէջ զէպքերը դաժաւիթեցան: Թրքական ճակատին վրայ հայկական բանակին պարտութիւնները յաջորդեցին իրարու: Հայաստանի արդէն իսկ սպառած ժողովուրդը անկարող եղաւ դիմադրելու թրքական արշաւող բանակներուն եւ կատարուեցաւ մեծ աղէար: Այդ պարտութիւններուն պատճառները: Կարելի չէ խօսիլ անոնց մասին՝ առանց ցեղային արժանապատուութեան արտրումի: Այստեղ կարելի չէ այդ պատճառներուն անդրադառնալ, ո՛չ ալ անհրաժեշտ է: Բայց պատմութեան առաջ մեծադոշն պատասխանատուն կը մնայ օրուան կառավարութիւնը իր կուսակցութեամբ: Անշուշտ ասիկա առանձին նիւթ է, որու մասին չափ խօսուած է եւ դեռ չէ սպառած:

Բացայայտ է թէ՛ եթէ համայնավար ռուսերն ու հա-

յերը իրենց Հայաստան ներխուժումով առհման չդնէին վայրադ թուրքերու յաւակնութիւններուն, այսօր Հայաստանը եւ անոր հայութիւնը ենթարկուած պիտի ըլլային այն ահաւոր վախճանին, որ վիճակուեցաւ Արեւմտահայաստանին ու արեւմտահայութեան, պատերազմի սկզբնական շրջանին:

Երբ այս վճռական զէպքերը տեղի ունեցան, անգլիական կառավարութիւնը մերժեց օգնուելը, յանձնել մեր կուսակցութեան, պարզ այն պատճառով որ չէր ուզեր համայնավար բանակը գինել իր օգնուելով: Պահեց դանտը: Անցաւ ժամանակ մը եւ օրին մէկն ալ Ռամկավար Ազատական կուսակցութեան Եգիպտոսի Շրջանային Վարչութիւնը անգլիական բանակի իրաւասու յանձնաժողովէն ստացաւ պաշտօնական հաղորդագրութիւն մը՝ թէ մեր քսան օգնուելը վաճառուած են երեք հարիւր եգիպտական ոսկիի եւ կը հրաւիրէր ստանալ յիշեալ գումարը:

Շրջանային Վարչութիւնը չէր կարող հաշուել կատարուածին հետ եւ անիրաւ գտաւ տանց իր գիտութեան ալդ վաճառումը, ու մանաւանդ՝ ցոյց արուած գումարը չափազանց անբաւարար: Դիմեց կեդրոնական կառավարութեան՝ այս անարդար արարքին դէմ բողոքելով, եւ մինչեւ իսկ որոշեց դատաւարութեան դիմել: Բայց Լոնտոնէն պատասխանուեցաւ մեր տեղւոյն ներկայացուցիչին թէ ալդ հարցին իրաւասութիւնը փոխանցուած է Եգիպտոսի մէջ գտնուող եւ պատերազմական թողոնները վաճառող յանձնաժողովին, եւ թէ կեդրոնը ալդ հարցով չ'ուզեր զբաղիլ:

Այս մերժողական հաւատարմին վրայ, Վարչութիւնը որոշեց կրկին հաղորդակցել մատնանշուած յանձնաժողովին հետ եւ միեւնոյն ատեն դիմել նուիրատուներուն ու հասկնալ անոնց տեսակէտը ստացուելիք երեք հարիւր ոսկիին գործածութեան մասին: Նուիրատուներուն մեծապէս մասը ըլլալով բնկերներ, ստացուելիք գումարին իր բաժինը կուտակչութեան ձեռք: Նոյնը բերին մեր բարեկամներէն ոմանք, ոմանց ալ վճարուեցաւ իրենց համեմատական բաժինը: Օգնուելու հարցը ունեցաւ այս անբողձալի աւարար(17):

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՊԱՏՈՒՈՅ ՍՈՒՐԸ
ԵՒ ԱՐԱՐԱՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Առաջին Աշխարհամարտը փերճացած էր եւ Անդրանիկը

Հայաստանի մէջ Դաշնակցութեան անհաւասարակչիւ շարժումներէն ու վնասարարութիւններէն զզուած՝ վերջ տուած էր իր ռազմական սխրագործութիւններուն: Էջմիածնի մէջ ցրուած էր իր սեփական զօրամասը եւ պատերազմական նիւթեղէնն ու զէնքերը յանձնած՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Անցած էր արտառահաման՝ աշխատելու այլ մարդերու մէջ, իր ժողովուրդին գերազոյն շահերուն ի նպաստ:

Անդրանիկը այցելեց Եգիպտոս ալ եւ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութիւնը խանդավառ պնդատուածով վիճաւորեց իր ազգային պատմական հերոսը: Այդ խանդավառ պնդատու մը պէտք էր նաեւ արտայայտել խորհրդանշական նուէրով մը: Տրուեցաւ պաշտօնական ընդունելութիւն մը եւ հանդիսաւոր տուգութեամբ գլխաւորական հերոսին յանձնուեցաւ պատուոյ յարգը: Այդ սուրին վրայ աշխատած էին չորս վարդեա արհեստաւորներ՝ իրր զծագրող, չինոյ ու փորագրող: Հ. Ս. Ռամկավար Կուսակցութիւնը ջերմ խանդավառութեամբ պատուեց պատմական հերոսը արժանաւորապէս՝ իրր ազգային հպարտութիւն:

Ս. Ռամկավար Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակը երբ իր երախտագիտութեան խոր յարգանքը կ'ընծայէր հայ ռազմունակութեան խորհրդանիշ ապրող արծիւին, չէր կարող մոռնալ այն կորիւնները, որոնք Արարաններու բարձունքներէն վեր խոյացան՝ լեցուած սրբազան վրէժխնդրութեան հուրով: Անոնք ինկան իրենց վսեմ խոյանքին մէջ, սակայն դաշնակից Արեւելքի բանակներու յաղթանակներուն համբան բացին եւ հայ ցեղին արիական ընդունակութեան դադափարը անպամ մըն ալ վերահաստատեցին: Պէտք էր հայ ազգին հպարտութիւնը դարբնող այդ հերոսներուն նուիրական յիշատակը յաւերժացընել նիւթակերտ փառքով մը նաեւ: Այս երախտագիտական մտածումը յղացքն էր արդէն մահարձանի մը գտնաւորին: Այդ ազնուական դադափարը մարմին ստացաւ Արարայի հերոսներուն մահարձանովը, որ բարձրացուց Եգիպտոսի մեր Շրջանակը: Դիտմամբ ժողովրդական նուիրատուութեան արուեստաւ մասնակցութեան փոքրագոյն չափանիշը, սրբազգի ան ունենայ համաժողովրդական ընդթ:

Այս երկու արտայայտութիւններուն մէջ սահմ. ռամկավար Եգիպտոսի Շրջանակը գուրս եկաւ հերոսապաշտ արամադրութեամբ՝ եւ ապրող եւ մահացած հերոսին հաւասարապէս: Անոնց յաւերժական փառքին յարգանքի արտայայտութիւնը, սակայն, չփորձեց վերածել կուսակցական փրփախանալի եւ վեր

մնաց ուրիշներու փորձութիւններէն ու մինչեւ իսկ իր կուսակցական հերոսներուն համար չտկարացաւ դիակ շահագործելու ունայնամտութենէն:

Հազար ինն հարիւր քսանի ժամանակաշրջանը մեր կուսակցութեան նախկին երկու հատուածներուն տարեգրութիւններուն մէջ մեր ազգային կեանքի բոլոր մարզերուն յատուկ գործունէութեան առումով եղաւ յատկանշական տարիներէն մէկը, եւ այս՝ Եդիպատսի մէջ, Ամերիկա, Պոլիս, Կիլիկիա թէ այլուր: Ռամկավար Ազատական Կուսակցութեան բաղկացութեան տարրերը իրենց գերազոյն յարումով նեաւաճ էին կրուելու արաաքին ու ներքին դժուարութիւններու դէմ հաւասարապէս: Նախկին երկու կուսակցութիւններն ու իրենց չրջանակները մասնաւորապէս գոյութեան պայքարի ու կառուցողական աշխատանքի լծուած էին ազգային բոլոր մարզերուն վրայ: Այդ ուժերու սպառումը, սակայն, անխուսափելի էր եւ անոնց ապահոված արդիւնքը եղաւ համեմատական այն հակազդոյ ուժերու յաղթահարումին, որ հնարաւոր եղաւ:

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄՆԵՐ ՍԱՆՃԱՔԻ ՀԱՐՑԻՆ
ԱՌԸՆՁՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՌ ԱՅԴ
ՌԱՄԿ. ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Առաջին Համաշխարհային Պատերազմը վերջացած էր Դաշնակիցներուն յաղթանակով: Յաղթոյ ու պարտուոյ կողմերը, բացի Ամերիկայէ, պարտաւորուած զուրս եկած էին այդ պատերազմէն: Ստեղծուած էին ազգերու նոր պետական սահմաններ եւ աշխարհի քարտէսը զտափառական գունաւորումով վերածուած էր երկու խոշոր հատուածներու: Համայնավարութիւնը բռնած էր Եւրոպայի արեւելքը եւ Ասիոյ մէկ մասը. իսկ մնացած Դաշնակիցները՝ Արեւմուտքը:

Պատերազմը թէեւ վերջացած էր, բայց զիտնազիտական պայքարները նոր բարդութիւններով աւելի խոցելի դարձուցած էին միջազգային քաղաքական ու տնտեսական կեանքը եւ շատ մը հարցերու հաշուեյարդարը գեռ կատարուած չէր: Այդ լուծումի սպասող հարցերէն մէկն էր հայկական նոր կադմուելիք պետութեան հարցը: Չլուծուած հարցերուն վրայ կ'աւելնային նոր բարդութիւններ, որոնց ծնունդ կու տար անցնող ժամանակը: Մինչեւ իսկ արեւմտեան դաշնակիցները քաղաքական ու տնտեսական շահերով բաժնուած էին իրարմէ եւ յաճա-

խաղէպ բախումներու մէջ էին: Անոնց թատերավայր էին Պոլիսն ու այլ տեղեր, եւ անոնք չարունակուեցան աւելի կամ պակաս սասակութեամբ:

Գիտենք թէ Հայկական Դատար Աւերի դաշնագրով(18) ստացած էր գրական լուծում, որուն հետեւեցան Հայաստանի անկախութիւնը եւ աշխարհագրական սահմանադժուժը՝ Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսոնին կողմէ(19): Սակայն նոր կազմուելիք պետութեան գոյութիւնը չիրականացաւ եւ ժամանակի անցքը ի նպաստ թուրքիոյ դործեց: Ապա, Լոզանի ազդաժողովէն(20) առաջ իրերամարտ բախումներով եւ չահերու հակադրութեամբ երէկուան յաղթական դաշնակիցները ներքնապէս անդօրացած՝ նոյն ժողովի ընթացքին թուրքերու զգած կռուութիւնն ամբողջ, Լեւոնի Հայկական Դատար անորակելի տեղատուութեամբ մը: Հայ ժողովուրդին ճարահատ ու անգոր ըողոքն այլ նետուեցաւ գիւտնադիտական հին թուղթերու նկուղներուն մէջ եւ մոռցուեցաւ հայ ժողովուրդն այլ՝ իր դատին հետ միասին:

Եթէ միջազգային քաղաքական շրջանակներուն համար այս մեղապարտ հաշուեյարդարը կատարուեցաւ այնքան պաշարիւն կծկումով, վերադրած հայ ժողովուրդը, սակայն, կատարուած առամբ արձանագրեց իրը հանդրուանային եղբակացութիւն: մէկը ազատագրական պայքարներու այն ձախողութային եղբակակումներէն՝ որոնք տեղի ունեցած էին անցեալին մէջ աւելի կամ պակաս խարկանքներով:

Այս նոր եղբակակումէն անցած էին արդէն տասնեակէ մը աւելի տարիներ, երբ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնը 1934-ին վերադրուեցաւ Եղիպտոս: Ստորեւ կու տանք այն պատմական անցքերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կը յօշտօնէին Հայկական չահերը եւ տեղի ունեցան 1934-47 տարիներու ընթացքին եւ որոնց մէջ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ստանձնեց այդ հայկական չահերու պաշտպանութեան աշխատանքի իր բաժինը: Կու տանք նաեւ այն գործերը, որոնք կատարուեցան նոյն ժամանակաշրջանին մէջ Կուսակցական նախաձեռնութեամբ, իրը կուսակցական ընդհանուր գործունէութիւն քաղաքական եւ այլ իմաստներով:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը այս ժամանակաշրջանին այլ հետեւողականորէն գործեց իր կարելիութիւններուն ներած չափով, հայ ժողովուրդի չահերուն ի նպաստ:

այս՝ թէ՛ անոր ներքին եւ թէ՛ արտաքին իրադարձութիւններուն մէջ:

Այս կուսակցութիւնը իրը հայ ժողովուրդին մէջ եւ անոր համար աշխատող կադմակերպութեամբ քաղաքական գործօն, հայկական Դատի ծանօթ լքումէն յետոյ ստիպուած էր իր ուժերը առաւելապէս արամազրել, ներքին վերակազմութեան ու գաղթահայ կեանքին մէջ ազգապաշտան գծով տանկիք աշխատանքին: Այսպէս՝ ան ծանօթ մեծ ազէտէն յետոյ իր գերազույն ճիւղերը լարեց նախ հիմնաւորելու հայ ժողովուրդին մէջ մեր քաղաքական անժամանցելի իրաւունքներուն յստակ բմբռնումը: Իր բեմերով, թերթերով ու գրականութեամբ ճիւղ բրաւ ազդողին մշակելու եւ հայրենիքի հետ կապ հաստատելու: Ռամկավար Ազատական կուսակցութիւնը՝ իրը հայ ժողովուրդին շահերուն ուխտուած պաշտպանը՝ չքահայեաց աշխատանքով պայքարեցաւ այս շրջանին ալ ներքին եւ արտաքին ճակատներուն վրայ բոլոր հակահայ քայքայիչ ու հարուածող շարժումներուն դէմ, որոնք նոր ազէտներով կը սպառնային նոր վէրքեր բանալ արդէն իսկ ազիտուած մեր արատաւահմանին:

Եթէ այս կուսակցութիւնը չէր կարող ստեղծել քաղաքական դէպքեր կամ շարժումներ եւ պաշտպանել տիրականօրէն հայ ժողովուրդին գերազույն շահերը քաղաքական գծով, ձեռնածալ ալ չմնաց երբ աշխատանքի պատեհութիւնը ունեցաւ: Բացի կուսակցապէս վերակազմական եւ ուժեղացման աշխատանքէն՝ տանկերէ քարերէն բնթացքին չորս նոր Շրջանակներ,՝ Արժանիք, Պաշտպան, Պարսկաստան, Սանճաք, աւելցուց արդէն իսկ գոյութիւն ունեցող Շրջանակներուն վրայ: Եւ բացի գաղութներու ներքին մշակութային եւ ալ մարդկութեան աշխատանքէն, ան՝ յետ Հայկական Դատի պարտութեան՝ շարժման մէջ գրաւ իր կադմակերպական մեքենան քաղաքական կեդրոններու մէջ,՝ անհատ բնիկը կամ Շրջանակին վարչութիւն,՝ օգտուելու նպատաւոր խմբումներէ կամ իրադարձութիւններէ, եւ կամ տարաւ փառնուած հայկական շահերու պաշտպանութեան գործը, ինչպէս «վարյք վերկիսի» (21) եւ ուրիշ հարցերու առնչութեամբ:

Երբ կուսակցութիւնը քաղաքական գծով ոգի ի բուն լծուած էր հայնպատա աշխատանքի՝ արտաքին ճակատին վրայ օգտուելով հնարաւոր բոլոր պատեհութիւններէն, միւս կողմէ, սակայն, իր աւագ յանձնառութեան մաս կը նկատէր այն բոլոր ներքին աշխատանքները, որոնք կարող էին յատկացուիլ հայ ժողովուրդի հոգեկան կազմակերպման վերելքին ու հաւա-

քականութեան ազդեցին դժով առողջ գոյացութեան: Ներքնապէս վասնզուրաժ շահերը ան պիտի պաշտպանէր ընդդէմ դադրեցնարհի մէջ դործող դաշնակ անորակելիներուն, ինչպէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան, ներգաղթի շարժումի, փոթորիւած ամերիկահայութեան, Երուսաղէմի վանքին ներքին գործերուն եւ դաշնակցականներու կողմէ դաւադրական սպառնալիքին նման հարցերու առեւ: Այս բոլոր աշխատանքներէն անջատ միշտ կար ու կը մնար կուսակցական հզօրացման հարցը՝ իբր այլ բոլորին յաջողութեան բանալին: Վերեւ տրուած բոլոր հարցերուն մէջ Ռամկապար Ազատական Կուսակցութիւնը ըրաւ իր կարելին եւ մեծ համեմատութեամբ ալ յաջողեցաւ ճշգրտացնել շարքիք ու գործերը զենկ իրենց բնականոն ճամբուն մէջ: Եւ այս՝ առաւելապէս ներքին գործերու առնչութեամբ:

... Դ՝ Ռամկապար Ազատական Կուսակցութիւնը գործեց ամէն մարդի մէջ անադմուկ: Գործի մղեց համախոհ կազմակերպութիւններ, նուիրալսյալներու հաստատութիւններ, հեղինակաւոր արամադիր անհատներ եւ մինչեւ իսկ օտար շրջանակներ՝ ի նպատակ հայ ժողովուրդի կենսական շահերուն:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՓՈՒՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Ռամկապար Ազատական Կուսակցութիւնը պատահութիւնը ունեցաւ գրադելու 1936-ին արեւմտահայերու թուրքիոյ մէջ ունեցած քաղաքացիական իրաւունքներու պաշտպանութեան ապերախտ գործով: Իրաւունքները՝ որոնք ճշդուած էին Լոզանի դաշնագրով: Թուրքիա այլ օրերուն դիմում կատարեց Ազգերու Ընկերակցութեան՝ ձեռք բերելու համար նպատակաւոր բարեփոխումներ Լոզանի դաշնագրին մաս կազմող՝ նեղուցներու վերաբերեալ արամադրութիւններուն մէջ: Մինչեւ այդ առեւ, սակայն, չէր գործողութեամբ կամ թերացած էր փոքրամասնութիւններու եւ մասնաւորապէս հայերու տրուած քաղաքացիական իրաւունքները յարգելու մէջ: Ռամկապար Ազատական Կուսակցութիւնը յարմարապէս պատահութիւնը նկատեց օգտագործելու առիթը: Անուղղակի միջոցներով՝ ուղղակի միջոցը պայցուած էր մեղի, աշխատեցաւ յիշեցնել պաշտօնական շրջանակներու թուրքիոյ յանձնառութիւնը: Հակառակ թափուած բոլոր ճիգերուն, կարելի չեղաւ գրական արդիւնքներ ա-

պահովել: Միջազգային քաղաքական շրջանակներու միջուրրոր
թրքանպաստ էր կամ անտրամադիր նոր բարդութիւններ ստեղ-
ծելու: Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, գիտնալով թէ
ապերախտ աշխատանք մըն էր փորձել ուղածը, կասարեկ պա-
կայն իր պաշտականութիւնը:

ՍԱՆՃԱՔԻ ՀԱՐՑ

Սանճաքի հոգատարութիւնը Ֆրանսայի վստահուելէ յե-
տոյ(22), ռամկավար ազատական ղեկավար շրջանակները ան-
հրաժեշտ նկատեցին հնարաւոր չափով յարաբերութիւն մշակել
հոգատար պետութեան քաղաքական շրջանակներուն հետ՝ բա-
րեացակամ տրամադրութիւն ստեղծելու Սանճաքի մէջ բնակող
հայ տարրին հանդէպ: Սանճաքի Ֆրանսական իշխանութիւն-
ները սկզբնական շրջանին եւ բաւական ստեն ալ քաջալերեցին
հայերը եւ մինչեւ իսկ զանազան առիթներով թելադրեցին դրա-
մադուր փոխադրել հոն ճարտարարուեստական հիմնարկու-
թիւններու եւ երկրացործական ձեռնարկներու համար: Ռոժէ
Կարօն այն պաշտօնատարներէն մէկն էր, որ բնկեր Յովհ. Պօ-
ղոսեանին հետ ունեցած մասնաւոր տեսակցութեան մը առն
թելադրեց մեծ դրամադիւսով մեծ գործարան մը հիմնել, խոս-
տանալով անհրաժեշտ գիւրութիւններ ձեռնարկունելուն: Եւ
հայ գիւղացիներ երկրագործական շրջաններուն մէջ ճահիճներ
ջորցուցին ու ապարակներու աշխատանքին լծուեցան:

Այդ ժամանակաշրջանին Ֆրանսական իշխանութեան մաս
կազմող պաշտօնատարներ կը վստահեցնէին թէ Ֆրանսա մտա-
դրած է պահել այդ հոգամտին հոգատարութիւնը՝ դայն ա-
ռաջնորդելու գէպի անկախութիւն: Եւ եթէ այդ օրերու հաւատ-
տումները գործածուած քաղաքացիական միջոցներ չէին,
պէտք էր բմբռնել թէ իրապէս հոգատար իշխանութիւնները
նպատակ ունէին Սանճաքի բնակչութեան առաջ յայն կարելիու-
թիւններ՝ տնտեսական ու քաղաքակրթական վերելքներ կատա-
րելու, եւ ապահովարար հայ տարրը պիտի բլլար ամենաչափ
օգտուողը այդ հեռանկարէն: Հա, տարրը՝ իբր թիւ եւ քաղա-
քակրթապէս ու տնտեսապէս կազմակերպող գործօն՝ յայն հնա-
րաւորութիւն ունէր օգտուելու բնծալուելիք պատահութիւնէն:
Արդէն հոգամտն ալ բնական հարստութեամբ ու ծովային գիւ-
րութիւններով հիմք կու տար նման յուսադրումներու:

Բայց միջազգային քաղաքական ղեկարկու դարպացման

ընթացքին ըմբռնումներու յեղաշրջումներ կատարուած էին անկլօֆրանսական քաղաքական միաբերու մէջ: Մօտաւոր ապագայի նախատեսութեամբ նախկին անգլեֆրանսական համարտութիւնները եզանակաւորումներ կրած էին եւ շատ մեղմացած: Հիթլերական Գերմանիոյ զինական պատրաստութեան սպառնալիքը անգլիացիներու եւ ֆրանսացիներու խելքերը տուն բերած էր եւ կատարուած էր որոշ մերձեցում հասարակաց վտանդին առջև: Նոյն այդ պատճառով թուրքերը պէտք էր սիրաշահիլ: Թէեւ կար Անգլիոյ հեռատես խաղարկութիւնը՝ Ֆրանսան դուրս նետելու սուրիական ու լիբանանեան հոգամասերէն: Ժամանակի ընթացքին իրադրժուեցան երկուքն ալ:

Սանճաքի նկատմամբ թրքական յաւակնութիւնները յարաճուն կերպով կ'ուժեղանային: Թուրքիա պատահութիւն ունեցած էր ռազմականապէս վերակազմուելու: Հոգաւոր պետութեան եւ թուրքիոյ միջեւ ծայր տուին բանակցութիւնները: Սանճաքի հոգամասին նկատմամբ շահագրգիռ կողմերը՝ թուրքեր եւ սուրիացիներ, սկսան իրենց պայքարը, մեծ աշխոյժով, երկու դիժերու վրայ՝ թէ՛ զիւսնազիտական եւ թէ՛ Սանճաքի բնակչութեան մէջ տարուած փրփականաւով: Բնականաբար կողմերէն իւրաքանչիւրը դորձեց ի նպաստ իր շահերուն: Թրքական տարրերու ներթափանցում եւ յետոյ հանրաքուէ թափ կու առնին զէպքերու զահափիթման: Այսպէս, մրցորդ կողմեր թէ՛ Սանճաքի բնակչութեան համակրութիւնը շահելու կ'աշխատէին եւ թէ՛ Փարիզի մէջ զիւսնազիտական աշխատանքներ կը կատարէին: Թուրքեր թէեւ Սանճաքի բնակչութեան հազիւ 28%-ը կը կազմէին, սակայն ֆրանսացիներու հետ նախապէս մշակած պաղանի հասկացողութիւններով աւելի ուժեղացած, իրենց պահանջներուն եւ շարժումներուն մէջ դարձած էին աւելի յախուռն եւ աւելի անտեղիտայի: Անոնք իրենց զինական պատրաստութիւններով ալ կը սպառնային ո՛չ միայն Սանճաքին, այլ նաեւ Հալէպի շրջանակին համար խռովիչ տարածայնութիւններով կը հետապնդէին բնդհանուր խռճապ յառաջանել եւ օգտուիլ անկէ:

Թէեւ ֆրանսական իշխանութիւններու կողմէ պարբերաբար անդորրացնող յայտարարութիւններ կ'ըլլային պաշտօնական կամ անհատական արտայայտութիւններով կամ խօսակցութիւններու տոտեն, եւ որոշ աստիճանի անտեղիտայիութիւն կը ցուցահանէին թուրքերու դէմ, բայց շօշափելի փաստերը այլեւս տարակոյտի տեղ չէին թողուր ի նպաստ թուրքիոյ եւ

կցումի հաւանականութիւնը բացայայտօրէն կը հակէր վերջինին կողմը:

Երկու մրցակիցները – Թուրքիա եւ Սուրիա – երկրամաս մը շահելու կամ կորսնցնելու հաւանականութեան առջեւ կը դործածէին իրենց ամենատեղեղ յաղթուելները եւ կը խօսէին իրր պետութիւն, դիւանագիտական սեղաններու շուրջ բոլորած: Մինչդեռ Սանճաքի հայ տարրին համար աւելի կենսական նշանակութիւն ունէր խնդրոյ առարկայ հողամասին վիճակուելիք որեւէ լուծում եւ շունչին պաշտօնական դիրքաւորում դիւանագիտական շարժումներու մէջ: Կամ անոնք պիտի մնային իրենց հայրենի հողամասին վրայ՝ վերելքի բոլոր կարելիութիւններով, եւ կամ գաղթելու նոր թշուառութեան պիտի ենթարկուէին:

Այս պայմաններուն մէջ հայ տարրին կենսական շահերը կը ներդաշնակէին սուրիական թէզին – հողամասին կցումը Սուրիոյ: Ահա՛ Սանճաքի հարցին տրուելիք լուծումին էութիւնը, կենսական նշանակութիւնը հայերուն համար: Ուրիշներուն՝ հող, մեզի համար՝ ապրիլ կարենալու միջոց:

Եւ հայերը՝ թելադրուած այս հիմնական ըմբռնումէն՝ օրդեկերցին սուրիական տեսակէտը եւ իրենց աշխատանքը տարին այս հունով: Պէշրութի մէջ գործի յոռեցան հայ կրօնական նախնայականութիւններ եւ Ռամկաւար Ազատական Կուսակցութիւնը: Վերջինս, բացի սոսնձին տարած իր աշխատանքէն, կապ պահէր այդ նախնայական անթոռներուն հետ խորհրդակցութիւններով ու թելադրութիւններով եւ արժեւորելով զանոնք:

Ռամկաւար Ազատական Կուսակցութիւնը այս հարցին մէջ գործեց տուեալ կարելիութիւններու համաձայն: Այսպէս, նախ աշխատեցաւ՝ պաշտպանելով Սանճաքի անկախութեան թէզը ընդդէմ թրքական կցումի յաւանութիւններուն: Այդ տեսակէտի պարտաւիճէն յետոյ, օրդեկերց Սանճաքին Սուրիոյ կցուելու տեսակէտը եւ իր ճիգերը արամադրեց այդ առաջադրութեանը յաջողութեան, եւ այս երկրորդին պարտաւիճեր նախատեսելով՝ մասհոյուեցաւ Սուրիա եւ Լիբանան ապաստանելու պարտադրուած հայերու օգնութեան գործով:

Այս ամբողջ շարժումներու ընթացքին, Ռամկաւար Ազատական Կուսակցութեան գործունէութեան վայրերը եղան Սանճաք, Դամասկոս, Պէշրութ, Գահիրէ, Փարիզ ու Նիւ Եորք: Գահիրէն սրպէս Կեղրոն կը ղեկավարէր այս շարժումը: Կեղրոնը այս շարժման մէջ դրաւ իր տաղանդը գէմքերէն աւելի քան

տասնեակ մը ընկերներ իբր Կուսակցութեան անունով գործող, իբր կացութիւնը տեղեկագրող եւ իբր թելադրող ու լրատու: Կեդրոնը անոնց յանձնարարեց աշխատանքի որոշ դերեր ու տուաւ ուղղութիւն: Անշուշտ, ինչպէս յիշուեցաւ, չարժուածին ղեկավարութիւնը ի պաշտօնէ ստանձնեց Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը:

Փարիզի մէջ մեր հեղինակաւոր ընկերներէն ոմանք կը գործէին ճանչցուած մարմիններու անունով ու խողովակով, ինչպէս՝ Հայ Գաղթականաց Կեդրոնական Յանձնաժողով, Քոմիթէ տը յա Մետիթերանէ եւլն.: Բայց Փարիզի մէջ գործունէութեան գրեթէ ամբողջական հոգը ստանձնած էր ընկեր Արշակ Զօպանեանը: Ան գործեց յաճախ խորհրդակցարար ու երբեմն գործակցարար ընկեր Վահան Մալեգեանին եւ այլ ընկերներու: Ընկեր Զօպանեանն էր որ գործեց Քէ տ'Օրսէի ամենապատասխանատու շրջանակներու հետ չփում պահելով: Ան օգտագործեց պետական կարեւոր անձնաւորութիւններու ազդեցութիւնները օրուան իշխանութիւններուն մօտ: Փարիզի մէջ որոշ ընկերներու եւ մասնաւորաբար ընկեր Զօպանեանին ճիւղերով Փոյ տիւ Վէուն եւ ծերակուտական Կոթրոնը ղրկուեցան Սուրիա-Լիբանան, Սանճաքի մէջ քննութիւններ կատարելու եւ Փարիզի գեկուցանելու: Եռանդուն գործունէութիւն տարուեցաւ պաշտօնական շրջանակներու մօտ չփումներով, յուշագրերով եւ այլ կարելի միջոցներով:

Օրուան Կեդրոնական Վարչութիւնը այս հարցին մէջ ո'չ միայն Փրանսական իշխանութիւններու (Սանճաք, Պէյրութ, Փարիզ եւլն.) մօտ կատարեց որոշ աշխատանքներ, այլ գործունէութեան ուրիշ գիծ մըն ալ տարաւ, եւ այդ եղաւ Սուրիա-Լիբանանի առաջնորդող դէմքերու հետ յաճախադէպ չփումներ պահել ի նպատակ Սանճաքի Սուրիոյ կցումին: Այդ գործակցութեան ճաննող չփումները կը հետապնդէին երկու առաջադրութիւններ: Առաջին՝ համակարգել երկու կողմերու աշխատանքները, ապահովելու Սանճաքի կցումը Սուրիոյ պետութեան երկրորդ՝ Սուրիա-Լիբանան ապաստանած հայ գաղթականներու ի նպատակ չահի տեղական միւսուլման ու քրիստոնեայ տարբերու համակրութիւնը: Գիտնալով թէ թուրք ազդեցութիւններ յաճախ կը գործէին Սուրիա-Լիբանանի մէջ, ի հեճուկս հայ գաղթականներու, Ռամկավար Ազատական Կուսակցութեան ղեկավարները այդ մշտաբարձ գրգռութիւնները վերացնելու համար նպատակայարմար դատեցին տեւականօրէն չփում պահել սուրիացի ազգայնական պետերու հետ, հակառակ որ այդ

սլատճառով մեր ընկերներէն մէկն ալ — ընկեր Սեղբակ Կեպեն-
լեան — հեռացուեցաւ Սուրիայէն եւ մեր թերթերէն «Պաշքար»ին
մուտքն ալ արգիլուեցաւ Սուրիա-Լիբանանէն ներս:

Չանազան առիթներով մենք մօտեցանք նաեւ լիբանանցի
քրիստոնեայ ազգեցիկ ղեմքերու: Անոնցմէ յիշենք Արիտա
սլատրիարքն ու իր փոխանորդ սրբազանը՝ Ֆրանսիզ Մուպա-
րէք: Ասոնք Ֆրանսա քաղաքական առաքելութեան ճամբուն
վրայ կանգ առին Աղեքսանդրիա ժամանակաւորապէս: Օգտուե-
լով այս կարճ դադարէն, ընկեր Յովհաննէս Պօղոսեանին զըլ-
խաւորութեամբ առաքելութիւն մը մասնաւոր տեսակցութիւն
մը ունեցաւ Արիտա սլատրիարքին եւ Ֆրանսիզ Մուպարէք ե-
սլիսիւրպոսին հետ: Այդ ժամադրուած տեսակցութեան ընթաց-
քին մասնաւոր անդրադարձում եղաւ Սուրիա-Լիբանանի հայ
գաղութի կացութեան ու մանաւանդ Սանճաքի հրատապ հար-
ցին: Այս հարցին առնչութեամբ չահերու նոյնութեան սլարա-
զան շեշտելով, իրենցմէ խնդրուեցաւ նկատի ունենալ Սանճաքի
հայութեան բացառիկ պարտական: Պատրիարքն ու իր փոխա-
նորդը հայերու հանդէպ իրենց ամբողջական համակրութիւնը
յայտնելով՝ խոստացան իրենց բարոյական կարելի օժանդակու-
թիւնը տրամադրել Սանճաքի հայութեան դատին, ինչպէս նաեւ
իրենց ասպնջական վերաբերումը՝ ի նպաստ ամբողջ հայ դա-
ղութին:

Իսկ սուրիացի ազգայնականներու պետերուն, ինչպէս
տորթ. Աստուլ, Ռահման Շահպանտարին եւ իր ընկերներուն
հետ մտերմութեան հասնող յարաբերութիւններ մշակուեցան:
Այս տարրերուն հետ մեր գործակցական չփումները իրենց բա-
րերար ազգեցութիւնները ունեցան ի նպաստ Սուրիա-Լիբանանի
հայ գաղութին: Պէյրութի մէջ այդ օրերուն հայերու գէժ որոշ
զրգութիւններ ծայր տուած էին, եւ այս՝ ապահովարար թըր-
քական թելադրութեան տակ: Մեր զիմումին վրայ, Շահպան-
տարը բարերար միջնորդութիւն բերաւ Պէյրութի իսլամ հեղի-
նակութիւններու մօտ եւ արդիւնքը եղաւ զոհացուցիչ:

Նիւ Եորքի մէջ Ճիմ Չանգալեանի առաջնորդութեամբ
տրար-հայկական չփումներ տեղի ունեցան եւ մինչեւ իսկ գոր-
ծակցութեան հիմեր մշակուեցան: Այս նախաձեռնութիւնն ալ ի
նպաստ Սուրիա-Լիբանանի հայ գաղութի շահուն կը կատար-
ւէր: Երջահայեցութիւնը, սակայն, մեզի թելադրեց այդ գոր-
ծակցական շարժումին հրապարակային բնոյթ ու ծաւալ չտալ,
եւ այսպէս ալ հրահանգուեցաւ Ամերիկայի մեր Երջանային
Վարչութեան:

Այսպէս՝ Սանճաքի հարցին մէջ Ռամկաւար Աղասական Կուսակցութեան աշխատանքը պաշտօնական իշխանութիւններու մօտ ինչպէս ըսինք, ընդհանրապէս կը կատարուէր որոշ հանգամանքներով ճանչցուած զանազան հայ կամ օտար մարմիններու, հայաստաստ հաստատութիւններու եւ անձնաւորութեանց միջոցով ու քիչ անգամ միայն կուսակցական պիտի, երբ կարելիութիւն կար: Այս պարագան ո՛չ միայն մեր անձնաօթ մնացած ըլլալու հանգամանքին պարտադրութիւնն էր, այլ նաեւ չըջահայեցութեան թելադրանքը խառնուած էր մեր գործունէութեան: Ծանօթ է թէ ո՛չ մէկ կողմի համար ուրիշի մը ի նպաստ յանձնառութիւն կարելի է ստանձնել՝ առանց փոխադարձ ծառայութեան: Եւ այդ ծառայութիւնն էր որ կը ստակացնէր մեզ: Որովհետեւ այդ ակնկալուած ծառայութիւնը յամենայն դէպս հայկական չահերու համար նպաստաւոր պիտի չըլլար: Ուրիշներ կատարեցին այդ մեղանշական արարքը, մենք չէինք կրնար նոյնը գործել: Այլապէս այդ փորձառութիւնը ունեցանք որ մեր արիւնին մէջ փորձեցին սմանք չահարկութեան տարր փնտռել: Սուրիոյ մէջ հայկական Օճախ մը ստեղծելու առաջարկը նման փորձերէն մէկն էր: Մենք ընդդիմացանք ատոր ալ:

Եւր 1939-ին բացայայտ դարձաւ Ֆրանքօ-թրքական համաձայնութիւնը Սանճաքի ապագայ գոյավիճակին մասին, Ֆրանսական պետական բերաններու նախապէս կատարած անդորրացնող յայտարարութիւններուն խարկանքը ցնցեց հակաթուրք թէզին յարողները: Եւ սակայն վերջնականապէս պարտուած էր սուրիա-հայկական տեսակէտը:

Բայց նախքան այդ աղէտը՝ ամբողջ գործունէութեան ընթացքին մեր նահանջը եղաւ աստիճանական բնկրկումով: Եթէ նահանջեցինք մենք եւ մեր բարեկամներու շրջանակները՝ ծրագրուած չկամութիւններու առջեւ, ջանացինք գոնէ Սանճաքի հարաւային մասը Սուրիոյ կցել տալ: Այդ աշխատանքը հաջիւ ապահովեց Սանճաքին փոքր մաս մը: Մէկ կողմէ մեր եւ համակիր Ֆրանսացիներու օժանդակութեամբ ատրուած պոյքարը, եւ միւս կողմէ սուրիական ճիւղերը եզան յամառ ու երկարատեւ: Պէտք է այստեղ արձանագրել թէ պատմութեան անցած էին Բլեմանտներու ժամանակաշրջանները, եւ այդ մեծ Ֆրանսացիին վերջին օրերուն ու իր յաջորդներուն ստեղծած քաղաքական միջոյութարին մէջ միայն Ֆրանքիին Պոյոններ ու Ատրիէն Արթօներ կարող էին գործել, նահանջող Ֆրանսայի վարկին փլուզումը պատրաստելու համար:

Եւ Ռամկավար Աղատական Կուսակցութիւնը այս գալիք րացայայտ աղէտին սպասումին մէջ ընտկանարար պարտադրուած էր փոխել իր զործունէութեան ուղեգիծը եւ համակերպելով ստեղծուած կացութեան՝ նուազագոյն չարիքով դուրս բերել Սանճաքի հայութիւնը:

Քաղաքական կացութեան այս մեղի համար աննպաստ զարգացումի ընթացքին, Սանճաքէն ներս թուրքերու թափանցումը կը կատարուէր կարաւաններով - սպայ, զինուոր եւ այլապէս երկրամասին թրքական զիմադիծը ուժեղացնող տարբեր - եւ բացի բերդը ներսէն գրաւելու միջոցներէն՝ թուրք զօրամասեր,- ըստ ոմանց գնահատումին՝ մինչեւ 30,000 զինուորներ:- Թրքական սահմանամերձ հողերու վրայ կը հաւաքուէին: Ներքնապէս բռնադրուում կամ արտաքնապէս ներխուժում՝ Սանճաքի հայ տարբը կը զնէին երկընտարանքի տուջեւ: Զինական գիմադրութիւնն թէ արտադաղթ. ո՞ր մէկն էր չարիքի փոքրագոյնը: Ահա՛ մղձաւանջը:

Մեղի յայտնի էր թէ Սանճաքի մէջ Ռամկավար Աղատական Կուսակցութիւնը ունէր կարեւոր թիւ մը ընկերներու, ինչպէս նաեւ կային ոչ-կուսակցական կուռի ընդունակ ուժեղ տարբեր: Անոնց առաջնորդող ղեկավարները կը գիմէին Կուսակցութեան Կեդրոնին՝ հայթայթելու զոնէ Մուսա լեռի ու Քեսապի չրջաններուն պաշտպանութեան միջոցները: Այս մասին ընդարձակ թղթակցութիւններ կատարուեցան: Կեդրոնը հնարաւոր չափով կը հետեւէր միջազգային քաղաքական անցքերուն եւ մասնաւորաբար Սանճաքի վերաբերող Ֆրանքօ-թուրք բանակցութիւններուն: Նկատի ունենալով այդ բանակցութիւններուն մեղի համար չափազանց աննպաստ դարձուածքը, զինական բախումի յաջողութեան բացայայտ անկարելիութիւնը, ինչպէս նաեւ Սուրիա-Լիբանանի մէջ դռնուող հայ գանդուածներու ապահովութեան շատ հաւանական վտանգը՝ որոշեց չստանձնել այդ ահաւոր պատասխանատուութիւնը: Այս մասին կատարուեցաւ խորհրդակցութիւն մը - իրենց զիմումին վրայ - մեղի հետ հաւասարապէս մտահոգուող Հ. Յ. Դաշնակցութեան պիւրին ղեկավարութեան հետ: Այդ խորհրդակցութեան մէջ ճշդութեամբ տեսակէտի նոյնութիւնը: Այսինքն՝ աղիտաւոր հետեւանքներով ի արեւածախնդրութենէ հեռու մնալ:

Այսպէս՝ բացորոշ կը դառնար մեղի համար մեր հետեւելիք ուղղութիւնը: Լքել՝ զինական զիմադրութեան զազափարը եւ աշխատիլ ապահով արտադաղթով մեղմացնել չարիքը: Այս ըմբռնումով որոշուեցաւ Ֆրանսական իշխանութիւններու մօտ

աշխատել նիւթական օգնութեան ու զաղթականութիւն փոխադրելու գինուորական պաշտպանութեան միջոցները ապահովելու: Միեւնոյն ատեն, նիւթական անմիջական օգնութիւն հասցնելու համար շ. Բ. Ը. Միութիւնը մղել իր բարերար գերը կատարելու: Համընթաց ասոնց՝ Ամերիկայի մէջ կազմակերպել «Յօրենքի հանգանակութիւն», կուսակցական ներքին միջոցներով Քեսապի եւ Մուսա լեռի հայերուն պարենաւորումի հոգը հնարաւոր չափով ստանձնել: Այս առաջադրութիւնները մեծ չափով իրագործուեցան: «Յօրենքի հանգանակութիւն»ը Ամերիկայի մէջ սկսաւ կուսակցական նախաձեռնութեամբ եւ զայն համահայկական ընդհանուր շարժում գործնելու մասհողութեամբ, ժամանակ մը յետոյ շարժումը փոխանցուեցաւ շ. Բ. Ը. Միութեան: Այդ հանգանակութեան լայնօրէն մասնակցեցան մեր ընկերները: Կուսակցութիւնը իր կողմէ այ անմիջական մասնակի գումարներ հասցուց ապահովուած աւելը:

Ի՞նչ եղան այս բոլոր ճիգերուն հետեւանքները: Սանճաքէն մի քանի գիւղ Սուրիոյ կցուած, եւ զաղթելու դատապարտուած հայ գանդուածներու համեմատաբար տանելի պայմաններով փոխադրութիւնը դէպի Սուրիա-Լիբանան: Եւ այս՝ կարեւոր չափով յաջողեցաւ Քրանսական օժանդակութեամբ: Պրանսա գտնէ այս չափով իր մարդկայնական պարտաւորութիւնը կատարած նկատեց փոխան իր գահավիժող վարկին ու քաղաքական շահերու կորուստին: Ո՞վ էր այս բոլորին մէջ պարտաւորը: Ո՞վ էր պատասխանատուն:

Ռամկավար Աղատական Կուսակցութիւնը այս հարցին տրամադրեց իր բոլոր կարելիութիւնները եւ շահեցաւ իր բարոյական ու նիւթական ուժերուն համեմատութեամբը միայն (28):

ՌԱՄԿԱՎԱՐ ԱՁԱՏԱԿԱՆ ԵՒ Շ. Յ. ԳԱՇՆԱԿՑԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ
ՄԱՍՆԱԻՐ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

Մօտաւորապէս քսան տարիներ անցած էին Առաջին Աշխարհամարտէն եւ միջազգային քաղաքական կացութիւնը փոխանակ բնականոն դառնալու՝ յարաձուն թափով գահավիժումի կը դիմէր: Բացառապատօրէն նշմարելի էր թէ մարդկութիւնը կը գտնուէր մեծ ցնցումներու նախօրեակին: Այլեւս որոշ էր թէ Հիթլէրի Գերմանիան կը պատրաստէր իր աշխարհամարտ մը: Բնականաբար արտասահմանի հայ ժողովուրդին առաջնորդող

միտքերը այդ մտահոգիչ մթնոլորտին մէջ լուրջ մտաւիտութիւններու ենթարկուած էին*։ Արդէն Սանճաքի հարցին զարգացումը ի վնաս հայ ժողովուրդի շահերուն կը կատարուէր եւ այս վերջինին ընթացքը սպառնալարար ազդուած՝ պէտք էր որ բլլար այդ մոռյլ հեռապատկերէն։ Ֆրանսա եւ Անգլիա, գիմաւորելու համար Արեւմուտքի մէջ գալիք փոթորիկը, ստիպուած եղան կերպով մը ինքնամիտմուտիլ եւ իրենց միջեւ յետպատերազմեան շրջանին զոյացած բնոյդիմամարտութիւնները չափով մը հաշուեյարդարի ենթարկել, գոնէ ժամանակաւորապէս։

Մօտաւոր Արեւելքի մէջ թրքական գործերու կարգադրութիւնը կարեւոր նպաստ մը պիտի բերէր՝ բառնալու չարք մը տնհասկացողութիւններ անգլիաֆրանսական յարաբերութիւններուն մէջ եւ, միեւնոյն ատեն, չեղարացնելու թուրքիոյ հաւանական միջամտութիւնը Գերմանիոյ կողքին։ Վերջինը՝ սխալ կամ չիտակ՝ տեսակէտ մըն էր, սակայն, որ քաղաքական միտքերու մէջ տեղ բռնած էր։ Գոնէ այդպէս բլլալ կը թուէր անոնց համար, որոնք կը հետեւէին այդ ժամանակաշրջանի քաղաքական շարժումներուն։ Պէտք է աշտեղ յիշել թէ անգլիաֆրանսական բնչաքաղց հակամարտութիւններուն շնորհիւ թուրքիա մեծապէս չահած էր։ Օգտուած էր նաեւ նախկին դաշնակիցներու Արեւելքի եւ Արեւմուտքի շրջանակներու հակընդդէմ շարժումներէն, եւ այս՝ ի վնաս հայկական շահերուն։

Այդ օրերուն (1938 Մարտ 16-ին) Գահիրէի մէջ Դաշնակցութեան իրաւասու շրջանակները անհրաժեշտ կը նկատէին խորհրդապահական տեսակցութիւն մը ունենալ՝ առաւելար ազատական իրաւասու գեկաւարութեան հետ։ Այդ առաջադրուած խորհրդակցութիւնը սահմանուած պիտի բլլար հայ ժողովուրդի կենսական շահերու պաշտպանութեան հարցին՝ գալիք հաւանական միջադգային բարդութիւններու կամ միւնչեւ իսկ բախումներու ատեն։

Հողերանական նոյն մտաւիճակին մէջ կը գտնուէր նաեւ Ռամկաւար Ազատական Կուսակցութեան պատասխանատու շրջանակը՝ ի հաշիւ հայ ժողովուրդի շահերու պաշտպանութեան։

Թէեւ այդ պատասխանատու շրջանակին ծանօթ էին մեր մօտիկ անցեալին բոլոր իրադարձութիւնները եւ Հ. Յ. Դաշնակցութեան՝ հայկական շահերու տեսակէտով կատարած բացասական շարժումները, նոյն կուսակցութեան ներքին անցքե-

* Հայաստանի պետական շրջանակներու հետ ոչ մէկ յարաբերութիւն ունէին կողմերը այդ ատեն։

բը, Ս. Վրացեան (Կրուզինեան), Ռուբէն (Միսաք) Տէր Մինաս-
եան, Ռուբէն Դարբինեան (Արտաշէս Զիլինկիրեան) երբորդու-
թեան թրքական կողմնորոշումը, ինչէս նաեւ Պրամէթէի խողո-
վակով (24) Ռուբինոյ հետ կիսապաշտօնական գործակցու-
թիւնը, եւ այս՝ Պոլսէն Վարչաւիտ, Պերլին եւ ալլուր: Թէեւ Հ.
Յ. Դաշնակցութեան իրր կուսակցութիւն քաղաքական գործու-
նէութեան վարքագիծը եղած էր անյարիր եւ արտակարգօրէն
սլատեհապաշտ ու ինքնանպաստակ. թէեւ Հայաստանի հանդէպ
գործով ու խօսքով հետեւողականօրէն թշնամի. թէեւ այս
կուսակցութիւնը ալլապէս ալ գործած էր ծանր մեղանշումներ
հայ ժողովուրդին ու Հայկական Դատին դէմ՝ իր ապերասան,
անշըջահայեաց ու անքաղաքապիտական չարժումներով. բայց
եւ աճնպէս զաղութահայ իրականութեան մէջ ան կր մնար կա-
րեւոր գործօն մը: Կարելի չէր մերժել եղած առաջարկը եւ մի-
նակ թողուլ գայն իր անհակալիւ չարժումներուն մէջ գայիք
չլիթ օրերու ընթացքին. պէտք էր նաեւ, զոնէ չափով մը, վերջ
տալ արտասահմանի հայ զաղութներու անկերպարանութեան,
որ մեծ չափով յառաջացած էր միջ-կուսակցական պայքարնե-
րու հետեւանքով: Ժամանակի չարկադրանքը կը թեւադրէր
ներքին ուժահաւաք մը, զոնէ զիրար ջլատող պայքարներու ժա-
մանակաւոր մեղմացում մը:

Այս եւ բազմաթիւ ուրիշ պատճառներ առաջնորդեցին մեզ
դրական պատասխան տալու եկած առաջարկին: Այդ հանդի-
սութիւն համար Ռամկաւար Ադատական Կուսակցութեան իրա-
ւասու մարմնոյն կողմէ ընտրուեցան ընկերներ Վ. Թէքէեանն ու
մեթր Ծ. Սեյժոնքեանը: Պէտք է այստեղ յիշել թէ զանազան
պատճառներու հետեւանքով, ժամանակի ընթացքին, երկուս-
տեք բանադնացի յանձնառուութիւնը ստանձնեցին ուրիշներ, բայց
միշտ անհատական հանդամներով: Այդ անհատական հանդա-
մանքը երկու կուսակցութիւններու իրաւասու մարմիններու
կողմէ ալ յռելեայն բմրոնուած էր կիսապաշտօնական իմաս-
տով: Այսպէս՝ ժամանակի ընթացքին այդ խորհրդակցութիւն-
ներուն մասնակցած են, պարբրական ժամանակներու տեւողու-
թեամբ, հետեւեալ անձնաւորութիւնները - ռամկաւար ազա-
տականներ՝ Վ. Թէքէեան, իրաւարան Ծ. Սեյժոնքեան, Է. Բա-
րաղեան, Մ. Տամատեան, Պ. Տեփոյեան, իսկ գաշնակցական-
ներ՝ Ստ. Եսայեան, Ռ. Տէր Մինասեան, Գ. Լազեան, բիշկ Ե.
Խաթանատեան, Արշ. Զամայեան: Այդ գրեթէ չարաթական
հանդիպումներուն կր մասնակցէին երկուստեք միշտ ալ եր-
կուական եւ քիչ անդամ երեքական անձեր: Այդ կիսապաշտ-

նական հանդիպումները տեւեցին մօտ եօթը տարիներ:

Առաջարկուած առաջին տեսակցութիւնը տեղի ունեցաւ 1938 Մարտ 29-ին: Կողմերէն ներկայ էին Վ. Թէքէեանը, Շ. Սեւյոճեանը, Ս. Եսայեանը եւ Ռ. Տէր Մինասեանը: Այդ տեսակցութեան ընթացքին կողմերը փոխադարձաբար ծանօթացան շարք մը հարցերու առընչութեամբ իրարու տեսակէտներուն: Միջազգային չփոթ կացութեան մասին, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի շահերու պաշտպանութեան հրամայական պահանջին նկատմամբ, կողմերը համաձայն գտնուեցան՝ հաստատելով այս տեսակէտին ներդաշնակութիւնը թէ՛ արտասահմանի եւ թէ՛ Հայաստանի առընչութեամբ: Այս ընդհանուր հասկացութենէն յետոյ, երկուստեք կատարուեցան հետեւեալ ճշդումները. —

ա. — Թէ այս եւ հետագայ տեսակցութիւնները տեղի կ'ունենան անհատական եւ ո՛չ թէ պաշտօնական հանդամանքով: Այս ճշդումը կատարուած է ռամկավար ազատական բանագնացներու կողմէ, որուն իրենց համաձայնութիւնը յայտնած են զաշնակցականները: Վերջինները հարց տուած են, սակայն, թէ իրապէս ռամկավար ազատական բնոյհանուր պատգամաւորական ժողովը որոշում տուա՞ծ է չորրժակցելու Դաշնակցութեան հետ որեւէ առեւ: Պատասխանուած է թէ արուած որոշումներու տարողութիւնը նոյն կուսակցութեան պատասխանատու շրջանակին կը վերապահուի, եւ թէ ինքնին բաւարար է Դաշնակցութեան համար՝ որ ռամկավար ազատական բնկերները բնոյնած են պոնէ անպաշտօն կերպով իրենց հետ տեսակցիլ:

բ. — Դաշնակցական ներկաները կը յայտարարեն թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը պահանջի թէ Հայաստանի հանդէպ իր ընդգիծադիր չիրքաւորումը հայրենիքի օգտին համար է: Այս յայտարարութենէն յետոյ, երբ գիտելի կը արուի թէ քան տարուան իրենց ընդգիծադրութիւնը ոչ մէկ օգուտ ունեցած է Հայաստանի համար եւ հոն իրերը կ'ընթանան համաձայն վարիչներու կամքին՝ առանց ազդուելու արտասահմանէն, զաշնակցականները կը խոստովանին թէ եղած գիտողութիւնը ճիշդ է:

գ. — Դաշնակցականները համաձայն կը գտնուին նաեւ թէ այդ օրերուն Հայաստանի սահմաններու հարցը ոչ մէկ փոփոխութեան ենթարկուելու կարելիութիւն կը ներկայացնէ եւ նոյնպէս կարելի չէ հետապնդել Արեւմտահայ Դատը՝ պետութիւններու օրուան քաղաքական շահերուն աննպաստ գոտու-

բումբին պատճառաւ: Այս երկու տեսակէտներուն այ համամիտ
դառնում են Ռ. Տէր Մինասեանը եւ Ստեփան Եսայեանը:

դ.- Համամիտ կը գտնուին նաեւ թէ արտասահմանի հայ
ժողովուրդին ազգային ուղին ու դիմադիժը պահելը եւ անոր
դարգացման աշխատանքը կատարելը միակ մասնողութիւնը
պէտք է ըլլայ երկու կուսակցութիւններուն համար:

ե.- Վ. Թէքէեանն ու մեծր Սեւօնքեանը հիմնովին կը
հերքեն զաշխակցականներու այն թիւը ըմբռնումը՝ թէ Ռամկա-
վար: Ազատական Կուսակցութիւնը համայնավարներու ազդե-
ցութեան ենթարկուած է, եւ կը բացատրեն թէ մեր հայրենա-
սիրութիւնը պէտք չէ չփոթուի իրաւակարգի հարցին հետ, ո-
րուն մեր ծրագրով ու կեանքի վերածուած սկզբունքներով
արամացմայէս հակառակ ենք. եւ սակայն մեր հայրենիքին
մէջ ապրողներու ներքին գործերուն չենք ուղած միջամտել:

Կատարուած ճշգումներէն յետոյ երկուստեք համաձայ-
նեցան հայրենանուէր ու ազգանուէր գործունէութեան ուղե-
գծով աշխատանք կատարել: Այս ճշգումներէն ու եզրակացու-
թեանէն յետոյ ռամկավար ազատական բանագնացները դիտել
տուած էին թէ անցեալի փորձերուն մէջ հաստատուած է թէ Հ.
Յ. Դաշնակցութիւնը հետամտած է իր տիրապետութեան են-
թարկել հանրային ու ազգային կեանքը եւ թէ կը չարունակուի
նոյն հետապնդումը արտասահմանի մէջ. բայց մը՝ որ անկարելի
դարձուցած է անվերապահ գործակցութիւն մը երկու կուսակ-
ցութիւններու միջեւ:

Այս տեսակցութեան տարնչութեամբ մեր ընկերները ի-
րենց զեկոյցը տուին օրոտան իրաւաստ մարմինին: Յետ խոր-
հրդակցութեան, որոշուեցաւ չմերժելով հանդերձ նոր հանդի-
սումներու կարելիութիւնն ու օգտակարութիւնը՝ չարժի հա-
մաձայն ընդհանուր պատգամաւորական ժողովներու մէջ պաշ-
տօնապէս որոշուած մեր ուղեգծին: Զեկոյց տուող մեր ընկեր-
ները զաշխակցականներէ բաժնուած էին այն տպաւորութեան
տակ՝ թէ անոնք չունին յստակ ու որոշ քաղաքական գործու-
նէլութեան ծրագիր մը:

Այս պարբերական հանդիպումներէն մէկուն մէջ (1938
Սեպտ. 9) երկուստեք համամիտ գտնուեցան երկու կողմերու
միջեւ համաձայնութիւն մը գոյացնել, որպէսզի ներքին համա-
գործակցութեան կարելիութիւնը ապահովուի եւ ազգը պատ-
րաստ գտնուի արտաքին մէկ ճակատով ներկայանալու անհրա-
ժեշտութեան մը տակ: Այդ ժողովին մէջ շօշափուեցան Հա-
յաստանի, Սանճաքի, Ճեզիրէի հայութեան ապահովութեան,

մամուլի ներդաշնակութեան, ամերիկահայութեան համերաշխութեան հարցերը եւ պատրաստակամութիւն յայտնուեցաւ գործել Հայկական Դատին պաշտպանութեան ու հայ ժողովուրդին ապահովութեան մարզերուն մէջ համախոհարար՝ անհամաձայնութեան պարագային երկու կուսակցութիւններու կողմէ ընտրուած իրաւարար մարմնի մը յանձնելով յուղուած հարցին լուծումը:

Ռամկավար ապստական պատասխանատու մարմինը, յետ խորհրդակցութեան, սկզբունքով համաձայն դանուեցաւ որ բնկերներ թէքէեանը, Բարազեանը եւ Սեւօնքեանը անհատական հանգամանքով չարունակեն խօսակցութիւնները եւ վերջնականապէս իրենց դաշնակցական խօսակիցներուն պարզեն կուսակցութեանս անվերածելի տեսակէտները յարուցուած հարցերու առնչութեամբ:

1938 Սեպտ. 22, 25, 28-ի հանդիպումներու ընթացքին կողմերը ծանօթացան իրարու վերջնական տեսակէտներուն եւ որոշեցին համաձայնագիր մը մշակել եւ կողմերու վերին մարմիններու ենթարկել ու անոնց հաւանութիւնը ստանալէ յետոյ ստորագրել՝ զարձեալ անհատական հանդամանքով: Այդպէս ալ եղաւ:

Բնականարար կուսակցականօրէն պաշտօնական արժէք ներկայացնելու համար մշակուած նախագիծը՝ իբր լանակցութեան հիմ ապագայ յիստատար համաձայնութեան մը՝ պէտք էր որ կողմերու իրաւասու մարմինները ենթարկէին իրենց չորջանակներու հաւանութեան:

Հոս կը զննեք սկզբնական նախագիծին պատճէնը:

ՊԱՏՃԷՆ

Ստորագրեալները, անհատական մախտնոութեամբ բայց իրենց վերին մարմիններուն անպաշտօն գիտութեամբ, հաւաքուեցան ուսումնասիրելու համար Ռամկ. Ազատ. կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ բնդիանուր համաձայնութեան մը պայմանները եւ յանգեցան հետեւեալ եզրակացութիւններուն.-

1.- Ազգին ֆիզիքական գոյութեան մտահոգութիւնը, գերիվեր ուրիշ ամէն նկատումներէ. ու այդ գոյութեան ապահովութեամբ ազգին քաղաքական իտէալներուն եւ պատմական իրաւունքներուն հետապնդութիւնը՝ այլեւս կենսական ան-

յետաձգելի պարտականութեան առջեւ կը դնեն Հայ փաղափա-
կան կուսակցութիւնները համախոհաբար գործելու, մանաւանդ
ներկայ համաշխարհային վտանգաւոր կացութեան մէջ:

2.- Կողմերը կ'ընդունին թէ՛

ա.- Ոչ մէկ հայ փաղափական կուսակցութիւն, առան-
ձինն, ի վիճակի է հայ ազգին փակատագիրը վարե-
լու:

բ.- Արտասահմանի մէջ, Հ. Յ. Դաշնակցութիւնն եւ
Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը այն երկու գլխաւոր
փաղափական գործօններն են՝ որոնց ուժերուն հա-
մախօրհմով եւ հաւասար հաւասարի համերաշխ
գործունէութեամբ միայն, հիմնական աշխատանք
կարելի է կատարել, հետապնդելու համար այս հա-
մաձայնագրին մէջ յիշուած նպատակները:

գ.- Տեւական համագործակցութիւն մը կ'ենթադրէ ոչ
միայն համաձայնութիւնն նպատակի եւ այդ նպատա-
կին առաջնորդող հիմնական սկզբունքներու եւ ուղ-
ղութեանց մասին, այլ նաեւ զանոնք իրագործումի
հասցնող միջոցներուն շուրջ:

Կողմերը, ուրեմն, հանդիսաւորապէս կը յայտարա-
րեն թէ, ներկայ համաձայնութեան տեւողութեան.
անոր առարկայ եղող եւ հետագային յիշուած սկզբ-
բունքի եւ ուղղութեան կէտերէն զատ՝ անոնց կի-
րարկումին միջոցներուն մասին եւս պարտաւոր են
իրենց միջեւ նախապէս համախոհութիւն գոյացնե-
լու:

Մեկնելով այս յայտարարութենէն, կողմերը այժմէն
համաձայն են ազգը շահագրգռող հետեւեալ հարցերուն շուրջ.-

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ,- Ներկայ Հայաստանը, ան-
կախ հոն տիրող իրաւակարգէն. կը նկատեն հայութեան ազգա-
յին գոյութեան խաթիւսը եւ փաղափական ապագային հիմնա-
քարը:

Անոր պահպանութիւնը, բարգաւաճումն ու զօրացումը
ազգային նուիրական պարտքն է ոեւէ հայ փաղափական կուսակ-
ցութեան:

Կը համարեն անընդունելի՝ ուղղակի կամ անուղղակի
միջոցներով ոեւէ փորձ բռնի ուժով տապալելու այդ երկրի ըէ-
ծիմը կամ ներքին խռովութիւններ կազմակերպելու:

Կ'ընդունին զաղուրահայտութիւնը Հայաստանով խան-

դավառել եւ գայն մղել Հայաստանի հանդէպ բարոյական թէ նիւթական ամէն օժանդակութեան, ինչ որ չի կաշկանդեր, այլ սուելի եւս կ'արդարացնէ անոր բէժիմին եւ կառավարութեան արարքներուն մասին իրական տուիքներու վրայ հիմնուած ֆննադատութեան ազատութիւնը, զգուշանալով միայն որ այդ ֆննադատութիւնները ուժացումի չառաջնորդեն արտասահմանի հայութիւնը, պաղեցնելով անոր զգացումները հանդէպ Հայաստանի:

Կողմերը այժմէն համաձայն են որ եթէ, իրենց կամէն եւ փափաքներէն անկախ պատճառներով եւ դէպքերով, պատահի որ ռուսական զօրքերը փաշուին Հայաստանէն եւ տեղւոյն հայ կառավարութեան ձեռնքալիութիւնով կամ տապալումով հայ նոր կառավարութեան մը կազմութեան հարցին առջեւ գտնուին, *քօալիսիօնի* հիման վրայ է որ լուծում պիտի տան անոր՝ մասնակցութեամբ թէ՛ երկու կողմերուն եւ թէ՛ ձեռնհաս ուրիշ ուժերու, հաւատարիմ մնալով միշտ սոյն համաձայնութեան հիմը կազմող համերաշխական ոգիին եւ սկզբունքներուն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ.- Տրուած ըլլալով Հայաստանի դիրքը եւ ներկայ փաղափական պայմանները, կողմերը անհրաժեշտ կը գտնեն Հայկ. Պետութեան կապը հորի. Միութեան հետ, իբրեւ պայման իր ապահովութեան եւ խաղաղ զարգացման:

Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը կը մնայ, ուրեմն, իր ցարդ հետեւած փաղափական ուղեգիծին վրայ հանդէպ հորի. Միութեան, ջանալով արժեցնել իր այս դիրքը յօգուտ հայ ժողովուրդին արդար պահանջներուն:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր կողմէն, կը շարունակէ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ հայ ժողովուրդը հեռու պահել հորի. Հ. Միութիւնը բոնի միջոցներով փայլայելու կամ տապալելու որեւէ փորձի մը մասնակցութենէ: Ի նախատեսութիւն սակայն հորի. Հ. Միութեան ինքնին փայլայման, ներքին յեղափոխութեան մը կամ արտաքին պատերազմի մը հետեւանքով, ինչպէս եղաւ Զարական Ռուսիոյ պարագան, 1917-ին, Հ. Յ. Դաշնակցութիւնը օգտակար կը համարէ կապ եւ յարաբերութիւն հաստատել հակախորհրդային ուժերու հետ, հորի. Հ. Միութեան փլուզումի պարագային Հայաստանը եւ հայ ժողովուրդը այդ ուժերու թշնամանքէն զերծ պահելու միակ մտահոգութեամբ:

Կողմերը համաձայն են այս երկու փաղափական կեց-

ւածֆներուն տարբերութիւնը վէներու առարկայ չդարձնելու իրենց միջեւ:

ԿՈՎԿԱՍ.- Բարեկամական յարաբերութիւններ եւ մերձեցումի փաղափականութիւն կովկասեան հարեւան բոլոր ժողովուրդներուն եւ ցեղերուն հետ եւ պատշանեցում անոնց եւ մեր փոխադարձ շահերուն:

ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՆԴԷՊ.- Թուրքիոյ հանդէպ կողմերը կը մնան հայութեան իրաւունքներուն պահանջատէրի դիրքին մէջ: Այդ պահանջներու սահմանները, պայմաններու ներած չափովը, կ'որոշուին երկու կողմերու փոխադարձ հասկացողութեամբ:

Կողմերը, առանձինն կամ միասին, համաձայնաբար կը գործադրեն այն բոլոր անհրաժեշտ միջոցները որոնք պիտի ստիպէին Թուրքիան՝ գոհացնելու այդ պահանջներուն գէթ մուազագոյնները, զգուշանալով սակայն Թուրքիոյ Հայոց փիլիքական գոյութիւնը վտանգի ենթարկելէ:

Կ Ի Լ Ի Կ Ի Ա.- Եթէ փաղափական դէպքերու բերումով հնարաւորութիւն երեւայ, աշխատիլ կ'իլիկիլոյ մէջ վերահաստատելու Հայկական օմալս մը՝ առաջին առօրի հոն փոխադրելու համար Թուրքիոյ եւ Սուրիոյ միջեւ եւ այլուր բնակող հայ զանգուածները:

ՍԱՆՃԱԳ.- Կողմերը համաձայն են Սաննագի հայութեան գաղթը չփաջալերելու, որքան ատեն որ ներկայ գոյավիճակը կը տեսէ եւ աջակցելու այդ շրջանին մէջ հայ եւ քուրք բնականոն յարաբերութիւններու հաստատման:

ՃԷԶԻՐԷ ԵՒ ՀԱԼԷՊ.- Զփաջալերել առ այժմ, ոեւէ արտագաղթ. եւ հայ-արաբ յարաբերութիւնները աւելի եւս սերտացնելու աշխատիլ:

Այս երեք շրջաններուն մէջ չանտեսել ինքնապաշտպանութեան գործը:

ԱՐԱՐ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՆԴԷՊ.- Կողմերը համաձայն են, փոխադարձ աջակցութեան հիման վրայ, բարեկամական յարաբերութիւններ պահելու ամէն տեղ արաբ տարբերուն հետ եւ այդ կերպով նպաստելու արաբ աշխարհի սահմաններուն մէջ

ապրող հոծ հայութեան փրկիական, տնտեսական եւ մշակութային գոյութեան ապահովութեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԷՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐՔԻ.— Կողմերը համաձայն են Պարսկաստանի հանդէպ շարունակելու հայ ժողովուրդի աւանդական բարեկամութիւնը, հակառակ ներկայիս հոն ապրող հայութեան կրած կաշկանդումներուն եւ աշխատիլ այդ բարեկամութեամբ գանոնք մեղմացնելու:

**

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՆՐԱՊԷՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐՔԻ.— Կողմերը, հիմնուելով այն իրականութեան վրայ որ Հայաստանեայց Եկեղեցին ազգային հաւաքականութեան ամենակարեւոր ազդակներէն մէկը կը հանդիսանայ եւ մասնաւորապէս արտասահմանի տարագիր հայութեան ազգապահպանման տեսակէտով կենսական դեր կը կատարէ, յանձնառու կ'ըլլան Եկեղեցին իր ազգային պայքարներուն քաւոր չղարձնելու եւ ընդդիմանալու այդ կարգի ամէն փորձի դէմ հոսանքի կողմէ:

Կողմերը համաձայն են որ Մայր-Արքային մնայ էջմիածին եւ յարգութիւններ հեղինակութիւնը՝ զգուշանալով անոր դէմ ամէն յարձակումէ:

Մայր-Արքային նոր Գահակալի ընտրութեան պարագային, երբ Գահակալին անձնաւորութիւնը խնդրոյ առարկայ ըլլայ կողմերէն մէկուն համար, երկու կողմերը համախորհուրդ պիտի ճշդեն իրենց դիրքը անոր հանդէպ, նկատի առնելով վերեւ յայտնուած մտահոգութիւնները եւ Արտասահմանի կրօն. իշխանութեանց վերաբերմունքը:

ԱԶԳ. ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Կողմերը համաձայն են պայքարներու քաւոր չղարձնելու գաղութահայ ազգ. վարչութիւնները, որոնց աշխատանքը տեղական հանգամանքներէն եւ մշակութային ու մատակարարական է միայն, եւ ընդդիմանալու այդ կարգի ամէն փորձի դէմ հոսանքի կողմէ:

Առ այդ, մարմիններու ընտրութիւնները պիտի կատարուին, մասնակցութեամբ երկու կողմերու, հոն ուր կան, հաւասար թուով ներկայացուցիչներուն. եւ իրենց համաձայնաբար նշանակելիք անկուսակցական եւ ալլ տարբերուն:

ԱՄԵՐԻԿԱ.— Կողմերը համաձայն են որ Ամերիկայի ար-

տասովոր կացութիւնը շուտով վերջ գտնէ եւ առ այս պիտի քննեն կարելի՞նք՝ երբ իրենք Ամերիկայի մարմիններէն ստանան պէտք եղած լուսաբանութիւնները, գտնելով որ այդ կացութեան բնականոնի վերածումը անհրաժեշտ է այս համաճայնութեան արդիւնաւորման համար:

ՄԱՅԻՍ 28-ի, ՆՈՅԵՄԲԵՐ 29-ի եւ ԴԻՕՇԱԿԻ ՀԱՐՅԵՐ.- Կողմերը կը պահեն իրենց փոխադարձ տեսակէտները եւ վերաբերումը այս հարցերուն շուրջ, բայց ընդունելով ներկայ գոյավիճակը, համաձայն են զգուշանալու վէճերէ եւ կոխներէ:

Ի մասնաւորի դրօշակի հարցին վերաբերմամբ, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը յայտարարէ թէ կ'ընդունի չպարտադրել զայն զազուրկներուն եւ Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնն ալ կ'ընդունի վէճի առարկայ չդարձնել զայն:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ.- Սոյն համաճայնութեան տեսողութեան ընթացքին զանազան վայրերու մէջ ծագելիք ռեւէ խնդիր կամ վէճ կ'ենթարկուի տեղւոյն մէջ այդ առթիւ կազմուած միջ-կուսակցական մարմինի մը իրաւախօսական վնիռին:

Կողմերը համաձայն են կազմելու միջ-կուսակցական մնայուն վերին մարմին մը որ պաշտօն պիտի ունենայ.-

1.- Հսկել համաճայնութեան իրագործման,

2.- Փոխանակել տեղեկութիւններ,

3.- Հասկացողութիւն կայացնել չնախատեսուած հարցերու շուրջ,

4.- Լուծել, ի հարկին, տեղական միջ-կուսակցական մարմիններուն անհամաճայնութիւնները:

Միջ-կուսակցական վերին մարմինը երբ անհամաճայն գտնուի ռեւէ խնդրի շուրջ պիտի գործէ հետեւեալ կերպով.-

Բոլոր այն խնդիրները որոնք երկրորդական նշանակութիւն ունին, ինչպէս նաեւ միջ-կուսակցական տեղական մարմիններէ եկած խնդիրները որոնք չեն լուծուիր իր կողմէ, գաւոնք պիտի ենթարկէ իրաւարարի մը վնիռին, որ այլեւս անառարկելի պիտի ըլլայ: Իրաւարար պիտի ըլլայ, փոխն ի փոխ, դաշնակցական մը եւ ռամկավար ազատական մը:

Իսկ բոլոր այն խնդիրները որոնք ազգին գերագոյն շահերուն կը վերաբերին, ի մասնաւորի հոն ուր բնդունուած է երկու կողմերուն անջատ եւ իրարմէ տարբեր գործունէութեան պէտք, եւ որոնց շուրջ միջ-կուսակցական վերին մարմինը չէ կրցած հասկացողութեան մը յանգիլ, կողմերը համաձայն են առկա

պահելու զանոնք, առանց որ այդ անհամաձայնութիւնը առանձինն գործունէութեան կամ խզումի պատճառ նկատուի:

ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆ.- Ներկայ համաձայնութեան տեւողութիւնը - 3 - տարի է, վաւերացման քուականէն սկսեալ, որմէ ետք կողմերը ազատ են զայն վերաքննութեան ենթարկելու կամ նոյնութեամբ շարունակելու:

Այդ տեւողութեան ընթացքին չնախատեսուած ոեւէ մէկ հարց որ առնչութիւն ունի կայացած համաձայնութեան կէտերուն միայն հետ, կողմերուն հասկացողութեան առարկայ պիտի ըլլայ:

Ներկայ համաձայնութիւնը չպիտի հրատարակուի: Իր աստիճանական կիրարկումն է որ ժողովուրդին պիտի յայտնէ անոր գոյութիւնը:

Ստորագրեալները, մշակելով ներկայ համաձայնագիրը իբրեւ ընդունելի, զայն պիտի ենթարկեն իրենց կուսակցութեանց որոնց կողմէ նոյնութեամբ կամ մասնակի փոփոխութիւններով որդեգրումի պարագային, անիկա առարկայ պիտի դառնայ, առ առաւել մինչեւ 31 Դեկտ. 1938, վաւերացման քուլքերու փոխանակման եւ այդ քուականէն ի գորտ պիտի ըլլայ:

Մինչ այդ ստորագրեալները կը խոստանան հրաւիրել ուշադրութիւնը իրենց կուսակցութեանց՝ օգտակարութեանը վրայ այժմէն դադար տալու իրենց միջեւ կուսակցական պայքարներու:

Եթէ այս համաձայնութիւնը չվաւերացուի, անիկա չեղեալ պիտի նկատուի եւ անոր նկատմամբ ոեւէ արտայայտութիւն չպիտի ըլլայ:

Ստորագրուած չորս օրինակով, երկու օրինակ իւրաքանչիւր կողմի համար:

Գահիրէ, Հինգշաբթի, 29 Սեպտեմբեր 1938-ին:

Ա. ԶԱՄԱՆԵԱՆ
ԵՐՈՒԱՆԴԻ ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆԱՆ
Է. ԲԱԲԱԶԵԱՆ
ՍԵԻՅՕՆԲԵԱՆ Շ.

Իբր լրացուցիչ բացատրութիւն ստորեւ կու տանք կեղբորնական վարչութեան թիւ 6 չըջարեալներ:

Թիւ 181

Գահիրէ, 20 Հոկ. 1938

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Շրջ. վարչութեանց սիրելի ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութիւնը վերջերս ուզեց գիտնալ թէ մեր կուսակցութեան հետ հասկացողութիւն մը կարելի՞ է երբ ազգովին միջազգային վտանգաւոր կացութեան մը առջեւ կը գրտնուինք, եւ եթէ այո, ի՞նչ պայմաններու շուրջ:

Պիտի պարզենք նախ թէ այդ փորձը ինչպէս տեղի ունեցաւ ու ինչ հետեւանք ունեցաւ, ու ապա, յայտնելով մեր տեսակէտները, պիտի դիմենք ձեր կարծիքին:

Պարզ է թէ այս մասին խիստ խորհրդապահաբար պէտք է շարժիլ եւ զգուշանալ ռեւէ անզաղտնապահութենէ:

Իմացաք գուցէ թէ այս ամառ, Գահիրէի մէջ, Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներու ընթացքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը գումարեց իր ընդհանուր պատգմ. ժողովը որուն կը մասնակցէին բազմաթիւ պատգամաւորներ Ամերիկայէն, Ֆրանսայէն, Պալէստինէն, Սուրիայէն, Իրաքէն, Պարսկաստանէն եւ որուն ակնարկեց «Արեւ» իր 8 եւ 10 Օգոստոսի երկու խմբագրականներով:

Արդ ժողովի աւարտումին էր որ տեղւոյն դաշնակցական ազգ. երեսփոխան Տ. Ե. Խաթանասեանի դիմումներուն վրայ անհատական տեսակցութեան մը համար հանդիպում մը տեղի ունեցաւ, Շաբաթ 17 Սեպ.ին Տոքթ. Խաթանասեանի, Ա. Զամալխանի, «Նոր Օր»ի տնօրէն եւ խմբագրապետ Գ. Լազեանի եւ ընկերներ վ. Թէֆէեանի եւ Մեքր Շ. Սեւջոնֆեանի միջեւ:

Դաշնակցական երեք խօսակիցները մեր ընկերներուն միաբերան յայտնած են ջերմ վափաքը բոլոր դաշնակցական պատգամաւորներուն, համաձայնութեան գալու Ռամկավար Ազատական Կուսակցութեան հետ, յանուն ազգին գերագոյն շահերուն, մանաւանդ ներկայի միջազգային սպառնալից դէպքերուն առթիւ որոնք համախմբումի եւ համագործակցութեան պէտքը հրամայական կը դարձնէին:

Կեդրոնս արտօնեց ընկերներ վ. Թէֆէեանը եւ Շաւարշ Սեւջոնֆեանը որպէսզի իրենց անհատական նախաձեռնութեամբ

շարունակեն Դաշնակցութենէն քաղել ամէն լուսաբանութիւն եւ տեսնել թէ ինչ նմանութիւններ եւ տարբերութիւններ կան Դաշնակցութեան եւ մեր կուսակցութեան տեսակէտներուն միջեւ:

Տեսակցութիւնները, ուրեմն, ճշդուած սահմանին մէջ, շարունակուեցան ընկեր Մեքր Շ. Սեւջոնֆեանի գրասենեակին մէջ Տոքթ. Ե. Խաթանասեանի եւ Ա. Զամալեանի - Գ. Լազեան մեկնած ըլլալով Աթէնք - ու մեր ընկերներուն միջեւ, որոնց միացաւ նաեւ ընկեր Էօծէն Բաբագեան:

Ստորեւ պիտի տանք ամփոփումը այդ տեսակցութեանց ընթացքին շօշափուած հարցերուն եւ ստացուած եզրակացութեանց, որպէսզի ըստ այնմ կարենաք գաղափար մը կազմել խնդրոյն մասին:

Այդ ամփոփումին անցնելէ առաջ, աւելցնենք որ անցեալ Յուլիսին մէջ տեղւոյն դաշնակցական առաջնորդող դէմքերէն ունեւ արդէն փափաք յայտնած էին մէկ նակատ կազմելու Սանֆազի դէպքերուն առթիւ Սուրիահայոցութեան բռնելիք դիրքին մասին եւ մոտերու եւ տեղեկութիւններու փոխանակում մը ունեցած էին ընկերներ Միհրան Տամատեանի եւ Վ. Թէֆէեանի հետ, առաջնոյն բնակարանին մէջ, առանց սակայն դրական հետեւանքի մը:



Ահա, այժմ, ամփոփումը վերջերս տեղի ունեցած խօսակցութեանց, որոնք մեկնեցան այն կէտէն թէ Դաշնակցութիւնը պատրաստ է ստորագրելու համաձայնագիր մը ուր ճշդուած պիտի ըլլայ իւրաքանչիւր հարցի մասին երկուստեք գոյանալիք հասկացողութիւնը: Ըստ այդ խօսակցութեանց, հետեւեալները պիտի ըլլան հիմերը ապագայ հասկացողութեան:

Համագործակցութիւնը կը հաստատուի ազգին փիզիքական գոյութեան ապահովութեամբ, անոր բաղաժանան իտէալներուն եւ պատմական իրաւունքներուն հետապնդման նպատակին համար:

Երկու կուսակցութիւնները կ'ընդունին թէ իրենց ուժերուն համախմբումով է որ այս մասին հիմնական աշխատանք կարելի է տանիլ եւ թէ գործակցութիւնը կը հասկնան այդ նպատակներուն իրագործման միջոցներուն շուրջ միշտ համաձայն գտնուելու եւ ըստ այնմ շարժելու պայմանաւ:

Ներկայ Հայաստանը, անկախ իր իրաւակարգէն, կը նկատուի հայութեան ազգային գոյութեան խաբիսիս եւ քաղաքական

ապագային հիմնաքար, հետեւաբար յանձնառու կ'ըլլան ուղղակի կամ անուղղակի ոեւէ փորձ չկատարել տապալելու երկրին բէժիմը կամ ներքին խռովութիւններ կազմակերպելու: Անոնք կ'ընդունին քէ գաղութահայութիւնը պէտք ունի Հայաստանով խանդավառուելու, քէ պէտք է գայն մղել բարոյական ու նիւթական օժանդակութիւն ընձեռելու Հայաստանի, եւ քէ անոր հանդէպ իրենց բնադատութեան ազատութիւնը պիտի կիրարկեն միայն այն չափով որ ուժացումի չառաջնորդէ արտասահմանի հայութիւնը, պաղեցնելով անոր զգացումները հանդէպ Հայաստանի: Համաձայն են որ եքէ պատահի որ ռուսական գործը դէպքերու բերումով քաշուի Հայաստանէն եւ հայ կառավարութիւնն ալ ձեռնքալի ըլլայ, իրենց եւ ուրիշ տարրերու փախիստնի հիման վրայ է որ պիտի կազմեն նոր կառավարութիւնը:

Խորհրդային Միութեան հանդէպ եւս յանձնառու կ'ըլլան չմասնակցիլ խորհ. Միութիւնը բռնի միջոցներով քայքայելու կամ տապալելու ոեւէ փորձի, գիտնալով որ խորհ. Հայաստանի ապահովութիւնը ներկայիս Խ. Միութեան հետ իր ունեցած կապին մէջ է: Դաշնակցութիւնը, սակայն, ազատ պիտի ըլլայ յարաբերութիւն պահելու հակախորհրդային ուժերու հետ ի մասնաւորի կովկասեան տարագիր կուսակցութիւններու, Գերմանիոյ եւ Իտալիոյ հետ, որպէսզի գերծ պահէ Հայաստանը եւ հայ ժողովուրդը այդ ուժերու քշմամանքէն, եքէ պատահի որ ներքին կամ արտաքին պատմառններով Խ. Միութիւնը ինքնին տապալի, ինչպէս եղաւ ցարական Ռուսիան, 1917-ին:

Կովկասեան հարեւան ժողովուրդներուն հետ բարեկամական յարաբերութիւններ եւ պատշանեցում անոնց եւ մեր փոխադարձ շահերուն:

Թուրքիոյ հանդէպ կռիւներ միշտ համաձայնաբար պիտի շարժին, քէ' մեր պահանջներուն շուրջ եւ քէ այդ պահանջներուն իրականացման հասնելու միջոցներուն շուրջ:

Սանազի մէջ արտագաղթը չպիտի քաջալերուի, ցորեան ներկայ պայմանները կը շարունակուին: Նմանապէս ձեգիրէի եւ Հալէպի մէջ: Այս բոլոր շրջաններուն մէջ ալ պիտի աշխատուի բնականոն յարաբերութիւնները պահել տեղացի տարրերուն հետ եւ ի հարկին դիմել ինքնապաշտպանութեան միջոցներու:

Լողմերը ի նկատի պիտի ունենան, համաձայն քաղաքական դէպքերու կարելիութեանց, հայկական օճալի մը հաստատման գործը կիլիկիոյ մէջ, հոն փոխադրելու համար Թուրքիոյ, Սուրիոյ եւ այլ երկիրներու մէջ բնակող հայ զանգուածները:

Արաք աշխարհին հետ բարեկամական կեցումաճք:

Պարսկաստանի հանդէպ նմանապէս:

Դալով ներքին հարցերուն, կողմերը յանձնառու կ'ըլլան հայ եկեղեցին եւ ազգ. վարչութիւնները քաղաքական պայքարներու թատր չդարձնելու: Յարգանք հանդէպ էջմիածնի եւ զգուշաւորութիւն ամէն յարձակումի անոր դէմ: Ազգ. մարմիններու ընտրութեանց մէջ մասնակցութիւն երկու կուսակցութեանց ներկայացուցիչներուն, հաւասար չափով, եւ երկու կողմերու համաձայնութեամբ նշանակուելիք անկուսակցական եւ այլ տարրերու շուրջ, պահելով այդ մարմինները լոկ տեղական, մշակութային եւ մատակարարական գործի մէջ: Մասնաւոր կերպով նկատի առած ենք Ամերիկայի եկեղեցական խնդիրը, զայն կարգադրելու համար համաձայն Ամերիկայի մեր Շրջանակին տալիք տեղեկութիւններուն եւ Դաշնակցութեան հոն ղրկելիք գիշողութեան հրահանգներուն: Մայիս 18-ի, Նոյեմբերի 29-ի եւ դրօշակի հարցերուն շուրջ իւրաքանչիւր կողմ կը պահէ իր տեսակէտը, բայց կողմերը պիտի զուշանան այդ մասին նոր վէճերէ, եւ ի մասնաւորի դրօշակի նկատմամբ Դաշնակցութիւնը կ'ընդունի զայն չպարտադրել գաղութներուն:

Մեր ընկերները առաջարկած են որ եթէ համաձայնութիւնը գոյանայ, անոր սահմանուի երեք տարուան տեւողութիւն մը, որու ընթացքին կողմերը յանձնառու կ'ըլլան ամէն խնդիր համախորհուրդ լուծելու եւ եթէ կարելի չըլլայ ու խնդիրը առնչութիւն ունենայ ազգին գերագոյն շահերուն հետ, կողմերը համաձայն ըլլան առկալս պահելու զայն առանց որ այդ պարագան առանձին գործունէութեան կամ խզումի պատճառ տայ: Առ այդ առաջարկած են նաեւ որ տեղական բնոյթ կրող վէճերը յանձնուին նոյն վայրին մէջ կազմուելիք միջկուսակցական մարմինի մը իրաւախօհութեան վնիտին, իսկ միջկուսակցական կեդրոնական վերին մարմին մը պաշտօն ունենայ, համաձայնութեան տեւողութեան, հսկելու համաձայնութեան իրականացման վրայ: Երեք տարուան տեւողութենէն յետոյ կողմերը ազատ են խզելու կամ շարունակելու զայն, նոյնութեամբ, կամ վերաֆնութենէ մը վերջ: Դաշնակցականները ընդունած են նաեւ մեր բնկերներուն այս առաջարկները:

Համաձայնութիւնը չպիտի հրատարակուի: Իր աստիճանական կիրարկումն է որ ժողովուրդին զգալ պիտի տայ անոր գոյութիւնը:



Այս ամփոփումը, սիրելի ընկերներ, կը յայտնէ ձեզի թէ

Դաշնակցութիւնը որ աստիճան մերձեցում ցոյց կու տայ մեզի: Վերեւ ճշդուած սկզբունքներն ու ուղղութիւնը մեր կուսակցութեանն եղած են տարիներէ ի վեր: Ճիշդ է թէ Դաշնակցութեան կու տանք ազատութիւնը տեսականօրէն միանալու հակախորհրդային տարրերու, բայց նախ գործնական տեսէ՛ք քայլ արգիլուած է, երկրորդ Դաշնակցութեան այդ ընթացքը մեծ ուժ մը չի բերեր հակախորհրդային ճակատին, երրորդ ճշմարտութեան բաժին մը կայ սա տեսակէտին մէջ. որ Ռուսիոյ մանաւանդ ներկայ ներքին կացութեան եւ Գերմանիոյ, Իտալիոյ ու Ճապոնի գորեղ դիրքին ի տես, օգտակար է մեր մէջ ալ գտնուիլը հոսանքի մը որ յարաբերութիւններ պահէ այդ կողմին հետ, ի հարկին զայն օգտագործելու համար յօգուտ ազգին, մինչ մեր կուսակցութիւնը կը շարունակէ մնալ խորհրդային երկիրներու կողմը նոյն նպատակաւ:

Այս պայմաններուն մէջ երկու հարցումներ կը ներկայանան մեզի. —

1.— Դաշնակցութիւնը անկե՞ղծ է իր այսօրուան մերձեցումի փորձին մէջ:

2.— Համաձայնութիւն մը կ'ենե՞լո՞ւ եմք, թէ ոչ, Դաշնակցութեան հետ:

Այդ հարցումները կեղք. Վարչութիւնս ինքզինքին ուղղելով եւ անոնց պատասխանը տալով, զանոնք որոշեց ենթարկել նաեւ բոլոր Շրջ. Վարչութեանց, որպէսզի ընդհանուր իրարահասկացողութեամբ որդեգրենք եւ արդիւնաւորապէս իրագործենք ազգօգուտ ձեռնարկ մը:

Դաշնակցականները եւ մեր ընկերները համաձայն են, արդարեւ, որ Հինգշաբթի 29 Սեպտեմբերին աւարտած իրենց անհատական տեսակցութեանց եզրակացութիւնները ենթարկեն իրենց կեդրոնական մարմիններուն որոնք, եթէ ուզեն հետեւանք տալ անոնց, պարտին մինչեւ 31 Դեկ. 1938 կ'ենել համաձայնագիր մը եւ ձեռնարկել անոր գործադրութեան, այլապէս խօսակցութիւնները պիտի անհետեւանք մնան եւ չեղեալ պիտի նկատուին, կողմերը պարտաւոր ըլլալով այդ մասին տեսէ՛ք հրապարակային ակնարկութիւն չընել:

Անցնիմք ուրեմն հարցումներուն:

1.— *Դաշնակցութիւնը անկե՞ղծ է իր այսօրուան մերձեցումի փորձին մէջ:*

Նախ վերջիշենք որ Դաշնակցութիւնը 1930-31-ին ալ փորձ մը կատարած է նոր համաձայնութեան մը զայլու Ռաւկ. Ազատ. կուսակցութեան հետ եւ այդ ատեն, կեդրոնի որոշումով, ընկեր-

ներ Հրաչ Երուանդ եւ Արտակ Դարբինեան կատարած են բանակ-
ցութիւններ եւ յանգած են նոյնպէս կարգ մը գրաւոր բանաձե-
ւումներու։ Այդ բանակցութիւնները անհետեւանք են մնացած
ըլլալ որովհետեւ, մեր Շրջանակները պատիւաւոր ունեցած են
այդ տարիներուն դէմ գտնուելու նման համաձայնութեան մը,
ըլլալ որովհետեւ դաշնակցական մամուլի կեցուածքը անվստա-
հութիւն ներշնչած է համաձայնութեան մասին։

Այդ փորձին ձախողանքին վրայ է որ Դաշնակցութիւնը
հետգիտէ նետուեցաւ այն ծայրայեղութեանց մէջ որոնք արիւ-
նեցին արտասահմանի հայութեան սիրտը այդ քուսկանէն աս-
դին։ Մատուցութիւններ, կոնիւնէր, մենատիրական բուռն փորձեր,
հակաՀայաստանեան մոլեգին կեցուածք, եղբայրասպան ռմիր-
ներ ու Ղեւոնդ Դուրեան Սրբազանի նահատակումը ի Նիւ Եորք
24 Դեկ. 1933-ին, յսւ սրբապիղծ արարքին յարուցած յուզումն
ու փոքորիկը գաղութներու մէջ եւ անոնց յաջորդող ատելավառ
կիրքերը որոնք հայր հայուն թշնամի դարձուցին ու եկեղեցին
իսկ բաժնեցին Ամերիկայի մէջ։ Ահա պատկերը գաղութահայու-
րեան 1930-1931-էն ցայսօր։

Դաշնակցութիւնը չարաչար պարտուեցաւ իր գրոհին մէջ,
վարկաբեկուեցաւ, տկարացաւ, պառակտուեցաւ տեղ տեղ եւ
նւրբական թէ բարոյական ահագին սպառումներ ունեցաւ։

Դաշնակցութիւնը չարաչար պարտուեցաւ նաեւ իր արտա-
քին փաղափականութեան մէջ շնորհիւ հորիւ։ Միութեան եւ անոր
կապուած հորիւ։ Հայաստանի ցարդ կանգուն մնալուն։

Այսօր, ուրեմն, այդ ծանր ձախողանքներուն առջեւ, կը
թուի ոչ միայն գիտակցութիւնը ունենալ իր ուժերը գերազնա-
հատած ըլլալու խոշոր սխալին, այլ նաեւ անդրադառնալ իր
իսկ փաղափականութեան աղետաբեր հետեւանքներուն թէ ազ-
գին եւ թէ իրեն համար։

Պ. Արշակ Զամպեան ֆանիցս բացորոշ կերպով յայտա-
բարեց թէ կ'ընդունին որ սխալած են գաղութահայութեան մէջ
հակաՀայաստանեան իրենց ծայրայեղ կեցուածքին մէջ, կով-
կասեան ազգերու հետ իրենց փոխ-յարաբերութեանց մէջ, կ'ըն-
դունին որ իրենք տկար են, ինչպէս տկար է, կ'ըսէ, Ռամկ.-Ա-
գատ. կուսակցութիւնը միայնակ. տկար է ամբողջ ազգը եւ ու-
ժերու համախմբումը, միայն, կրնայ դարձան տանի կացու-
րեան։

Դաշնակցութեան ձախողանքներուն եւ ներկայի տկա-
րութեան մէջ պէտք է փնտռել աստիճանաչափ իր փորձին ան-
կեղծութեան, փորձ, ուրեմն, իրեն համար ոչ նուաստացուցիչ

ձեռով մը դարմանելու իր սխալները եւ ծառայելու ազգին:

Այս վերաբերմունքը կրնայ տեսլ այնքան ատեն որքան Ռամկ.-Ագատ. կուսակցութիւնը պահէ իր ուժը, աւելի իսկ զօրացնէ զայն գերծ մնալով ընդդիմամարտ պայքարներէ, որոնք կը սպառեն զինք եւս եւ կ'արգիլեն շինարար գործունէութենէ:

Հետեւաբար կը թուի թէ կարելի է յուսալ համերաշխութեան մթնոլորտ մը եւ իրական գործակցութիւն մը, մանաւանդ որ պայքարը վերջերս այլեւս կորսնցուցած է, բացի թերեւս Ամերիկայէն, իր քափը ու տեղ-տեղ, ինչպէս Յունաստան եւ Եգիպտոս, արդիւնաւորապէս տեղի ունեցած են եւ կ'ունենան տեղական հասկացողութիւններ:

Դաշնակցական մամուլին մէկ մասն ալ, ատենէ մը ի վեր, չէ այնքան բուռն որքան առաջ: Տեղույս «Յունաբեր», ամենէն կատաղին, երկու ամիսէ ի վեր գրեթէ դադրած է մեզի դէմ գրելէ: «Նոր Օր», Աթէնքի մէջ, չափաւոր ուղիի մը կը հետեւի: Ըստ մեզի եղած յայտարարութեան. հրահանգ պիտի դրկուի բոլոր թերթերուն – տրուած բլլալով ընդհ. պատգամ. ժողովի որոշումները, եւ տեղի ունեցած խօսակցութիւնները – որ պայքարը դադրեցնեն մեզի դէմ:

Ակներես է նաեւ որ Դաշնակցութիւնը շահ ունի, համաձայնութեան մը շնորհիւ, պատուաւոր հաշուեյարդարի ենթարկելու Ամերիկայի մէջ ստեղծած կացութիւնը, կացութիւն մը որ այնքան կը ննչէ, նիւթաւէս թէ բարոյապէս, որքան իր նոյնքան միւս կողմին վրայ:

Բոլոր այս պարագաներ, ընդունելի կը դարձնեն մեզի թէ Դաշնակցութիւնը անկեղծօրէն կը փափաքի այս համաձայնութիւնը:

2.- *Կրնանք, ուրեմն, համաձայնութիւն մը կնքել Դաշնակցութեան հետ:*

Այս հարցը, մեր վերջին ընդհ. պատգամ. ժողովէն ետք, բոլորովին նոր պայմաններու մէջ կը ներկայանայ քան ինչպէս էր առաջ:

Նախ ընդհ. պատգամ. ժողովը, երկար մտածելէ վերջ, հաստատելով հանդերձ որ Դաշնակցութեան կեցուածքը սկսած է մեղմանայ, նկատեց որ ան դեռ կը շարունակէր հակաՀայաստանեան ուղղութիւնը եւ մեր կուսակցութեան հանդէպ անուղիղ եւ անպարկեշտ պայքարը. որ քստ այնմ հնարաւոր չգտաւ գործակցութիւն մը անոր հետ:

Այս քանաձեւը, ուրեմն, կ'ենթադրէր գործակցութեան մը հնարաւորութիւնը երբ մատնանշուած պատճառները վերնա-

յին: Ու ատով կը բացատրուի նաեւ որ կեղք՝ վարչութիւնը, իր մեկնաբանական Շրջաբերականին մէջ, 24 Դեկ. 1937 թուակիր, որ միայն Շրջ. վարչութեանց ուղղուած էր խորհրդապահաբար, գծելով Դաշնակցութեան հանդէպ մեր հետեւելիք գործելակերպը կ'աւելցնէր, - Քանի ամուր մնանք այս դիրքին վրայ, այնքան աւելի շուտ կը հնչէ ժամը, եթէ պիտի հնչէ այդ ժամը, յորում Հ. Յ. Դաշնակցութիւնը կամ գէշ այդ կուսակցութեան շարքերը պիտի անդրադառնան որ մեր կուսակցութեան իրապաշտ եւ առողջ քաղ. սկզբունքներուն եւ ուղղութեան շուրջ միայն կարելի է մեզի հետ գործակցութիւն մը:

Տեղի ունեցած խօսակցութեան ամփոփումը ի յայտ կը բերէ որ Դաշնակցութիւնը կը սրբագրէ Հայաստանի հանդէպ իր ուղղութիւնը, վերջ կը դնէ իր անպարկեշտ պայքարին եւ կը մօտենայ մեզի մեր քաղ. սկզբունքներուն եւ ուղղութեան շուրջ: Պարզ է թէ երբ համաձայնութիւնը ստորագրուի, Դաշնակցութիւնը հարկադրուած պիտի զգայ ինքզինքն այս մասին աւելի համապատասխան կեցուածք մը ի յայտ բերելու:

Այնպէս որ ըստ մեզ ժամը հնչած պէտք է համարել գործակցութեան նոր փորձի մը:

Այս եզրակացութեան աւելի որոշ եւ վնասկան կերպով կը յանգիմք երբ նկատի ունենանք ուրիշ հիմնական ազդակներ որոնք ամենէն աւելի տեղ գրաւած են կեղք. վարչութեան մրտքին մէջ: Այդ հիմնական ազդակները պէտք է առարկայականօրէն քննուին այն նոր պայմաններու լոյսին տակ որոնք, ինչպէս ըսինք, երեւան եկան մեր ընդհ. պատգմ. ժողովէն վերջ մանաւանդ:

Այդ պայմաններն են.-

ա.- Խորհ. Հայաստանի վերաբերումը հանդէպ գաղութահայութեան:

Մօտ 20 տարուան ընթացքին մեր քաղաքականութիւնը եղաւ գաղութահայութիւնը Հայաստանի կապել ու միանգամայն Հայաստանով զօրացնել գաղութահայութիւնը բնդդէմ Դաշնակցութեան հակառակ ուղղութեան:

Մենք յաջողեցանք մեր առաջին սեւեռակէտին մէջ եւ գաղութահայութիւնը խանդավառեցինք ու հաւատարիմ պահեցինք Հայաստանի:

Դժբախտաբար, սակայն. Հայաստան չգրադեցաւ այն չափով որ պէտք էր գաղութահայութիւնով ու փոխանակ զօրացնելու մեր դիրքն ու մեր աշխատանքը գաղութահայութեան մէջ, մեծ տարբերութիւն չգրաւ Դաշնակցութեան ու մեր միջեւ,

մինչ մենք նոյն այդ Հայաստանին համար բռնուն պայքարի մէջ էինք Դաշնակցութեան դէմ: Արդիւնք: Գաղութահայ կազմակերպութեան գործը մնաց անխնամ:

Գաղութահայութեան աննպաստ այս կացութիւնը այսօր աւելի շեշտուած է իբր հետեւանք ամբողջ հորի. Միութեան ներքին փոքորիկներուն, երբ, Հայաստան եւս, մեր ընդհ. պատգմ. ժողովէն վերջ, աւելի վնասական կերպով խզեց ամէն կապ գաղութահայութեան հետ, անհատական յարաբերութիւններն իսկ դադրեցան, ՀՕԿեր լուծարքի իսկ Հ. Բ. Ը. Միութեան գրասենեակը հաշուեյարդարի ենթարկուեցաւ եւայլն, եւայլն:

Որքա՞ն ատեն պիտի տեսէ իրաց այս նոր վիճակը: Զենք գիտեր: Կը տեսնենք միայն, որ տարիները կը ստին եւ գաղութահայութիւնը հետզհետէ աւելի կարօտ կը դառնայ մեր ուշադրութեան: Ու մենք պարտինք այժմ զբաղիլ գաղութահայութեան մէջ ազգապահպանման հրատապ խնդրով:

Դաշնակցութեան հետ, դրուած հիմերու վրայ համաձայնութիւն մը, մեզ հաւատարիմ կը պահէ. Հայաստանին եւ կը ստեղծէ նաեւ համերաշխութեան մթնոլորտ մը գաղութահայութեան մէջ, ինչ որ ներկայիս ամենակարեւոր ազդակն է այդ հայութիւնը ուժացումէ փրկելու, մանաւանդ տաճկանի մոտ հաս սերունդը որ այնքան կ'ազդուի կուսակցական բռնուն պայքարներէն եւ հեռու կը պահէ ինքզինքը հայ շրջապատէն:

Վտանգած պիտի ըլլա՞նք մեր դիրքը հորի. Հայաստանի հանդէպ: Ո՛չ, քանի որ մեր համաձայնութիւնը կը հիմնուի անոր ի նպաստ վերաբերումի մը վրայ, իսկ եւ. Հայաստան ինք իր խզումով գաղութահայութեան հետ իրարու մէջ կու տայ այլութիւն փնտռելու. գաղութահայութեան փրկութեան միջոցները:

Բ.- Համաշխարհային քաղաքական վիճակը երկրորդ նոր պատմաւն է որ պէտք է մտածել տայ մեզ այս հարցին մէջ:

Դուք օրը օրին կը հետեւիք քաղաքական դէպքերուն եւ իրադէպ էք միջազգային սպառնալից մթնոլորտին:

Երբ դաշնակցականներու հետ խօսակցութիւնները տեղի կ'ունենային, ամէն օր աշխարհ կը մօտենար դէպի ընդհ. պատերազմի մը: Դեռ ամէն վտանգ չէ անցած, կրնայ ըլլալ, ինչ որ անհուն մաղթելի է, որ խաղաղութիւնը փրկուի այս անգամ եւս, բայց ոչ ոք կրնայ հանդարտ մտնով եւ սրտով դիտել ապագան:

Անհրաժեշտ է որ այլեւս պատրաստ ըլլանք համերաշխօրէն եւ հաւաքաբար դիմագրաւելու ամէն քաղաքական անակրնկալ: Հայութեան փիզիքական գոյութիւնը, ազգապահպան-

ման մտահոգութիւնը. քաղաքական մեր իտէալներուն եւ պատմական իրաւունքներուն տիրապետութիւնը պէտք է միացնեն ազգին բոլոր կազմակերպուած ուժերը, կազմակերպելու համար նաեւ թոյլ տարբերը:



Այս հիմնական նկատումները. սիրելի բնկերներ, կը բացատրեն ձեզ որ պատեհ կը գտնենք հետեւանք տալ Հ. Յ. Դաշնակցութեան այս լուրջ առաջարկին:

Գիտենք, ըսինք արդէն. քէ Դաշնակցութիւնը մէկէ աւելի շահեր ունի նման համաձայնութեան մը մէջ: Ատիկա, սակայն, պատճառ մը չէ որ մենք մերժենք առաջարկը երբ ազգին գերագոյն շահերը դրական վերաբերում մը կը պարտադրեն մեզի:

Պէտք չէ մոռնանք, նաեւ. որ, մերժում մը կրնայ Դաշնակցութիւնը արկածախնդրութիւններու մղել, որոնց վնասները խնայելն իսկ ազգին համար շահ մըն է ինքնին: Որքան որ ալ Դաշնակցութիւնը իր ներքին դժուարութիւնները ունենայ, ան կը շարունակէ գործօն ուժ մը բլլալ մեր իրականութեան մէջ, ուժ մը որ չի կրնար հանդարտ մնալ եւ պիտի միշտ փնտռէ գործածութեան նպատակ մը: Այդ ուժը մղել եւ առաջնորդել որ իր գործածութեան պահանջը գտնէ ազգօգուտ գործունէութեան մէջ, մեզ հետ գործակցութեամբ, շրջահայեաց կեցուածք մըն է որ կրնայ բարեբար արդիւնք մը ունենալ հայութեան համար:

Գուցէ ոմանք խորհին քէ համաձայնութիւնը Դաշնակցութեան ծոցը պիտի վերադարձնէ անկէ պատակոտած տարբերք: Ինքնին երկրորդական այսպիսի նկատում մը վնասական չէ: Մարտկոցական կամ Արեւմտահայ Ազատագրական Ռաշտի շարժումը չունեցաւ այն խորութիւնը եւ ծաւալումը որ դեր մը կատարէր մեր հալ կեանքին մէջ եւ ալդ տարբերուն բաժանումը Դաշնակցութենէն այնքան խորունկ է որ անոնք հաւանաբար երբեք չվերադառնան Դաշնակցութեան ծոցը: Նոյնը կարելի է ըսել Սեւանիկի «Արեւելք»ի շարժումին համար որ արդէն այժմ ցրուած անհատներու պատկեր մը կը ներկայացնէ: Գալով Պոլկարիդ մէջ Նժդեհական շարժումին. ան արժիւ ծայրայեղ է քան բուն Դաշնակցութիւնը եւ մեզի դէմ բռնուն ապաքարի մէջ է: Նման մանր մունր շարժումներ բնութր ունին մեր հալ իրականութիւնը աւելի պղտորելու անպատասխանատու տարբերով, քան քարիք մը դառնալու ու մենք կը տեսնենք հիմա քէ պէտք

է նախընտրեմք պատասխանատու եւ կազմակերպուած ուժի մը հետ չափուիլ կամ գործակցիլ քան քաջալերել նման հատուածական շարժումներ:

Այսպիսի համաձայնութիւն մը պիտի տպաւորէ նաեւ, ինչպէս ակնարկեցինք արդէն, եւ մեզի պիտի մօտեցնէ հայ չէզոք հասարակութեան հոծ զանգուածը որուն մէջ անցեալի պայքարներու բերմամբ, կուսակցականութիւնը մեծապէս կորսնցնուած է իր վարկն ու հմայքը եւ որ իր անտարբերութեան եւ կրաւորական վերաբերումին արդարացումը կը գտնէ այդ վարկաբեկումին մէջ:

Համաձայնութիւնը այն ստաւելութիւնն ալ պիտի ունենայ որ ձեռքագատուած գաղութահայ տեղական հոգեբէ մեր կուսակցութիւնը պիտի առաւել եւս նուիրուի քաղաքական գործունէութեան, ինչ որ իր էական պատճառն է գոյութեան եւ իր ձգտումներուն ալ էականը: Այդպիսի գործունէութիւն մը, միանգամայն, բնոյթը պիտի ունենայ աւելի զօրացնելու մեր կուսակցութիւնը, մեր շարքերը այլեւս գաղութահայ ամուլ պայքարներէն աւելի մեր քաղաքական իտէալներուն հետապնդման մէջ գտնելով խանդավառութեան առիթ եւ իրենց կուսակցութեան արդարացում:

Բնական է, սիրելի ընկերներ, որ անվստահութեան եւ կասկածի զգացում մը չկարենանք զսպել մեր մէջ հանդէպ Դաշնակցութեան: Կը խորհինք սակայն որ վախի եւ կասկածի պատճառներով ինքզինքնիս հետու պահելու չենք ազգօգուտ գործէ մը: Այնպիսի ատեն մը երբ պայմանները աւելի յուսատու են պէտք է մեր հեղինակութիւնը եւ մեր հմայքը, որոնք այնքան արդարացիօրէն մեծ են այսօր Դաշնակցութեան աչքին, նետենք ազգին ծառայութեան պայքարին մէջ այս անգամ ոչ թէ զարնելու այլ միասին բան մը շինելու համար:

Տալով հանգամանօրէն եւ անվերապահօրէն մեր կարծիքը այս հարցին մասին, կը յանձնարարենք ձեզ, սիրելի ընկերներ, որ յրօքէն մտածէք ու ձեր տեսակէտներն ու ի հարկին ձեր քեյադրութիւնները մեզի հաղորդէք կարելի եղածին չափ շուտով որպէսզի կարենանք ժամանակին, այսինքն 31 Դեկտեմբերէն ունենալ բոլոր Շրջանակներու պատասխանները ու ըստ այնմ նշոյել մեր դիրքը:

Լաւագոյնի յոյսերով եւ ընկերական սիրալիր բարեւե-
րով,

Ի զիմաց Ռամկավար Ազատական Կուսակցութեան
Նախագահ

[Մ. Տամատեան]

Ատենագալիբ
[Շ. Սեւոյեքեան]

Ատենագետ
[Վ. Թէքէեան]

Ռամկավար ազատական վերին մարմինը՝ բնականաբար
այս համաձայնագրին պատճէնը պէտք էր ենթարկէր Կուսակ-
ցութեան հաւանութեան: Ան գրկուեցաւ Շրջանային վարչու-
թիւններուն՝ անոնց տեսակէտն ու հաւանութիւնը ստանալու*:
Եկած պատասխանները կարելի էր դատաւորել երեք տասնճանի՝
ամանք այս նախաքայլը ջերմապէս կը յանձնարարէին, ուրիշ-
ներ, անհրաժեշտ նկատելով հանդերձ, անխտաճութիւն կը
յայտնէին դաշնակցական վարիչներու ուղղամտութեան մասին,
եւ մաս մըն ալ բացարձակապէս դէմ կ'արտայայտուէր:

Այս պայմաններուն մէջ կարելի չէր պաշտօնական գոր-
ծակցութիւն մը երկու կուսակցութիւններուն միջեւ: Նախա-
դիւն հիմնական բմբռնումներուն զօրով ալ չարունակուեցան
խօսակցութիւնները տարիներու ընթացքին, մինչեւ 1944-ի ա-
մառուան սկիզբը:

Պատերազմը վախճանին կը մօտենար եւ երկուստեք ան-
հրաժեշտ նկատուեցաւ Հայկական Դատը հետապնդելու համար
պատրաստել ընդարձակ տարողութեամբ համաձայնագրի մը
նախագիծը, որ պիտի բովանդակէր համազգային գործակցու-
թեան մը պայմանները: Հին նախագիծի արամադրութիւնները
թէեւ մեծ չափով կը պահէին իրենց իմաստը, բայց օրուան քա-
ղաքական պահանջներու յոյսին տակ երկուստեք անհրաժեշտ
նկատուեցաւ մշակել նոր համաձայնագիր մը: Այս համաձայ-
նագրին բովանդակութիւնը պիտի բլլար Հայկական Դատին հե-
տապնդումը համահայկական միացեալ ուժերով:

Այս նպատակին հասնելու համար պէտք էր՝ իբր հաւեա-
ցողութեան խորը՝ նախագիծ մը: Այդ մշակուելիք նախագիծը
պիտի նախատեսէր նախնական հասկացողութիւն մը երկու
կուսակցութիւններու - Ռամկավար Ազատական եւ Հ. Յ. Դ. -
միջեւ, յետոյ տարածուելու համար հայ ազգի բոլոր կուսակ-

* Տեսնել վերեւ տրուած շրջաբերականը:

ցութիւններուն եւ հատուածներուն վրայ, արտասահմանի մէջ եւ Հայաստանի կառավարութեան գործակցութեամբ: Առաջադրուած նախագիծը պիտի մշակուէր նորէն ռամկավար ազատական պատասխանատու մարմինին կողմէ՝ իրր կողմերու միջեւ կատարուելիք վիճարանութեան հիմք: Այդ վիճարանութեան պիտի մասնակցէին է. Բարադեանը, Մ. Տամատեանը, Պ. Տեփոյեանը, Գ. Լադեանը, Ե. Խաթանասեանը եւ՝ ի պահանջէ հարկին՝ Ա. Զամաթեանը:

Ահա՛ այդ համաձայնագրին ուրուագիծը՝ իրր կողմերու բանակցութեան նիւթ. —

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏՐ ՀԵՏԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԻԾ՝ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Նկատելով որ՝ ներկայ [Բ.] պատերազմին վերջաւորութեանը հին ու նոր քաղաքական հարցերը ամենամեծ հաւանականութեամբ իրենց վերջնական հաշուեյարդարին պիտի ենթարկուին, որ՝ Հայկական Հարցը ցարդ իր յուժումը չէ ստացած, որ՝ իր միջազգային ընդթով թերեւս յաղթականներու (ռուս, անգլիական ու ամերիկեան պետութիւններ) կողմէ առանձնապէս իւրաքանչիւրը իւրաքանչիւր թերազդապատճառներով պիտի չահագրդուի, որ՝ այդ չահագրդուութիւններուն հանդէպ արտասահմանի հայ քաղաքական մտքի շերտաւորումներուն պատասխանատու մարմինները անհրաժեշտարար միասնական ճակատ պէտք է ներկայացնեն յաջողութեան առաւելագոյնը ապահովելու համար, որ՝ վերեւ յիշուած երկու կուսակցութիւններու ներկայացուցիչները համաձայն են իրարմէ անջատ աշխատանքներ տանելու եւ որուն համար չորս տարիներ առաջ առ այդ մշակած են համաձայնութեան նախնական ուրուագիծ մը, որ՝ երկու կողմերը կ'ընդունին թէ ժամանակը հասած է այլեւս որ մեր նախնական դատը հետապնդելու համար պէտք է կազմել երկու կողմերէ հաւասար թիւով ներկայացուցիչներէ առժամեայ մարմին մը, հետագային ձգելով — քաղաքական նորագոյն զարգացումներու լոյսին տակ — համազգային մարմինի մը գոյառութեան պարագան, կ'որոշեն. —

Ա. — Մօտաւոր թուականին կազմել այդ առժամեայ մարմինը, որուն պաշտօնը պիտի ըլլայ՝ ա. — հնարաւոր չափով հետեւել քաղաքական անցքերուն եւ նախապատրաստական աշ-

խատանքներ կատարել, բովանդակութիւն տալու համար իր գոյութեան, բ.- խորհրդապահ գործունէութեամբ արամաղբու-
թիւն ստեղծել, արտասահմանի հայ հոսանքներու - Ս. Դ. Հըն-
չակեան, Հայ Բարեգործական Միութիւն, համայնալար եւլն.-
մէջ հողը պատրաստելու համար համազգային մարմնոյ մը կազ-
մութեան, գ.- յարարելութեան միտլորտ ստեղծել, հայաս-
տանի կառավարութեան հետ:

Բ.- Կողմերը կ'ընդունին թէ Հայաստանի կառավարու-
թիւնը իրը պետական գործօն ունենալով առուելագոյն զիւրու-
թիւնները մեր դատը հետապնդելու պաշտօնական միջոցներով,
եւ իրը սահմանակից մեր քաղաքական պահանջները կազմող
երկրամասին, համահայկական շարժումին զեկալարութիւնը կը
թողուն անոր: Դարձեալ կողմերը կ'ընդունին թէ առանց աշգ-
զեկալարութեան՝ մեր դատին արամաղբուած ճիգերը ապար-
զին պիտի մնան:

Գ.- Եթէ Հայաստանի կառավարութիւնը արտաքին ար-
գելիչ միջամտութեամբ կամ աշխարհէն աննպատակ պայմաններու
մէջ զգալով ինքզինք հրաժարի իրեն մատահաւած զեկալարու-
թեան դերէն, արեւմտահայ քաղաքական միտքը առանց հակա-
գործելու անոր կը հաստատէ միտքն թէ իրը իրաւապահանջ
եղը կարող չէ հրաժարի իր անժամանցելի գտակն:

Դ.- Բարձր հայրենասիրութեան խոր բմբունումով ներ-
կայ համաձայնութիւնը ստորագրող կողմերը կը յայտարարեն
թէ եթէ մինչեւ իսկ Հայաստանի կառավարութիւնը իրաշա-
տուկ պատճառներով մերժէ մէկ կամ միւս կողմին եւ կամ եր-
կուքին հետ ալ գործակիցի պաշտօնապէս՝ դարձեալ կողմերը կը
պահեն իրենց բոլորանուէր օժանդակողը յանձնառու թիւնները
Հայաստանի կառավարութեան աշխատանքին առանց հատուա-
ծական զիւրազգածութեան եւ հետեւարար հակադրութիւն:

Ե.- Այս երկու կուսակցութիւնները իրենց ազդեցութեան
բոլոր միջոցներով պիտի աշխատին հակադրել եւ արգելել ջա-
նալ բոլոր աշն կողմնակի տեսակէտներն ու գործակցութիւն-
ները որոնք կը միտին ժխտել վերեւ յիշուած նպատակն ու աշ-
խատանքի միջոցները, բլլան անոնք իմբական կամ անհատա-
կան ձեռնարկներ:

Զ.- Եթէ մեր անխրատուած դատը մինչեւ իսկ մեզ բաւա-
րարող լուծումը չտառնայ եւ որոշ հոգամտսեր միտքն մտնեն

ներկայ Հայաստանի հողային սահմաններուն մէջ, երկու կուսակցութիւնները կը յայտարարեն թէ իրենք ոչ մէկ յայտնի կամ թաղնուած հակադրոժող չարժումներու պիտի հետամտին հոն տիրող համայնավար իրաւակարգին դէմ: Թուրքիոյ տիրապետութեան ենթարկուած հայրենի հողամասերուն ազատագրումը միայն կը կազմէ ներկայ համաձայնութեան էական ու անմիջական նպատակը, եւ այս՝ հակառակ կողմերէն իւրաքանչիւրին համայնավար վարդապետութեան դադափարարանական ընդգիմադիրի գերքին:

Է.- Ապագայ համապաղութային հանդամանքով կազմուելիք մարմինին դոյառութենէն յետոյ ներկայ կողմերը, ենթահակացողութեամբ, գաղութներու մէջ ղեկավարողի գերը պիտի ստանձնեն իրենց միջեւ փոխադարձ հաւասարութեան ըմբռնումով հիմ ունենալով համաձայնութեան ոգին ու նպատակին հասնելու որդեգրուած ուղեգիծը:

Ը.- Այս ժամանակաւոր մարմինին ժողովական աշխատանքները վարելու համար կ'ընտրուին կողմերէն մէկական նախագահներ փոխն ի փոխ նախագահելու համար ժողովներուն:

Թ.- Հիմնական այս տեսակէտները անվերածելի են եւ միայն երկու կողմերու հաւանութեամբ կարելի է եղանակաւորումներու ենթարկել զանոնք: Անփոփոխ կը մնան նպատակը եւ Հայաստանի կառավարութեան ղեկավարութեան կենսական ըմբռնումը:

Ժ.- Որպէսզի նպատաւոր գաճաղ այս համաձայնութեան ամբողջական գործադրութիւնը կողմերու հեղինակաւոր վերին մարմինները կը ստանձնեն իրենց հեղինակութեամբ համոզել ջանալ իրենց շրջանակները որ այլապէս ալ յարուցող հարցերու մէջ հաշտարարութեան առաւելագոյն ոգին գնեն փոխադարձ հանդուրժողութեամբ կարգադրելու երկու կուսակցութիւններու միջեւ գոյութիւն ունեցող կամ նոր ծագելիք հակառակ տեսակէտներու պարագաները:

ԺԱ.- Այս համաձայնութիւնը կը ստորագրեն կողմերու լիազօրները ի վաւերացում եւ ի գործադրութիւն ստորագրութեան թուականէն սկսեալ: Երկու կողմի մամուլը պիտի ղեկավարուի հաշտարար ոգիով եւ հարցերը քննէ առարկայօրէն:

Այս իբր բանակցութեան հիմ ծառայող նախագծին դէմ զաշակցականներու կողմէ մշակուեցաւ հակաճանապարհ մը որ

էական նշանակութիւն ունեցող տրամադրութիւններուն մէջ կը տարբերէր: Իրենց մշակածը լուրջ քննադատութեան ենթարկուեցաւ մեր բանագնացներուն կողմէ եւ իրենց բանագնացները ճարահատ ընդունեցան մեր իրաւացի գիտողութիւնները: Երկու կողմէն հասկացողութեան իրր վերջին փորձ հարցին քննութիւնն ու հասկացողութեան ճամբայ մը գտնելու աշխատանքը յանձնեցին կողմերէն ընտրուած երկու անձերու՝ Գ. Լազեանին եւ Պ. Տեփոյեանին: Ասոնք ալ մէկ քանի հանդիպումներէ յետոյ ձախողեցան տեսակէտի նոյնութիւն ստեղծել: Այսպէս վերջ գտան մեր տեսակցութիւնները եւ երկու կուսակցութիւնները սկսան շարունակել փոխադարձ պայքարները եւ զիրար չեզոքացնող շարժումները:

Հոս կը վերջացնենք այս նիւթին չորջ յուսարանութիւններու անհրաժեշտ տեղիքներն ու արձանագրութիւնները: Իբր պատմութեան նիւթի մը անհրաժեշտ յուսարանութեան աղբիւր զայն ալ պէտք էր տրամադրել կուսակցութեան պատմութիւնը գրողին, ի հարկին օգտագործելու գայն մասամբ կամ ամբողջովին...:

Թէեւ տեղի ունեցածը միշտ կիսապաշտօնական հասկացողութիւն մը մնաց երկուստեք, բայց պէտք է չեղանկ թէ կողմերը պահեցին միշտ գրաւոր ու բանաւոր հասկացողութիւնները խորհրդապահութեան մէջ եւ չփորձեցին հասարակութեան սեփականութիւնը դարձնել մինչեւ իսկ զայն հրապարակելու սուր պահանջին տակն ալ:

Այստեղ պէտք է յիշել թէ Ռամկավար Ազատական կուսակցութեան կողմը յաջողեցաւ իր սեփական առաջադրութիւններուն մէջ: Անոնցմէ մէկը կ'արժէ արձանագրել հոս: Մենք ուզեցինք կապանք դնել Հ. Յ. Դաշնակցութեան արտաքին շարժումներուն վրայ եւ յաջողեցանք: Պատերազմի ամբողջ տևողութեան այդ կուսակցութիւնը, հակառակ իր միառումներուն եւ նախապէս ունեցած յարաբերութիւններուն, կարող չեղաւ որեւէ հասկացողութիւն գոյացնել օտար աւերերու հետ: Համաձայն երկուստեք խոստացուած ըմբռնումին՝ թէ կողմերը առանձնապէս չէին կարող երբորդ եզրի մը հետ որեւէ հասկացողութեան գալ առանց միւս շահագրգռուող կողմին գիտութեան ու հաւանութեան:

Պերմանենտի հետ Դրոյական գործակցութիւնը (25) կատարուեցաւ անկախաբար Հ. Յ. Դ. ի վերին իրաւասու մարմինէն: Մենք եղանք իրենց լուր տուողը ժամանակին եւ իրենք պաշտօնապէս մեր ներկայութեան գաղափարակցին կատար-

ւած շարժումը: Իրենց միակ չքմեղանքը եղաւ հազորդակցութեան պակասը: Մենք այդ իրողութեան պաշտօնական հաւատումը ժամանակին ստացանք օտար ազդիւրէ՝ իբր խորհրդապահական հազորդումը»(26):

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՆՈՎԻԳՈՎԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ (1944)

Երկրորդ Աշխարհամարտը կը մօտենար իր վախճանին: Դաշնակից յաղթական բանակները, փչերելով Գերմանիոյ կատաղի զիմադրութիւնը, կը յառաջանային ռազմաճակատներուն վրայ: Այլեւս յաղթանակին նժարը յայտնապէս կը հակէր Դաշնակիցներու կողմը: Այս տեսակէտով սովետական բանակները իրենց ամենի գրոհներով զուրա կը նետէին գերմանները ռուսական «սրբազան» հողամասերէն եւ ամէն օր նոր յաղթանակներ կը շահէին ու պատեհութիւն կու տային իրենց դաշնակիցներուն որ երկրորդ ճակատը բանան Արեւմուտքի մէջ: Նորմանտիոյ մէջ դաշնակից ցամաքահանումը քիչ ատենէն արդէն իսկ կը դառնար յաղթական իրականութիւն:

Ծանօթ էր թէ այս գոյամարտը ամենադաժան զրկանքներու կ'ենթարկէր կառույց կողմերու ժողովուրդները եւ մեր փոքր հայրենիքը այդ ժողովուրդներէն մէկն էր ու հազիւ նախորդ պատերազմի արհաւիրքէն չունչ առած՝ այս անգամ ստիպուած էր իր ունեցած ամէն ինչը ռազմաճակատին համար տրամադրել, որով հասած էր սպառելու վիճակին:

Այս պատերազմի ջրջանին Սովետ Միութեան կեդրոնական կառավարութիւնը անհրաժեշտ նկատեց գեւադան ունենալ Եգիպտոսի մէջ, երկիր մը՝ ուր այդ օրերուն միջազգային քաղաքական յուրմէ շարժումներու կեդրոնավայրերէն մէկն էր: Առաջին գեւադանը եղաւ Նիկիոյ Նովիբոյր:

Եգիպտոսի Ռամկաւար Ազատական Կուսակցութիւնը, ինչպէս միշտ եւ ինչպէս Հայաստանի Ա. Հանրապետութեան օրերուն, երկրին տիրող կառավարութիւնն ու վարչակարգը նկատի չունենալով՝ ուղեց կատարել իր հայրենասիրական պարտականութիւնը: Իր հայրենասիրական ըմբռնումները միշտ եղած են անսակարկելի եւ հետեւարար անկաշառելի ու առանց հակազդող նկատումներու: Այս անգամ ալ անհրաժեշտ նկատեց իր հայրենասիրական պարտականութիւնը կատարել զոնէ նիւթապէս օգնութեան համնելով հայրենիքի առողջ ու ժողովուրդին: Պէտք է շեշտել թէ այդ ազգանուէր շարժումը Կուսակցու-

Թեան գործունէութեան վարքագծին մէջ ո՛չ տոռջինն էր եւ ո՛չ ալ վերջինը եղաւ: Ժամանակը հասած էր եւ պատահութիւնը թելադրող՝ հայրենասիրական զբաղանքն արտայայտութեան: Կուսակցութեան առաջնորդող շրջանակը զիտէր թէ Հայաստանի մէջ հայ ժողովուրդը անմարդկային զրկանքներու ենթարկուած էր եւ ամէնէն փոքր օգնութիւնն իսկ ջերմապէս պիտի զնահատուէր մեր ուժասպառ ժողովուրդին կողմէ:

Սովետական դեսպանը արդէն հաստատուած էր Գահիրէի մէջ: Այս յարմարագոյն պատահութենէն օգտուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակը: Մասնաւորապէս հիւրասիրելի դեսպանը մասնաւոր ընդունելութեամբ մը: Ատիկա տեղի ունեցաւ 6 Յունիս 1944, Հինգշաբթի երեկոյին: Մասնաւոր նկատումներով պաշտօնական հրաւերները տրուեցան Հայ Գեղարուեստասիրաց Միութեան անունով, որուն վերին մարմինին նախագահն էր ընկեր Էօֆէն Բարադեանը: Հայ Գեղարուեստասիրացի սրահը զարդարուած էր օրւան ընդունելութիւնը խորհրդանշող իմաստով: Սովետական դեսպանը ներկայ էր դեսպանատան գլխաւոր անձնակազմով: Անոնք հիւրասիրուեցան երկու հարիւր հրաւիրեալ եգիպտահայերու կողմէ: Գեղարուեստասիրացի մասնաւոր հրաւերին պատասխանած էին ալլա երեկոյ երկու հարիւր հայեր, որոնց մէջ կային եգիպտահայ գաղութի բոլոր կրօնական յարանուանութիւններու պետերը, ազգային իշխանութեան բարձրագոյն կազմերէն զրեթէ ամբողջութիւնը, գաղութին յայտնի դէմքերը եւ մասնաւորներ Ազեքսանդրիայէն: Բացակայ էին զաչնակցականները, որոնք չէին հրաւիրուած մասնաւոր նկատումներով (27):

Այս պատմական ընդունելութեան բացումը կատարեց ընկեր Էօֆէն Բարադեանը Ֆրանսերէնով: Իրաւարան ընկեր Շաւարշ Սեւօնքեանը խօսեցաւ հայերէն ու ֆրանսերէն լեզուներով առանձին արտայայտութիւններուն մէջ զնեյով մասնաւորուած իմաստ: Իսկ ընկեր Ա. Սարուխանը ոտներէն լեզուով կատարեց իր արտայայտութիւնը: Օրդ. Ն. Իփէկեանը աջաստանեց ընկեր Թէքէկանին օրուան համար գրած L'Armenie à la Russie-ն եւ Հայաստանին խորագրած երկու բանաստեղծութիւնները: Գեղարուեստական բաժինը կը բաղկանար երգերէ, խմբերգերէ, արտասանութիւններէ, ռուսական ու հայկական պարերէ, կենդանի պատկերէ եւ յն: Ճօխ ու խնամքով պատրաստուած էր օրուան յայտագիրը եւ բեմադրուած՝ արուեստագիտական ճա-

շակում: Ամէն աշխատանք թափուած էր ընդունելութիւնը դարձնելու բացառիկ եւ պատմական երեւոյթ մը:

Յիշատակութեան պատուոյ տոմարը դեռապան Նովիքովին կողմէ ստորագրուելէ ետք բացուեցաւ Նուիրատուութիւնը: Բացուած տոմարին մէջ նուիրատուները ստորագրեցին իրենց մասնակցութեան գումարները: Կէս ժամէն զոյացաւ 6500 եղիպտական ոսկի: Նուիրատուները ասիլէ անջատ, իբր խոր Տիաքումի արտայայտութիւն, նուիրեցին մէկ մէկ ոսկի դիւցազնական Սթալինկրատի փառաշուք դիմադրութեան:

Ընդունելութիւնը կազմակերպող Կուսակցութիւնը արդարեւ շահեցաւ բարոյական յաղթանակի յիշատակելի օր մը, որ պատմական հետք մը ձգեց եղիպտահայ պատմութեան մէջ: Կուսակցական ընկերներ նուիրեցին ազնուական մտածումով ու առաջնորդող գումարներով եւ ներկաները, իրենք ալ ներշնչուած օրուան նպատակէն ու միջնորդութեն, առանց սպասողական անտանայումի ըրին անմոռանալի ժեսքեր:

Այս ընդունելութենէն յետոյ գուրսէն ալ ստացուեցան գումարներ: Եօթը հազարի գումարը Մամբրէ [Սիրունեան] սրբազանին գլխաւորութեամբ ռամկավար ազատական պատժիւրակութիւն մը յանձնեց Նովիքովին՝ փոխանցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալին՝ Կէորդ արքեպիսկոպոս Ձէօբէքճեանին, սահմանուած հայ ժողովուրդի անմիջական կառիքներուն:

Այս բարձրագոյն յաջողութիւնը Կուսակցութեան բարոյական ուժի եւ զոհարելութեան ընդունակութեան վարկը աստիճան մըն ալ աւելցուց ո՛չ միայն եղիպտահայութեան մէջ, այլ նաեւ՝ ուրիշ քոյր գաղութներու: Մեր ազգեցութեան հմայքը կը պարտինք մեր անսակարկելի հայրենասիրութեան եւ չրքջահայեաց շարժումին:

Այդ երեկոյ Ռամկավար Ազատական Կուսակցութեան համար եղաւ ինչպէս բարոյական յաղթանակի, նոյնպէս նաեւ հայրենասիրական զրական գործի հաւաստումը: [Ան տակաւին] կօշիկի եւ այլ հանդանակութիւններու բերաւ միշտ ալ իր առաջնորդող մասնակցութիւնը աշխատանքով ու նիւթական օժանդակութեամբ: Ո՛չ միայն Հայաստանի հանդէպ եղիպտոսի մեր Շրջանակը կատարեց իր յիշատակելի պարտականութիւնը, այլ նաեւ բոլոր աղիտուած կամ կարելիքաւոր քոյր գաղութներու, ինչպէս՝ Լիբանանի գաղթական յանձններուն, Երուսաղէմի աղիտեայ ժողովուրդին եւ այլն: Եւ արամադրեց իր լալն օժանդակութիւնը տաքստօրէն: Եղիպտոսի մէջ որեւէ ազգային կա-

ըրբի համար Ռամկավար Ազատական Կուսակցութեան մասնակցութիւնը հանրային շարժումներու համար կանխորոշ երաշխաւորութիւնն է: Այդպէս ըմբռնուած է եղիպտահայ համայնքներու կողմէ եւ այդ է անժխտելի իրականութիւնը: Այստեղ պէտք է աւելցնել թէ ընդհանրապէս նմանօրինակ հանրային շարժումներու նախաձեռնութիւնը եւ կամ թելադրութիւնը ռամկավար ազատականներու կը պարտի եղիպտահայութիւնը:

Անշուշտ Կուսակցութեան բոլոր ազդանուէր շարժումներուն մէջ միշտ կուսակցական բեմն ու մամուլը կենսական բաժին ստանձնած են: Այդ համակարգուած ուժերու սեղմ դործակցութեամբը շահուած են մեր յաջողութիւնները: Կուսակցական կամ այլապէս ազդանուէր ձեռնարկներու մէջ անոնց առաջնորդող ազդեցութիւնը փնտռուած է: Անհրաժեշտ չէ դուրսկշիւր կաղմել գաղթաշխարհի մէջ դործող երկու կուսակցութիւններուն հայ ժողովուրդին մէջ կատարած հանդանակութիւններուն շարժառիթին ու նպատակներուն: Բայց պէտք է հաստատել թէ ռամկավար ազատականներու հաւաքած դամարները փոխանցուած են հայ ժողովուրդի պէտքերուն, մինչ զանակցականները այս մարդին մէջ ալ գործած են ինքնանպատակ: Մինչեւ իսկ հայ ժողովուրդի անունով կատարուած հանդանակութիւնները լեցուցած են իրենց Գանաչեան կարարը: Հոս է մեր բարոյական ուժի աղբիւրը, որ թերեւս պատճառած է մեր նիւթական ուժի տկարութիւնը:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ, ԻՐ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

Ծանօթ է թէ Առաջին Աշխարհամարտին թուրքեր ազատ ձեռքեր ունենալով անորակելի վայրագութեամբ գործադրեցին քաղաքական ծրագիր մը արեւմտահայ ժողովուրդին վրայ: Հայ ժողովուրդին քնաջնջումը պատմութեան ամենազարհուրելի եղեոնն էր որ թուրք կառավարութեան կազմակերպութեամբ եւ թուրք, քիւրտ ու այլ վայրենաբարոյ ժողովուրդներու գործակցութեամբ գործադրուեցաւ: Միտաւորը թուրքիա մը ստեղծելու այդ քաղաքական հաշուեյարդարը, ինչպէս ծանօթ է պատմութեան, յետոյ տարածուեցաւ նաեւ միւս բաղկացուցիչ փոքրամասնութեանց վրայ: Այդ քաղաքական ծրագրին սաղմը կու գար 1866-69-ի շրջանէն:

Թուրքեր՝ տարապրութեան պիտակին տակ՝ ո՛չ միայն ջարդեցին մէկ միլիոնէ աւելի հայեր, այլ նաեւ փճացուցին մեր

ժողովուրդին բարձրորակ մտաւորականութիւնը եւ անոր դարերու ժառանգութեամբ կուտակած մշակութային հարստութիւնները: Այդ ահաւոր աղէտէն վերապրած հայ հալածական զանգուածները գրուեցան օտար երկիրներ՝ զրկուած հայ ոգին սնուցանող մշակութային կենսական գործօններէն: Եթէ մեր թիւին ահաւոր կորուստը զգեսնող հարուած մըն էր մեզի համար, մեր մնացորդին վիճակուած վաղուան խռովիչ անստուգութիւնը ուրիշ մտահոգիչ հարց մըն էր լրջօրէն մտածող ու հայրենասէր հայերու համար:

Արտասահմանի իրականութեան մէջ չկային հայ ժողովուրդին մտաւորականութեան բնորանին հայեցիօրէն բաւարար չափով պատրաստող կրթական ու մշակութային հին հաստատութիւններ եւ հայ ոգին յաւերժացնող բնական ու բնկերային միջավայրեր: Եւ արտասահմանի ապուղղայնացնող խորշակին ենթարկուած մեր նորահաս սերունդները, ազգային դժով, վերանորոգիչ առաքելութիւն մը չէին կարող ստանձնել երբ մանաւանդ հին սերունդին վերապրած տարրը ժամանակի ընթացքին պատմութեան պիտի անցնէր:

Մշակութային ու ազգային ներքին կեանքի այլ մարդերուն ղեկավար տարբերու ձգած բացը պէտք էր լեցնել պատրաստելով նորեր, որոնք գիտնային՝ հինին հետ պահելով փորձառական ու մտաւոր կապը՝ առաջնորդել հայ ազգային կեանքը հայկական ոգին մաշեցնող միջավայրերու մէջ: Անշուշտ կային արտասահմանի մէջ գործող հիմնարկներ, միութիւններ ու հաստատութիւններ, որոնք իրենց նպաստը կը բերէին բնդհանուր պահանջին, բայց անոնք մասնաւորուած էին այն նպատակներուն՝ որոնց իրադրութիւնը աշխատանքին պիտի լծուէր Հ. Ա. Հ. ր: Պէտք էր դադուրթահայ կեանքը ղեկավարող մտաւորականներ պատրաստել, պէտք էր հայկական ազգային ոգին ուժեղացնող զբաղանդութիւն մը տալ դադուրթահայութեան: Պէտք էր մեր կրթական գործը զինել հայեցի զիմադժով եւ վերջապէս հայապահպանման բոլոր միջոցները միաւորել ու գործօն պայքար մղել թոյր շարիքներու ղէմ: Մեր ներքին ազատագրական պայքարներու զիծր վերջացած էր այլեւս եւ մեր նոր իրականութեան մէջ պայքարի նոր դաշտ մը պարտադրուած էր մեզի: Եւ այդ՝ ազգապահպանման պահանջն էր որ հրամայական դարձած էր արտասահմանի մէջ գրուած հայ զանգուածներու:

Այսպէս՝ ազգապահպանման կարիքը համապարօթային էր: Մէկ երկու տասնեակ տարիներու ընթացքին տեսնուեցաւ թէ գաղութահայութեան մէջ հայ ոգին մաշեցնող գործօնները

չափազանց ուժեղ էին: Պէտք էր հակադրո՞ւնէ: Եւ Ռամկավար Ազատական կուսակցութեան վարիչ չըջանակները՝ ի տես չարաղէտ իրականութեան՝ չէին կարող ձեռնածալ նստիլ: Եւ Եփրատոսի Շըջանակին կուսակցական ղեկավարները երկար խորհրդակցութիւններէ յետոյ վերջապէս 1942 Մայիս 27-ին հիմնեցին Հայ Ազգային Հիմնադրամը: Թէեւ հիմնադիրները պատասխանատու կուսակցականներ էին, բայց հայ ժողովուրդին ծառայելու գիտաւորութեամբ անկուսակցական նկարագիր տուն զործին, ինչպէս նախապէս բրած էին «Տիգրան Երկաթ»ի եւ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան հիմնարկութեան օրերուն: Հ. Ա. Հ. ի գործունէութիւնն ալ շարունակուեցաւ անկուսակցական բովանդակութեամբ՝ ինչպէս կը սահմանէ մշակուած յատուկ կանոնադրութիւնը: Հոս պէտք է արձանագրել թէ որքան որ այս հիմնարկը անկուսակցական է, բայց խորքին մէջ ռամկավար ազատական ձեռնարկ մըն է եւ աւերթեր իր յայտարարած նպատակներուն՝ կը գործէ կուսակցութեան դադափարաբանական չըջագծին մէջ: Այդ էական պայման է: Եւ բոլոր նախատեսութիւնները օրինաւորապէս կատարուած են անվտանգ դարձնելու զայն որեւէ պատահականութեան դէմ:

Հայ Ազգային Հիմնադրամի գլխաւոր առաջադրութիւններն են. — Ա. — Համալսարանական ուսանողներու ուսանողական ծախսը տրամադրել, պայմանաւ որ անոնց մասնագիտական ուսումը ուղղակի նպաստ մը բերէ մեր ժողովուրդին հանրային կեանքին ու մշակութային շարժումներուն: Մեր ժողովուրդը անհրաժեշտ պէտքը ունի պատրաստուած ղեկավարներու՝ անոնք ըլլա՛ն վճարովի կամ անվճար գործիչներ: Հիմնադրամի այս գծով առաջադրութիւնը հանրային գործիչներ պատրաստելու բաղձանքն է: Բ. — Հրատարակել հայ հեղինակներու՝ կարեւոր գործերը, որոնք կենսական նպաստ մը կը բերեն հայ գրականութեան, պատմութեան եւ այլապէս հայագիտութեան, մշակութային ու կրթական մարզերու: Գ. — Հիմնել մշակութային նոր կեդրոններ կամ սաստրել, արդէն իսկ եղածներուն եւ օժանդակել, գլոբալական գծով կրթական գործին՝ դասագիրքերու հրատարակութեամբ եւ ուղղակի կրթական հաստատութիւններու նիւթական միջոցներու հայթայթումով կամ մրցանակներ նշանակելով: Դ. — Հայ գրականութիւնը քաջալերելու համար կազմակերպել մրցութիւններ եւ հաստատել մրցանակներ: Ահա այն գլխաւոր առաջադրութիւնները, որոնք գոյութեան բերին Հ. Ա. Հիմնադրամի բնկերակցութիւնը:

Հ. Ա. Հիմնադրամի հիմնադիրները եղած են Աշոտ Գա-

սապեանք, Էօփէն Բարազեանք, Լեւոն Կոկանեանք, Միհրան Տամատեանք, Մկրտիչ Մարըլեանք, Շուարշ Սեւօնքեանք, Հալի Վառվառեանք, Պետրոս Տեփոյեանք, Վահան Թէքէեանք, Տիգրան Արեքսանեանք եւ Տիգրան Մերձանեանք: Եւ առաջին ժողովին մէջ իսկ այս տասնեւմէկ հիմնադիրները զոյացուցին հազար երկու հարիւր եզրիպտական ոսկի:

Ժամանակի ընթացքին այս հիմնադիրներէն ոմանք Հ. Ա. Հ. ի առաջադրած զանազան մարզերուն նուիրեցին կարեւոր գումարներ: Անոնցմէ յիշենք Լեւոն Կոկանեանք, որ շինեց մշակութային սրահ մը իր յարակից մասերով Հելլոսպոլսոյ մէջ, Հ. Ա. Հիմնադրամի հողին վրայ: Էօփէն Բարազեանք, որ Փարիզի մէջ [Լը]-Սուէյ Մշակութային Ընկերակցութեան (տուն, ապարան, թերթ) նուիրատուն եղաւ: Բարազեանք, Կոկանեանք, Մերձանեանք նաեւ մեկեանացիներն Հ. Ա. Հ. ի հրատարակութիւններէն ոմանց ամբողջական ծախսը: Ուրիշներ մասնակի, սակայն կարեւոր նուիրատուութիւններով զիւրացուցին Հ. Ա. Հ. ի հրատարակչական, կրթական ու մշակութային շարժումներու յաջողութիւնը: Եզրիպտոսի, Լիրանանի ու Ֆրանսայի մէջ:

Իրողական վաստակով պէտք է հաստատել թէ Հիմնադրամի այսօրուան վաղըն կացութեան նիւթապէս ու բարոյապէս ստատորոշները եղան նախ վերեւ յիշեալ հիմնադիրները, յետոյ ազնուական մտածումներով առաջնորդուած ուրիշ հայեր, որոնք իրենց նիւթական նուիրատուութեամբ օժանդակեցին այս ազգօգուտ գործին: Այսպէս՝ համեստ սկզբնաւորութեամբ գործը ստացաւ այսօրուան ծաւալուն համեմատութիւնը, արուած կարճ ժամանակի ընթացքին: Այստեղ պէտք է շեշտել թէ Հ. Ա. Հ. ի գործունէութիւնը՝ բաղդատմամբ մտադրուած նպատակներու իրագործման պահանջին, զեռ շատ սահմանափակ է: Մեծ ճիգեր պէտք է համադրել, որ գոնէ չափով մը բաւարարութիւն արուի յարաճուն պահանջներուն:

Համաձայն Հ. Ա. Հ. ի կանոնադրութեան - վաւերացուած Եզրիպտոսի ընկերային գործերու նախարարութեան - այս ընկերակցութեան կարող են անդամակցել բոլոր հայերը աւերկան կամ ամասկան անդամավճարներով: Անդամակցութեան համար նախատեսուած զլխաւոր աստիճանները հետեւեալներն են. - օժանդակ անդամներ, պատուոյ անդամներ եւ բարերար անդամներ. բացի օժանդակ անդամներէ, որոնց թիւը միայն Եզրիպտոսի մէջ արդէն վեց հարիւրի մօտ է, պատուոյ անդամ կը նկատուին անոնք, որոնք կը նուիրեն մէկ անգամէն 100 եւ տեւի իւր եզրիպտական ոսկի. իսկ բարերար անդամ՝ անոնք, որոնք

կը նուիրեն 500 եւ աւելի ոսկի: Այս երկու կարգի նուիրատուներուն կը տրուին համապատասխան վկայականներ: Յարգ րացի Հ. Ա. Հ. ի անմիջական շրջանակէն, ունեցած ենք երկու բարեբար անդամներ՝ Աւետիս Չապրճեան եւ Յակոբ Թովալեան, որոնք նուիրած են Հինգ հարիւրական ոսկի: Պատուոյ անդամներն են հետեւեալները՝ տիկ. Ալիս Բարազեան, Արամ Ալպան, Մ. Էթմեքճեան, Գ. Չապրճեան, Մ. Թովաթլեան, Ս. Սպենճեան, Վ. Աւադեան, Մ. Գալլապճեան, Հ. Նասիպեան, Պ. Երամեան, տք. Խ. Սողիկեան, Կ. Պողաճեան, տիկ. Ս. Մերճանեան, տիկ. Ա. Գուլումճեան, Ծ. Էմիրզեան, Յ. Տէր Մկրտիչեան եւ վեց ուրիշ անձեր, որոնք չեն ուզած հրապարակումը իրենց անուններուն: Այս պատուոյ անդամները նուիրած են հարիւրէն մինչեւ 250 եգիպտական ոսկի: Հիմնադիրներու շրջանակէն կան երկու անձեր, որոնք նուիրած են Հինգ հազարական ոսկի, որոչ պայմաններով:

Հ. Ա. Հ. ընդ նաեւ կառկային եկամուտներ: Ի նպատակ Հ. Ա. Հ. ի նպատակներուն, ցարդ եղած են երկու կառկներ՝ մին Տիթրոյթէն (Ամբրիկա) ողբացեալ Սարգիս Մարտիրոսեանին կողմէ, իսկ միւսը երուսաղեմաբնակ Միտաք Տիտիգեանէն: Առաջինը կառկած է Հինգ հարիւր տոլար, իսկ երկրորդը՝ երկու կալուածներու եկամուտէն: Վերջին կառկը եղած է աէր եւ տիկ. Տիտիգեաններէն Հ. Բ. Ը. Միտթեան անունին: Երկու կալուածներու տարեկան հասույթէն պիտի հոգացուին Հինգ սաններ, որոնցմէ երկուքին բնտրութիւնը պիտի կատարուի Հ. Ա. Հ. ի կողմէ իբր իր սաները եւ պիտի կոչուին Հ. Ա. Հ. ի Տիտիգեան սաներ:

Այս տասնամեայ շրջանին Հ. Ա. Հ. ի հրատարակութիւններուն գումարը հասած է տասնվեցի: Անոնք կը վերաբերին պատմական, պատմագիտական-յուշագրական, բանասիրական, գիշադիտական, հայրենագիտական եւ դաստիարակչական ճիւղերուն: Այս հրատարակութիւններուն մէջ կան կոթողական գործեր, որոնք պիտի տրուին ժամանակի մաշեցումին (28):

Հ. Ա. Հ. ը տրամադրած է «Արեւ» օրաթերթին մէջ նաեւ թատերադրական մրցանակ, քաջայերբելու համար մեր կեանքէն առնուած գործեր: Մրցանակներ տրամադրած է նաեւ Հինգ հալ գպրոցներու մէջ հայերէն եւ արարերէն լեզուի առաջնութեան համար: Կր պահէ նաեւ Գալուստեան ու Նուպարեան վարժարաններու մէջ սաներ:

Մշակութային կեդրոններ հաստատելու կամ եղածներուն աւելի ներոյժ չարժուած տալու գործունէութեան մէջ Հ. Ա. Հ. ը

արձանագրած է կարեւոր յաջողութիւններ: Այս մարզին մէջ Հ. Ա. Հ. Ը, ինչպէս պիտի տեսնուի, չէ սահմանափակուած միայն եգիպտոսի աշխարհագրական սահմաններուն մէջ, այլ՝ դործունէութեան ծաւալումով՝ թափանցած է արդէն Ֆրանսա, Լիբանան եւ մասամբ ալ Սուրիա:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿ. Հելիպոլիսոյ հոծ հայութիւնը այսօր օժտուած է մշակութային ակումբով մը, որ ամէն հնարաւորութիւն ստեղծած է հայ մշակութի զարգացման: Հոն մասնաւորապէս մեր երիտասարդ սերունդը պատահութիւնը ունի զարգացնելու իր աղետական ընդունակութիւնները հայ մշակութիւնը դժով: Հ. Ա. Հիմնադրամի վարչութիւնը մեծապէս յուսադրուած է թէ Շիլիպոլիսոյ Կոկանեան ակումբը պիտի արդարացնէ իրմէ սպասուած մշակութային գործունէութիւնը: Ակումբին մշակութային շարժումները արդէն իսկ արձանագրած են որոշ յաջողութիւններ:

Ակումբը ունի իր յատուկ կանոնադրութիւնը՝ վաւերացուած ընկերային գործոց նախարարութեան: Ունի մի քանի հարիւրներու հասնող անդամներու թիւ մը: Ակումբը Հ. Ա. Հ. ին ու Կոկանեան բարերարին արժամ է տասը հազար եգիպտ. ոսկի: Անոր աշխատանքն ու մթնոլորտը քաջալերիչ են:

«Տիգրան Երկաթ» մշակութային ակումբը, որ նոյնպէս վաւերացուած է ընկերային գործոց նախարարութեան, ունի իր ետին մշակութային գործունէութեան կէս դարու յուրմէ անցեալ մը եւ այլապէս ալ կատարած է նախախնամական դեր մը իր ճիւղավարժ սաներու վաստակով: Այս մշակութային ակումբը իր յիսուն տարիներու բազմաբեկուն աշխատանքով մասնաւորապէս Աղեքսանդրիոյ հայ համայնքին մէջ ազգային յիշատակելի աշխատանք մը կատարած է: Իր հազար երկրորդական կրթութիւն ստացած սաներն ու սանուհիները այսօր բազմահարիւր ընտանիքներու հայրերն ու մայրերը դարձած են: Անոնք Աղեքսանդրիոյ հայ համայնքին սրակին բարձրացման յիշատակելի նպաստ մը բերած են: «Տիգրան Երկաթ»ի Հիմնադիրներն ու մէկ քանի տասնեակ տարիներու ղեկավարները իրենց բոլոր նուէրը գոհոգութիւններով աղետական աշխատանք մը կատարած են հայ ժողովուրդին մէջ: Այժմ «Տիգրան Երկաթ» աւելի ներդրոյ աշխատանքի յծուած է Տիգրան Աղեքսանեան Փոստի եւ Հ. Ա. Հիմնադրամի նիւթական շառ կարեւոր օժանդակութիւններով ուժեղացած: «Տիգրան Երկաթ» ակումբը իր նոր տեղւոյ չքեղ ու ընդարձակ մթնոլորտին մէջ մեծապէս կը յուսադրէ երկրորդ կիսադարեան գործունէութիւնով մը, որուն սկզբը

նաւորութիւնը արդէն իսկ մեծ հեռանկար մը կը խոստանայ: Եւ Հ. Ա. Հիմնադրամի անվերապահ զործակցութիւնը պիտի ծառայէ այս ակումբի հզօրացման:

Այս առթիւ պէտք է կրկնել թէ Հ. Ա. Հիմնադրամը իր հաստատած ու օժանդակած ակումբներուն մէջ կը գործէ անկուսակցական հոգի վրայ: Հ. Ա. Հիմնադրամի հիմնադիրներն ու վարիչները արդէն իսկ ուխտաւածներ են ծառայելու հայ ժողովուրդի մտային ու մշակութային շահերուն. ոմանք այդ անսակարկելի ծառայութիւնը կը արամադրեն աշխատանքի յարմարագոյն միջոցներով:

...Հ. Ա. Հիմնադրամի բարոյական շրջագծին մէջ գործող ուրիշ մշակութային հաստատութիւն մըն է Հայ Գեղարւեստասիրացը, որ երեսուն երկու տարիներէ ի վեր դրօշակակիրը եղած է հայ արուեստին ու մշակոյթին: Գահիրէի մէջ անտարած է մշակութային առաքելութիւն մը, զոր կարելի չէ մոռնալ: Հայ երգի, թատրոնի, խօսքի եւ մինչեւ իսկ ազգային կարեւոր գործերու կեդրոնավայրը եղած է այս ակումբը, որուն հայ ոգին ուժեղացնող եւ հայ մշակոյթն ու արուեստը պանծացնող գործունէութեան մասին կարելի է երկարօրէն խօսիլ:

Մշակութային այս երեք ակումբներն ալ զաւակները եղած են Ռամկավար Աղատական Կուսակցութեան, եւ ան զօրգուրանքով կը քաջալերէ զանոնք, նկատելով որ անոնց կատարած գործը անանջատ է իր մշակութային պծով ստանձնած առաքելութենէն:

Հոս կու տանք Հ. Ա. Հիմնադրամին հիմնական կանոնադիրը, պարզապէս աւելի յոստորանած ըլլալու համար անոր նպատակներն ու սկզբունքները, անոր առաջադրութիւնն ու իրագործումները...

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՄԱՍ.- ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ՆՊԱՏԱԿ, ՆԿԱՐԱԳԻՐ

ՅՕԳ. 1.- Որոշուեցաւ Հայ Ազգային Հիմնադրամ անունով բարեգործական միութիւն* մը կազմել, բաղկացած հետեւեալ հիմնադիր անդամներէն.

* Պէտք է ըլլայ՝ մշակութային, բարեսիրական տարրը ներմուծուած է կանոնադրութեան մէջ՝ պարզապէս ընթացք տալու պաշտօնական պահանջի:

1. Ալեքսանեան Տիգրան զործարանատէր	125
2. Տամատեան Միհրան խմբագիր	125
3. Տեփոյեան Պետրոս զործարանատէր	125
4. Կոկանեան Լեւոն զործարանատէր	125
5. Գասապեան Աշոտ զործարանատէր	100
6. Մերձանեան Տիգրան զործարանատէր	100
7. Մարտիկան Մկրտիչ տռեւտրական	100
8. Բարապեան Իօթէն տռեւտրական	100
9. Սեւօնքեան Շաւարշ փաստարան	100
10. Թէքէեան Վահան խմբագիր	100
11. Վառլաւեան Հայկ բժիշկ	100

Միութեան կեդրոնն է Գահիրէ և տոժամեայ հառցէն,
9 Շարէ Ատլի Փաշա, Բարապեան Ընկերութեան մօտ:

ՅՕԳ. 2.- Միութեան նպատակները կը կայանան հայ համայնքին զրական, գեղարուեստական, բնակրային և բարեգործական բոլոր գործերը քաջայերելու և օժանդակելու մէջ: Ինչպէս օգնել ազգաւ ուսանողներուն, իրենց ուսումը աւարտելու, ազգաւ հնարիչներուն իրենց հնարքները ամբողջացնելու, օգնել կարօտեալներուն, սրբերուն, հիւանդներուն և ամէն անոնց որոնք պատուհասուած կամ անկարողութեան մասնուած ըլլալով, պէտք ունին օգնութեան:

ՅՕԳ. 3.- Միութիւնը ոչ մէկ առնչութիւն ունի քաղաքական կամ զաւանական հարցերու հետ և իրր բարոյական անձ ենթակայ է եղիպտական օրէնքներուն և կանոններուն:

Բ. ՄԱՍ.- ԱՆԳԱՄԱՅՅՈՒԹԻՒՆ

ՅՕԳ. 4.- Անգամ մը պարտի յրացնել հետեւեալ պայմանները.- 1.- Ունենալ յաւ փարք ու բարք. 2. Անպատուարեք դատապարտութիւն մը կրած չըլլալ. 3. Գրաւորապէս յանձնառու ըլլալ յարգելու ներկայ կանոնադրութիւնը:

ՅՕԳ. 5.- Միութեան անգամները կը բաժնուին 5 խումբերու.

ա.- Հիմնադիր անգամ կը նկատուի աչն անձը որ առնուազն 100 Ե. Ո. մճարած է Միութեան կազմութեան պահուն կամ անկէ ետք, առ ի օժանդակութիւն Միութեան նպատակներուն իրագործումին:

բ.- Գործօն անգամ կը նկատուի այն անձը որ տարեկան

առ նուազն 6 Ե. Ո. կը վճարէ միանուագ կամ ամսական վճարներով:

դ.- Պատուոյ անդամ կը նկատուի այն անձը որ Միութեան կը մատուցանէ բացառիկ ծառայութիւններ: Այս կարգի անդամակցութիւնը կը շնորհուի վարչական խորհուրդին կողմէ:

դ.- Բարերար անդամ է այն որ Միութեան միանուագ կը նուիրէ 500 Եդ. Ոսկիի գումար մը:

ե.- Օժանդակ անդամ է այն որ տարեկան կը վճարէ 120 Եդ. Դաճեկան, միանուագ կամ մասնավճարներով:

ՅՕԴ. 6.- Ամէն անգամ որ կ'ուշացնէ անդամասակին վճարումը, ազդարարութիւն մը կը ստանայ իր վերջին վճարումէն երեք ամիս ետք: Եթէ դարձեալ չվճարէ իր պարտքը, կը զրկուի անդամակցութենէ եւ ասիկա իրեն կը տեղեկացուի յանձնարարեալ նամակով:

ՅՕԴ. 7.- Անդամակցութիւնը կը դադրի հետեւեալ պարագաներուն.

ա. Անդամի մահով:

բ. Եթէ անդամը գործէ արարք մը որ վարչական խորհուրդը անպատուարեք կը նկատէ:

գ. Եթէ անդամը միասն կը հասցնէ Միութեան կամ Միութեան համբաւին:

Գ. ՄԱՍ.- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ա.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 8.- Ընդհանուր Ժողովը կը գումարուի ամէն տարի Մարտ ամսուայ ընթացքին եւ կը բաղկանայ բոլոր հիմնադիր եւ գործօն անդամներէն որոնք վճարած են իրենց անդամատուկերը մինչեւ վերջին ամիսը նախքան գումարումը նոյն Ժողովին:

Բացակայ Անդամը կրնայ իրեն փոխանորդ նշանակել ընդհանուր Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներէն մին, իր կողմէն քուէարկելու, պայմանաւ որ այս վերջինը մէկէ աւելի անդամներ չփոխանորդէ:

ՅՕԴ. 9.- Ընդհանուր Ժողովը իր սովորական նիստին մէջ կը քննէ հետեւեալ հարցերը.

ա.- Վարչական խորհուրդի գաղափար անդամներու տեղ նոր անդամներու ընտրութիւն:

բ.- Աւարտած տարեկըջանի հաշիւներուն վաւերացում եւ

վարչական խորհուրդի տարեկան տեղեկագրի քննութիւն:

դ.- Հաստատում նոր տարեշրջանի պիւտճէին, ըստ յաջորդ տարուան համար նախատեսուած ընդհանուր ծրագրին:

դ.- Հաշուեքննիչի ընտրութիւն:

ե.- Օրակարգի այլ հարցեր:

ՅՕԴ. 10.- Ընդհանուր ժողովի գումարումը օրինաւոր կը նկատուի երբ Յօդ. 8-ի համեմատ ներկայութեան իրաւունք ունեցող անդամներու կէսէն աւելին ներկայ ըլլայ: Եթէ ներկաներու թիւը բաւարար չըլլայ, ժողովը երկու շաբաթ կը յետաձգուի, որմէ ետք ժողովին գումարումը օրինաւոր կը նկատուի ինչ որ ալ ըլլայ ներկաներու թիւը:

ՅՕԴ. 11.- Պաշտօնավարող վարչական խորհուրդի Ատենապետը կը նախագահէ Ընդհանուր ժողովին: Եթէ բացակայ ըլլայ ան փոխատենապետը կը փոխարինէ զինք: Եթէ փոխատենապետն ալ բացակայ ըլլայ, ներկաները իրենց մէջէն կ'ընտրեն Ժողովին Նախագահը:

ՅՕԴ. 12.- Արտակարգ Ընդհանուր ժողովի գումարում կրնան պահանջել վարչական խորհուրդը իր մեծամասնութեամբ, կամ հաշուեքննիչը, կամ անդամառակ միջարող անդամներուն քառորդը: Արտակարգ Ընդհանուր ժողովը օրինաւոր կը նկատուի եթէ գումարուի ըստ Յօդ. 10-ի տրամադրութեանց: Միութեան լուծումի պարագային, Յօդ. 25-ի տրամադրութիւնները կը կիրարկուին:

Արտակարգ Ընդհանուր ժողովի իրաւասութեան սահմաններուն մէջ կը մտնեն.

ա.- Միութեան լուծումը եւ ինչքերուն բացարձակ տնօրինումը:

բ.- Կանոնադրութեան յօդուածներուն փոփոխութիւնը:

դ.- Վարչական խորհուրդի գաղափարները եւ նորի մը ընտրութիւնը:

դ.- Այլ հարցեր որոնց համար պահանջուած է արտակարգ Ընդհ. ժողովը, եւ որոնք սոփորական Ընդհ. ժողովի իրաւասութեան մէջ չեն իյնար:

Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՅՕԴ. 13.- Միութիւնը կը վարէ վարչական խորհուրդ մը կազմուած ութ անդամներէ, որոնք կ'ընտրուին Ընդհ. ժողովին կողմէ ամէն տարի եւ որոնցմէ 6-ը պէտք է ըլլան Հիմնադիր Անդամներ կամ ըստ Յօդ. 5-ի նոյն հանգամանքը վայելող ան-

դամներ եւ երկուքը գործօն անդամներ ըստ Յօդ. 5 հաստատւած
ր.ի:

Վարչական խորհուրդի պաշտօնն է.

ա.- Վարել Միութեան վարչական եւ թէքնիք գործերը
եւ մշակել նոր ծրագիրներ:

բ.- Միութեան պէտք կ'զատ պաշտօնեաները նշանակել,
հեռացնել եւ պատժել:

գ.- Միութիւնը ներկայացնել մասնաւոր կամ կառավար-
ական մարմիններու առջև:

դ.- Պատրաստել տարեկան տեղեկագիրը Միութեան
գործունէութեան եւ ելեւմտական կացութեան մասին, դաշն
ներկայացնելու համար Ընդհ. Ժողովի սովորական նիստին:

ե.- Պատրաստել պիւտճէի նախագիծը, Ընդհ. Ժողովին
ներկայացնելու համար դաշն:

30Գ. 14.- Վարչական ժողովը կը գումարուի առ նուազն
ամիսը անգամ մը: Ժողովին գումարումը օրինաւոր կը նկատուի
երբ ներկայ ըլլան անդամներու կէսէն աւելին: Եթէ ներկանե-
րու թիւը անբաւարար ըլլայ, ժողովը կը յետաձգուի մէկ շա-
բաթ եւ դարձեալ կը գումարուի. այն առեւ ժողովը օրինական
կը համարուի, ինչ որ ըլլայ ներկայ անդամներու թիւը: Որո-
շումները կը արուին ներկայ անդամներու մեծամասնութեան
ձայնով:

30Գ. 15.- Եթէ վարչական խորհուրդի անդամներէն մին
բացակայի երեք յաջորդական նիստերէ, առանց ժողովին կողմէ
ընդունուած արգարացումի, այդ անդամը հրաժարած կը նը-
կատուի եւ անոր տեղ ուրիշ մը կը նշանակուի:

30Գ. 16.- Եթէ վարչական խորհուրդէն անգամ մը պակ-
սի որեւէ պատճառով անոր տեղ կը նշանակուի այն անգամ որ
ամէնէն աւելի քուէ ստացած է Ընդհանուր Ժողովի վերջին
ընտրութեան առանց վարչական խորհուրդին անգամ ընտրու-
ած ըլլալու: Եթէ այդպիսի մէկը չգտնուի, վարչական խոր-
հուրդը կ'ընտրէ Ընդհ. Ժողովի անդամներէն մին, ձայներու
երկու երրորդով:

30Գ. 17.- Վարչական խորհուրդը իր առաջին ժողովին
մէջ իր անդամներէն կ'ընտրէ Առեւտրայեւ, Գիտ.-Առեւտրայեւ,
Առեւտրայեւ, Գիտնապահ, որոնք պէտք է Հիմնադիր Ան-
գամի կամ նոյն իրաւունքը վաշխող ըլլան ըստ Յօդ. 5-ի ա.ի:
Ներքին կանոնադիրը կը սահմանէ իւրաքանչիւրին զերբ:

30Գ. 18.- Վարչական ժողովը իրաւունք ունի կազմելու

յանձնախուժրեր Միութեան գործերը կատարելու եւ պրոպագանդա ընելու համար, պայմանաւ որ վարչութիւնը անոնց մէջ ներկայացուած ըլլալ ատնուադն մէկ անդամով: Իւրաքանչիւր յանձնախուժ կը բաղկանայ 5 անդամէ, նշանակուած վարչութեան կողմէ, պաշտօն ունենալով պրոպագանդա ընել, Միութեան համար նոր անդամներ արձանագրել, վաճառել Միութեան հրատարակութիւնները եւ զարկ տալ Միութեան յառաջդիմութեան:

Գ. ՄԱՍ.- ԵԼԵԻՄՈՒՏՅ

30Գ. 1.- Միութեան էլեմտաքը կազմուած է հետեւեալներէն.-

ա. Բոլոր անչարժ կալուածները որ Միութեան կը պատկանին, արժեթուղթերը որոնք երաշխաւորուած են կառավարութեան կողմէ, Միութեան նուիրուած կամ կտակուած գումարները:

բ. Բոլոր տպարանները, հրատարակչատունները, գրադարանները, հրատարակութիւնները եւ ակումբները, որոնք Միութեան կը պատկանին:

գ. Միութեան ստացուածքներուն հասոյթները, սակոսները, անդամասակերը, կտակները եւ վաքըֆները:

30Գ. 20.- Միութեան բոլոր գրամագլուխը պահ կը դրուի տեղական գրամատան մը մէջ: Գանձապահին մօտ կը ձգուի միայն 25 սակիի գումար մը անմիջական ծախքերու համար: Որեւէ գումար գրամատունէն կը քաշուի վարիչ մարմնոյ որոշումով, որուն մէջ կը ճշգրտի այն նպատակը որուն համար պիտի ծախուի քաշուելիք գումարը: Սոյն գործողութիւնը կը կատարուի չէքով, ստորագրուած Ատենագետէն, Ատենագլուխէն եւ Գանձապահէն որոնք կը ստորագրեն Միութեան անունով Միութեան վերաբերեալ բոլոր պայմանագրերուն վրայ, իբր անոր ներկայացուցիչները եւ գայն կը ներկայացնեն կառավարութեան եւ անոր հաստատութիւններուն, ինչպէս նաեւ պաշտօնական եւ անհատական բոլոր մարմիններուն առջեւ*:

30Գ. 21.- Միութեան էլեմտական շրջանը կը սկսի ամէն տարուայ Մարտ 1-ին եւ կ'աւարտի Փետրուարի վերջը:

* Նախատեսելով ստորագրելու իրաւունք ունեցող անդամներէն մէկուն կամ միւսին երկրէն ժամանակաւոր բացակայութիւնը, այս թիւը բարձրացուած է հինգի:

ՅՕԴ. 22.- Ընդհ. ժողովը իբր հաշուեքներէ կ'ընտրէ վարչական խորհուրդի ոչ-անգամ մը որ օրը օրին կը քննէ Միութեան հաշիւները եւ Միութեան ելեւմտական կացութեան մասին տարեկան տեղեկագիր մը կը պատրաստէ: Այս տեղեկագիրը վարչութեան կողմէ Ընդհ. ժողովին կը ներկայացուի:

ՅՕԴ. 23.- Միութեան ամբողջ դրամադրութիւնը յատկացուած է իր նպատակներուն իրագործումին ծախսուելու եւ կարելի չէ գայն ուրիշ նպատակի յատկացնել առանց Ընդհ. ժողովի որոշումին եւ Ընկերային Գործոց Նախարարութեան զործակցութեան:

Ե. ՄԱՍ.- ԼՈՒԾՈՒՄ

ՅՕԴ. 24.- Եթէ վարչական խորհուրդը տեսնէ թէ Միութիւնը անկարող դարձած է իր նպատակները իրագործելու, կրնայ Ընդհ. ժողովը արտակարգ նիստի հրաւիրել եւ Միութեան յուժումը առաջարկել:

ՅՕԴ. 25.- Ընդհ. ժողովին կողմէ արուած լուծման որոշումը ի զօրու կը գտնայ, եթէ ժողովին ներկայ գտնուին բոսկանոնագրութեան Յօդ. 8-ի ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող վճարող անդամներու երեք չորրորդը եւ որոշումը առնուի ներկայ գտնուող անդամներու կէսին համամասնութեամբ: Եթէ ներկաներու թիւը չամբողջանայ, ժողովը դարձեալ կը հրաւիրուի, առաջին գումարումէն առ առաւելն երկու շարքի ետք: Այս անգամ նիստը օրինական կ'ըլլայ ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամներուն թիւը:

Լուծման որոշումը կը մասնաւորէ այն բարեգործական հաստատութիւնը, որուն պիտի փոխանցուին Միութեան ինչքերը, Ընկերային Գործոց նախարարութեան հաւանութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Փրինսիփը Սարայելոյի մէջ Աւստրիոյ գահաժառանգ Ֆերտինանտ Ֆրանսիսը սպաննեց 1914 Յունիս 28-ին:

2.- Առաջին Աշխարհամարտին ռազմական գործողութիւնները սկսան 1914 Յունիս 28-ին, երբ Աւստրո-Հունգարիան հարուածեց Սերպիան: Պատերազմը ծաւալ սկսաւ ստանալ Օգոստոսին, սակայն, երբ Գերմանիան պատերազմ յայտարարեց Ռուսիոյ դէմ (Օգոստ. 1), Անգլիան՝ Գերմանիոյ դէմ (Օգոստ. 4) ելլաւ:

3.- Թուրքերը ման նաւատորմը Ռուսիոյ սեւծովեան նաւահանգիստներուն վրայ յարձակում գործած էր 29-30 Հոկտ. 1914-ին, հետեւաբար Ռուսիան Թուրքիոյ դէմ պատերազմ յայտարարած էր 1914 Նոյ. 2-ին: Թուրքիան միացած էր Գերմանիա, Աւստրո-Հունգարիա զինակցութեան, մինչդեռ Ռուսիան, Անգլիան եւ Ֆրանսան կը ներկայացնէին Անքանքը (Համաձայնականներ):

4.- Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընը խաղաղութեան հաստատման ի նպաստ իր 14 կէտերէ բաղկացեալ նշանաւոր ճառը Քոնկրէսին առջեւ խօսած է 8 Յունուար 1918-ին: Այդ 14 կէտերը կը նպատակադրէին՝ Ա.- Զնչումը գաղտնի դիւանագիտութեան, Բ.- Ազատութիւնը ծովերու մէջ նաւարկութեան, Գ. Վերացումը ազգերու միջեւ տնտեսական կաշկանդումներու, Դ.- Նուազեցումը սպառազինութեան, Ե.- Անշառ ճըշդումը գաղթային պահանջներու. ապա նաեւ «վերականգնումը»՝ Զ. Ռուսիոյ, Է.- Պելճիքայի, Ը.- Ֆրանսայի. «վերածննդումը» սահմաններուն՝ Թ.- Իտալիոյ, Ժ.- Աւստրո-Հունգարիայի, ԺԱ.- Պալբաններու եւ ԺԲ.- Թուրք կայսրութեան, ԺԳ.- Անկախութիւնը Լեհաստանի, ԺԴ.- Ստեղծումը ազգերու ընդհանուր ընկերակցութեան մը:

5.- Նկատի ունի Հայ Սահմանադրական Ռամկավար, Վերակազմեալ Հնչակեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւններն ու Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

6.- Յարական կառավարութիւնը ո՛չ միայն Հայաստանի ազատագրութեան գծով կեղծ խոստումներ կատարած էր, այլեւ՝ 1914 Յունիս 23-ին ռուսական բանակը կամաւորներով համալրելու յայտարարութիւն հանած ու, յետ բանակցութեան, Սեպտեմբերի կէսերուն Ազգային Բիւրոյին թեւադրած էր կազմակերպել հայկական կամաւորական ջոկատներ: Այդ առի-

թով տարաձայնուած էր թէ Ֆարը իբրև թէ հայերուն ուղղած է կոչ մը (տես՝
Լևոն Թիթինճեան, Յուշեր, Պէյրութ, 1975, էջ 29):

7. Տեփոյեանը նկատի ունի գաղթականական այն ակիբը, որ հետևեցաւ ռուսական բանակի նահանջին՝ 1915 Յուլիս 2-ին կատարուած:

8.- Կ'անկարկուի Վասպուրականի հերոսամարտը 1915-ի Ապրիլին:

9.- Խօսքը Հայ Սահմանադրական Ռամկավար եւ Վերակազմակերպման կոսակցութիւններու մասին է:

10.- «Վան-Տոսպ»ին մասին յաւելեալ տեղեկութիւններու համար տես՝ Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 335-338:

11.- Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովը կը բաղկացնէին Դաւիթ Խան Բ.ը, Ալեք Մելիք Աղարեանը, Համբ. Առաքելեանը, Միք. Արամեանը, Պետրոս Տեփոյեանը, Ստ. Մալխասեանը, ԿրոՖ. Միք. Մինասեանը, Ռուբէն Յովնանեանը, բժշկապետ Բ. Նաւասարդեանը, Արշ. Մխիթարեանը, Աւետիք Եղիկեանը եւ երեք ուրիշներ:

12.- Բժիշկ Մովսէս Յովսէփեանը արժանացած է նաեւ «Փրկութեան հրեշտակ» պատուանունին: Այս առաքելատիպ զործիչին մասին տես «Տոքթ. Մովսէս Յովսէփեան» գրքոյկը, Պէյրութ, 1986:

13.- Ռուսական Հոկտեմբերեան յեղափոխութենէն հետք ռուս բանակի տեղաշարժերուն հետեանքով Վանի հայութեան երկրորդ նահանջը կը կոչուի արուեստական, քանի որ Տեփոյեանն ալ, Արմենակ Եկարեանին նման (տես՝ Արմենակ Եկարեան, Յուշեր, Բ. տպգրք., Պէյրութ, 1985, էջ 226-227), ունէր այն համոզումը՝ թէ կարելի էր դիմադրել թրքական որեւէ յարձակման փորձի ու պահպանել Վասպուրականի եւ յարակից շրջաններու հայկական դիմադիմքը:

14.- Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ը Թիֆլիս այցելած է 1916 Յուլիս 9-ին:

15.- «Հայաստան» օրաթերթին հիմնադրման պարագաներուն եւ նպատակին մասին յաւելեալ ծանօթութիւններու համար տես՝ Լևոն Թիթինճեան, Յուշեր, Պէյրութ, 1975, էջ 156-170:

16.- Արեւմտահայ Առաջին Համագումարը տեղի ունեցած է Երևան, 1917 Մայիս 2-էն Մայիս 11: Հոն ղօրավար Անդրանիկը ընտրուած է պատմական նախագահ, իսկ նախագահական կազմը բաղկացուցած են Լևոն Շանթը, Արտակ Դարբինեանն ու Վրթանէս Փափազեանը: Մասնակից պատգամաւորներու թիւին շուրջ կայ շփոթ մը: Հայկական սովետական հանրա-

գիտարան»ը իր Բ. հատորին մէջ (էջ 63) կը հաղորդէ թէ 80 պատգամաւորներ մասնակցած են եւ ընտրած Արեւմտահայ Ազգային Խորհուրդը 15 անդամով ու 10 փոխանդամով կազմուած: «Հայ ժողովուրդի պատմութիւն» ակադեմական հատորին մէջ (Զ. հատոր, Երեւան, 1981, էջ 614) պատգամաւորներու թիւն է 59: Ծառուր Աղայեանը իր «Հայ ժողովուրդի ազատագրական պայքարի պատմութիւնից» (Երեւան, 1986, էջ 534) երկին մէջ կ'ըսէ թէ 64 պատգամաւոր վճռական ձայնով, իսկ 14 պատգամաւոր ալ խորհրդակցական ձայնի իրաւունքով ներկայ գտնուած են յիշեալ համագումարին: Լեւոն Թիւթիւնճեանը իր «Յուշեր»ուն մէջ (Պէյրութ, 1975) պատգամաւորներու համար կը նշէ 60 թիւը՝ 400 հրաւիրեալներու կողքին. իսկ Դարբինեանը իր «Հայ ազատագրական շարժման օրերէն»ին մէջ (Փարիզ, 1947) կ'ըսէ թէ 70-է աւելի պատգամաւորներ կը մասնակցէին...:

Համագումարին մասին կարդալ նաեւ Թիւթիւնճեանին (էջ 172-180) եւ Դարբինեանին (էջ 347-350) նշուած գործերը:

17.— «Ռամկավար օղային տորմիդ»ին մասին նաեւ տես՝ Մանուկ Գ. Ժիզմէճեան, Պատմութիւն ամբիւրձնայ փաղափական կոսակցութեանց, Ֆրեզնո, 1930, էջ 412-416:

18.— 1920 Օգոստոս 10-ին կնքուած Սուրի Դաշնագիրը, որուն տակ հայոց կողմէ ստորագրած էր Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանը, իր Զ. գլուխը ամբողջութեամբ յատկացուցած էր Հայաստանին (յօդուածներ 88-93): Հոն, ի միջի այլոց, Թուրքիան Հայաստանը կը ճանչնար իբր ազատ եւ անկախ պետութիւն, եւ ստորագրող կողմերը կը հաւանէին Մ. Նահանգներու նախագահ Ուիլսոնին իրաւարարութեան թողուլ էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիթլիսի նահանգներուն մէջ հայեւթրքական սահմաններու ճշգրտմը:

19.— Սուրի Դաշնագրին տրամադրութեանց համաձայն, Ուիլսոնը իր իրաւարարական վճիռը կ'արձակէ 1920 Նոյ. 22-ին, Դաշնակից Պետութեանց Գերագոյն Խորհուրդի նախագահին ուղղուած պաշտօնագրով մը: Ուիլսոնին նախագծած սահմաններով Արեւմտահայաստանի հողերէն 68,500 քառ. քառ. միլիմետր տարածութիւն պիտի կցուէր Արեւելահայաստանին եւ Տրապիզոնը պիտի դառնար հայկական նաւահանգիստ: Սակայն Հայաստանի Խորհրդայնացումը եւ վերահաս այլ դէպքեր ու միջազգային շահեր անգործադրելի դարձուցին ուիլսոնեան իրաւարարութիւնը: Յաւելեալ մանրամասնութեանց համար տես՝ «Հայկական սովետական հանրապետարան», հտ. ԺԱ., Երեւան, 1985, էջ 444-445 եւ Գ. Լազեան, Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 277-284:

20.— 1923 Յուլիս 24-ին կնքուած Լոզանի Դաշնագրով Հայկական

Հարցը վերածուեցաւ... գաղթականական աննշան խնդրի և Դաշնագիրը իր 42-րդ յօդուածով խօսեցաւ Թուրքիոյ ոչ-խալամ փոքրամասնութիւններու ազգային իրաւունքներուն պաշտպանութեան մասին միայն: Մանրամասնութեանց համար տես՝ «Լոզանի հաղաղութեան հորհրդաժողովը» գիրքը, Պէյրութ, 1983, ուր մէկտեղուած են Միացեալ Հայկ. Պատուիրակութեանց գործունէութեան մասին Լեւոն Բաշալեանին օրագրութիւնը, Լ. Բաշալեանին և Աղզ. Պատուիրակութեան նախագահ Գ. Նորատունկեանին միջեւ փոխանակուած նամակները և Հայ Իրաւանց Կեդրոնական հորհուրդին յուշագիրը:

21.- 1942-ին Թուրք Հանրապետութիւնը հրապարակեց Վարլըք Վեր-կիսիի (Ունեցուածքի Հարկ) օրէնքը, որուն համաձայն հայերը, յոյներն ու հրեաները պետական գանձարան պիտի մուծէին ունեցուածքի այնպիսի հարկ մը, որուն հիմնական նպատակն էր յիշեալներուն տնտեսական քայքայումը: Հարկը ժամկէտին չմուծողները տաժանակիր աշխատանքի համար կ'արտաքսուէին Անատոլիոյ խորքերը:

22.- Ալեքսանտրէթի սանճաքը (ներկայիս Հաթայը), որուն ղգալի մէկ մասը Հայկական Կիլիկիոյ կաղմին մէջ կը գտնուէր, 1920-ին մտցուած էր Ֆրանսայի հոգատարութեան յանձնուած Սուրիոյ կաղմին մէջ. իսկ 1936-ին ֆրանսիական պալամապրին համաձայն՝ ինքնավար մարզ սկսաւ նկատուիլ, մնալով Սուրիոյ կաղմին մէջ: 1937-ին Սանճաքը անցաւ Ֆրանսայի և Թուրքիոյ համատեղ հսկողութեան տակ: 1938-ին, ֆրանսական հաւանութեամբ, թրքական զօրքեր մտան Սանճաք, ուր ստեղծուեցաւ Հաթայի ինքնավար պետութիւնը, որ 1939-ի Յունիսի կցուեցաւ Թուրքիոյ՝ հակառակ ոչ-թուրք բնակիչներու կամքին և Սուրիոյ ընդդիմութեան: Յաւելելով մանրամասնութեանց համար տես՝ Ալեքս. Եափուճեան, Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Ա. հատոր, Գահիրէ, 1977, էջ 1055-1086:

23.- Ալեքսանտրէթի սանճաքի տունալ օրերու պատմութեան և Ռ. Ա. Կուսակցութեան դերին, ըստ Ռ. Ա. Կ. Կեդրոնական Արխիւի նիւթերուն, պիտի անդրադառնանք առանձին աշխատութեամբ մը ներկայ տարեշրջանին:

24.- Թէև 2. Յ. Դաշնակցութեան պատմագիրները կը գրին թէ Դաշնակցութիւնը չէ մասնակցած 1925-ին կեանքի կոշուած Պրոմիթէի Ուխտին (տես՝ օրինակ՝ Գ. Լադեան, Հայաստան և Հայ Դատը հայեւորս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1957, էջ 328-329), որուն նպատակն էր պայքարիլ «Կովկասի ռուս-պոլշեիկեան բռնադրաման դէմ», իրողութիւնները մեզ կը կանգնեցնեն հակառակ տեսակէտին վրայ, ի մասնաւորի նկատի ունենալով Շահան Նաթալիին «Ալեքսանդրապոլի Դաշնագրէն 1930-ի

կովկասահան ապստամբությունները» գիրքին Բ. Հատորը՝ «Փետրուար 18-ի ապստամբությունն Պրոմէթէի հրապարակումը», Մարտէլ, 1935:

25.- Հիթլերական Գերմանիոյ հետ դրոյական գործակցութեան Ն. Յ. Դ. վերին իրաւասու մարմնէն «անկախաբար» ըլլալուն համոզուած չենք: Տեփոյեանը Դաշնակցութեան ղերագոյն մարմինն եւ «օտար աղբիւր»ի մը հաւաստիքներուն հիման վրայ է որ այդպէս արտայայտուած է: Յամենայն դէպս, «գրոյական գործակցութեան» մասին կ'արժէ կարգալ Բ. Մարտիրոս-եանին «Դաշնակցութեան հակաժողովրդական գործունէութիւնը երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներին» գրքոյկը, Գ. հրատ., Երևան, 1986:

26.- Զկրցանք ստուգել օտաւ աղբիւրին ինքնութիւնը: Այս առթիւ նշենք թէ ներկայ հատորին «Յաւիւում» բաժնով կ'անգրագանանք Բ. Ա. Կ. - Ն. Յ. Դ. բանակցութիւններու հարցին:

27.- Այդ մասնաւոր նկատումները կը բխէին Գերմանիոյ հետ «դրոյական գործակցութիւնէն»: Տես՝ էօժէն Բաբաղեան, «Ինքնակենսագրութիւն եւ յուշեր», Գահիրէ, 1960, էջ 91-95:

28.- Այդ հրատարակութիւններուն մէջ են Արշակ Ալպոյաճեանին «Պատմական Հայաստանի սահմանները», Մեսրոպ Գույումճեանին «Ընդարձակ բառարան հայերէն անգլերէն», Եղիա Քասունիին «Նախահայկական Հայաստան» գիրքերը, Արտակ Դարբինեանին եւ Արմենակ Եկարեանին յուշագրութիւնները եւլն.:

29.- Հայ Ազգային Հիմնադրամին մասին տես՝ Աւետիս Եսփունճեան, «Պատմութիւն Հայ Ազգային Հիմնադրամի 1942-1982» աշխատութիւնը, Գահիրէ, 1985 եւ մեր գրախօսականը անոր մասին, «Զարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 1985 Սեպտ. 12:



ՅԱԻԵԼՈՒԱԾ

82

Ռ. Ա. Կ. - Հ. Յ. Դ. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հոս տեղին կը գտնենք կարելի հակիրճութեամբ տնդարա-
դարձնալ 1924-1940 տարիներու Ռ. Ա. Կ. - Հ. Յ. Դ. յարաբերու-
թիւններու հարցին, հիմնուելով միայն Ռ. Ա. Կ. Կեդրոնական
Արխիւի նիւթերուն վրայ եւ նկատի ունենալով միայն Ռ. Ա. Կ. Ի
ընդհանուր պատգամաւորական ժողովներու եւ Կեդրոնական
Վարչութեան մերաբերող կեցուածքները:



1924-ի սկիզբը Փարիզի մէջ կայացած Ռ. Ա. Կ. Բ. ընդ-
հանուր պատգամաւորական ժողովը կ'որոշէ:

Նկատի ունենալով Հ. Յ. Դաշնակցութեան վիճեցնայի
համագումարին մէջ տուած վերջին որոշումը, որ է պայքարի
Հայաստանի կառավարութեան դէմ. պայքար, որ իսկապէս կը
մղուի արտասահմանի մէջ անոր կողմէ, եւ նկատելով որ այդ
կազմակերպութիւնը կը պահէ իր դաւադրական եւ արկածա-
խրդրական ուղղութիւնը, մեր կուսակցութիւնը չի կրնար
գործակցիլ անոր հետ, ցորժան ան կը յարատեւէ իր այս ուղ-
ղութեան մէջ:

1926-ի Մարտ 6-էն 11 դա՛րձեալ Փարիզը դամարուած
Ռ. Ա. Կ. Գ. ընդհ. պաղմ. ժողովը կ'որոշէ:

Պահելով հանդերձ այն բանաձեւը, որ նախորդ Պատգմ.
Ժողովը որդեգրած է՝ Դաշնակցութեան հանդէա իւր դիրքը
նշոյելու համար, ներկայ ժողովը կը գտնէ թէ վերջին երկու
տարուայ ընթացքին, աւելի քան որեւէ ժամանակ այդ Կուսակ-
ցութիւնը երեսան եկաւ այն տեսակ գործունէութեամբ ու ա-
րաքննելով, որ անվիճելիօրէն ցոյց կու տան թէ այդ Կուսակ-
ցութիւնը անդարմանելի աւեր կը գործէ նոր սերունդին մէջ եւ
առհասարակ ամբողջ ժողովուրդին նկարագրին, հոգիին եւ
մտքին վրայ իւր պատեհապաշտ, իշխանամոլ, այլամբժ հո-
գեբանութեամբ եւ այդ հոգեբանութեան տրամադրած այլան-
դակ միջոցներով:

Ուստի ժողովը կը գտնէ թէ Դաշնակցութեան դէմ անողոք պայքարը պէտք է շարունակուի պաշտպանելու համար այն հիմնական ու տեւական վնասներու դէմ, որ այդ հոգեբանութիւնը եւ գործունէութեան եղանակը անխուսափելիօրէն պիտի յառաջացնեն մեր ժողովուրդի կեանքին մէջ: Այս առիթով համաձայն Բ. Ընդհ. Պատգ. ժողովի հրահանգին, կ'որոշէ չպահել ոեւէ յարաբերութիւն այդ Կուսակցութեան կամ այդ Կուսակցութիւնը ներկայացնող Հ. Հ. Պատուիրակութեան անունը կրող մարմնոյն հետ եւ ջանալ որ այս վերջինի ստորագելիքը վերջ գտնայ:

Դարձեալ Փարիզի մէջ 1929 Յուլիս 20-31 զումարում Դ. Ընդհ. պատգ. ժողովը եւ բանաձեւէ.

Պատգ. ժողովը ֆննութեան ենթարկելով Հ. Յ. Դաշնակցութեան հանդէպ Ռ. Ա. Կուսակցութեան վերաբերման խնդիրը, կը պահէ նախորդ Պատգմ. ժողովին որոշումը, ըստ որում Դաշնակցութեան հետ գործակցութիւնը կարելի չէ, որքան աւելնէ որ ան կը շարունակէ իր անցեալի վնասակար ուղղութիւնը Հայաստանի հանդէպ եւ գաղութներու մէջ:

Բայց միանգամայն ազատութիւն կուտայ կեդր. վարչութեան, որպէսզի անհրաժեշտ բոլոր երաշխաւորութիւնները ստանալով՝ աստիճանաբար կարելի դարձնէ գործակցութիւնը ազգային որոշ եւ ստիպողական խնդիրներու շուրջ. այն պարագային որ,

Ա.- Դաշնակցութիւնը ուղղամիտ ֆննդատի դիրքին մէջ սահմանափակուի, հրաժարելով Հայաստանի եւ Ս. Միութեան դէմ պայքարէն եւ դրապէս աջակցի վերաշինութեան գործին,

Բ.- Հրաժարի գաղութներու մէջ իր գործադրած ապօրինի եւ դատապարտելի միջոցներէն, որոնք մինչեւ ահաբեկում առաջ կ'երթան,

Գ.- Հրաժարի Թուրքիոյ հանդէպ իր սնամէջ եւ արկածախնդիր քաղաքականութենէն, որ շեշտուած է իր վերջին Ընդհ. ժողովի յայտարարութեան մէջ,

Եւ այս ամէնուն համար գործնական ապացոյցներ տայ:

Ե. Ընդհ. պատգ. ժողովը, 10 Օգոստոսէն 1 Սեպտ. 1931-ին կայացած ի Փարիզ, Կուսակցութիւններու Հանդէպ վերաբերումի հարցին առիթով կը բանաձեւէ.

2. Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ.— Այս հարցի քննութեան տուեն ժողովր աչքի առջև ունենալով այդ կուսակցութեան Բիւրոյի գործակցութիւն եւ համագաղութային մարմին ստեղծելու առաջարկ ընող նամակը, մեծամասնութեան քուէով ընդունեց հետեւեալ պատասխան-բանաձեւը, որ կը ճշգէ նոյն ատեն այդ մարմնի հանդէպ մեր կուսակցութեան վերաբերումը:

«Պատգ. ժողովը իրաւունք կուտայ յաջորդ կեդր. վարչութեան խօսակցութեան մտնելու Հ. Յ. Դ. Բիւրոյին հետ՝ անոր կողմէ իրեն ուղղուած նամակին հետեւանով, որպէսզի ապահովելէ ետք այդ կուսակցութեան յարումը Հայաստանի պետութեան հանաչումի ու Հայաստանի վերաշինութեան եւ ներգաղթի հանդէպ դրական փաղափականութեան մը եւ ձեռք բերելէ ետք այդ կուսակցութեան հաստատ յանձնառութիւնը անջատ, արկածախնդրական եւ վտանգաւոր փաղափականութիւն չվարելու մասին, ստեղծուի երկու կուսակցութիւններու համաձայնութիւնը, նպատակ ունենալով գաղութներու ազգապահպանման, մշակութային եւ կրթական շարժումներուն տրուելիք ոյժն ու օժանդակութիւնը եւ այդ գաղութներուն ներքին անդորրութիւնն ու փաղափայցիական ապահովութիւնը:

«Այն պարագային որ կեդր. վարչութիւնը համոզում կը գոյացնէ ձեռք բերուած արդիւնքներու մասին՝ բարեացակամութեամբ նկատի կ'առնէ Հ.Յ.Դ. Բիւրոյի Համագաղութային կազմակերպութեան առաջարկը, պայմանաւ որ ատոր գործնականացման հաւանութիւնը ստանայ մեր Շրջանային վարչութիւններու 2/3-ի ձայնով»:

Այս խնդրի քննութեան տուեն երեւան եկաւ թէ անցեալ տարի երբ Սուրբոյ Հայութեան վիճակը մտահոգիչ ընդթ մը ստացեր էր, մեր կեդրոնական վարչութիւնը նախաձեռնած էր խօսակցութեան մտնելու Հ.Յ.Դ. Բիւրոյին հետ, զորն է Հայերու կողմէ Հայթայթութեան պատրուակները խախտելու մտահոգութեամբ: Այդ նախափորձը ասպարդիւն անցած է «Յատույ»ի մէջ ճիշդ այդ միջոցին, այդ նիւթին շուրջ հրատարակուած երկու զրգոյիչ խմբագրականներու պատճառով:

Անկէ ետք՝ Բիւրոյի անդամ մը անպաշտօն խօսակցութեան մասած է մեր պատասխանատու մէկ ընկերոջ հետ. տեղի ունեցած է երեք խօսակցութիւն «Հոգր քննելու» համար միայն:

Ռ. Ա. Կուսակցութեան Զ. ընդհ. պաղմ. ժողովր կրկին կը գումարուի Փարիզի մէջ, 6-16 Օգոստոս 1934-ին:

Ընթացաւարա կեդր. վարչութիւնը իր համարադրու-

թեան մէջ կը նշէ թէ Փարիզ գտնուող Հայաստանի Գործադար-
ներու Խորհուրդի նախագահ Սահակ Տէր Գարրիէլեանը իրազեկ
պահելէ հտք Դաշնակցութեան Պլուրոյին հետ բանակցելու մեր
տրամադրութեան, մեր բանազնայեկերը ընդառաջ գացած են
Դաշնակցութեան առաջարկին: Խօսքը տանք տեղեկարարին:

Բանակցութիւնները տեւեցին երկար եւ եղան դժուար:
Չէինք կրնար զիջիլ մեզ համար էականէն, դժուար էր անոնց
համար լինի դիրքը որ գրաւած էին տասնեակ տարիներով եւ
դարձուցած իրենց գոյութեան իրաւունք տուող միակ կոռուանը:

Երկար բանակցութիւններուն արդիւնքն եղաւ բանաձե-
ւումը կարգ մը սկզբունքային հարցերու, ինչպէս վերաբերում
Հայաստանի խորհրդային իշխանութեան հանդէպ, արեւմտա-
հայ դատ եւ գաղութներու ինքնապահպանում, համագումարի
եւ համագաղութային մարմնի մը ստեղծումին ազդակներովը եւ
գործնական հարցերու, ինչպէս Մայիս 28, Նոյեմբեր 29, դրօ-
շակ, «Մեր հայրենիք» եւլն.:

Ըստ Պառզմ. Ժողովի որոշման գործակցութեան համար
ռեւէ հասկացողութիւն եւ համաձայնութիւն իրենց ուժն ու ար-
ժէքը ունենալու համար պիտի ենթարկուէին Շրջանային վար-
չութիւններու հանրաքուէին:

Գործը սակայն մինչեւ այդ կէտին հասցնելու պէտք
չմնաց: Բանակցութիւններու ընթացքին իսկ մեր երկու կարե-
ւոր Շրջանակները, Ամերիկա եւ Եգիպտոս զգացուցին իրենց
սառնութիւնն ու վերապահութիւնը, իսկ Դաշնակցութիւնը իր
օրկաններու զանազան արտայայտութիւններով եւ Բարիզի մէջ
կատարուած Մայիս 28-ի տօնի ոգիով առիթ հայքայքեց որ
մենք ստուգենք, թէ այդ կուսակցութիւնը պատրաստ չէր լին-
լու իր հակապետական դիրքը, ամէնէն էական պայմանը մեր
գործակցութեան*:

Մեր այդ եզրակացութիւնը հաղորդեցինք այդ կուսակ-
ցութեան ղեկավար մարմնին եւ վերջ տուինք բանակցութիւն-

* Ռ.Ա.Կ. Կեդրոնական վարչութեան 7 Յունիս 1939-ի նիստին, Յով-
հաննէս Պօղոսեանը կը յիշեցնէ թէ Ռ.Ա.Կ.ի բանազնացներ Արտակ Դար-
բինեանն ու Հրաչ Երուանդը բանակցութեանց վերջ տուած են Մայիս 28-ի
առիթով զաշնակցականներու տօնակատարութեան ընթացքին սրահէն իբրեւ
բողոքի նշան հեռանալէ յետոյ, քանի որ զաշնակցականները պարզած են
հոգոյն, Դաշնակցութիւնը հռչակած են իբրեւ հեղինակ Հայ Հանրապետու-
թեան հաստատման եւլն.:

ներուն, ձգելով որ իրենց համար հասունցեն մեր էական պայմանին որդեգրումը, նոր փորձի մը վերադառնալէ առաջ...

Զ. ընդհ. պաղմ. ժողովը կ'եզրակացնէ.

«Նկատելով որ դաշնակցութեան բիւրոյի առաջարկին ի պատասխան մեր նախորդ Ընդհ. Պատգմ. ժողովի բուհարկած որոշումով, անոր եւ մեր կուսակցութեան վերին մարմիններուն միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները ժխտական արդիւնքի յանգեցան:

«Նկատելով որ դաշնակցութիւնը անկէց ի վեր աւելի ուժգնօրէն շեշտեց կոռիւրդային Հայաստանի դէմ թշնամական դիրքը ու անուղղամիտ պայքարով մը ջանաց վնասել ներգաղթի գործին:

«Նկատելով որ իր արկածախնդրական ու դաւադրական գործունէութիւնը շարունակեց ու սասուկացուց բանակցելով փաղափական այլ եւ այլ խմբակներու եւ ինչ ինչ կառավարութեանց հետ, որոնք մոլեգին թշնամի են կոռիւրդային Միութեան, ուրեմն եւ մեր արդի Հայաստանին:

«Նկատելով որ եղբայրասպան ահաբեկչական մերսոյր ան սկսաւ աւելի մեծ քափով ի գործ դնել իր փաղափական հակառակորդներուն դէմ:

«Պատգմ. Ընդհ. ժողովս կ'որոշէ. ցորչափ դաշնակցութիւնը կը մնայ իր դաւադրական ահաբեկչական եւ հակաՀայաստանեան ուղղութեան մէջ, շարունակել աւելի քան երբեք կուսակցութեանս գաղափարական ու հայրենապաշտպան պայքարը անոր փաղափական ու կուսակցական գործունէութեան դէմ ու նաեւ բոլոր օրինական միջոցները ձեռք առնել անոր ահաբեկչական գործունէութեան վերջ դնելու համար:»

Կուսակցութեանն է. ընդհ. պաղմ. ժողովը կը դուրսբերուի Գահիրէ, 19 Սեպտ.-24 Հոկտ. 1937-ին:

Կեդրոնական Վարչութիւնը իր տեղեկագրին մէջ պահանջաւոր առիթներով անդրադառնալով Հանդերձ Հ.Յ.Դ.ի ընթացքին, առանձին հասուածով մըն ալ կը հաղորդէ.

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՄԵՐ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Նախորդ Զ. Ընդհ. Պատգմ. ժողովը այս կազմակերպութեան հանդէպ մեր ուղեգիծը որոշած էր յատուկ բանաձեւով, որու համաձայն ոեւէ գործակցութիւն կ'արգիլուէր. ցորչափ անիկա կը շարունակէ իր դաւադրական գործունէու-

թիւնը Հայաստանի դէմ եւ ահաբեկչութիւնը՝ հայ գաղութներու մէջ: Միաժամանակ յանձնարարուած էր, նոյն ժողովին կողմէ վարչութեանս. ամէն օրինական միջոցներու դիմել, հակազդելու համար այդ գործունէութեան:

Նիւ Եորքի ռիփէն յետոյ հայ հանրային կարծիքին ցոյց տուած բուռն վրդովումը եւ դատապարտութիւնը, ինչպէս նաեւ օտար երկիրներու կառավարութեանց աչքին կասկածելի ըլլալու վախը պատճառ եղաւ, որ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը դադար տայ ահաբեկչութեան, քէեւ տեղ տեղ, ինչպէս Սուրիոյ կարգ մը շրջաններու մէջ ահաբեկչական արարքներ տեղի կ'ունենային մինչեւ վերջերս. Դաշնակցութեան հակառակորդներու կամ նոյն կազմակերպութենէն հեռացած անհատներու դէմ: Ամէն պարագային մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը երեսն չբերաւ ոչ մէկ զոյումի արտայայտութիւն կամ ցաւ՝ գործադրուած ռիփներուն համար, ինչ որ ցոյց կու տար այդ ռիփներուն մտադրուած եւ գոնէ հաւանութիւն գտած ըլլալը այս կազմակերպութեան վարիչ մարմիններուն կողմէ:

Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ գէնէր իր հակառակորդներուն դէմ որ զրպարտութիւն եւ ցուցմունքներ ընելու էր տեղական իշխանութեանց մօտ. բստ առաջնոյն շարունակուեցաւ, քէեւ ուր որ անհրաժեշտ էր. մեր կողմէն Գահիրէի մէջ եւ Շրջանակները իրենց կարգին՝ իրենց գտնուած տեղւոյն կառավարութեանց մօտ, ըրինք անհրաժեշտ աշխատանքները, այդ զրպարտութեանց հեղինակները ֆօլագերծելու համար:

Ուրեմն Հ. Յ. Դաշնակցութեան հետ ոեւէ գործակցութեան կամ շփումի հնարաւորութիւն չկար: Այսուհանդերձ կարգ մը գաղութներու տեղական պահանջներու հարկադրանքին տակ ներքին եւ առժամանակեայ հասկացողութեան փորձեր կատարուեցան, եկեղեցական եւ բնորական հարցերու շուրջ. ոչ թէ ուղղակի կուսակցութենէ կուսակցութիւն, այլ առաւելապէս չէզոք անհատներու կամ ազգային իշխանութեանց միջնորդութեամբ: Այսպէս է, օրինակ, որ Գահիրէի վերջին թեմական բնորութեանց առթիւ համամիտ գտնուեցանք մէկ ցանկի վրայ բուէարկելու: Իսկ Աթէնքի մէջ ֆօլիսիօսի հիման վրայ ազգային վարչութիւն մը կազմելու արտօնուեցան մեր այնտեղի րնկերները:

Բնդհանուր գիծէն շեղում մըն էր սակայն, Բարիգի մէջ Հայ Գաղթ. Կեդր. Յանձնաժողովի եւ դաշնակցական գաղթ. օֆիսի միջեւ ստեղծուած գործակցութիւնը «միացեալ» անուան

տակ եւ Հ. Բ. Ը. Միութեան կեդր. ժողովին նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ: Որքան ալ այդ գործակցութիւնը, որպէս հարկեցուցիչ պարագայ մը ներկայացուած ըլլար Ֆրանսայի մէջ տիրող տագնապին պատճառով, եւ Հայոց գործադրկութեան եւ հպատակութեան խնդիրներուն դարման մը տանելու համար, սակայն յիշեալ երկու մարմիններու քաղաքական բնոյթը նկատի ունենալով՝ մեր դիտողութիւնը ըրինք *«միացեալ»* ին անդամակցող մեր ընկերներուն եւ պահանջեցինք այն մարմինն լուծուի, թէ գրաւոր կերպով եւ թէ Բարիքի մէջ, ընկեր Յ. Պօլոսեանի մեր տուած հրահանգներով: Կը ցաւինք ըսել թէ մեր այդ դիտողութիւնները մնացին անհետեւանք, թէեւ ի վերջոյ այս մարմինը ինքնին կորսնցուց իր կարեւորութիւնը, մնալով միայն նպաստադրամի բաշխողի դերին մէջ:

Մեր ընդհանուր գիծէն շեղում մըն էր նոյնպէս ԱՊԱ-ԳԱՅԻ, որպէս շաքաթաքերթ վերհրատարակումէն յետոյ, Հ. Յ. Դաշնակցութեան ուղղուած գործակցութեան կոչը, գորդաշնակցական մամուլը չուշացաւ օգտագործելու, կուսակցութեան մէջ հեղինակած մը առաջացնելու նպատակով: Այս շեղումին մասին եւս երիցս դիտողութիւն ըրինք Արեւմտ. եւրոպայի Շրջ. վարչութեան:

Որքան ալ Դաշնակցութեան քրքաւայ մասին մէջ գրուելին տարբեր, որ համագործակցութեան մը բաղձան մեղի հետ, եւ սակայն այդ համագործակցութեան արգելք, մեր կարծիքով, կու գայ նոյնինքն այս կազմակերպութեան ռուսահայ ղեկավարութենէն եւ անոր որդեգրած հակաՀայաստանեան եւ հակազգային ուղղութենէն, որ ցարդ անփոփոխ կը մնայ:

Եւ ժողովը կ'ըզրակացնէ.

Է. Ընդհանուր Պատգմ. ժողովը. նկատելով որ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը կը շարունակէ իր հակաՀայաստանեան արկածախնդրական ուղղութիւնը եւ գաղութներու մէջ մեր կուսակցութեան հանդէպ անուղիղ եւ անպարկեշտ միջոցներով պայքարը կը գտնէ թէ այդ ղեկավարութեան հետ գործակցութիւն մը հնարաւոր չէ:

Ռ.Ա.Կ.-Հ.Յ.Դ. գործակցութեան նոր փորձը, գաշակցականներուն նախաձեռնութեամբ, սկիզբ կ'առնէ 1938-ի Մարտին:

Դաշնակցութեան Պիւրոյի անդամ Ստեփան Եսայեանը ռամկավար Կեդրոնի տաճարակա Վահան Թէքէեանին յայտնած ըլլալով թէ Հ.Յ.Դ.ն տրամադիր է դադարաւրի փոխանակում ունենալու, բայց աստի, իրաւարան Օ. Մամառեանն ալ Ռ.Ա.Կ.ի Կեդրոնի անդամ Բժիշկ Հայկ Վառվառեանին նման միտք յայտնած ըլլալով՝ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութիւնը իր 16 Մարտ 1938-ի նիստին կ'որոշէ որ Թէքէեանն ու իրաւարան Շաւարշ Սեւօնքեանը (Կեդրոնի տաճարակիր) տեսակցին դաշնակցական ներկայացուցիչներու հետ:

Տեսակցութիւնը տեղի կ'ունենայ Մարտ 29-ին, Ս. Եսայեանին գրասենեակը, ի ներկայութեան Ռուբէն Տէր Մինասեանին: Մեր բանադնացիները կը չեղտն թէ տեսակցութիւնը ունի անհատական հանգամանք: Քննարկման նիւթ կը դառնան ամենաէական հարցերը: Երեք ժամ տեւած այդ հանդիպումէն թէեւ մեր բանադնացիները զուրս կու գան այն տպաւորութեամբ՝ թէ Հ.Յ.Դ.ն քաղաքական գործունէութեան յստակ եւ որոշ ծրագիր չունի, Կեդրոնական Վարչութիւնը իր 30 Մարտի նիստով կ'որոշէ շարունակել տեսակցութիւնները՝ եթէ նոր հրաւերներ գան:

Կ. Վ.ի 21.9.1938-ի նիստին Թէքէեանը կը զեկուցէ թէ Բժիշկ Ե. Սաթնասեանին, Ա. Ջամադեանին ու Գ. Լազեանին հետ, առաջինին իսկ խնդրանքով, երկու տեսակցութիւններ կատարած են ինք ու Շ. Սեւօնքեանը, մին Ռօն ար ԳԱնկլէի մէջ, իսկ միւսը՝ Սեւօնքեանին գրասենեակը: Կ'ակնկալուին նոր հանդիպումներ:

Թէքէեանը կ'ըսէ. «Իրենց բնդհ. ժողովէն յետոյ է որ կը կատարեն այս տեսակցութիւնը, որուն նպատակն է՝ քաղաքական ներկայ չլիթ կացութեան հանդէպ՝ համաձայնութեան մը գալ Ռ.Ա.Կ.ի հետ, որպէսզի ներքին համագործակցութեան մը կարելիութիւնը տպահովուի եւ ազգը պատրաստ գանուի արտաքին միակ ձակատով մը ներկայանալու»:

Ըստ Թէքէեանին, դաշնակցականները չօչափած են Հայաստանի, Սանճաքի եւ Ճեզիրէի հայութեան տպահովութեան հարցերը, մամուլի ներդաշնակութեան եւ Ամերիկայի հայութեան համերաշխութեան խնդիրները ու պատրաստակամութիւն յայտնած են ամէն տեսակէտով համախոհարար շարժելու եւ որեւէ անհամաձայնութիւն՝ եթէ սրտաւհի՝ կողմերու հաւաքական կարգադրութեան ենթարկելու:

Կ. Վ.ն կ'որոշէ որ Թէքէեանը, Էօթէն Բարազեանն ու Սեւ-

յօնքեանը անհատական հանգամանքով շարունակեն տեսակցիլ Հ.Յ.Դ.ի պիւրոյական պատասխանատուներուն հետ:

Շարաթ մը ետք, 28 Սպտ.ի նիստին, Թէքէեանը իր ժողովական գործակիցներուն կը յայտնէ 22, 25 եւ 28 Սեպտ.ին Ե. Խաթանասեանին ու Ա. Ջամալեանին հետ կատարած իր անձնական խօսակցութիւններուն մասին եւ անոնց եզրակացութիւնը կ'ենթարկէ ժողովին կարծիքին, որպէսզի ըստ այնմ մեքենագրուելով յաջորդ երեկոյ իսկ ստորագրուի խօսակից կողմերէն, անհատական հանգամանքով, ենթարկուելու համար Կուսակցութեանս պաշտօնական նկատառման ու վաւերացման: Ժողովը կ'արտօնէ ո՞ր իր բանագնացները ստորագրեն այդ եզրակացութիւնը՝ իրը հիմ ծառայելու ապագայ համաձայնութեան: Կորուչուի հանելի համապատասխան խորհրդապահական չըջարերական մը, որպէսզի բոլոր Շրջանակները տեղեկանան կատարուածին եւ յայտնեն իրենց կարծիքը*: Համաձայնութեան բանաձեւերուն տմբողջութեան պատճէնը բոլոր Շրջանային Վարչութիւններուն չի գրկուիր, սակայն, այլ՝ միայն Ամերիկայի Շրջ. Վարչութեան, ինչպէս նաեւ Արշակ Զօպանեանին, Արտակ Գարրինեանին, այդ օրերուն Պէյրութ դանտոյ Կեդրոնի անդամ Յովհաննէս Պօղոսեանին ու՝ աւելի ուշ՝ Հրաչ Երուանդին:

Կեդրոնի 19 Հոկտ.ի նիստին, Աթէնքէն Գահիրէ վերադարձած Հ. Վառվառեանը կը տեղեկացնէ թէ նաւուն վրայ հանդիպած է Ա. Ջամալեանին, որ Գահիրէ դարձած է՝ Յունաստան կեցութիւնը արտօնուած չըլլալով, իր թղթեղէնին բռնադատումէն ետք: Ջամալեանը գոհունակութիւն յայտնած է Գահիրէի տեսակցութիւններուն համար եւ ըսած թէ իրենց Պիւրօն համաձայն է ամէն գնով իրականացնելու եղած հասկացողութիւնը, ինչպէս նաեւ հարթելու եկեղեցւոյ չուրջ [Ամերիկայի մէջ] ամէն տարակարծութիւն: Ան կատարուած խօսակցութիւնը օգտակար նկատած է՝ «համաձայնութիւն մը անհրա-

* Թէ՛ ստորագրուած պատճէնը եւ թէ՛ այդ խորհրդապահական (թիւ 6) շրջաբերականը տրուած են արդէն Տեփոյեանին ներկայ յուշագրութեան մէջ: Հարկ է նշել թէ Կեդր. Վարչութիւնը պարտաւորուած էր Շրջանակներու հաւանութեան ենթարկել իր առնելիք քայլը, քանի որ Կուսակցութեանս ընդհ. պտգմ. ժողովը չէր նախատեսած Հ.Յ.Դ.ի հետ գործակցութեան պարագայ:

ժեշտ նկատելով յօգուտ ազգին, ներկայ ընդհանուր պայմաններուն մէջ»:

Հետագային Խաթանասեանի Սեյօնքեանին պիտի յայտնէր թէ Ջամալեանին թուղթերուն մէջ կային՝ Կուսակցութեան հետ կայացած համաձայնութեան տնտեսորդի ձեռագիր պատճէնը, վրացիներու հետ Հ.Յ.Դ.ի մէկ համաձայնութեան նախագիծը եւ Հ.Յ.Դ. ընդհ. ժողովի կարգ մը նիստերուն մասին Գ. Լազեանին պրոտոմները:

Անհատ րնկերներէ թէ Շրջանային Վարչութիւններէ կը սկսին հասնիլ պանագան արձագանդներ:

Եթէ Չօպանեանն ու Դարբինեանը իրենց 12 եւ 15 Նոյ. թուակիրներով համաժողովին կը յայտնեն թիւ 6 չրջարեականին եւ համաձայնագրին մասին կը շնորհաւորեն Կեդր. Վարչութիւնը՝ իր հեռառեսութեան ու չրջահայեցութեան համար, ապա Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը իր 11 Նոյ. թուակիրով բացարձակապէս կ'ընդդիմանայ եղածին: Ան կը յայտնէ ստացած ըլլալը առաքուածներուն «չորս տալժմ գաղանի կը պահեն, որովհետեւ վստահ են թէ մեր րնկերական յարքերու եւ մեր կուսակցութեան համակիր ժողովրդային տարբերու բացարձակ ընդդիմութեան պիտի բաղին, ապացոյց այն որ կաթողիկոսական նուիրակ Գեր. Գարեգին Արքեպիսկ. Յովսէփեանցի համերաշխութեան ձեռնարկին գէժ ընդդիմադիրներու հոսանքը հետզհետէ կը ծաւալի եւ մեծ համեմատութիւններ կ'առնէ, թէ՛ Դաշնակցութեան հետ համաձայնութիւն մը կարելի է այն ատեն միայն, երբ ան որոշապէս յայտարարէ թէ վերջնապէս կը հրաժարի Խ. Հայաստանի եւ Խ. Միութեան գէժ իր թշնամական կեցութեամբէն եւ ի գէպ պատերազմի՝ մեր կուսակցութեան հետ միասին իր անվերապահ պաշտպանութիւնն ու օժանդակութիւնը պիտի տանի Հայաստանի եւ անոր ազգ. պաշտպանութեան եւ շահերուն, եւն. եւն.»:

Ի պատասխան, Կ. Վ.ն կը գրէ.

28 Դեկտ. 1938

Ընկերներ ձիւմ Ջանգալեանի եւ
Ե. Մեսիսեանի.
Նիւ. Եօրք,

Սիրելի ընկերներ,

Կը պատասխանեմ ձեր 11 Նոյ. 938-ի անձնական նամա-

կին ի մասին կեդր. վարչութեան քիւ 6 Շրջաբերականին եւ 24 Հոկտ. քուակիր պաշտօնագրին:

Ձեր նամակը կը պարզէ նախ քէ որքան աննպաստ ընդունելութիւն մը կրնայ գտնել Ամերիկահայութեան մօտ Հ. Յ. Դաշնակցութեան հետ համաձայնութեան մը պարագան, գուցէ նոյնիսկ բողոքներու եւ ըմբոստութեան շարժում յառաջ բերելով: Կ'ընդունի՞ք սակայն որ նման կացութիւն մը դիմագրաւելու քաջութիւնը պէտք է ունենանք, իբրեւ առաջնորդող կազմակերպութիւն որ ժողովուրդէն պէտք չէ տարուի այլ առաջնորդէ գայն, ամենայն շրջահայեցութեամբ անշուշտ. եթէ ԱԶԳԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՇԱՀԵՐԸ ՊԱՐՏԹ ԿԸ ԴՆԵՆ ՄԵՐ ՎՐԱՅ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԳԱՆՈՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ:

Ազգին գերագոյն շահերը դատելու համար ներկայիս պարտինք նկատի ունենալ Հայաստանը, գաղութահայութիւնը եւ Հայկական Դատը:

Հայաստանը ինք իր մէջ ամփոփուած այսօր, կ'անտեսէ ամբողջ արտաքին աշխարհը, նուիրուած լոկ իր ներքին աշխատանքին. իսկ քաղաքականօրէն ալ արդարացիօրէն կառչած Խ. Միութեան: Այսօր. եթէ ուզենալ, ոչ մէկ դրական օգտակարութիւն կրնանք ունենալ Հայաստանի, ու ընդհակառակը եթէ մեր ճիգերը շարունակենք կեդրոնացնել լոկ այդ ուղղութեամբ՝ արդիւնքի պակասը ու մեր գտած արհամարհանքը յառաջ պիտի բերեն յուսալքում եւ բարոյալքում մեր շարքերուն մօտ, որուն ակնարկութիւնը կը գտնենք ձեր վերջին 3 Դեկտ. 938-ի Շրջաբերականին մէջ իսկ, եւ քէ գաղութահայութեան մէջ: Լաւագոյն ծառայութիւնը զոր հիմա կրնանք մատուցանել Հայաստանի, ստեղծելն է գաղութահայութեան մէջ այնպիսի մթնոլորտ մը որ ինքնին բառնայ ամէն թշնամական փրօփականոտ Հայաստանի հանդէպ ներկայի իր ներքին տագնապի օրերուն, մղէ համայն գաղութահայութիւնը համբերութեամբ եւ պաղարիւնութեամբ հանդիսատես ըլլալու այդ տագնապին՝ առանց շատ բան կորսնցնելու. իր հայրենասիրական զգացումներէն, պատրաստէ նոյնիսկ նպաստաւոր գետին մը համահայկական գործակցութեան մը յօգուտ Հայաստանի, երբ պայմանները փոխուին կամ համաշխարհային պատերազմի դժբախտութեան առջեւ գտնուինք:

Հայաստանի իսկ գերագոյն շահերուն համար, ներկայիս ուրեմն գաղութահայութեան մէջ պէտք է տիրել սկսի խաղաղ ու ներդաշնակ գոյավիճակ մը:

Գաղութահայութեան գալով, նման գոյավիճակի մը պահանջը աւելի զգալի է: Գաղութահայութիւն ըսելով մենք նրկատի ունինք մէկ կողմէն Ամերիկահայութիւնը, միւս կողմէն Ամերիկայէ տարբեր բոլոր երկիրները ապաստանած հայութիւնը: Կ'ընդունինք թէ պայմանները բոլորովին նոյնը չեն այդ երկու գաղութահայ գանգուածներուն մէջ եւ համաձայնութեան հարցը կրնայ անոնց նոյն կերպով չներկայանալ, բայց վերջ ի վերջոյ միացման կէտը գոյութիւն ունի: Տարբերութիւնը անկէ կը ծագի որ համաշխարհային պատերազմի մը պարագային, որուն ուշ կամ կանուխ հաւանականութիւնը, Միւնիխի համաձայնութենէն իսկ վերջ, կը շարունակէ առանցքը կազմել միջազգային իրադարձութեանց, - Ամերիկայի հայութիւնը այնքան մօտը չպիտի ըլլայ կրակի գիծին որքան միւս հայ գանգուածները, որոնք կ'ապրին Եւրոպայի ու Արեւելքի մէջ ու պատերազմին անմիջական հետեւանքները կոչուած են կրելու եւ պարտին ուրեմն ինքզինքնին պաշտպանելու այդ հետեւանքներուն դէմ: Այդ անհրաժեշտ ինքնապաշտպանութեան հարկը հիմա իսկ զգալի է ամէն կողմ, երբ գաղութներու մէջ տեղ տեղ փիզիքական, տեղ տեղ ալ բարոյական կացութիւնը արդէն իսկ կը մղեն պատասխանատու մարմինները իրաւախօհական գետին մը գտնելու եւ մէկ նակատ պարգելու հանդէպ հիւրընկալ պետութեանց իսկ, որոնց կարգ մը քայլերը այնքան կը սպառնան գաղութներու ազգային ազատ գոյութեան պայմաններուն: Իսկ Ամերիկահայութեան մասին ալ, ուր նոյն վտանգները չկան ոչ ներկայիս ոչ ալ համաշխարհային պատերազմի մը ընթացքին, պէտք է մտածել վերջապէս որ ներկայ վիճակը բնականօրէն չէ, չկրնար ալ յաւերժանալ առանց գաղութին ազգապահպանումը վտանգելու, առանց միանգամայն վտանգելու ազգային այն գերագոյն շահերը որոնց պաշտպանութեան մէջ Ամերիկահայութիւնը նիւթական թէ բարոյական մեծ դեր ունի կատարելիք ու չկրնար գայն կատարել առանց իր ներքին խաղաղութեան:

Կայ ու կը մնայ վերջապէս Հայկական Դատը գոր չէ կարելի այլեւս անխնամ քողով եւ ատեն է որ անոր շրջահայեաց եւ նպատակադարմար հետապնդումը ձեռք առնուի կրկին կազմութեամբը առ այդ համազգային Կեդրոնական Մարմինի մը, որ իր կարգին չկրնար արդիւնաւորապէս գործել առանց համերաշխ մթնոլորտի եւ բոլոր քաղաքական կուսակցութեանց գործակցութեան:

Կը նշանակէ՞ թէ՝ յանուն ազգային այս գերագոյն շահե-

րուն անհրաժեշտ եղող համաձայնութեան, պարտինք մոռնալ Դաշնակցութեան անցեալը եւ անվերապահ վստահութեամբ վերաբերինք այսօր իրեն հետ:

Ոչ երբեք:

Կը նշանակէ միայն քէ համաձայնութիւն մը, զոր օր մը քաղաքական ապագայ դէպքերը կրնան պարտադրել մեզի ու մենք կրնանք հարկադրուիլ այդ պարագային զայն գոյացնելու համար ընելու աւելի մեծ զիջումներ, ընդունինք կենել այսօր երբ հոգեբանական վայրկեանն է յորում Դաշնակցութիւնը ինքզինք շատ տկար կը զգայ եւ պատրաստ է ինք մեծ զիջումներու եւ երբ դեռ բաւական ազատ ենք արտաքին դէպքերու ճշդումէն մեր փափաքած պայմաններուն մէջ հաւանելու այդ համաձայնութեան:

Ահա այս նկատումներուն լոյսին տակ է որ պէտք է բնութիւն մը սկզբունքային հարցը Հ. Յ. Դաշնակցութեան համաձայնութեան դիմումն ընդունելու կամ մերժելու, ապա՝ նման համաձայնութեան մը պայմանները որոնց նկատմամբ դրկուած նախագիծը անհատական տեսակցութիւններու արդիւնք մըն է ու հետեւաբար բարեփոխելի, երկու կուսակցութեանց պաշտօնական բանակցութեանց ընթացքին, այն չափով որ տրամաբանօրէն անհրաժեշտ է մեր տեսակէտները ընդունել տալու եւ որդեգրուած բանաձեւերու ճշգրիտ կիրարկումը հաւկազմի տակ պահելու համար:

Հետեւաբար երբէ կը կարծէք որ ազգին գերագոյն շահերուն համար համաձայնութիւն մը կրնայ օգտակար ըլլալ եւ մտավայտութիւն ունիք անոր կիրարկումին մասին, ազատ էք կատարելու առ այդ ինչ քեյսերութիւն որ փափաքելի է կամ ղեկու ինչ պայման որ անհրաժեշտ կը նկատէք, ի նկատի ունենալով մանաւանդ Ամերիկահայ կացութիւնը: Նախագիծը արդէն վերապահած է բոլորովին Ամերիկահայ հարցը ու այդ հարցին յատուկ լուծումը պայման դրած է ռեւէ համաձայնութեան: Մեր ընկերները միշտ իրենց անհատական հանգամանքով, համաձայն ձեր իսկ նամակին, դիտել տուած են նոյնիսկ սկիզբի օրէն որ Դաշնակցութիւնը, հետեւողական մնալու համար էջմիածնի հանդէպ իր հաւատարմական զգացումներուն, պարտի ընդունիլ ներկայ Ամերիկահայ օրինաւոր երեսփոխանական ժողովը որ միայն ճանչցուած է էջմիածնէն, պարտի վերջ տալ անջատ եկեղեցիի իր արկածախնդրութեան, պարտի դադրիլ նահատակ Դուրեան Ս.ի հանդէպ իր նախատական

ընթացքէն, եւայլն: Կը սպասուի ձեր յատուկ պայմաններուն որպէսզի ըստ այնմ այդ մասին ալ բանակցութիւն ըլլայ եւ համաձայնութիւն գոյանայ: Դաշնակցական Տօքթ. Ե. Խաթանասեան եւ Ա. Զամալեան պատրաստակամութիւն յայտնած են ամէն կարելի զիջումի եւ առաջինը նոյնիսկ նամակ գրած է Ամերիկա ըսելու որ պէտք է պատրաստուին, յանուն ազգային գերագոյն շահերուն, մեծ զոհողութեանց: Գրած է նաեւ դաշնակցական բոլոր քերթերուն որ զգոյշ լեզու գործածեն մեր կուսակցութեան հանդէպ, հակառակ որ դեռ ռեւէ պաշտօնական ոչ բանակցութիւն ոչ ալ համաձայնութիւն տեղի ունեցած են: Անցողակի ըսեմք որ նման նամակագրութիւններ, կարգ մը այլ ակամայ անխորհրդապահութիւններ, դաշնակցական մամուլին այժմու կեցուածքը, կը բացատրեն որ ըլլայ Ամերիկա ըլլայ այլուր կանխահասօրէն տարաձայնուած ըլլայ քէ երկու կուսակցութիւնները համաձայնած են, պարագայ մը որ մեր ուշադրութեան առարկայ դարձած է եւ նիւթ կազմած մեր նոր Շրջաբերականին ուր կը զգուշացնենք բոլոր Շրջանակները նման տարաձայնութեանց աննպաստ հետեւանքներէն եւ զիրենք կը հրաւիրենք անխախտ մնալու իրենց դիրքերուն վրայ ցորբան նոր հրահանգ չկայ անցեալի ուղղութիւնը փոփոխութեան ենթարկող:

Աւելցնենք որ հարց չկրնար ըլլալ հապենպ կերպով համաձայնութիւն մը գոյացնելու մասին: Նախագիծին մէջ նշանակուած պայմանաժամը պարզապէս մեր սկզբունքային պատասխանին համար է քէ պաշտօնական բանակցութեան հաւանութիւն կու տանք քէ ոչ: Այդ պայմանաժամն ալ ինքնին կարն եղած էր որովհետեւ խօսակցութիւնները տեղի ունեցած էին Միւնիխի համաձայնութենէն առաջ գահավիժող կացութեան ազդեցութեան տակ, կացութիւն մը որ ներկայիս մասամբ մեղմացած է: Այնպէս որ այս օրերուն մեր ընկերները անհատաբար պիտի հաղորդեն քէ առ այժմ Ռամկ. Ազատ. կուսակցութիւնը պատրաստ չէ նշդելու իր վերջնական դիրքը ու պայմանաժամը պիտի երկարածգէլ տան 2-3 ամիս, որքան որ ալ մեր ընկերներուն Հ. Յ. Դաշնակցութեան կեդր. Պիւրօն հաղորդած ըլլայ արդէն իսկ, Ա. Զամալեանի միջոցաւ, քէ սկզբունքով համաձայն են իրենք:

Թող որ հարց ալ չկրնար ըլլալ մէկ օրէն միւսը համերաշխութեան մը փոքր հնչեցնելու եւ առանց ներքին փորձարկութեան մը ժողովուրդը համաձայնութեան մը կատարուած իրո-

դուքեան առջեւ դնելու: Նախագիծը հշդած է թէ համաձայնութիւնը չպիտի հրապարակուի, այլ հետգհետէ մամուլէն եւ մեր երկուստեք բարւոք յարաբերութիւններէն է որ յայտնի պիտի ըլլան թէ բան մը կայ փոխուած: Փոխանցման շրջանի մը ընթացքին երբ կը նկատենք ներքնապէս թէ համաձայնութեան պայմանները կը յարգուին, հետգհետէ անոր գոյութիւնը զգալի կ'ընենք, այլապէս ինքնին մեռեալ տառ կը մնայ այն: Խնդիրը, սպասելով որ նման փոխանցման շրջան մը բոլորուի, այժմէն հիմնապէս հշդելն է մեր համաձայնութեան պայմանները, այժմէն երբ, ինչպէս ըսինք, մեր դիրքը զօրաւոր է: Փոխանցման շրջան մը այնքան անհրաժեշտ է որքան զրեքէ բոլոր շրջանակներէ մեզի հասած պատասխանները համամտութիւն կը յայտնեն համաձայնելու. յանուն ազգային գերագոյն շահերուն, Դաշնակցութեան մասին անվտանգութեան հարց այ արծարծելով հանդերձ եւ առ այդ թելադրելով որ անհրաժեշտ երաշխիքներն ստացուին: Երբ կեդր. վարչութեանս անդամներէն ոմանք յառաջիկայ Սեպտեմբեր-Հոկտեմբերին Ամերիկա գտնուին, տեղւոյն վրայ կրնան, զոր օրինակ, ձեզի հետ խորհրդակցիլ փոխանցման բոլորում շրջանի արդիւնքներու մասին եւ ըստ այնմ պատրաստել մթնոլորտը դէպի համերաշխութիւն կամ եթէ ոչ՝ հնչեցնել լոկ մեր կուսակցական ուղղութեան փողը:

Մերն ալ է, վերջապէս. այն մտահոգութիւնը թէ մի գուցէ որոշ Շրջանակներու մէջ համերաշխութեան մթնոլորտին բերմամբ մեր կազմակերպութիւնը տկարանայ: Առ այդ, շատ յատակ հրահանգներ կը պարտւնակէ մեր նոր Շրջաբերականը ըստ որում համաձայնութիւն մը պէտք է ըմբռնուի եւ կիրարկուի առաւելապէս մեր ուղղութեան լոյսին տակ, ինչ որ արդէն հիմք պարտի կազմել համաձայնութեան իսկ, ու ան արգելք պէտք չէ դառնայ մեր կազմակերպական աշխատանքներուն, բոլորականին. որոնք ընդհակառակը պարտին աւելի ազդու ըլլալ: Մէկ ԽՕՍԲՈՎ, ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ. ԵՒ ՈՉ ԹԷ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵԶԻ ԴԵՄ:

Տայէ վերջ այս ընդհանուր բնոյթ կրող յուսաբանութիւնները, պատասխանենք հակիրճ կերպով ձեր նամակին միւս էական կէտերուն:

Դաշնակցութիւնը պարտի եթէ ոչ բոլորովին դադրեցնել. ինչ որ կարելի չէ քանի որ տեսականօրէն. ծանօթ մտահոգութեանց բերմամբ, սահմանափակ ազատութիւն մը կը տրուի իրեն կապ պահելու հակա-խորհրդային տարրերու հետ,

գէթ սակայն պարտի ՇԱՏ ՄԵՂՄԵԼ իր մամուլով թէ բեմով բրոքսականոր հորհրդային իշխանութեան դէմ, մինչ մեմբ բոլորովին ազատ պիտի բլլանք ի նպաստ հորհրդային Հայաստանի եւ Խ. Միութեան մեր քաղաքական վարքագիծը անկաշկանդ շարունակելու մամուլով, բեմով թէ ալլապէս, ինչ որ ռեւէ դիմապիտուրիւն չենք-ադրէր անշուշտ մեր կողմէ: Այդ մասին կարելի է աւելի յստակ բանաձեւում պահանջել, քանի որ հիմնական ալս միտքը իրենցն ալ է եւ կ'ընդունին որ պէտք է ռեւէ կերպով դպիլ հորհրդային Միութեան:

Միւս կողմէ, երբ մեմբ բոլորովին ազատ կը շարունակենք մեր քաղաքականութիւնը, Դաշնակցութիւնը ինքզինք կ'ենք-արկէ, ըստ նախագիծի, մեր իսկ հակակշիռին իր հակահորհրդային տարբերու. հետ յարաբերութեանց մէջ, քանի որ պարտաւոր պիտի բլլայ մեզ տեղեակ պահել անոնց ընք-ացքի մասին ու չառնել ռեւէ քայլ առանց մեր կանխագոյն հաւանութեան: Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք նախագիծին էջ 6, Հատուած երրորդին վրայ, ըստ որում հիմնական հարցերու մէջ, երբ երկուստեք համախոհութիւն չկայ, հարցը կամ առնուելիք քայլը առկայս պիտի մնայ. ռեւէ խզում կամ առանձնակի գործունէութիւն արգիլուած բլլալով կողմերուն համաձայնութեան բոլոր տեսողութեան ընք-ացքին: Ճիշդ է. մեր կիրարկելիք հակակշիռի տեսակէտով, կրնան անոնք մեզ խաբել ու յաւագոյն հակակշիռը մեր կողմէ ալ գաղտնի գործակալի մը ներկայութիւնը պիտի բլլար վերոյիշեալ յարաբերութեանց մէջ: Բայց նման քայլ. որ թելադրուած ալ է Շրջանակի մը կողմէ, կրնայ անողոգակիօրէն մեզ մասնակից ըրած բլլայ այդ յարաբերութեանց եւ մեզ ղնել երկոյիմի քաղաքականութեան մը կամ մեղսակցութեան մը կասկածին տակ, ինչ որ անընդունելի է: Լաւագոյն կը նկատենք, ուրեմն, աչք առնել խաբուելու վտանգը որ յոկ անպատեհութիւն մըն է, մանաւանդ որ ըստ մեր կարծիքին, Դաշնակցութեան յարաբերութիւնները հակահորհրդային տարբերու. հետ մեծ տարողութիւն մը չեն ներկայացնել իրականին մէջ. այժմ մանաւանդ երբ Լեհաստանի Խ. Միութեան մերձեցումով Դաշնակցութիւնը կը կորսնցնէ այն գլխաւոր կոտանք որով ըստ մեր տեղեկութեանց, ինք քաջալերութիւն կը գտնէր իր հակահորհրդային գործունէութեան մէջ:

Իսկ մեր դիրքը հանդէպ Խ. Միութեան եւ Հայաստանի չկրնար երբեք առարկելի բլլալ քանի որ թէ՛ համաձայնութեան

մէջ, թէ՛ մեր բոքականտով եւ թէ Դաշնակցութեան գործելա-
կերպի ազատութեան սահմանափակումով աւելի ուժ պիտի
գտնէ: Կրնան անշուշտ քաղցներ ու զրոյներ գտնուիլ որոնք մեզ
մասնակից նկատեն հակախորհրդային քակաւոր մը, բայց հայ
ժողովուրդին ողջմտութիւնը յաղթական միայն կրնայ ըլլալ
մերժելու. նման յերիւրանք մը, երբ մանաւանդ յստակօրէն
պիտի գրեմք ու խօսինք հրապարակաւ այդ մասին: Մեր ներկայ
ֆաղափականութեան առթիւ այլ յերիւրանքներ անպակաս չեղա՞ն
միթէ, երբ անհարկի կերպով միշտ ամբաստանուեցանք համայն-
նավարութեամբ: Նման ամբոյսավարական յերիւրանքներու
վախճան գերծ. իրողութիւնները եւ ազգային շահը պէտք է
միայն մեզ առաջնորդ ունենանք եւ ըստ այնմ շարժինք: Ու այն-
քան արդարացուցիչ պատահաւ ունինք այսպէս շարժելու որքան
և. Հայաստանի այժմու արհամարհանքին կամ ակամայ կեց-
ւածքին առջեւ՝ հանդէպ գաղութահայութեան, մեզի կը մնայ
ֆաղափականօրէն տէր կանգնիլ այդ գաղութահայութեան, ա-
ռանց մտահոգուելու թէ ինչ պիտի մտածէր և. Հայաստան
այդ մասին: Մեր ԿՈՒՍՍԿՑՈՒԹԻՒՆՆԸ իՐ ԱՆԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՇ-
ԿԱՆԳ ԳՈՐԾԵՆԱԿԵՐՊՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ Ի ԱՄԷՆ, ԿԱՅՈՒԹԵԱՆ
ՀԱՆԴԷՊ, ՔԱՆԻ ՈՐ ՈՉ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԵՆՔ. ՈՉ ԱՆ ԳԱՇՆԱԿ-
ՑԱԿԱՆ, ԱՅՈՒ ՋՈՒՑ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐ ՈՒ ԱԶԱՏԱԿԱՆ ՌԱՄ-
ԿԱՎԱՐՆԵՐ:

Պահանջել. ինչպէս կը օրէք. որ Դաշնակցութիւնը հրա-
պարակաւ արտայայտուի անկեղծօրէն թէ ինք կը յարի և.
Միութեան եւ և. Հայաստանի հանդէպ մեր վարձագիծին.
բնականաբար ռեզուսիտի չէ Դաշնակցութեան համար եւ. ինչ-
պէս բացատրած ենք մեծ Շոթաւերականին մէջ. անհրաժեշտ այ
չենք նկատեր: Դաշնակցութիւնը չէ որ մեր ազգային ֆաղափա-
կանութեան որոշիչ մօքը կու տայ ներկայիս. այլ մենք ենք եւ.
մենք մեր ուղղութեան շեղած չունինք: Իսկ ազգովին և. Միու-
թեան ֆաղափականութեան յարելու կենսական անհրաժեշտու-
թեան մըն այլ պէտք չենք տեսներ: Պաշտպանելի թէք մըն է, որ
մեր մէջ այլ գտնուի փոքրամասնութիւն մը հակախորհրդային
նկատինքն հետ կապ պահող: Ասիկա յոռետեսութիւն չենք աղ-
բեր և. Միութեան հանդէպ. ոչ այլ մեր կողմէ յարում մը դէպի
փաշիստ քակաւոր, այլ յանուն համագործակցաբար հետապըն-
դուելիք գերագոյն նպատակներու, ձեռով մը պատկերացումը
ներկայ սրաքիւ-ֆուօին. ՏԵՄԱԿԱՆ ԲԱՆԱԶԵԻՈՒՄԸ և.
ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-

ԹԵԱՆՅ ԻՐՈՂԱՊԷՍ ԸՆԴԳՐԿԱԾ ԱՅԺՄՈՒ ԴԻՐՔԻՆ, առանց ուրեմն որ պատասխանատուութիւն ստանձնած ըլլանք ոչ ալ ունենանք նման իրողական գոյավիճակի մը հանդէպ, ընդհակառակը յայտնի ճիշդով մը այդ գոյավիճակին անպատեհութիւնները սահմանափակելու եւ կացութիւնը ի նպաստ խՈՐՀ. ՀԱՅՍՏԱՆԻ ԵՒ ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ դարձնելու:

Վերջին պահուն ընկեր Արտակ Գարբինեանէ ստացանք նոր նամակ մը, 10 Դեկտ. 1938 թուակիր, ուր ակնարկելէ վերջ թէ Ամերիկայի Շրջանակին կողմէ կրնայ դժուարութիւն ստեղծուիլ, անգամ մը եւս կը հաստատէ իր նախապէս տուած կարծիքը, ըստ որում ներկայ պայմաններուն մէջ հարկադրական կը գտնէ փնտռուած գործակցութիւնը, ըլլայ մեր Կուսակցութեան գանգան Շրջանակներու մէջ ունեցած դժուարութեանց, ըլլայ գաղութներու ներքին շատ անմիջիքարական կացութեան պատճառաւ որ չի կրնար, կը յաւելու. յաւերժանալ, ըլլայ նաեւ միջազգային կացութեան բերումաբ: Այս վերջին կէտին առթիւ ան կը ծանրանայ այն շատ փափուկ եւ սպառնալից տագնապին վրայ որ նոր բացուած է Ուէրայնիոյ ինքնավարութեան հարցով: Այդ հարցը, արդարեւ, գործունէութեան նոր ասպարէզ կը բանայ կովկասեան հակահոքիքային տարբերու համար եւ գիրենք կը դնէ նոր փորձութեանց առջեւ ու շատ վախ կայ որ Դաշնակցութիւնն ալ, իր առանձնութեան մէջ մնալով, տարուի հակահոքիքային յորձանքէն եւ մեր ազգին ու իւ. Հայաստանի գլխուն նոր արկածախնդրութիւններու աղէտը բանայ, որքան որ ալ նման շարժումներ աւելի ձախողութեան դատապարտուած ըլլան քան յաջողութեան: Ընկեր Արտակ կ'եզրակացնէ ըսելով որ մեր Կուսակցութեան կը մնայ հաւասարակշռի իր դերը կատարել, հող կատարելով շատ փափուկ աշխատանքներ:

Կը խորհինք մենք ալ, արդարեւ, թէ կացութեան պահանջներուն բարձրութեան վրայ գտնուելու է մեր Կուսակցութիւնը եւ քաղաքական ներկայ հակամարտութեանց միջեւ, որոնց թատր կրնան դառնալ ուղղակիօրէն թէ անուղղակիօրէն հոքի. Հայաստան. գաղութահայութիւնը եւ Հայկական Դատը, մօտէն եւ դէպքերու ընդմէջէն հետեւելու ենք այդ հակամարտութեանց եւ կատարելու ենք մեր հաւասարակշռի ազգանուէր դերը, կանխելով վտանգները փոխանակ աղէտներէն յետոյ քննադատի անփառունակ, դիրքին եւ ապարդիւն դերը ստանձնելու:

Կը խնդրենք, ուրեմն, որ մեր 21 Հոկտ. 1938-ի պաշտօ-

նագիրը, յարակից նախագիծով, մեր թիւ 6 Շրջաբերականը, ձեր նամակն ու մեր ալ ներկայ պատասխանը՝ ենթարկէի Շրջ. վարչութեան ամբողջական նկատողութեան ու ըստ այնմ, ձեր պատասխանատուութեան սահմանին մէջ, առնէի ձեր որոշումը եւ գայն հաղորդէի մեզի որպէսզի դիրքերը նշդուին ու ըստ այնմ ալ կարենանք այս կամ այն կերպով հրահանգ տալ մեր բոլոր Շրջանակներուն, ներկայ անորոշութիւնը առանց երկարելու:

Կը կրկնենք թէ Շրջ. վարչութիւնդ, տալով իր պատասխանատու կարծիքը, միայն Ամերիկահայ վիճակը պէտք է նկատի ունենայ, այլ նաեւ բոլոր զաղութներուն կացութիւնը ու համաշխարհային ներկայ պայմանները:

Կատարուածը դուռ կը բանայ տարածայնութիւններու ալ, որոնցմէ մէկուն ի պատասխան, Կեդր. վարչութիւնը կը ստիպուի հրապարակել հետեւեալ հերքման պիւրը:

Ռաւկ. Ազատական կուսակցութեան պատասխանատու վերին մարմինը կը հաղորդէ մեզ՝ թէ Պէյրութի «Ժողովուրդի Ձայն» թերթին 1939 Յունիս 1-ի թիւին մէջ լոյս տեսած այն լուրը, որ իբր թէ այս կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան բիրտոյին միջեւ զաղտնի համաձայնագիր մը ստորագրուած է ընդդէմ Խորհ. Միութեան եւ Խ. Հայաստանի ու ի նպաստ Հիթլերական ծրագիրներու, ուրիշ բան չէ բայց եթէ անհեթեթ եւ նպատակաւոր յերիւրանք մը. տրուած ըլլալով որ Ռաւկ. Ազատական կուսակցութեան տարիներէ ի վեր հետեւած ազգային ուղղութիւնը ոեւէ փոփոխութիւն կրած չէ եւ կուսակցութիւնը կը մնայ հետեւաբար միշտ յայտնադրելու Խ. Հայաստանի, որուն ապահովութիւնն ու զարգացումը անվրէպ կը շարունակէ գտնել Խ. Միութեան իր անդամակցութեանը մէջ:

18 Յունուար 1939-ին, Կեդր. վարչութեան անդամները նկատելով թէ նախադիմով ճշդուած պայմանաժամը յրացած է 31 Դեկտ. 1938-ին, կը խնդրեն Թէրէօնէն որ անհատական հանգամանքով նոյնի դէպքի միջոցառանքին, որպէսզի համաձայնուած պայմանաժամը երկարաձգուի, տրուած ըլլալով որ Ամերիկայի հետ թղթակցութիւնները դեռ վերջնական ելքի չէին յանդած:

Վրայ կը հասնի Ամերիկայի Շրջ. վարչութեան 30 Մարտ 1939 թուակիրը, ուր ան կը պատահայ ուրանայ Կեդր. վարչու-

թեան հեղինակութիւնը՝ ԼԹՀ Հ.Յ.Դ.ի հետ կնքուի համաձայն-
նութիւն:

Կեդրոնը իր 17 Ապրիլի նիստին կը հարկադրուի զբեկ Ա-
մերիկայի Շրջ. Վարչութեան թէ համաձայնութեան ընթացք
պիտի չարուի ներկայիս: Եւ անմիջապէս պաշտօն կու տայ Բա-
րազեանին ու Սեւօնքեանին որ իրաւաւորութեանն է Եսայեանին
հետ տեսնուելով բացատրեն թէ պաշտօնական համաձայնու-
թեան մը կարելիութիւնը չկայ ներկայ հանդուստին, Եւ թէ
լաւ կ'ըլլայ որ իրենք Եւս իրենց կողմէ աշխատանք տանին Ամե-
րիկայի Շրջանակին մէջ մերձեցումը զիւրացնելու, Եւ թէ մինչ
այդ երկուստեք անհատական հասկացողութիւնը կը մնայ ան-
խախտ: Իրաւաւորութեանն ու իր գործակիցը համամիտ կը գրա-
նուին:

17 Մայիսին Կեդրոնի անդամները կ'որդեկրեն Թէքէ-
նին պատրաստած պատասխանը՝ ի մասին Ձաճապեանին, Խա-
թանասեանին Եւ Լազեանին հետ տեղի ունեցած անհատական
խօսակցութիւններուն վերջնական հէքին, «պատասխան ըստ ո-
րում ներկայիս կարելի չէ հետեւանք տալ այդ խօսակցութեանց
ընթացքին պատրաստուած համաձայնագրի նախադիմին կարգ
մը հիմնական հարցերու շուրջ գոյութիւն ունեցող իրականու-
թեանց ու նաեւ Ամերիկայի մէջ շրջանակին անհամամիտութեան
հետեւանքով»:

Անմիջապէս կը պատրաստուի Մայիս 21 թուակիր, թիւ
8 շրջաբերականն ալ, որ նախագահ Տաճատեանին, տանապետ
Թէքէեանին Եւ տանապետ Սեւօնքեանին պատրաստութեամբ,
ի շարս այլ հարցերու, կ'անդրադառնայ Հ.Յ.Դ.ի հետ համա-
ձայնագրի նախադիմին ու կ'ըսէ:

Մեր թիւ 6 խորհրդապահական Շրջաբերականով հաղոր-
դած էինք թէ անհատական խօսակցութիւններ եղած էին Գահի-
րէի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան մէկ քանի պետերու հետ, ա-
սոնց կողմէ յայտնուած փափաքին վրայ, որոնք նպատակ ու-
նէին երկու կուսակցութեանց միջեւ տեսակէտներու կարելի
մերձեցումը իրագործելու քաղաքական հարցերու շուրջ, գոր-
ծելակերպի համախոհութիւն պարտադրելու ամէն պարագայի
տակ Հ. Յ. Դաշնակցութեան. իսկ գաղութներու մէջ միօրինակ
գործունէութիւն մը ստեղծելու ազգապահպանութեան եւ ազ-
գային դատի հետապնդման շուրջ, բոլորելով գաղութահայ ժո-
ղովուրդին ամէն կենսունակ ուժերը. կենսական անհրաժեշտու-
թիւն այնպիսի ատեն մանաւանդ երբ Խորհ. Հայաստան ինք իր

մէջ ամփոփուած, գաղութահայութիւնը կը թողուր իր ֆակտորիան: Ինչպէս գրած ենք, այդ խօսակցութիւնները տեղի ունեցած էին անցեալ Սեպտեմբերին, երբ համաշխարհային տագնապ մը առաջ էր եկած, տագնապ, որ տակաւին չէ վերջացած եւ կը շարունակէ զբաղեցնել բոլոր ժողովուրդներուն միտքերը եւ անոնց առաջնորդները կը մղէ ազգային միութեան եւ համագործակցութեան, արտաքին վտանգները դիմակալելու համար:

Մեր յիշեալ Շրջաբերականին մէջ բնդարձակ կերպով պարզելէ յետոյ այն նկատումները որոնք մեզ կը թելադրէին հետեւեամբ տալ Հ. Յ. Դաշնակցութեան առաջարկին, կը յանձնարարէինք մեր Շրջ. վարչութեանց որ իրենց տեսակէտներն ու ի հարկին թելադրութիւնները հաղորդեն մեզ:

Ստացուած պատասխաններն - Արեւմտեան Եւրոպա, Պուլկարիա, Սուրիա, Լիբանան եւ Եգիպտոս - այսինքն գրեթէ այն բոլոր Շրջանակները ուր գաղութահայ հարցերը փիզիքական կամ իրաւական գոյութեան հետ աղերս ունին եւ այդ գերագոյն ու անմիջական մտահոգութեան տակ երկրորդական գծի վրայ կը թողուն ամէն նկատում. համաձայն գտնուած են բնդի. առմամբ կեդրոնիս տեսակէտին, կատարելով հանդերձ այս կամ այն կէտի շուրջ վերապահութիւններ ու ներկայացնելով միանգամայն թելադրութիւններ. նկատի առնուելիք պաշտօնական բանակցութեանց ընթացքին: Ռումանիա թեր ու դէմ արտաշայտութիւններու կարգին, յայտարարած է թէ կը յարի այն կարծիքին որ Ամերիկայինը պիտի ըլլար: Իսկ Ամերիկայի եւ Արժանքի Շրջանակները. տեղական թէ բնդհանուր ազգային հարցերու եւ ֆաղաֆական տեսակէտներու անկիւնէն դատելով խնդիրը, հաղորդած են թէ համամիտ չեն ներկայիս Հ. Յ. Դաշնակցութեան հետ ոեւէ համաձայնութեան:

Կեդր. վարչութիւն. նկատի ունենալով որ առանց Ամերիկայի նման կարեւոր Շրջանակի մը համամտութեան Դաշնակցութեան հետ ոեւէ համագործակցութեան փորձ ամբողջական արդիւնաւորութիւն մը չի կրնար տալ եւ մեր կուսակցութենէն ներս ալ կրնայ ստեղծել անբաղձալի կացութիւն մը որ ինքնին արգելիչ պատճառ մըն է նման համաձայնութեան մը, որոշեց առայժմ ընթացք չտալ առնուած ֆայլին, մինչեւ զէքնոր պայմաններու ստեղծումը Ամերիկայի մէջ եւս կամ մինչեւ յառաջիկայ Բնդի. Պատգմ. Ժողով:

Այս պայմաններուն տակ մեր բոլոր Շրջանակները Հ. Յ.

Դաշնակցութեան հանդէպ մնալու եմ իրենց վերապահ դերին մէջ եւ առանց նախապէս կեդրոնիս հաւանութիւնն ստանալու, ինքզինքնուն քոյլ տալու չեմ ունէ գործակցութիւն, որ կեդրոնիս հրահանգով միայն քոյլատրելի կ'ըլլայ վերջին ընդհ. Պատգմ. Ժողովի նախատեսած գալուքի մը փիզիքական քէ իրաւական գոյութեան հետ կապ ունեցող պարագաներու մէջ:

Պարզ է սակայն որ միջազգային ընդհանուր քէ գաղութահայ ներկայ փափուկ պայմանները պարտք կը դնեն որ ամենուրեք գգուշաւորութիւն դնենք չվերարժարծելու, հնարաւորութեան սահմանին մէջ. մամուլի սուր պայքարները կամ այլ տեղական վէճեր, որոնց վերջին ամիսներուն դադարումը գոհունակութեամբ ընդունուած է առհասարակ ամէն տեղ ու ի մասնաւորի համակիր շրջանակներու մէջ:

Պարզ է միանգամայն սակայն որ հոն ուր Դաշնակցութիւնը շարունակէ կարեւոր խնդիրներու առթիւ սխալ ուղղութեան եւ գործելակերպի հետեւիլ, մեր կուսակցութիւնը պարտի, համապատասխան միջոցներով, հակադդել եւ խնդիրներուն տալ մեր հայեացքներուն հաշտ եղող լուծումներ:

Մթնոլորտը պղտորելու առիթ մըն ալ վրայ կը հասնի չուսով: Երբ Մայիս 28-ի առթիւ կեդրած. քները կը տարբերին, «Յուսարեք» զաշնակցական պաշտօնաթերթը իր 2 Յուլիսի թիւով սամկալարներուն կը գիմէ «Դուք թո՛ւրք էք, պարտներ բռնելով: «Արեւ» սամկալար պաշտօնաթերթը շատ գոտայ ձեւով կը պատասխանէ, որովհետեւ սամկալար Կեդրոնը փափաքող էր հակամարտութիւններու մեղմացման:

Տեսակցութիւնները զանազան առիթներով այնուհետեւ ալ երկուստեք կը շարունակուին, հակառակ անոր որ Դաշնակցութիւնը կը ցուցարեւէ հաստատական գործունէութիւն: Սանճաքի հարցը կը թելադրէր որչ. համապարձակցութիւն: Այս ոգիին իրբեւ արտայայտութիւն հոս կը մէջբերենք՝ ալլապէս ալ խօսուե՛ն՝ Թէքէկեանին սեւադիր պատասխան համակր. Հ. Վառփառեանին, որ իր 17 Յուլիս թուակիրով Կեդրոնին կը թելադրէր անպայման համաձայնութիւն գոյացնել Հ.Յ.Դ.ի հետ:

7 Օգոս. 1939

Սիրելի բարեկամ,

Պ. Քեչ[իշեան] աշօք ինծի յանձնէ: Ձեր նամակը, որուն պիտի պատասխանեմ յոռաջիկային: Այժմէն բռն՝ սակայն թէ ան բաց ըլլալու չէր եւ թէ բոտ էութեան համաձայն ըլլալով

հանդերձ Ձեզի՝ համաձայն չեմ Ձեր պահանջին որ ո՛չ օրինական է եւ ո՛չ փափաքելի: Հակառակ Ամերիկայի եւ ուրիշ մէկ-երկու շրջանակներու այ մերժումին՝ մենք կը շարունակենք խորհրդակցիլ եւ ի հարկին գործակցիլ Դաշնակցութեան հետ: Իրենց հետ համաձայնած էինք մանաւանդ որ կուտադատար օգտակար է եւ կրնայ աւելի օգտակար ըլլայ յառաջիկային համար՝ երբ երկու շարաթ առաջ անակնկալօրէն յարձակում կրեցինք Յուսաքերէն, կանխամտածեալ յարձակո՛ւմ մը, որուն դարձեալ մենք շատ չափաւոր կերպով պատասխանեցինք: Ամէն պարագայի, ինչպէս բաի Պ. Քեշ[իշեան]ին, հարցը կարելի չէ հեռւէն եւ միմիայն փափաքելիութեան տեսակէտէն ու մենք կախում ունեցող կողմէն միայն դատել. պէտք է զիտնայ նաեւ հեռաւորներու տեսակէտները, ինչպէս նաեւ թափանցել զիմացիներն զիտումներուն եւ յետոյ վճռել: Մենք որ այստեղ թէ՛ փափաքը ունեցանք եւ թէ աշխատանքը կատարեցինք, անշուշտ պիտի չուզէինք ի դերեւ հանել այդ փափաքն ու այդ աշխատանքը, եթէ կարելիութիւնը տեսնէինք»:

Այս անգամ Ռ.Ա.Կ.ի առաջարկով կապերը կը վերահաստատուին եւ Կեդր. Վարչութեան 18 Հոկտ. 1939-ի նիստին թէքէեանն ու Բարադեանը կը հաղորդեն թէ Խաթանասեանին եւ Լազեանին հետ տեսակցած են Խ. Մխիթեան եւ Հայաստանի չորջ ու հաւաստիք ստացած թէ անոնք «բոլորովին համաձայն են մեր տեսակէտներուն, նկատելով որ արդէն իսկ քաղաքական պայմանները այդ կը թելադրեն եւ անհրաժեշտ է մէկ ձեւակառով զիմուորել տպագան»:

Կ'անցնի շրջան մը, եւ 3 Ապրիլ 1940-ին ժողովականները կը տեղեկանան թէ Հ.Յ.Դ.ն նոր առաջարկ մը բերած է՝ առաջժ մէկկի թողուլ գաղութային հարցերը եւ ուշադրութիւն կեդրոնացնել քաղաքական հարցերու վրայ: Ժողովը համաձայն կը գտնուի որ այս մտօք բանաձեւ մը ստորագրուի:

Այդ հիման վրայ ալ Ռ.Ա.Կ. Կեդր. Վարչութեան 28 Ապրիլի նիստին կը բերուի Զամալեանին կողմէ յանձնուած համաձայնագրի մը ուրուագիծը, որուն կարեւոր մասերն էին՝ ա.- համազգային մարմնի մը ստեղծումը, բ.- Միջկուսակցական յանձնաժողովի մը կազմութիւնը, գ.- Քաղաքական ուղղութիւնը՝ կողիստեան հարեւան ազգերու, Թուրքիոյ եւ մեծ պետութեանց հետ:

Ատենագրութիւնը կ'ըսէ. «...Ժողովը սկզբունքով համաձայն ըլլալով հանդերձ Դաշնակցութեան հետ համապորձակ-

ցութեան մը քաղաքական գեանի վրայ՝ անհրաժեշտ նկատուած ներկայ պատերազմի ստեղծած կացութեամբ,՝ այդ համագործակցութեան սահմանները կարենալ ճշդելու համար միաձայն գտնուեցաւ ունենալու նախ՝ մէկ օրինակը այն համաձայնագրին՝ զոր կովկասեան նախկին հանրապետութեանց վարիչներուն հետ ստորագրած են, Բարիդի մէջ՝ Հ. Յ. Դաշնակցութեան պատկանող անձնաւորութիւններ՝ իբրեւ ներկայացուցիչ նախկին Հայկական Հանրապետութեան»*:

Եւ երբ հետագային Հազեանը մեր բանագնացներուն կը յանձնէ մէկ ամփոփումը անդրկովկասեան ափնարկուած գաւիթին՝ «կարելի չըլլալով Անդրկովկասի ուխտագիրներուն հետ ըլլալիք ծրարիբը ձեռք բերել պատերազմին պատճառով»,՝ 28 Յունիսին գումարուող Կեդրոնի ժողովը կ'որոշէ թէ «միջադային ներկայ պայմաններուն մէջ՝ վնասակար իսկ է այդպիսի առաջադրութեան մը հետեւանք տրուելը Դաշնակցութեան կողմէ», եւ ա'լ կափարկչը կը փակուի լայնածիր համագործակցութեան մը հարցին վրայ:



Մենք ջանացինք այս յաւելումով տալ հում նիւթ մը՝ առանց մեր կողմէ մեկնարանութիւններ կատարելու, համոզւած ըլլալով թէ տրուած հում նիւթը ինքզինք լիովին կը մեկնարանէ ներկայ հանգրուանին, եւ դեռ կու տայ նոր ապացոյց մը մեր անշեղ ու անկաշառ հայրենասիրութեան, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի գերազոյն շահերուն նկատմամբ մեր նախանձախնդրութեան:

* Ակնարկութիւնը կը վերաբերի Պրոմէթէի Ուխտին: Դաշնակցութեան կողմէ նման համաձայնագրի մը գոյութիւնը չհերքին ալ, ինքնին, ապացոյց է իր մասնակցութեան այդ Ուխտին:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	էջ
- Հեղինակն ու իր գործը	7
- Նիւթեր պատմութեան համար	11
- Մեր առաքելութեան մամբով	79
- Ծանօթագրութիւններ	143
- ՅԱԻԵԼՈՒԱԾ	
Ռ.Ա.Կ. - Հ.Յ.Դ. Յարաբերութիւնները	151

PRINTED IN LEBANON